ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ
Discours de Suède
Étranger
Շվեդական ճառեր
ALBERT CAMUS
5
1
2
1.

ALBERT CAMUS

OEUVRES

1
VOLUME

TRADUIT DU FRANÇAIS PAR ANNA HAKOBIAN

A&M

ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ

ԵՐԿԵՐ

1
ՀԱՏՈՐ

ՖՐԱՆՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ

ԱՆՄ

84-
Գ-18

ԵՊՀ Գրադարան

SC0183100

© EDITIONS GALLIMARD
© ԱԱՄ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2002, ՉԵՎԱԿՈՐՈՒՄ
© ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍՈՒՏԱԲԱՆ

Ժողովածուի «Շվեդական ճառեր» և «Արդարադատները» գործերը լույս են տեսել Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի բաժնի աջակցությամբ
Վահան Տերյանի անվան օգնություն հրատարակչական գործին
ծրագրի շրջանակներում:

Les ouvrages "Discours de Suède" et "Les Justes" ont été publiés avec le soutien du Ministère Français des Affaires Etrangères et du Service Culture de l'Ambassade de France en Arménie dans le cadre du
Programme d'Aide à la Publication Vahan Térian.

ALBERT CAMUS

JE ME RÉVOLTE, NOUS SOMMES

ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ
ԵՍ ԸՆԴՎԶՈՒՄ ԵՄ, ՈՒՐԵՄՆ ՄԵՆՔ ԿԱՆՔ

Բարոյախոս, փիլիսոփա, էսսեիստ, վիպասան, թատերգակ Ալբեր Կամյուն XX դարի մեծագույն դեմքերից է, որոնց մասին դժվար է նոր բան ասել. ամեն ինչ հայտնի է, ինչպես Շեքսպիրի կամ Նարեկացու դեպքում: Այսուհանդերձ, գրում են և վատ չեն գրում, որովհետև Կամյուն այն գրողն է, որի կարիքը մշտապես զգում ենք՝ ինքներս մեզ հասկանալու համար: Նա նաև այն մեծ անհատականություններից է, որի հետ կարելի է զրուցել, վիճել, քանի որ մեծերին են հակաճառում. ճղճիմ մարդիկ ընդդիմախոս չունեն:

Կամյուին ծոնած մեծարանքի խոսքում Սարտրը գրում է. «Նրա անդամահատ գործերը պետք է դիտել որպես մի ամբողջական ստեղծագործություն»: Այդ ամբողջության մեջ, սակայն, օրինաչափ կլինի տարբերակել երեք հիմնական փուլ՝ «ամուսնություններ» աշխարհի հետ, «աբսուրդի» հայտնագործում և «ընդվզում»:

Առաջին փուլը սկսվում է նրա ետմահու լույս տեսած «Երջանիկ մահ» վեպով (1971), որը գրվել է 1936-38 թթ. և ընթանում է տարիմաստության ու մարտահրավերի նշանի ներքո: Այդ մասին կարելի է դատել նաև վերնագրով՝ առաջին մաս, «Բնական մահ», երբ խոսքը վերաբերում է Զագրևսի սպանությանը, կամ այսպիսի բացականչություններով՝ «...Ամեն բան հանում երջանկության, ընդդեմ աշխարհի, որը մեզ շրջապատում է իր հիմարությամբ ու բռնությամբ», «Ազատության և անկախության գաղափարն ընբռնում է միայն նա, ով դեռ հույս ունի»: Այս անավարտ գործը, որը Կամյուն երբեք չի ցանկացել հրատարակել, առաջին հերթին փաստագրական արժեք ունի: Այն գովերգում է ալժիրյան բնապատկերների արբշիռությունը և մարդ արարածի փթթումը՝

խենթացած կյանքի սիրուց և միաժամանակ հյուծված մահվան սպառնալիքից, ինչպես ինքը՝ Կամյուն, երիտասարդ տարիքում: Կամյուի մտքերի հիմքում երջանկության, սիրո և ուրախության թեման է, որը նրան արմատապես տարբերում է Սարտրից: Մարդ կարող է երջանիկ լինել ոչ միայն հակառակ մահվան, այլև մահվան շնորհիվ: Հուսալ մեկ ուրիշ կյանք՝ նշանակում է ապավինել չարիքին, որից, ընդհակառակը, պետք է ջանալ ազատվել: Նիցշեի նման Կամյուն կտրականապես ժխտում է ցանկացած գերբնական մխիթարանք, ցանկացած փրկություն:

Բայց երջանկություն կա, որի որոնման բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում, հենց հայտնաբերում ենք նրա ցնորական բնույթը: Դա այն շլացնող երջանկությունն է, որ մանկամտորեն փափագում ենք, քանի դեռ չունենք, իսկ երբ ձեռք ենք բերում, այրվում ենք ամբողջովին և կորցնելիս դառնում անօգնական: Նման երջանկությունը կարող է լինել անխուսափելի, ինչպես դժբախտությունը: Միայն ճակատագրով չպետք է բացատրել այն: Բայց պատահականությանն էլ մենք չենք վստահում: Սիրեցյալի դեմքը, արբեցնող բնապատկերը, ժպիտը, արևը, աստղերը կամ ծաղկի գեղեցկությունը բավարար չեն: Կա առավել տևական, առավել վստահելի երջանկություն, որ մենք մարմնավորում ենք մեր քաջությամբ, մեր ուժով, ոգով, գուցե նաև մեր վեհանձնությամբ: Այն անբաժան է մեր առաքինությունից: Ավելին, այն հենց ինքը առաքինությունն է՝ մեր առաքինությունը: Այս է Կամյուի հավատամքը:

Քսանհինգ տարեկանում հրատարակած «Ամուսնություններ» էսսեների ժողովածուն մերժում է ինտելեկտուալիզմը, կրոնը ու հռչակում Կամյուի «միջերկրածովային կենսասիրությունը». «Աղքատ են նրանք, ովքեր կարիք ունեն առասպելների»: Մարդ հարստանում է՝ հռչակելով իր զուգորդությունը երկրի հետ, սիրուց հարբելով այս բառի կրկնակի իմաստով. «Ես այստեղ եմ հասկանում, թե ինչ է փառքը՝ անսահման սիրելու իրավունքը:

Միայն մեկ սեր կա աշխարհում՝ գրկել կնոջ մարմինը և, որ նույնն է՝ զգալ այն տարօրինակ ուրախությունը, որ իջնում է երկնքից դեպի ծով»: Այս և բազում այլ տողերի ետևում գծագրվում է այն մարդու վիթխարի կերպարը, որին այսօր Ֆրանսիայում նայում են որպես արդի ժամանակների ամենամեծ մարգարեի, այն դեպքում, երբ գերմանացիները նրան գնահատում են որպես Ֆրիդրիխ Նիցշեի հետևորդ: Դառը միայնության ամենածանր զրկանքներից Նիցշեն հռչակեց կյանքի մի ըմբռնում, որով գերվեց Կամյուն, իսկ նրանից առաջ՝ Անդրե Ժիդը: Անժխտելի է, որ զգալի նիցշեականություն կա Կամյուի ստեղծագործություններում: Մի օր «Օրագրերում» նա կգրի. «...Մենք՝ նիցշեականներս»:

Կամյուի հերոսն ամբողջությամբ տրվում է վաղանցուկ ուրախություններին, որ աշխարհը շռայլում է իր համար: «Ամուսնություններ» էսսեներում նա մեզ ուսուցանում է, որ ապրելու միակ գիտությունը ներկա լինելն է՝ կյանքով հրճվելու միակ հնարավորությունը. «Քչերն են հասկանում, որ կա մերժում, որն ընդհանուր ոչինչ չունի հրաժարականի հետ: Եթե ես համառորեն մերժում եմ աշխարհի վաղվա օրը, դա հենց նշանակում է, որ խոսքը ներկայիս հարստությունից չհրաժարվելու մասին է»:

Սակայն «Ամուսնություններում», որոնք «Երջանիկ մահ» վեպի ժամանակակիցներն են, աշխարհի հետ հաղորդակցությունը հասնում է այնպիսի հզորության, որ զարմանալիորեն հնարավոր չի լինում դրանով գոհանալ. աշխարհի գեղեցկությունը մեզ նվաճում է այնպիսի ուժով, որ մարդու մեջ ծնվում է իր ծագման ու իմաստի հարցը: Գիտակցությունը ցնցում է գեղեցկությունը, ստիպում մտածել հոգու մասին: Բայց Կամյուն ժխտում է հոգին Գերագույն Իրականությամբ, որի վկայությունը Գեղեցկությունն է: Հանել գեղեցկության քողը՝ նշանակում է բացահայտել անէությունը: Մենք պահանջում ենք մի Ճշմարտություն, որը լինի Գեղեցկության չափը, սակայն չկա ուրիշ ճշմարտություն, բացի մահից:

Ամեն բան պատրաստ է, որպեսզի հայտնվի աբսուրդը՝ խորապես կշռադատված «Սիզիփոսի առասպելում» (1942) և

մարմնավորված «Օտարը» (1942) վեպում: Սարտրն ասում է, թե Կամյուն աբսուրդի Դեկարտն է: Սա ճշմարիտ է այն առումով, որ աբսուրդի փիլիսոփայությունը հենց իր՝ գիտակցության հետազոտությունն է, ի խույզ զրոյական կետի, որից պետք է մեկնել մարդկային երջանկության խնդրի լուծումը գտնելու համար: Աշխարհը աբսուրդ չէ, սակայն աբսուրդի փորձն ապրում է մարդու և աշխարհի հարաբերության մեջ: Տառապանքն ու մահը՝ հակադրված ապրելու տենչին և երջանկության պահանջին, հանգեցնում են հիմնարար հակասության, որը հենց «աբսուրդ վերաբերմունքն» է և որը բացատրում է Սիզիփոսի առասպելը. և Կամյուն կասեր. աբսուրդ մտածողությունը անտրամաբանականի տրամաբանություն է: Ուրեմն, աբսուրդը բարոյական գիտակցության ասկետիզմն է՝ ինքնազրկումը, նախասկզբնական լավատեսությունը, պարադոքս, որը հեռացնում է բոլոր հնարավոր միստիֆիկացիաները ու խաբեությունները, հատկապես մետաֆիզիկական և կրոնական մխիթարանքները: Պետք է երջանկության հասնել առանց կեղծիքի, ինչպես Սիզիփոսը, որը լեռն ի վար գլորվող ժայռին նայում է առանց պատրանքների, առանց կեղծ հույսերի և առանց դառնության: Կարճ ասած՝ աբսուրդ մտածողությունը բարոյական արմատականության մեթոդ է, առ ւջին և անհրաժեշտ փուլը հենց իր՝ մարդու կողմից փնտրվող փրկության մեջ:

Աբսուրդը կանչ է դեպի գերագույն իմաստը, որը գոյություն չունի: Ահա և խզումը. կարևորն իմանալն է, թե այս ահավոր խզումը կարո՞ղ է ապրեցնել, թե՞ մեռցնել: Ինչպես և Շոպենհաուերը, Կամյուն համաձայն է, որ կյանքում գոյություն ունեցողը սերն է, սակայն ի հակադրություն մեծ գերմանացու, որն ավելացնում է մահը, նա փնտրում է ելք՝ աբսուրդից կյանք վերադառնալու համար: Պատասխանը, որ տալիս է «Օտարը» աբսուրդին, հենց պատասխան է կյանքին: «Ամուսնությունները» հրատարակելուց միայն մեկ տարի անց՝ 1939 թվականին, Կամյուն ձեռնարկեց «Օտարը», որն ավարտեց հաջորդ տարի: «Երջանիկ մահը»

կարելի է համարել «Օտարի» նախօրինակը՝ ելնելով և՛ գործող անձանց, և՛ բավական մեծ թվով դրվագների նմանությունից, կարելի է ասել՝ նույնությունից: (Եվ ոչ միայն այս վիպակի. հսկայական հատվածներ, նկարագրություններ գրեթե նույնն են նաև «Ամուսնություններում», որը, մեր կարծիքով, նույնպես ծնվել է «Երջանիկ մահից»: «Օտարը» վիպակում Մերսոն դարձել է Մյորսո, յ-ն ավելացվել է բարեհնչունության համար. Mer-sol, ծով՝ արև, ինչպես մեկնաբանում է Կամյուն):

Շատ քննադատներ մեղադրեցին Կամյուին, որ բնական մարդուն նա վերածել է «բուսական էակի»: Մյորսոն անընդունակ է որևէ վճիռ կայացնել, անընդունակ՝ որևէ լուրջ դատողության. նա մարդասպանի է վերածվում անտարբերությամբ, կարելի է ասել՝ բացակայությամբ: Հասարակությունը չի հասկանում նրան: Նա «օտար» է այն պատկերի համեմատ, որ ուրիշները ստեղծում են իրենից: Այստեղ է խզումը «բնական մարդու» և սոցիալական կարգի միջև: Հասարակությունը կատաղում է Մյորսոյի դեմ, որովհետև նա ցնցում է կյանքի բնական հիմքերը՝ համարձակվելով ճեղքվածք բացել իր ամենաանառիկ ամրոցում:

Սակայն բանտում այս գործող անձը, որ, թվում է, իր պասիվությամբ պետք է փառաբաներ կյանքի անհմաստությունը, հանկարծ հայտնաբերում է երջանկությունը: Նա խոստովանահորը բացեիբաց ու թշնամանքով հայտարարում է, որ մտաղիր չէ իր կյանքի վերջին րոպեները նվիրաբերել ցնորական ճշմարտություններին: Կյանքի նկատմամբ Մյորսոն աղաղակում է իր արդարացում չունեցող, ինքնին անհմաստ սերը, որը սակայն անցյալին, իր բոլոր նախորդ արարքներին հաղորդում է նոր իմաստ և նոր նշանակություն: Նրա անտարբերությունը լուռ ընդվզում է արհեստական, շինծու իմաստների մեջ, որ մարդիկ ճգտում են վերագրել աշխարհին՝ ընդդեմ սովորությունների, պայմանականությունների, ծեսերի: Իր մահապատժի նախօրյակին Մյորսոն, «բացվելով աշխարհի քնքուշ անտարբերության առջև», հայտնաբերում է երջանկությունը: Նրա անտարբերությունն այլևս ուրիշ է՝ գիտակցական, ցանկալի: Երջանկությունը, ըստ Կամյուի հերոսի, աշ-

խարիի և մարդու անտարբերության համաձայնության մեջ է: Իսկ այդ երջանկության համար մենք պատասխանատու ենք: Եթե զրկված ենք նրանից, ուրեմն, տանուլ ենք տվել խաղը, որի խնդիրը էր իմաստավորել մեր գոյությունը: Եվ նաև ուրիշների գոյությունը: Քանզի միայն երջանիկ լինելով կարող ենք երջանկացնել ուրիշներին:

Սակայն աբսուրդ կյանքի իսկական սերը տանում է դեպի ընդվզում: Եթե «Սիզիփոսի առասպելը» (1942) ներկայացնում է աբսուրդի փիլիսոփայությունը, ապա «Ընդվզող մարդը» (1951) մտորում է ընդվզումի փորձի վերաբերյալ, որն առաջացել է Դիմադրության շարժման, պատերազմի ժամանակաշրջանի, համակենտրոնացման ճամբարների և խոշտանգումների դաժանությունների փորձից: Կամյուն չի կրել գերմանական երևութաբանության ազդեցությունը, նա որոշ ժամանակ մոտենում է Ժան-Պոլ Սարտրին՝ ելնելով քաղաքական ու Դիմադրության համերաշխության սկզբունքներից: Սակայն երկու մեծերը շուտով կատաղորեն ընդհարվում են, հենց լույս է տեսնում «Ընդվզող մարդը»: Ասենք, նրանց մտերմությունն էլ մակերեսային էր, քանզի Կամյուն երբեք էկզիստենցիալիստ չի եղել, նա հիմնականում «քարոյական փորձի» փիլիսոփա է, ունի ռեֆորմատորի, քարոզչի, դաստիարակի միտք, նրա մարդասիրությունը չի հիմնվում ինտելեկտուալիզմի վրա, գալիս է սրտից, ներշնչված է մարդկային հաղորդակցման, սիրո և բարեկամության պահանջներից և նաև մարդկային տառապանքների սուր զգացողությունից: Կամյուի բարոյական երևակայության մեջ Պրոմեթևսը փոխարինում է Սիզիփոսին և դառնում նոր պարադոքսի խորհրդանիշը. Պրոմեթևսը մարտահրավեր է նետում աստվածներին՝ հանուն մարդկանց փրկության, սակայն այդ փրկությունն ապահովելու համար նա պետք է մյուսներին ուսուցանի երջանկության ուղին և այսպիսով նրանց փրկի իրենցից, մի խոսքով, Պրոմեթևսը դառնում է Կեսար՝ այլասերված հերոս: Ուրեմն պետք է ընդվզումի ոգին պահել, քանի դեռ այն չի վարակվել, չի աղճատվել և չի

վերածվել կեսարյան հեղափոխականության: Ընդվզումը նվաստների և խոնարհների համերաշխությունն է. «Ես ընդվզում եմ, ուրեմն մենք կանք»:

Սոցիալական պատրանքների, հատկապես մարքսիզմի և ռուսական կոմունիզմի պատմական փորձի Կամյուի վերլուծությունը խորապես ուսանելի է: «Ընդվզող մարդը» մեզ համար հետաքրքիր է նաև նրանով, որ Կամյուն, լինելով ամբողջատիրության ոխերիմ թշնամին, ցույց է տալիս տարբերությունը նրա և նրա քաղաքական հակառակորդի միջև: «Անարդարացի կլիներ նույնացնել ֆաշիզմի և ռուսական կոմունիզմի նպատակները: Կոմունիզմն ավելի դրամատիկական է, նրա էությունը դահճի գովաբանումն է՝ զոհերի գնով: Ֆաշիզմը երբեք չի ձգտել ազատագրել մարդկությունն ամբողջությամբ. նրա նպատակը եղել է ազատագրել ոմանց՝ մյուսներին շահագործելու միջոցով: Կոմունիզմը, ելնելով իր խորիմաստ սկզբունքներից, ձգտում է ազատագրել բոլոր մարդկանց նրանց համընդհանուր, ժամանակավոր ստրկացման ուղիով: Պետք է ընդունել նրա գաղափարների վեհությունը: Սակայն լրիվ արդարացի է նույնացնել նրանց միջոցները (քաղաքական ցինիզմը երկուսն էլ ձեռք են բերել նույն ակունքից)՝ բարոյական նիհիլիզմը»: Ընդսմին, Կամյուն սուր խորաթափանցությամբ հրաժարվում է Լենինին արժանացնել անգամ յակոբինյանի կոչման. «Յակոբինյանները հավատում էին սկզբունքներին և առաքինությանը, նրանք զոհվեցին, երբ համարձակվեցին նրանց բացասել: Լենինը հավատում էր միայն հեղափոխությանը և արդյունավետության առաքինությանը»:

Ուրեմն Կամյուի համար բարոյական հարցը դրվում է այսպես. «Կարո՞ղ ենք ժխտումից և ընդվզումից դուրս բերել կյանքի որևէ կանոն: Կարո՞ղ ենք առանց բացարձակ սկզբունքներին դիմելու խուսափել ավերիչ տրամաբանությունից և գտնել բարգավաճման ու հպարտության խոստում՝ նվաստացած մարդու մակարդակում»: *Այո* է պատասխանը, որը ապրելու հրճվանքին է տրված, լինելու երջանկությանը, բնությանը, լույսին, բնապատկերների գեղեցկությանն առնչվելուն:

Եվ Կամյուի *այո*-ն երանելի լավատեսի *այո*-ն չէ: «Ժանտախտի» հեղինակը գիտի, որ աբսուրդի և ընդվզումի *ոչ*-ը պետք է միշտ ներկա լինի, որովհետև չկան վերջնական հաղթանակներ, տագնապն անընդմեջ է: «Ժանտախտը», ի հակադրություն «Օտարի», անհատի վեպ չէ, այն կոլեկտիվ ցավ է, համայնքի ողբերգություն: Այնքանով, որքանով գրված է ֆաշիզմի օկուպացիայի հիշողություններով, այն մի ողջ ժողովրդի պատասխանն է այդ համընդհանուր ցավին: Բեմահարթակին է օրանցիների սոցիալական կյանքը, կրոնական զգացմունքները, որոնք հանկարծակի հայտնվել են «պաշարման վիճակում»: Սակայն ստեղծագործության հիմքում հատկապես բարոյական խնդիրն է, Չարիքի գոյությունը և նրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը, քանի որ ինչպես Ռամբերն է ասում, «այս պատմությունը վերաբերում է մեզ բոլորիս», մենք պարտավոր ենք բոլորս նույն եռանդով և միահամուռ պայքարել ժանտախտի դեմ ամենուրեք, ուր նա ուղարկում է «իր առնետներին մեռնելու երջանիկ քաղաքում»: Այսպիսով, այս վեպը չլինելով օբյեկտիվ, չոր և սառը «ժամանակագրություն», որ կարելի էր ենթադրել, ելնելով ոճից, համընդհանուր «գործողության կոչ է»:

Կամյուն, դեռ Ալժիրի բանասիրական ֆակուլտետում սովորելու տարիներին, բացի Ժան Գրենիեի՝ իր փիլիսոփայության ուսուցչի, Անդրե Մալրոյի և Անդրե Ժիդի ազդեցությունից, որի «Երկնային կերակուրները» հիվանդին ուսուցանում էին ապաքինման և կյանքը ըմբռնչխնելու արվեստի ուղիները, կրում է նաև Ժակ Կոպոյի ազդեցությունը: Եթե ճշմարիտ է, որ Կոպոն հաշտեցրել է թատրոնը ամենաբարձր գրականության հետ, Կամյուն շատ բան է զոհաբերել հանուն թատրոնի նկատմամբ իր սիրո: Հայտնի է, որ Կոպոն պարտական է Ժիդին, որը, ինչքան էլ տարօրինակ է, այնքան էլ չէր սիրում թատրոնը: «Սավուղի» հեղինակը, եթե իր բարոյախոսությունը սահմանել է գեղագիտական լեզվով, ապա իր գեղագիտությունը սահմանել է բարոյախոսության լեզվով: Արժեքների այս փոխանակումը տեղ տվեց մի նոր կլասիցիզմի,

որի տաճարը դարձավ Ժակ Կոպոյի «Լը Վիյո Կոլոմբիեն» թատրոնը: Իսկ Կամյուն, անկասկած, այդ Եկեղեցու վերջին հավատացյալներից էր: Նրա «Թյուրիմացություն» և «Կալիգուլա» թատերգությունները պատասխան են (թեկուզ և երկչոտ) աբսուրդին ու չարին: «Բավական է, որ մարդ հաղթահարի իր վախն ու ընդվզումը,- ասում է Դիեգոն Մահին՝ Ժանտախտի քարտուղարին,- որպեսզի մեխանիզմը սկսի ճռնչալ»: Մարթային հետապնդում է ինքնասպանության գաղափարը: Կալիգուլան, հոգնելով անիմաստ ազատությունից, հյուծված անհնարին որոնումներից, տրվում է դավաղիրների ձեռքը: Բայց մարտնչող Դիեգոն, ինչպես և ահաբեկիչ Կալիանը, արդարացում են գտնում իրենց ընդվզման համար: «Անընդունակ արդարացնելու այն, ինչ նրանք, այնուամենայնիվ, անհրաժեշտ էին համարում, այդ «նուրբ մարդասպանները» մտածեցին տրվել արդարացման»:

«Կալիգուլան», որ հղանում է 1938 թվականին և արարվում Ժերար Ֆիլիպի կողմից, մարդ է, որին կատաղեցրել են կիսակատարելությունն ու կիսազատությունը: Նա իր անկումն ու անզորությունն այնքան սուր է զգում է, որ հասնում է բացարձակ իշխանության՝ դառնալով յուրօրինակ Աստված:

Հարցը, որ առաջադրում է «Արդարադատները» պիեսը (1949), մեր դարաշրջանի հարցն է՝ պե՞տք է ոչնչացնել կենդանի մարդկանց, մղվելով այն գաղափարով, թե երջանկացնելու ենք ծնվող մարդկանց: Կամյուն համակրում է 1905 թվականի ռուս ահաբեկիչներին, որոնք դեռևս գիտական հեղափոխականներ չեն և շահարկում են իրենց կյանքն իմաստավորող ապագան: Կալիանը, որ պատմական անձ է և մարդկային սիրով սիրում է Դորային, նրանց հետ նաև անգամ անողոք Ստեպանը, նրանք բոլորը գիտեն ընդունել մարդուն, թեկուզ և մակերեսայնորեն, այն մարդու մեջ, որին պիտի տապալեն: Ռումբն այրում է նրանց ձեռքերը: Այս իդեալիստները շատ են մտածում արդարադատության ու փառքի մասին: Կնոջ կամ մանկան հայացքը բավական է, որ նրանք տատանվեն: Նրանք կամենում են մնալ անաղարտ անգամ մոլեգ-

նության պահին: «Ողորմացե՛ք արդարադատներին»,- բացականչում է Դորան: Սա Դոստոևսկու գործող անձանց արժանի ճիչ է:

Կամյուն ապրեց թատրոնով որպես գոյության փորձ: Նրան չէ՞ր, որ մեղադրում էին, թե թատրոնում է ապաստան փնտրում Պատմությունից թաքնվելու համար. արդարության և ազատության վայր, արվեստ, որ ամենից շատ է գայթակղում մարդկանց՝ պարգևելով նրանց լույսի և զմայլանքի անցողիկ, բայց ուժգին մի պահ: Կամյուն ատում էր ստեղծագործությունները, որոնք ջանում են ապացուցել ինչ-որ բան: Թատրոնը նրա համար ամբիոն չէր: Նրա փոխադրությունները՝ Կալդերոնի «Խաչի ջերմեռանդությունը», Ֆոլքների «Ռեքվիեմ միանձնուհու համար», Դոստոևսկու «Դևերը», սևագրություն եղան ապագա գործերի համար:

«Ընդեղական ճառերում» Կամյուն շարադրեց գեղագիտության իր հիմնական սկզբունքները: Նորելյան մրցանակի հանձնման արարողության ժամանակ, մոտ կես դար առաջ (1957) արտասանած իր քեզիսները այսօր էլ հնչում են առավել քան արդիական: Նրա արտահայտած յուրաքանչյուր միտք, որը մարդասիրություն և ազատամտություն է ուսուցանում, այսօր այլևս ենթակա չէ քննարկման: Ըստ Կամյուի՝ արվեստը ծառայում է ոչ թե ժողովրդին կամ նրա վերնախավին, այլ ճշմարտությանն ու ազատությանը: «Ճշմարտությունն առեղծվածային է, փախչում է քեզնից, այն պետք է անընդհատ նվաճել: Ազատությունը վտանգավոր է, նույնքան դժվարամարս, որքան և զմայելի: Մենք պետք է քայլենք դեպի այս երկու նպատակները՝ դժվարությամբ, բայց վճռակամորեն, կանխավ գիտակցելով այդչափ երկար ճանապարհին սպասվելիք անհաջողությունները»:

Ուփսալի համալսարանում կարդացած դասախոսության մեջ, որը հետագայում լույս տեսավ «Արվեստագետը և իր ժամանակը» խորագրով, Կամյուն զարգացնում է իր հայացքները արվեստի

դերի մասին: Նա նշում է արվեստագետի տեղը ժամանակակից աշխարհում. «Այսօր յուրաքանչյուր արվեստագետ զինվորագրված է իր ժամանակի քիապարտության մեջ: Նա պետք է համակերպվի դրան, ջանալով ըստ կարելվույն չմեռնել, այսինքն՝ շարունակել ապրել և ստեղծագործել: Ստեղծագործել այսօր՝ նշանակում է վտանգել ինքն իրեն: ...Արվեստագետը պայքարում է կամ անձնատուր լինում»: «...Գրողը կարող է ծեռք բերել հանրության հետ ընդհանրության զգացողությունը, որը նրան կարդարացնի, սակայն մի պայմանով՝ որ նա ըստ կարելվույն ընդունի իր արհեստի մեծությունը կազմող երկու պարտավորություն՝ ծառայել ճշմարտությանը և ծառայել ազատությանը»: Բայց արվեստի ազատությունը ծանր փորձություն է նվիրյալների համար, ահա թե ինչու այսօր ևս, ինչպես և Կամյուի ժամանակ, ամեն ոք ջանում է խույս տալ այդ փորձությունից՝ տրվելով ամեն տեսակ «ստրկական ծառայության», հարկադրական գործունեության՝ հանուն հարմարավետության: Սակայն ըստ Կամյուի՝ «արվեստն ապրում է լոկ իր ստեղծած հարկադրանքներով. մնացած բոլոր հարկադրանքներից նա մեռնում է»:

1951 թվականին Կամյուն նշում է «Օրագրերում». «Երբեմն կուզեի մեռնել հանկարծակի մահով, որ կարողանայի արդարանալ, թե ինչու եմ ճչացել հոգուս պոկման պահին: Երբեմն էլ երազում եմ երկարատև ու պայծառամիտ վախճան, որպեսզի գոնե չասեն, թե անակնկալի եմ եկել...»:

1960 թվականի հունվարի 4-ին Կամյուն զոհվեց հանկարծակի, մահը վրա հասավ վայրկենապես: Ասում են՝ աչքերը չոված էին, «տեսքը՝ հանգիստ ու ասես զարմացած»:

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

DISCOURS DE SUÈDE

ՃԱՌ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ 1957Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ

Այս ճառը, ավանդության համաձայն, արտասանվել է Ստոկհոլմի քաղաքապետարանի հանդիսավոր ճաշկերույթի ժամանակ, որը եզրափակում է Նոբելյան մրցանակների հանձնման արարողությունը:

Ստանալով պարգևը, որով ձեր անկախ Ակադեմիան կամեցավ ինձ մեծարել, ես անչափ երախտապարտ զգացի ու չափեցի, թե ինչ աստիճանով էր այդ գնահատանքը գերազանցում իմ անձնական արժանիքները: Ամեն ոք, և առավել ևս ամեն արվեստագետ, ցանկանում է ճանաչված լինել: Ես՝ նույնպես: Սակայն ես անկարող էի ձեր որոշումն իմանալուց հետո նրա հնչողությունը չհամեմատել իմ իրական պատկերի հետ: Ինչպե՞ս կարող էր դեռ երիտասարդ մեկը՝ հարուստ լոկ իր վարանումներով և իր դեռևս հղկվող ստեղծագործություններով, սովոր ապրելու աշխատանքային միայնության մեջ կամ ընկերների հետ առանձնացած, տագնապով չընդունել այդ որոշումը, որը եզակի, միայն իրեն հատկացված հարվածով նրան դուրս էր բերում շլացուցիչ լուսավորության կենտրոն: Ի՞նչ սրտով նա կարող էր ընդունել մեծ պատիվն այն ժամին, երբ Եվրոպայում շատերը, այդ թվում և ամենամեծ գրողները, լռության են դատապարտված, երբ իր հայրենի հողը անսահման դժբախտության մեջ է:

Ես ապրեցի այդ շփոթմունքն ու ներքին խռովքը: Անդորրս վերագտնելու համար, ի վերջո, ինձ հարկ եղավ համակերպվել չափազանց մեծահոգի ճակատագրի հետ: Եվ քանի որ ես չէի կարող հավասարվել նրան, հենվելով լոկ իմ արժանիքներին, միակ բանը, որ գտա և որն ինձ նեցուկ է եղել ողջ կյանքիս ամենահակասական հանգամանքներում, գաղափարն է, որ ստեղծում եմ իմ արվեստի և գրողի կոչման մասին: Միայն թույլ տվեք երախտագիտության ու բարեկամության զգացումով և ըստ կարելվույն պարզ ու հստակ ասել, թե որն է այդ գաղափարը:

Անձամբ ես անկարող եմ ապրել առանց իմ արվեստի: Սակայն այդ արվեստը ես երբեք վեր չեմ դասել ամեն ինչից: Ընդհակառակը, այն ինձ անհրաժեշտ է, որովհետև ոչ մեկից առանձնացված չէ և ինձ թույլ է տալիս ապրել այնպես, ինչպես ես գոյություն ունեմ, ինչպես բոլորը: Արվեստն ինձ համար միայնակ վայելելու հրճվանք չէ: Այն միջոց է հուզելու բազմաթիվ մարդկանց՝ նրանց ընծայելով համատեղ տառապանքների ու ուրախությունների արտոնյալ պատկերը: Ուստի, նա արվեստագետին ստիպում է չմեկուսանալ՝ նրան ենթարկելով ամենաանձնշան ու ընդհանրական ճշմարտությանը: Հաճախ արվեստագետն ընտրում է այդ ճակատագիրը, քանզի իրեն յուրահատուկ է զգում, բայց շուտով հասկանում է, որ իր արվեստը, իր յուրահատկությունը սնվում է միայն այն դեպքում, երբ ինքը խոստովանում է իր նմանությունը բոլորին: Արվեստագետը թրծվում է իր՝ ուրիշների հետ ունեցած այդ մշտնջենական երթևեկի մեջ, գեղեցկության կես ճանապարհին, որը չի կարող անտեսել, և մարդկային հանրության միջև, որից չի կարող պոկվել: Ահա թե ինչու իսկական արվեստագետները չեն քամահրում ոչինչ, նրանք իրենց պարտքն են համարում հասկանալ՝ դատելու փոխարեն: Ու թե բաժին ունեն նրանք այս աշխարհում, ապա դա պետք է լինի միայն հասարակության այն մասը, որտեղ, ըստ Նիցշեի հանճարեղ խոսքերի, կթագավորի ոչ թե դատավորը, այլ ստեղծագործողը՝ լինի աշխատավոր թե մտավորական:

Հենց նույն պատճառով գրողի դերը չի տարանջատվում դժվար պարտականություններից: Եթե սահմանենք՝ գրողն այսօր չի կարող ծառայել նրանց, ովքեր պատմություն են ստեղծում, քանզի ծառայում է նրանց, ովքեր պատմությունն են կրում: Հակառակ դեպքում նա մնում է միայնակ և զրկված իր արվեստից: Բռնակալական բոլոր բանակներն իրենց միլիոնավոր զինվորներով չեն կարող դուրս բերել նրան իր միայնությունից անգամ, և հատկապես, եթե նա համաձայնի համընթաց քայլել նրանց հետ: Սակայն աշխարհի ինչ-որ անկյունում նվաստացումների մեջ լքված անհայտ դատապարտյալի լռությունն անգամ բավական է գրողին

հանելու իր աքսորից, կամ գոնե, երբ նա հասնում է ազատության առավելություններին, չպետք է մոռանա այդ լռությունը և պետք է այն հնչեցնի արվեստի բոլոր միջոցներով:

Ոչ ոք մեզնից այնքան մեծ չէ, որ արժանի լինի նման կոչման: Բայց կյանքի բոլոր հանգամանքներում անհայտ կամ ժամանակավորապես հայտնի, բռնակալական շղթաների մեջ կապանքված կամ առայժմ ազատ արտահայտվելու մենաշնորհն ունեցող գրողը կարող է ձեռք բերել հանրության հետ ընդհանրության զգացողությունը, որը նրան կարդարացնի, սակայն մի պայմանով՝ որ նա ըստ կարելվույն ընդունի իր արհեստի մեծությունը կազմող երկու պարտավորություն՝ ծառայել ճշմարտությանը և ծառայել ազատությանը: Քանի որ նրա կոչումն է հնարավորին չափ համախմբել ավելի մեծ թվով մարդկանց, նա չի կարող համակերպվել կեղծիքին ու ստրկամտությանը, որոնք իրենց տիրակալության սահմաններում բազմացնում են միայնությունը: Ինչպիսին էլ լինեն մեր անձնական թուլությունները, մեր արհեստի ազնվությունը մշտապես արմատավորվելու է երկու դժվար իրագործվող հանձնառություների մեջ՝ հրաժարվել իմացածը կեղծելուց և ընդդիմանալ ճշմանը:

Ավելի քան քսան տարվա խելահեղ պատմության ընթացքում իմ բոլոր հասակակիցների նման անօգնական, անհույս կորած՝ ժամանակի ջրաձգումների մեջ, ինձ սատարել է մի անորոշ զգացում, որ գրելը պատիվ է այսօր, քանզի այդ գործը պարտադրում է գրել և ոչ միայն գրել է պարտադրում: Այն ինձ մասնավորապես պարտադրել է կարողություններիս սահմաններում և ուժերիս ներածին չափ կրել պատմությունը, դժբախտությունն ու հույսը բոլոր նրանց հետ, ովքեր ապրել են դրանք, որ ընդհանուր էին մեզ համար: Մարդիկ, որոնք ծնվել էին առաջին աշխարհամարտի սկզբին, քսան տարեկան էին դարձել այն պահին, երբ միաժամանակ հաստատվում էին և հիտլերյան իշխանությունը, և առաջին հեղափոխական գործընթացները, նրանք, ովքեր հետագայում իրենց կրթությունը կատարելագործելու համար առճակատման ելան Իսպանիայի պատերազմին, երկրորդ աշխարհամարտին,

համակենտրոնացման ճամբարներին, խոշտանգումներով ու բանտերով լեցուն Եվրոպային, նրանք այսօր պետք է դաստիարակեն իրենց որդիներին, պետք է ստեղծագործեն մի աշխարհում, որին սպառնում է միջուկային կործանումը: Ոչ ոք, իմ կարծիքով, չի կարող նրանցից լավատեսություն պահանջել: Իսկ ես անգամ այն կարծիքին եմ, որ մենք, չդադարեցնելով պայքարը նրանց դեմ, պարտավոր ենք հասկանալ մոլորությունն այն մարդկանց, ովքեր ահագնացող հուսահատության մեջ համաձայնեցին անարգվել և ետվեցին դարաշրջանի նիհիլիզմի մեջ: Այսուհանդերձ, մեծամասնությունը թե՛ իմ երկրում, թե՛ Եվրոպայում մերժեց նիհիլիզմը և գնաց ի խույզ օրինականության: Նրանց հարկ եղավ ստեղծել աղետալի ժամանակներում ապրելու արվեստը՝ կրկին ծնվելու համար և հետո բացճակատ պայքարելու մահվան բնազդի դեմ, որն արդի պատմության ստեղծագործությունն է:

Յուրաքանչյուր սերունդ, անկասկած, կարծում է, թե ինքն է կոչված վերափոխելու աշխարհը: Իմ սերունդը, սակայն, գիտի, որ չի վերափոխի այն: Բայց նրա խնդիրը թերևս ավելի մեծ է: Այն է՝ թույլ չտալ, որ աշխարհը կործանվի: Լինելով ժառանգորդը այլասերված պատմության, որտեղ միախառնված են տապալված հեղափոխությունները, խենթացած տեխնիկաները, մեռած աստվածներն ու սպառված գաղափարախոսությունները, որտեղ միջնորդ իշխանություններն այսօր ի զորու են ամեն ինչ ավերել, սակայն անկարող են այլևս համոզել որևէ մեկին, որտեղ խելամտությունն այնքան է ցածրացել, որ դարձել է ատելության ու ճնշման աղախինը, այդ սերունդը, հենվելով միայն իր ժխտումներին, պարտավոր է ինքն իրենով և իր շուրջը փոքր-ինչ վերականգնել այն, ինչը կազմում է ապրելու և մեռնելու արժանապատվությունը: Անկման սպառնալիքի տակ ապրող այս աշխարհում, որտեղ մեր հայտնի հավատաքննիչները փորձում են ընդմիշտ հաստատել մահվան թագավորությունը, այդ սերունդը գիտի, որ պարտավոր է ժամացույցի սլաքի ուղղությանը հակառակ մի տեսակ խենթ ընթացքով ազգերի միջև հաստատել խաղաղություն, որը ստրկական հնազանդություն չլինի, կրկին հաշտեցնել աշխատանքն ու

մշակույթը, բոլոր մարդկանցով վերականգնել դաշնակցության կամարը: Պարզ չէ, երբևէ կկարողանա՞ նա կատարել այդ ահռելի պարտականությունը, սակայն հաստատ է, որ ամենուրեք աշխարհում նա գործի է դնում ճշմարտության և ազատության իր կրկնակի խաղաքարտը և հարկ եղած դեպքում կարող է առանց ատելության մեռնել հանուն դրա: Հենց այդ սերունդն է, որ ամենուրեք, որտեղ էլ գտնվի, արժանի է մեծարանքի ու քաջալերման, և հատկապես այնտեղ, որտեղ նա զոհաբերում է իրեն: Ամեն դեպքում, վստահ ձեր խորին համաձայնությանը, ես կուզեի հենց նրան ուղղել պատիվը, որին ինձ արժանացրիք:

Ներկայացնելով գրողի արվեստի վեհությունը՝ կուզեի միաժամանակ նշել նրա իսկական տեղը, նա, ով ունի նույն տիտղոսները, ինչ իր մարտական զինակիցները՝ խոցելի, բայց համառ, անարդար և արդարությամբ տոգորված, կառուցելով իր ստեղծագործությունը՝ առանց ամաչելու և առանց գոռոզանալու, բոլորին ի տես, ընդմիշտ երկփեղկված ցավի ու գեղեցկության միջև, վերջապես, ընդունակ իր երկակի էությունից դուրս բերելու արարումներ, որ համառորեն ջանում է կառուցել պատմության ավերիչ շարժման մեջ: Այս ամենից հետո ո՞վ կարող է նրանից հուսալ պատրաստի լուծումներ և գեղեցիկ բարոյախոսություններ: Ճշմարտությունն առեղծվածային է, փախչում է քեզնից, այն անընդունակ պետք է նվաճել: Ազատությունը վտանգավոր է, նույնքան դժվարամարս, որքան և զմայլելի: Մենք պետք է քայլենք դեպի այս երկու նպատակները՝ դժվարությամբ, բայց վճռականորեն, կանխավ գիտակցելով այդչափ երկար ճանապարհին սպասվելիք անհաջողությունները: Արդ, ո՞ր խելամիտ գրողը կհամարձակվի առաքինության բարոյախոսը դառնալ: Ինչ վերաբերում է ինձ, ես մեկ անգամ պիտի ասեմ, որ հեռու եմ այս ամենից: Ես երբեք չեմ կարողացել հրաժարվել լույսից, ապրելու երջանկությունից, ազատ կյանքից, որի մեջ եմ մեծացել: Թեպետ այդ կարոտախտով եմ բացատրվում իմ բազմաթիվ վրիպումներն ու սխալները, բայց հենց դա է ինձ օգնել առավել լավ հասկանալ իմ արհեստը, այն ինձ օգնում է նաև այսօր՝ բնազդաբար կանգնել բոլոր

լռակյաց մարդկանց կողքին, ովքեր չեն կարող հանդուրժել կյանքն այս աշխարհում լոկ ազատ ու վաղանցուկ երջանկությունների հիշողությամբ կամ վերապրումով:

Այսպես, գալով իմ իրական էությանը, սահմաններին, պարտքերին, ինչպես նաև իմ դժվարին հավատքին, ինձ ավելի անկաշկանդ եմ զգում ձեզ ցույց տալու, որպես վերջաբան, անսահման մեծությունն ու շռայլությունը ձեր ընծայած պարգևի, ավելի անկաշկանդ՝ ձեզ ասելու նաև, որ ես կուզենայի այն ընդունել իբրև հարգանքի տուրք բոլոր նրանց, ովքեր, մասնակցելով նույն պայքարին, չեն հասել ոչ մի արտոնության, այլ, ընդհակառակը, ճանաչել են միայն դժբախտություն ու հալածանք: Այժմ ինձ մնում է ի սրտե շնորհակալություն հայտնել ձեզ և հրապարակավ, որպես անձնական երախտագիտության վկայություն, ձեզ տալ այն նույն հավատարմության հինավուրց խոստումը, որ յուրաքանչյուր իսկական արվեստագետ ամեն օր լռելյայն տալիս է ինքն իրեն:

1957

1957 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

«Արվեստագետը և իր ժամանակը» վերնագրով այս դասախոսությունը կարդացվել է Ուփսալի համալսարանի մեծ ամֆիթատրոնում:

Արևելյան մի իմաստուն իր աղոթքներում միշտ խնդրում էր, որ Աստված իրեն խնայի և կյանք չպարգևի հետաքրքիր ժամանակաշրջանում: Իսկ քանի որ մենք իմաստուն չենք, Աստված մեզ չի խնայել, և մենք ապրում ենք հետաքրքիր ժամանակաշրջանում: Համենայնդեպս այն թույլ չի տալիս, որ մենք ձանձրանանք իրենից: Արդի գրողները լավ գիտեն այդ: Եթե նրանք խոսում են, անմիջապես քննադատվում են և քարկոծվում: Եթե համեստաբար լռում են, անվերջ խոսում են միայն նրանց լռության մասին, որպեսզի աղմկածայն պարսավեն նրանց:

Այս իրարանցման մեջ գրողն այլևս հույս չի փայփայում, թե կարող է մի կողմ քաշվել և տրվել իրեն հարազատ մտքերին ու պատկերներին: Մինչև հիմա լավ թե վատ ձեռնպահությունը հնարավոր էր պատմության մեջ: Նա, ով չէր համաձայնում, կարող էր հաճախ լռել կամ խոսել այլ բանի շուրջ: Այսօր ամեն ինչ փոխվել է, անգամ լռությունը ձեռք է բերել ահարկու իմաստ: Այն պահից ի վեր, երբ ձեռնպահությունն ինքը սկսեց դիտվել որպես ընտրություն՝ պատժվելով կամ գովաբանվելով որպես այդպիսին, արվեստագետը՝ կամա-ակամա, դառնում է զինվորագրված: «Զինվորագրվածն» այստեղ ինձ ավելի ճշգրիտ է թվում, քան «հանձնառուն»: Եվ իրոք, խոսքը ոչ թե կամավոր հանձնառության մասին է, այլ, ավելի շուտ, պարտադիր զինվորական ծառայության: Այսօր յուրաքանչյուր արվեստագետ զինվորագրված է իր ժամանակի քիապարտության մեջ: Նա պետք է համակերպվի դրան, անգամ եթե կարծում է, որ քիանավից ծովատառեխի հոտ է գալիս, որ վերակացուներն իսկապես չափազանց շատ են և, դեռ ավելին, ուղղությունը սխալ է վերցված: Մենք բաց ծովում ենք: Արվեստագետը մյուսների նման իր հերթին պետք է քիավարի, ջանալով ըստ

կարելվույն չմեռնել, այսինքն՝ շարունակել ապրել և ստեղծագործել:

Ճիշտն ասած՝ դա այնքան էլ հեշտ չէ, և ինձ հասկանալի է, երբ արվեստագետները ափսոսանքով են հիշում իրենց երբեմնի հարմարավետ կյանքը: Փոփոխությունը կտրուկ եղավ: Անշուշտ, պատմության արենայում միշտ եղել են և՛ զոհեր, և՛ առյուծներ: Առաջինները գոյատևում էին հավիտենականի մխիթարանքներով, երկրորդները՝ արյունածոր պատմական կերակուրներով: Բայց արվեստագետի տեղը մինչև այժմ ամֆիթատրոնում էր: Նա երգում էր հենց այնպես, ինքն իրեն կամ, լավագույն դեպքում, զոհին քաջալերելու և առյուծի ախորժակը փոքր-ինչ մեղմելու համար: Այժմ, ընդհակառակը, արվեստագետն արենայում է: Նրա ձայնը ակնհայտորեն փոխված է. այն շատ ավելի անվստահ է:

Պարզ երևում է, թե ինչ կարող է կորցնել արվեստը իր վրա դրված այս մշտական պարտավորությունից: Նախևառաջ՝ անբռնազբոսությունը և այն աստվածային ազատությունը, որով շնչում է Մոցարտի ստեղծագործությունը: Այժմ առավել քան հասկանալի է արվեստի մեր ստեղծագործությունների վայրագ ու համառ կերպարանքը, նրանց հոգսաշատ ճակատը և նրանց հանկարծակի ձախողումները: Բացատրելի է դառնում նաև, թե ինչու այսօր մենք ունենք ավելի շատ լրագրողներ, քան գրողներ, նկարչության մեջ՝ ավելի շատ բոյ-սկաուտներ, քան Սեզաններ, և, վերջապես, ինչու «Վարդագույն գրադարանը» կամ «Սև վեպը» գրավել են «Պատերազմ և խաղաղության» կամ «Պարմի մենաստանի» տեղը: Իհարկե, միշտ էլ կարելի է իրերի այս վիճակին հակադրել մարդասիրական տրտունջներ, դառնալ այն, ինչին ամեն գնով ձգտում էր «Դևերի» Ստեպան Տրոֆիմովիչը՝ նախատինքի մարմնացում: Կարելի է նաև այս հերոսի նման ունենալ քաղաքացիական ողբի նոպաներ: Սակայն այդ ողբը ոչինչ չի փոխում իրական կյանքում: Այդ դեպքում, ըստ իս, ավելի լավ է իր մասնակցությունը բերել դարաշրջանին, քանի որ այն համառորեն դա է պահանջում, և հանգիստ ընդունել, որ «թանկագին վարպետների», «կամելիազարդ» արվեստագետների և գլխավերևներում փառաբան-

վող հանճարների ժամանակներն անցել են: Ստեղծագործել այսօր՝ նշանակում է վտանգել ինքն իրեն: Ամեն մի հրապարակում արարք է, իսկ այդ արարքը ձեզ հանճնում է դարի կրքերին, որը ոչինչ չի ներում: Ուրեմն, հարցը պարզելը չէ, թե արվեստում իրերի այս վիճակը վնասաբե՞ր է, թե՞ ոչ: Հարցը բոլոր նրանց համար, ովքեր չեն կարող ապրել առանց արվեստի և նրա նշանակության, պարզելն է՝ ինչպե՞ս կարող է դեռ այդքան գաղափարախոսական ոստիկանությունների մեջ (որքա՞ն եկեղեցիներ, ինչպիսի՞ միայնություն) գոյատևել ստեղծագործելու տարօրինակ ազատությունը:

Այս տեսակետից բավական չէ հայտարարել, թե արվեստին սպառնում է պետական հզորությունը: Նման պարագայում, իրոք, խնդիրը պարզ կլիներ. արվեստագետը կամ կպայքարեր, կամ անձնատուր կլիներ: Խնդիրն ավելի է բարդանում, մահացու վտանգավոր է դառնում այն պահից ի վեր, երբ պայքար է սկսվում հենց իր՝ արվեստագետի ներսում: Ատելությունը արվեստի հանդեպ, որի փայլուն օրինակներ է ընծայում մեր հասարակությունը, այսօր այդքան ուժեղ է լոկ այն պատճառով, որ այն հովանավորվում է հենց իրենց՝ արվեստագետների կողմից: Մեր նախորդների կասկածները վերաբերում էին իրենց սեփական տաղանդին: Ժամանակակից արվեստագետների կասկածները վերաբերում են իրենց արվեստի անհրաժեշտությանը, հետևաբար նաև իրենց սեփական գոյությանը: Ռասինը 1957 թվականին ներողություն պիտի խնդրեր «Բերենիկը» գրելու համար, փոխանակ պայքարեր հանուն Նանտի հրովարտակի պաշտպանության: Այն, որ արվեստագետը հարցականի տակ է դնում արվեստը, ունի բազմաթիվ պատճառներ, որոնցից արժի առանձնացնել միայն ամենավսեմները: Այդ հարցադրումը լավագույն դեպքում բացատրվում է ժամանակակից արվեստագետի այն զգացումով, թե ինքը կեղծում է կամ խոսում է սին բաների մասին, եթե չի անդրադառնում ժամանակի պատմական ողբերգություններին:

Եվ իրոք, մեր ժամանակներին բնորոշ է մարդկային զանգվածների հառնումը՝ իրենց թշվառ վիճակով արդի զգայականության

առջև: Մենք գիտեինք նրանց գոյության մասին, սակայն միտում կար մոռացության տալ նրանց: Իսկ եթե գիտենք այդ մասին, ապա ոչ այն պատճառով, որ արվեստագետների կամ ուրիշների վերնախավը լավից լավն է դարձել, այլ, համոզված ենք դրանում, որ մարդկային զանգվածները ուժեղացել են և թույլ չեն տալիս մոռանալ իրենց:

Արվեստագետի հրաժարականի համար այլ պատճառներ էլ կան, որոնցից մի քանիսն այնքան էլ վեհապանծ չեն: Բայց ինչպիսին էլ լինեն այդ պատճառները, նույն նպատակն են հետապնդում. թևաթափ անել ստեղծագործության ազատությունը՝ քարկոծելով նրա հիմնական սկզբունքը՝ ստեղծագործողի հավատը իր նկատմամբ: Հոյակապ է ասել Էմերսոնը. «Հավատի բարձրագույն ձևը մարդու խոնարհումն է իր սեփական հանճարի առջև»: Իսկ 19-րդ դարի մեկ ուրիշ ամերիկացի գրող ավելացրել է. «Քանի դեռ մարդը հավատարիմ է ինքն իրեն, ամեն բան շռայլորեն կտրվի նրան՝ իշխանություն, հասարակություն, ինքը՝ արեգակը, լուսինն ու աստղերը»:

Այս հրաշալի լավատեսությունը կարծես մեռած է այսօր: Շատ դեպքերում արվեստագետն ամաչում է ինքն իրենից և իր առավելություններից, եթե, իհարկե, ունի: Ամենից առաջ նա պիտի պատասխանի ինքն իրեն ուղղած հարցին. գուցե արվեստը կեղծ շքեղությո՞ւն է:

- I -

Առաջին ազնիվ պատասխանը, որ կարող է հետևել, այս է՝ իսկապես, պատահում է, որ արվեստը դառնում է կեղծ շքեղություն: Մեզ քաջ հայտնի է, որ թիանավի տախտակամածին նստած, կարելի է (միշտ և ամենուրեք) գովերգել աստղաբույլերը, մինչ տաժանապարտներն ուժասպառվում են նավագործում, կարելի է, կրկեսի ամֆիթատրոնում նստած, արձանագրել աշխարհիկ խոսակցությունները, մինչ արենայի գոհը ճրթճրթում է առյուծի

ատամի տակ: Եվ շատ դժվար է որևէ առարկություն անել այս արվեստում, որը հայտնի է իր անցյալի նվաճումներով: Եթե միայն չասենք, որ իրերը փոխվել են մի քիչ, մասնավորապես, սքանչելիորեն աճել է տաժանապարտների ու նահատակների թիվը երկրի երեսին: Այսչափ թշվառության առջև այս արվեստը, եթե ուզում է մնալ շքեղություն, պետք է այսօր ընդունի նաև կեղծիքը:

Ինչի՞ մասին պիտի խոսի այդ արվեստը: Եթե այն հարմարվելու է մեր հասարակության պահանջներին, մեծամասամբ, վերածվելու է դատարկամիտ զվարճալիքի: Եթե արվեստագետը կուրորեն ժխտում է հասարակական պահանջը, եթե արվեստագետը վճռում է մեկուսանալ իր դերի մեջ, ոչինչ չի կարող արտահայտել, բացի հրաժարումից: Այդ դեպքում մենք արդյունքում կունենանք կատակասերներ կամ ձևաբան-քերականներ, որոնք երկու դեպքում էլ կհասնեն կենդանի իրականությունից կտրված արվեստի: Մոտավորապես մեկ հարյուրամյակից ի վեր մենք ապրում ենք մի հասարակության մեջ, որն անգամ դրամի հասարակություն չէ (փողը կամ ոսկին կարող են կատաղի կրքեր բորբոքել), այլ միայն դրամի վերպցական խորհրդանիշների հասարակություն: Առևտրականների հասարակությունը կարող է սահմանվել որպես մի հասարակություն, որտեղ իրերն անհետանում են ի նպաստ նշանների: Երբ իշխող դասակարգն իր հարստությունն այսուհետ չափում է ոչ թե հողաչափով կամ ոսկու կոտով, այլ թվաքանակով, որը կատարելապես համապատասխանում է փոխանակման գործողությունների որոշակի մի թվաքանակի, նա ակամա սկսում է մի տեսակ միստիֆիկացնել իր փորձն ու իրեն շրջապատող աշխարհը: Նշանների վրա հիմնված հասարակությունը, ըստ էության, արհեստական հասարակություն է, որտեղ մարդու մարմնական ճշմարտությունը միստիֆիկացված է: Ուստի զարմանալի չէ, եթե այդ հասարակությունը որպես կրոն ընտրում է ձևական սկզբունքների բարոյականությունը՝ ազատություն և հավասարություն բառերը նույն հաջողությամբ գրելով թե՛ բանտերի և թե՛ ֆինանսական տաճարների վրա:

Սակայն հնարավոր չէ առանց պատժվելու այլասերել բառերը:

Ամենազրպարտվող արժեքն այսօր, անշուշտ, ազատությունն է: Որոշ պայծառ գլուխներ (ես միշտ մտածել եմ, որ կա երկու տեսակ խելք՝ խելացի խելք և հիմար խելք) ուսմունք են ստեղծում այն մտքից, ըստ որի ազատությունը ոչ այլ ինչ է, քան խոչընդոտ իսկական առաջընթացի ճանապարհին: Բայց նման հանդիսավոր տխմարությունները հնարավոր եղան արտաբերել, որովհետև այս հարյուր տարվա ընթացքում առևտրական հասարակությունը ազատությունը դատապարտեց բացառիկ և միակողմանի գործածության՝ այն դիտարկելով ավելի շուտ որպես իրավունք, քան որպես պարտականություն, և չերկյուղեց ըստ կարելվույն ազատության սկզբունքը դնել ի ծառայություն փաստացի շահագործման: Այդ ժամանակից ի վեր զարմանալի չէ, եթե այդ հասարակությունը արվեստից չի պահանջում լինել ազատագրման գործիք, այլ մեծ հետևանքներ չպարունակող վարժանք կամ սովորական զվարճալիք:

Ողջ բարձր հասարակությունը, որն ունենում է հատկապես փողային դժվարություններ և միայն սրտի հետ կապված նեղություններ, տասնյակ տարիների ընթացքում բավարարվել է այս բարձրաշխարհիկ վիպասաններով, որքան հնարավոր է, ամենաճոճիմ արվեստով, որի առնչությամբ Օսկար Ուայլդը, խորհելով ինքն իր մասին, մինչև բանտ ընկնելը, ասում էր, թե գերագույն արատը մակերեսային լինելն է:

Բուրժուական Եվրոպայի արվեստ արտադրողները (ես դեռ չեմ ասել արվեստագետները) 1900 թվականից առաջ և հետո այսպես ընդունեցին անպատասխանատվությունը, քանզի պատասխանատվությունը ենթադրում էր տանջալից պառակտում իրենց հասարակությունից (նրանք, ովքեր, իրոք, խզեցին, կոչվում էին Ռեմբո, Նիցշե, Ստրինդբերգ, և հայտնի է, թե դրա համար ինչ վճարեցին): Հենց այդ ժամանակաշրջանում ծնվեց արվեստը արվեստի համար տեսությունը, որն այդ անպատասխանատվության կոչն է: Արվեստը արվեստի համար, միայնակ արվեստագետի զվարճությունը հենց չինծու և վերացական հասարակության արհեստական արվեստն է: Նրա տրամաբանական հանգրվանը սա-

լոնային արվեստն է կամ լրիվ ձևական արվեստը, որը սնվում է ընտրովի նրբաճաշակությամբ ու վերացարկումներով, և որը, ի վերջո, փլուզում է ողջ իրականությունը: Այսպես, մի քանի ստեղծագործություն դյութում են մի քանի մարդկանց, մինչդեռ անթիվ գոեհիկ հայտնագործություններ փչացնում են շատերին: Ի վերջո, արվեստը սահմանվում է հասարակությունից դուրս՝ կտրելով իր կենդանի արմատները:

Քիչ-քիչ արվեստագետը, անգամ ամենամեծարվածը, միայնակ է մնում կամ լավագույն դեպքում իր ժողովրդի կողմից ընդունվում է լայն մամուլի կամ ռադիոյի միջնորդությամբ, որոնք նրան ներկայացնում են հարմար ու պարզեցված ձևով: Որքան արվեստը մասնագիտանում է, այնքան, իրոք, անհրաժեշտ է դառնում հանրամատչելիությունը: Միլիոնավոր մարդիկ այսպես ցանկություն կունենան ճանաչել մեր ժամանակի այս կամ այն մեծ արվեստագետին, քանի որ նրանք լրագրերից իմացել են, որ նա դեղձանիկներ է պահում կամ որ միշտ ամուսնանում է միայն վեց ամսով: Ամենամեծ հռչակն այսօր այն է, երբ գրողով հիանում են կամ ատում են նրան՝ առանց ընթերցելու: Յուրաքանչյուր արվեստագետ, որը ցանկանում է հռչակ ձեռք բերել մեր հասարակության մեջ, պարտավոր է իմանալ, որ ինքը չի լինելու այդ հռչակավորը, այլ մեկ ուրիշը իր անվան տակ, որը, ի վերջո, իրենից խույս կտա և գուցե մի օր իր մեջ սպանի իսկական արվեստագետին:

Ուրեմն, զարմանալու հարկ չկա, որ 19-րդ և 20-րդ դարերում առևտրական Եվրոպայում ստեղծված ամենաարժեքավոր բաները, օրինակ, ասենք գեղարվեստական գրականության մեջ, ուղղված էին իր ժամանակի հասարակության դեմ: Կարելի է ասել, որ մինչև Ֆրանսիական հեղափոխության սկիզբը գեղարվեստական գրականությունը, ընդհանուր առմամբ, համաձայնողական գրականություն է: Իսկ այն պահից, երբ հեղափոխությունից ծնված բուրժուական հասարակությունը կայունացավ, ընդհակառակը, սկսեց զարգանալ ընդվզողական գրականությունը: Պաշտոնական արժեքներն այնժամ ժխտվեցին, օրինակ, մեզանում կամ հեղափոխական արժեք կրողների կողմից՝ ռոմանտիկներից մինչև

Ռեմբո կամ ազնվական արժեք պահպանողների կողմից, որոնց վառ օրինակներից են Վինյին ու Բալզակը: Երկու դեպքում էլ ժողովուրդն ու ազնվականությունը, որոնք ցանկացած քաղաքակրթություն սնող երկու հիմնական աղբյուրն են, դուրս են գալիս ընդդեմ իրենց ժամանակի շինծու հասարակության:

Սակայն այդ բողոքը, երկար ժամանակ մնալով պահված ու պրկված, իր հերթին դարձել է շինծու և տանում է դեպի մեկ այլ տեսակի ստեղծություն: Վաշխառու հասարակության մեջ ծնված «անիծյալ բանաստեղծի» թեման (Չաթրտոնը դրա վառ օրինակն է) ամրացավ մի նախապաշարումով, որն, ի վերջո, հավաստում է, թե մեծ արվեստագետ կարելի է դառնալ միայն հակադրվելով իր ժամանակի հասարակությանը, ինչպիսին էլ այն լինի: Այս սկզբունքը, որ սկզբում օրինական էր իր ծնունդով, երբ հավաստում էր, թե իսկական արվեստագետը չի կարող փողային աշխարհի հետ գործարքի մեջ մտնել, այնուհետև դարձավ կեղծ, երբ այդ սկզբունքից բխեցրին, թե արվեստագետը կարող է ինքնահաստատվել միայն հակադրվելով աշխարհում ընդհանրապես ամեն ինչին: Այդ պատճառով էլ մեր արվեստագետներից շատերն են ուզում «անիծյալ» լինել և տառապում են, երբ դա չի հաջողվում իրենց՝ միաժամանակ երազելով արժանանալ և՛ ծափահարությունների, և՛ սուլոցների: Սակայն այսօր մեր հոգնաբեկ կամ անտարբեր հասարակությունը ծափահարում կամ սուլում է լոկ պատահաբար: Ուստի, ժամանակակից մտավորականն, ի վերջո, պրկվում է ողջ էությամբ՝ հուսալով դառնալ մեծ: Բայց ձգտելով ժխտել ամեն ինչ, մինչև անգամ իր արվեստի ավանդույթները, արդի արվեստագետը սնվում է պատրանքով, թե ստեղծում է արարման իր սեփական օրենքը և իրեն Աստված է կարծում: Նա նմանապես կարծում է, թե կարող է ստեղծել իր իրականությունը: Սակայն հասարակությունից կտրված՝ նա ստեղծելու է միայն ձևական կամ վերացական գործեր, հուշիչ որպես փորձարկումներ, սակայն զուրկ բերրիությունից՝ բնորոշ իսկական արվեստին, որի առաքելությունն է միավորել մարդկանց: Վերջին հաշվով, ժամանակակից հնարամտությունների կամ վերացարկումների և Տոլս-

տոյի կամ Մոլիերի ստեղծագործությունների միջև, կարելի է ասել, նույնքան տարբերություն կա, որքան այն առուծախային պայմանագրի, որ կնքվում է դեռ չծլած, անտեսանելի հացահատիկի և խորը ակոսավորված, ցորենի ծփուն արտերի միջև:

- II -

Այսպիսով, արվեստը կարող է լինել կեղծ շքեղություն: Արդ, զարմանալի չէ, որ մարդիկ կամ արվեստագետները ցանկացան ետ գնալ, վերադառնալ ճշմարտությանը: Հենց այդ պահից սկսած նրանք ժխտեցին արվեստագետի միայնության իրավունքը և նրան որպես թեմա առաջարկեցին ոչ թե իր սեփական անուրջները, այլ բոլորի կողմից ապրված, տանջանքներով լի իրականությունը: Համոզված, որ արվեստի համար արվեստը՝ ինչպես իր թեմաներով, այնպես էլ իր ոճով, հեռու է զանգվածների ըմբռնողությունից կամ ոչինչ չի արտահայտում իրենց ճշմարտությունից, նրանք ցանկացան, որ արվեստագետը խոսի մեծամասնության մասին և մեծամասնության համար: Թող նա բոլոր մարդկանց տառապանքների ու երջանկության թարգմանը լինի համընդհանուր լեզվով, այնժամ հասկանալի կլինի բոլորին: Որպես փոխհատուցում իրականության նկատմամբ ունեցած բացարձակ հավատարմության, նա կհասնի մարդկանց միջև լիակատար փոխըմբռնման:

Լիակատար փոխըմբռնման այդ իդեալը, հիրավի, մեծ արվեստագետի իդեալն է: Հակառակ ընդունված նախապաշարման, եթե կա մեկը, որը չունի միայնության իրավունք, հենց արվեստագետն է: Արվեստը չի կարող լինել մենախոսություն: Միայնակ ու անծանոթ արվեստագետը, երբ կոչ է անում ապագա սերունդներին, դրանով իսկ կրկին հավաստում է իր խորհրմասն կոչումը: Անհնարին համարելով երկխոսությունը խուլ կամ անտարբեր ժամանակակիցների հետ, նա ավելի լայն երկխոսության է հրավիրում սերունդներին:

Բայց բոլորի մասին և բոլորի հետ խոսելու համար պետք է խո-

սել այն մասին, ինչը հայտնի է բոլորին, այն իրականության մասին, որն ընդհանուր է մեզ համար: Ծովը, անծրևը, կարիքը, ցանկությունը, պայքարը մահվան դեմ՝ ահա ինչն է մեզ բոլորիս միավորում: Մենք նմանվում ենք իրար այն ամենում, ինչը տեսնում ենք միասին, ինչից տառապում ենք միասին: Երազանքները փոխվում են մարդկանց հետ, բայց այս աշխարհի իրականությունը մեր ընդհանուր հայրենիքն է: Հետևաբար, իրատեսության հավակնությունը օրինական է, քանզի խորապես կապված է գեղարվեստական արկածախնդրության հետ:

Եվ այսպես, լինենք ռեալիստ: Կամ ավելի ճիշտ՝ ջանանք լինել այդպիսին, եթե միայն հնարավոր է դա: Քանզի, եթե հավաստի չէ, որ այդ բառն իմաստ ունի, հավաստի չէ նաև, որ ռեալիզմը, անգամ եթե շատ ցանկալի է, հնարավոր է: Նախ պարզենք, թե մաքուր ռեալիզմ հնարավո՞ր է արվեստում: Եթե հավատանք անցյալ դարի նատուրալիստների հայտարարություններին, այն իրականության ճշգրիտ վերարտադրությունն է: Ուրեմն, արվեստում այն կլինի նույնը, ինչ լուսանկարչությունը գեղանկարչության մեջ. առաջինը վերարտադրում է, այնինչ երկրորդը ընտրում է: Բայց ի՞նչ է վերարտադրում այն, և ի՞նչ է ռեալիզմը: Անգամ լուսանկարներից լավագույնը, ի վերջո, բավարար չափով ճշգրիտ վերարտադրություն չէ, բավական ռեալիստական չէ: Օրինակ, մեր աշխարհում ի՞նչ կա ավելի իրական, քան մարդկային կյանքը, և ինչպե՞ս հուսալ, որ այն ավելի լավ կարտացոլվի ռեալիստական կինոնկարում: Բայց ի՞նչ պայմաններում է հնարավոր ստեղծել նման կինոնկար: Միայն զուտ երևակայական պայմաններում: Իրոք, հարկ կլինի պատկերացնել ամբացված իդեալական կինոխցիկ, օրուգիշեր ուղղված մարդու վրա՝ անընդմեջ արձանագրելով նրա անգամ նվազագույն շարժումները: Արդյունքում կստացվեր մի կինոնկար, որի միայն ցուցադրումը կտևեր մարդկային մի ողջ կյանք, և որը կկարողանային դիտել միայն ամենահոլու հանդիսատեսները՝ համաձայնելով զոհել իրենց կյանքը հանուն մեկ ուրիշի գոյության հանդեպ ունեցած բացառիկ հետաքրքրասիրության: Անգամ նման պայմաններում այդ աներևա-

կայելի կինոնկարը ռեալիստական չէր լինի: Այն պարզ պատճառով, որ մարդու կյանքի իրականությունն այնտեղ չի ամփոփված, որտեղ գտնվում է նա: Այն գտնվում է ուրիշ կյանքերի մեջ, որոնք ձևավորում են իր սեփականը, նախևառաջ, սիրած էակների կյանքը, որ հարկ կլիներ նույնպես նկարահանել, ինչպես նաև անծանոթ, հզոր և թշվառ մարդկանց կյանքը, համաքաղաքացիների, ոստիկանների, ուսուցիչների, անտեսանելի հանքախորշերի և շինհրապարակների աշխատողների կյանքը, դիվանագետների և բռնակալների, եկեղեցական բարեկորոգիչների, մեր վարքագծի համար վճռորոշ առասպելներ արարող արվեստագետների կյանքը և, վերջապես, ամենակարգին գոյերի վրա իշխող մեծն պատահականությունը: Ուրեմն, կա միայն մեկ հնարավոր ռեալիստական կինոնկար՝ հենց այն նույնը, որն անտեսանելի խցիկով անընդհատ ցուցադրվում է մեզ աշխարհի անտեսանելի էկրանի վրա: Միակ ռեալիստական արվեստագետը կլիներ Աստված, եթե գոյություն ունենար: Մնացյալ արվեստագետներն ակամա կլինեին իրականի անհավատները:

Հետևաբար, արվեստագետները, ովքեր մերժում են բուրժուական հասարակությունը և նրա ճնական արվեստը, ովքեր ուզում են խոսել իրականության մասին և միմիայն նրա մասին, հայտնվում են ցավալի փակուղում: Նրանք պետք է լինեն ռեալիստ, բայց չեն կարող: Նրանք ցանկանում են իրենց արվեստը ենթարկել իրականությանը, բայց իրականությունն անհնար է նկարագրել առանց ընտրություն կատարելու, իսկ ընտրությունը նրան կենթարկի արվեստի ինքնատիպությանը: Այս տառապանքը շատ լավ է երևում ռուսական հեղափոխության առաջին տարիների գեղեցիկ ու ողբերգական արվեստում: Այն, ինչ մեզ պարգևեց այդ ժամանակաշրջանի Ռուսաստանը՝ Բլոկ և մեծագույն Պաստեռնակ, Մայակովսկի և Եսենին, Էյզեյնշտեյն և ցեմենտ ու պողպատ գովերգող վիպասաններ, այդ ամենը ձևերի ու թեմաների մի լուսեղեն լաբորատորիա է, մի պտղաբեր տագնապ, փնտրտուքների խենթություն: Այսուհանդերձ, հարկ եղավ եզրակացության գալ և բացատրել, թե ինչպես կարելի է ռեալիստ լինել, երբ ռեալիզմը

հնարավոր չէ: Բռնակալությունն այստեղ, ինչպես և այլուր, գործում է բացեիբաց ու վճռական. ըստ նրա ռեալիզմը սկզբում անհրաժեշտ էր, հետո հնարավոր դարձավ, պայմանով, որ այն ցանկանա լինի սոցիալիստական: Ո՞րն է այս հայտարարության իմաստը:

Փաստորեն այն անկեղծորեն ընդունում է, որ չի կարելի վերարտադրել իրականությունը առանց ընտրություն կատարելու, և մերժում է ռեալիզմի տեսությունն այն տեսքով, ինչպիսին ձևակերպվել էր 19-րդ դարում: Մնում է միայն գտնել ընտրության սկզբունքը, որով կկազմակերպվի աշխարհը: Եվ նա գտնում է այդ սկզբունքը, բայց ոչ թե մեր ճանաչած իրականության մեջ, այլ այն իրականության մեջ, որը հետո է լինելու, այսինքն՝ ապագայում: Եղածը լավագույնս վերարտադրելու համար պետք է պատկերել գալիքը: Այլ կերպ ասած՝ սոցիալիստական ռեալիզմի առարկան դեռևս գոյություն չունեցող իրականությունն է:

Հակասությունն ավելի քան սքանչելի է: Սակայն, ըստ էության, հենց «սոցիալիստական ռեալիզմ» արտահայտությունն ինքնին հակասական է: Եվ իրոք, ինչպես է հնարավոր սոցիալիստական ռեալիզմը, երբ իրականությունն ամբողջովին սոցիալիստական չէ: Այն սոցիալիստական չէ, օրինակ, ոչ անցյալում, ոչ էլ ներկա ամեն բանում: Պատասխանը պարզ է. այսօրվա կամ երեկվա իրականությունից ընտրում են այն, ինչը նախապատրաստում և կառուցում է ապագայի կատարյալ քաղաքը: Ուրեմն, մի կողմից ջանասիրաբար ժխտում ու դատապարտում ենք իրականության մեջ այն ամենը, ինչը սոցիալիստական չէ, մյուս կողմից, փառաբանում, երկինք ենք հանում այն ամենը, ինչը սոցիալիստական է կամ դառնալու է այդպիսին: Մենք անխուսափելիորեն ձեռք ենք բերում քարոզչության արվեստը իր բարի ու չար կերպարներով, «Վարդագույն գրադարան»՝ կտրված բարդ ու կենդանի իրականությունից ճիշտ այնպես, ինչպես ձևական արվեստը: Ի վերջո, այդ արվեստը կլինի սոցիալիստական ճիշտ այնքան, որքան չի լինի սոցիալիստական: Այս գեղագիտությունը, որը հավակնում էր լինել ռեալիստական, վերածվում է մի նոր իդեալիզմի՝ իսկական

արվեստագետի համար նույնքան ամուլ, որքան բուրժուական իդեալիզմը: Իրականությունը ցուցադրաբար բարձրացվում է գեղարվեստական աստիճան՝ նրան լավագույնս վերացնելու համար: Արվեստը վերածվում է ոչնչության: Նա ծառայում է և, ծառայելով, ծառայեցվում է: Միայն նրանք, ովքեր պահվում են հենց իրականությունը նկարագրելու համար, կկոչվեն ռեալիստներ ու կփառաբանվեն: Մյուսները գրաքննության կենթարկվեն առաջինների ծափահարությունների ներքո: Հռչակը, որ բուրժուական հասարակարգում նշանակում էր չընթերցվել կամ վատ ընթերցվել, ամբողջատիրական հասարակարգում կնշանակի խանգարել ուրիշներին, որ չընթերցվեն: Այստեղ դարձյալ իսկական արվեստը կխեղաթյուրվի կամ կկաշկանդվի նրա լեզուն, և համընդհանուր հաղորդակցությունն անհնարին կդառնա հենց նրանց շնորհիվ, ովքեր ամենաշատն էին դրա կոչն անում:

Նման ճախողումից հետո ամենապարզ լուծումը կլիներ ընդունել, որ այսպես կոչված սոցիալիստական ռեալիզմը գրեթե ընդհանուր ոչինչ չունի մեծ արվեստի հետ, և որ հեղափոխականները, ի շահ հենց հեղափոխության, պետք է փնտրեն մեկ այլ գեղագիտություն: Սակայն հայտնի է հակառակը. նրա պաշտպանները կոկորդով մեկ բղավում են, որ սոցիալիստական ռեալիզմից անդին արվեստ չկա: Բղավում են, այո: Սակայն իմ խորին համոզմամբ նրանք չեն հավատում դրան և իրենց հոգու խորքում վճիռ են կայացրել, որ գեղարվեստական արժեքները պետք է ենթարկվեն հեղափոխական շարժմանը: Եթե դա հստակ ասվեր, վիճաբանությունն ավելի հեշտ կլիներ: Կարելի է հարգել մեծագույն հրաժարականն այն մարդկանց, ովքեր տառապում են չափազանց մեծ հակադրությունից, որն առկա է համընդհանուր դժբախտության և արվեստագետի ճակատագրին երբեմն առնչվող արտոնությունների միջև, ովքեր մերժում են այն անտանելի հեռավորությունը, որով բաժանվում են նրանք, որոնց բերանը փակում է թշվառությունը, և նրանց, որոնց կոչումը, ընդհակառակը, անընդհատ արտահայտվելն է: Այնժամ հնարավոր կլիներ հասկանալ այդ մարդկանց, փորձել երկխոսության մեջ մտնել նրանց հետ, ջանալ,

դիցուք, նրանց բացատրել, որ ստեղծագործական ազատության վերացումը թերևս ստրկության նկատմամբ հաղթանակ տանելու լավագույն ուղին չէ, և որ սպասելով, թե կգա բոլորի խոսելու ժամանակը, հիմարություն է զրկել խոսելու իրավունքից գոնե մի քանիսին: Այո, սոցիալիստական ռեալիզմը պետք է խոստովանի իր ազգակցությունը քաղաքական ռեալիզմին, պետք է ընդունի, որ նրա երկվորյակ եղբայրն է: Նա զոհաբերում է արվեստը հանուն արվեստին խորթ նպատակի, որը, սակայն, արժեքների իր աստիճանակարգում կարող է թվալ բարձրագույնը: Մի խոսքով, նա ժամանակավորապես վերացնում է արվեստը, որպեսզի նախևառաջ հաստատի արդարություն: Երբ կլինի արդարություն, դեռևս չճշտված ապագայում, արվեստը կվերակենդանանա: Այսպիսով, արվեստի նկատմամբ կիրառում են ժամանակակից իմաստունների ոսկյա օրենքը, որի համաձայն ծվածեղ չես անի առանց ծու կոտրելու: Բայց մենք չենք կարող չարաշահել այս ջախջախիչ ողջամտությունը: Բավական չէ հազարներով ծու կոտրել՝ համեղ ծվածեղ պատրաստելու համար, և, իմ կարծիքով, կոտրված կճեպների քանակով չեն դատում խոհարարի վարպետության մասին: Մեր ժամանակի արվեստագետ-խոհարարները պետք է, ընդհակառակը, վախենան ծվով լի զամբյուղները շուռ տալուց, որ հարկ եղածից ավելի ծու չկոտրեն, այլապես քաղաքակրթության ծվածեղն այլևս երբեք չի ստացվի, և արվեստն այլևս չի վերակենդանանա: Բարբարոսությունը վաղանցուկ չի լինում: Նրան չեն տալիս իր ուզած բաժինը, և, բնական է, արվեստից այն անցնում է բարքերին: Այնժամ մարդկանց դժբախտությունից և արյունից ծնվում է ճղճիմ գրականություն, հնազանդ մամուլ, դիմանկար-լուսանկարներ և խրատական թատերգություններ, որտեղ կրոնին փոխարինում է ատելությունը: Արվեստն այստեղ իր գագաթնակետին է հասցնում պատվիրված լավատեսությունը՝ շքեղությունների վատթարագույնը և կեղծիքներից ամենաողորմելին:

Եվ ինչո՞ւ զարմանալ: Մարդկային տառապանքն այնքան մեծ թեմա է, որ թվում է, ոչ ոք չի կարող դիպչել նրան, դրա համար պետք է առնվազն նույնքան զգայուն լինել, որքան Կիտսը, որը,

ասում են, ձեռքով էր շոշափում ցավը: Դա ակնբախ է դառնում, երբ ղեկավարվող գրականությունը շփոթահար փորձում է այդ տառապանքը մեղմել պաշտոնական մխիթարանքներով: Արվեստը արվեստի համար կեղծիքը ճևացնում էր, թե անտեղյակ է չարիքին, և, այդպիսով, ստանձնում էր դրա պատասխանատվությունը: Բայց ռեալիստական կեղծիքը, որ քաջություն ունի իր վրա վերցնելու մարդկային դժբախտությունը, նրան դավաճանում է նույնքան աններելիորեն՝ այն օգտագործելով գովերգելու համար գալիք երջանկությունը, որի մասին ոչ ոք ոչինչ չգիտի, և որը, հետևաբար, արտոնագրում է ցանկացած խաբեություն:

Երկու գեղագիտությունն էլ, երկար ժամանակ լինելով առճակատման մեջ, այն մեկը, որը հորդորում է իսպառ մերժել իրականությունը, և մյուսը, որը հավակնում է ամեն բան շպրտել, եթե իրականությունից դուրս է, ի վերջո, միանում են իրար՝ հեռու իրականությունից, նույն կեղծիքի և արվեստի ժխտման մեջ: Այ ակադեմիզմը անտեղյակ է քշվառությանը, մինչդեռ ձախ ակադեմիզմն այն օգտագործում է իր նպատակների համար: Բայց երկու դեպքում էլ քշվառությունն ահագնանում է, միաժամանակ ժխտվում է արվեստը:

- III -

Մի՞թե պետք է եզրակացնել, որ արվեստի էությունը հենց կեղծիքն է: Ես հակառակը կասեի. դիրքորոշումները, որոնց մասին ես խոսում էի մինչ հիմա, կեղծիք են այնքանով, որքանով կապ չունեն արվեստի հետ: Բայց ի՞նչ է արվեստը: Վստահ ենք, որ հասարակ բան չէ: Եվ էլ ավելի դժվար է այն հասկանալ անքիվ մարդկանց աղաղակների մեջ, որոնք մոլեգնորեն ջանում են պարզեցնել ամեն բան: Մի կողմից, ուզում ենք, որ հանճարը լինի վեհաշուք և միայնակ, մյուս կողմից, որ նա նմանվի բոլորին: Ավա՜ղ, իրականությունն ավելի բարդ է: Եվ Բալզակն այն բացատրեց ընդամենը մեկ նախադասությամբ. «Հանճարը նման է բոլորին, բայց ոչ ոք նման չէ նրան»: Այդպես էլ արվեստն է, որը ոչինչ չարժի առանց

իրականության, բայց առանց որի իրականությունը գրեթե անարժեք է: Իսկապես, ինչպե՞ս կարող է արվեստը գոյություն ունենալ առանց իրականության և ինչպե՞ս կարող է ենթարկել իրեն: Արվեստագետն ընտրում է իր առարկան այնքանով, որքանով այդ առարկան ընտրում է իրեն: Արվեստն ինչ-որ իմաստով ընդվզում է աշխարհի դեմ, նրա անցողիկության և անավարտության դեմ. նա միայն մեկ խնդիր է առաջադրում իրեն՝ իրականությանը տալ մեկ այլ ձև, այսուհանդերձ պահպանելով այն, քանզի իրականությունն է իր ներշնչանքի միակ աղբյուրը: Այս տեսակետից մենք բոլորս ռեալիստ ենք, և ոչ ոք ռեալիստ չէ: Արվեստը ո՛չ լրիվ մերժում է, ո՛չ լրիվ համաձայնություն գոյություն ունեցողի հետ: Նա միաժամանակ և՛ մերժում է, և՛ համաձայնություն, ահա թե ինչու այն կարող է լինել միայն որպես անընդհատ վերածնվող տառապանք: Արվեստագետը մշտապես գտնվում է այս երկդիմության մեջ, անընդունակ ժխտելու իրականը, բայց և հավերժ հակված վիճարկելու նրա հավիտենական անավարտությունը: Որպեսզի ստեղծվի նատյուրմորտ, անհրաժեշտ է, որ նկարիչն ու խնձորը առճակատ դուրս գան միմյանց և փոխադարձաբար լրացնեն միմյանց: Եվ եթե ձևերը որևէ արժեք չունեն առանց աշխարհի լույսի, ապա իրենց հերթին նրանք ինչ-որ բան ավելացնում են այդ լույսին: Իրական աշխարհը, որն իր պայծառությամբ կենդանություն է պարգևում մարմիններին ու արձաններին, միաժամանակ նրանցից ստանում է մեկ այլ լույս, որն արտացոլում է երկնքի լույսը: Այսպիսով, կատարյալ ոճը պետք է փնտրել արվեստագետի և առարկայի միջև ընկած ճանապարհի արանքում:

Ուրեմն, խոսքն այն մասին չէ, թե արվեստը պետք է խույս տա իրականից կամ ենթարկվի նրան, այլ պարզապես այն մասին, թե իրականի ինչ ճշգրիտ չափ պետք է իր մեջ ներառի ստեղծագործությունը, որպեսզի ամպերում չգոլորշիանա կամ, ընդհակառակը, երկրի վրա երկաթե կոշիկներով անվերջ չթափառի: Այս խնդիրը յուրաքանչյուր արվեստագետ լուծում է՝ ինչպես զգում է և ինչպես կարող է: Որքան մեծ է արվեստագետի ընդվզումը իրականության դեմ, այնքան ավելի ծանր կարող է լինել իրականի կշիռը,

որով նա կկարողանա հավասարակշռել այդ ընդվզումը: Բայց այդ ծանրությունը երբեք չի կարող խեղդել արվեստագետի միայնության պահանջը: Ամենաբարձր ստեղծագործությունը, ինչպեսիք են հունական ողբերգությունները կամ Մելվիլի, Տոլստոյի կամ Մոլիերի ստեղծագործությունները, միշտ կլինի այն, որը հավասարակշռության մեջ կդնի իրականն ու դրան մարդու հակադրած մերժումը, մեկը մյուսին խոյանք հաղորդելով մշտնջենական մի ժայթքումի մեջ, որը հենց կյանքն է իր ուրախություններով և ողբերգություններով: Այնժամ հեռվից հեռու հառնում է մի նոր աշխարհ՝ տարբեր ամենօրյա մեր աշխարհից և, սակայն, միևնույնը, առանձնահատուկ, բայց սովորական, լի անմեղ անպաշտպանվածությամբ, որը կյանքի է կոչվում մի քանի ժամով հանճարի ուժի և նրա անբավարարվածության շնորհիվ: Դա այդպես է և այդպես չէ: Աշխարհը ոչինչ է և ամեն ինչ է, ահա իսկական արվեստագետի երկակի և անդադրում ճիչը, որն արթուն է պահում արվեստագետին, աչքերը միշտ բաց և որը հեռվից հեռու բոլորի համար արթնացնում է աշխարհի ընդերքում նիրհող իրականության անցողիկ ու համառ պատկերը, որ մենք ճանաչում ենք առանց նրան երբևէ հանդիպելու:

Ճիշտ այդպես էլ իր դարին դեմ հանդիման արվեստագետը չի կարող շրջվել նրանից, ոչ էլ կորչել նրա մեջ: Եթե շրջվում է նրանից, խոսում է ունայնության մեջ: Սակայն մյուս դեպքում էլ, այնքանով, որքանով նրան որպես նյութ է վերցնում, արվեստագետը հավաստում է իր սեփական գոյությունը որպես թեմա և չի կարող ամբողջությամբ նրան ենթարկվել: Այլ կերպ ասած՝ դա հենց այն պահն է, երբ արվեստագետը վճռում է կիսել բոլորի բախտը, որով և հավաստում է իր անհատականությունը: Իսկ այս երկդիմությունից նա անկարող է դուրս գալ: Արվեստագետը պատմությունից վերցնում է այն, ինչ կարող է տեսնել կամ վերապրել ուղղակիորեն կամ անուղղակիորեն, այսինքն՝ արդիականությունը՝ բառի ամենաանեղ իմաստով, և այսօրվա ապրող մարդկանց և ոչ թե արդիականության հարաբերությունը ապագային՝ անկռահելի այսօրվա արվեստագետի համար: Ժամանակակից մարդու մասին դատո-

ղություններ անել հանուն մի մարդու, որը դեռ գոյություն չունի, մարգարեի գործն է: Արվեստագետը կարող է իրեն առաջարկվող առասպելները գնահատել միայն մարդու վրա նրանց գործող ազդեցությամբ: Մարգարեն՝ կրոնական կամ քաղաքական, կարող է բացարձակ դատողություններ անել և, ընդսմին, դա բոլորին է հայտնի, նա իրեն չի զրկում այդ հաճույքից: Բայց արվեստագետը չի կարող անել նույնը: Եթե դատողություններ անի ըստ բացարձակի, իրականությունը կբաժանի բարու և չարի, առանց հաշվի առնելու նրբությունները, և այն կդարձնի մելոդրամա: Արվեստի խնդիրը, ընդհակառակը, ոչ թե օրենքներ հրատարակելն է կամ իշխելը, այլ նախևառաջ հասկանալը: Երբեմն նա իշխում է հենց հասկանալու շնորհիվ: Բայց ոչ մի հանճարեղ ստեղծագործություն երբևէ հիմնված չի եղել ատելության ու քամահրանքի վրա: Ահա թե ինչու արվեստագետն իր դեգերումների վերջում ներում է՝ դատապարտելու փոխարեն: Նա դատավոր չէ, այլ պաշտպան: Նա հավերժական փաստաբանն է կենդանի արարածի, որովհետև նա կենդանի է: Նա իսկապես հանդես է գալիս ի պաշտպանություն մարդկանց՝ հանուն մերձավորի սիրուն և ոչ թե հեռավորի, որն աղճատում է ժամանակակից մարդասիրությունը՝ վերածելով այն վարդապետական դատավարության: Ընդհակառակը, մեծ ստեղծագործությունը, ի վերջո, խառնում է բոլոր դատավորների խաղաքարտերը: Նրա միջոցով արվեստագետը միաժամանակ մեծարանքի է արժանացնում մարդու ամենավեհ կերպարը և խոնարհվում է ամենավերջին հանցագործի առջև: «Այս թշվառական վայրում ինձ հետ կալանավորված դժբախտների մեջ չկա մեկը,- գրում է Ուայլդը,- որ խորհրդանշական կապի մեջ չգտնվի կյանքի գաղտնիքի հետ»: Այո, և կյանքի գաղտնիքը համընկնում է արվեստի գաղտնիքի հետ:

Հարյուր հիսուն տարի շարունակ վաշխառու հասարակության գրողները՝ չնչին բացառությամբ, վստահ էին, թե կարող են ապրել երանելի անպատասխանատվության մեջ: Նրանք այդպես էլ ապրեցին, իրոք, և մահացան միայնակ, ինչպես ապրել էին: Իսկ մենք՝ 20-րդ դարի գրողներս, երբեք այլևս միայնակ չենք լինի: Մենք,

ընդհակառակը, պետք է գիտակցենք, որ չենք կարող փախչել համընդհանուր թշվառությունից, և որ մեր միակ արդարացումը, եթե կա այդպիսին, խոսելն է մեր հնարավորության սահմաններում նրանց փոխարեն, ովքեր անկարող են խոսել: Այո, հենց դա պիտի անենք նրանց համար, ովքեր տառապում են այս պահին, ինչպիսին էլ լինեն նրանց ճնշող մեծությունները՝ անցած թե գալիք, պետություններ թե կուսակցություններ. արվեստագետի համար չկան արտոնյալ դահիճներ: Ահա թե ինչու գեղեցկությունը, անգամ այսօր, հատկապես այսօր, չի կարող ծառայել ոչ մի կուսակցության. նա երկար թե կարճ պայմանաժամով ծառայում է միայն մարդկանց տառապանքին կամ ազատությանը: Միակ զինվորագրված արվեստագետը նա է, ով չհրաժարվելով պայքարից, հրաժարվում է գոնե ծառայել կանոնավոր բանակում, այսինքն՝ դառնալ կամավոր հրաձիգ: Դասը, որ նա ստանում է գեղեցկությունից, եթե այն ազնվորեն է ձեռք բերվում, եսասիրության դաս չէ, այլ դժվարին եղբայրության: Նման գիտակցված գեղեցկությունը երբեք չի շահագործել ոչ մեկին: Եվ հազարամյակներ ի վեր, ամեն օր, ամեն վայրկյան նա, ընդհակառակը, թեթևացրել է միլիոնավոր մարդկանց ճնշումը, իսկ երբեմն էլ ոմանց մեկընդմիշտ ազատել ստրկությունից: Վերջապես, գուցե հարկ կա անդրադառնալ արվեստի մեծության խնդրին՝ այն հավերժական լարվածության մեջ, որ կա գեղեցկության ու տառապանքի, մարդկանց հանդեպ սիրո և ստեղծագործական խենթության, անտանելի միայնության և հյուծիչ ամբոխի, մերժումի և համաձայնության միջև: Նա քայլում է երկու անդունդների միջև՝ թեթևսոլիկության և քարոզչության: Ջառիվայրով բարձրացող մեծ արվեստագետի համար յուրաքանչյուր քայլը արկածախնդրություն է, ծայրահեղ համարձակություն: Սակայն այդ համարձակության մեջ է և միմիայն նրանում է արվեստի ազատությունը: Դժվարին ազատություն, որն ավելի շուտ նման է ասկետական կարգապահության: Ո՞ր արվեստագետը կժխտի դա: Եվ ո՞ր արվեստագետը կհամարձակվի իրեն հայտարարել բարձունքում՝ այդ անվերջանալի պարտականությունը կատարելիս: Արվեստի ազատությունը ենթադրում է առողջ

մարմին և առողջ հոգի, այնպիսի ոճ, որը լինի հոգեկան ուժ՝ համբերատար դիմակայման համար: Ինչպես ամեն մի ազատություն, այն հավերժական փորձություն է, հյուծիչ արկածախնդրություն, և ահա թե ինչու այսօր խույս են տալիս են այդ փորձությունից, ինչպես խույս են տալիս ազատության պահանջից, որպեսզի նետվեն ամեն տեսակ ստրկական ծառայությունների և հասնեն գոնե հոգեկան հարմարավետության: Սակայն եթե արվեստը արկածախնդրություն չէ, ապա ի՞նչ է և ո՞րն է նրա մեկնաբանությունը: Ո՛չ, ազատ արվեստը, ինչպես ազատ մարդը, հեռու է հարմարավետությունից: Ազատ արվեստագետը նա է, ով մեծ դժվարությամբ ինքն է ստեղծում իր սեփական կարգուկանոնը: Որքան ավելի բուռն է այն, ինչ պիտի նա կարգավորի, այնքան ավելի խիստ կլինի իր օրենքը և ավելի հավաստի՝ իր ազատությունը: Ժիդը մի միտք ունի, որն ինձ դուր է գալիս, չնայած կարող է թյուրիմացություն առաջացնել. «Արվեստը ապրում է հարկադրանքով և մեռնում է ազատությունից»: Սա ճշմարիտ է: Բայց չպետք է եզրակացնել, թե արվեստը կարելի է ղեկավարել: Արվեստն ապրում է լոկ իր ստեղծած հարկադրանքներով. մնացած բոլոր հարկադրանքներից նա մեռնում է: Եթե նա չի հարկադրում ինքն իրեն, ընկնում է զառանցանքների մեջ և հայտնվում ուրվականների աշխարհում: Ուրեմն, ամենաազատ և ամենաընդվզող արվեստը դասական արվեստն է. նա պսակում է արվեստագետի գործադրած մեծագույն ճիգը: Քանի դեռ հասարակությունը և իր արվեստագետները չեն համաձայնում այս երկար ու ազատ չարչարանքին, քանի դեռ նրանք տրվում են զվարճալիքների կամ կոնֆորմիզմի հարմարավետությանը, «արվեստը արվեստի համար» խաղերին կամ ռեալիստական արվեստի քարոզներին, արվեստագետները կմնան նիհիլիզմի և ստերջության մեջ: Իսկ սա նշանակում է, որ այսօր վերածնունդը կախված է մեր քաջությունից և պայծառատես լինելու մեր կամքից:

Այո՛, այդ վերածնունդը մեր բոլորի ձեռքում է: Մեզնից է կախված, որ Արևմուտքը աշխարհի բերի իր հակա-Ալեքսանդրներին, ովքեր կրկին կկապեն սրի հարվածով կտրված քաղաքակրթութ-

յան գորդյան հանգույցը: Հանուն դրա մենք պետք է ընդունենք ազատության բոլոր վտանգներն ու դժվարությունները: Խոսքն այն մասին չէ, թե ազատությանը հետամուտ լինելով՝ մենք կկարողանանք պահպանել ազատությունը: Խոսքն այն մասին է, որ առանց ազատության մենք ոչինչ չենք ստեղծի, այլ՝ միաժամանակ կկորցնենք թե՛ գալիք արդարությունը և թե՛ անցյալի գեղեցկությունը: Լոկ ազատությունն է մարդկանց հանում մեկուսացումից, այնինչ ստրկությունը թևածում է միայնակ ամբոխի վրա: Եվ արվեստը իր ազատ էության շնորհիվ, որ փորձեցի սահմանել, միավորում է այնտեղ, որտեղ բռնակալությունը երկպառակություն է սերմանում: Արդ, ի՞նչ զարմանալի բան կա, եթե նա ոխերիմ թշնամի է ամեն տեսակ բռնության: Ի՞նչ զարմանալի բան կա, եթե արվեստագետներն ու մտավորականները են առաջին զոհերը ժամանակակից բռնակալությունների՝ լինեն ձախ, թե աջ: Բռնակալները գիտեն, որ արվեստի ստեղծագործության մեջ կա ազատագրական ահռելի ուժ, որը խորհրդավոր է լոկ նրանց համար, ովքեր չեն հավատում ազատությանը: Յուրաքանչյուր մեծ ստեղծագործություն ավելի սքանչելի և ավելի հուզիչ է դարձնում մարդու կերպարը. սա է ողջ գաղտնիքը: Եվ հազարավոր ճամբարներ ու բանտաճաղեր չեն բավականացնի ճնշելու մարդկային արժանապատվության այս չշմեգուցիչ վկայությունը: Ահա թե ինչու ճշմարիտ չէ, թե հնարավոր է, գոնե ժամանակավորապես, վերացնել մշակույթը՝ նորը ստեղծելու համար: Չի կարելի վերացնել մարդու անսպառ վկայությունը իր դժբախտության և վեհության մասին, ինչպես չի կարելի կանգնեցնել շնչառությունը: Չկա մշակույթ առանց ժառանգության, և մենք չենք կարող և չպետք է ոչինչ մերժենք այն ամենից, ինչ մերն է՝ Արևմուտքինը: Ինչպիսին էլ լինեն ապագա ստեղծագործությունները, նրանք բոլորն էլ գաղտնիքի նույն բեռն են կրելու՝ ստեղծված քաջությունից և ազատությունից, սնված բոլոր դարերի և բոլոր ազգերի հազարավոր արվեստագետների խիզախությամբ: Այո, երբ արդի բռնակալությունը մեզ ցույց է տալիս, որ անգամ իր արհեստի մեջ պարփակված արվեստագետը հասարակության թշնամին է, նա իրավացի է: Սա-

կայն նրա միջոցով բոնակալությունը պատվի է արժանացնում նաև այն կերպարին, որին ոչինչ մինչ հիմա չի կարողացել ջախջախել:

Իմ եզրակացությունը պարզ կլինի: Մեր պատմության աղմուկ-աղաղակի և կատաղության մեջ այն պետք է ասի. «Հրճվենք»: Իսկապես, հրճվենք՝ տեսնելով կեղծավոր ու հարմարվող Եվրոպայի մահը, հրճվենք՝ առճակատելով ահավոր ճշմարտություններին: Հրճվենք մարդ լինելու մեր կոչումով, քանի որ երկարատև խաբեությունն է փլուզվել, և մենք պարզորոշ տեսնում ենք, թե ինչ էր սպառնում մեզ: Եվ հրճվենք արվեստագետ լինելու մեր կոչումով, քանի որ, բռնությամբ կանգնած լինելով թշվառության, բանտերի և արյան դիմաց, այժմ ազատագրվել ենք քնից և խլությունից: Եթե այս տեսարանի առջև կարողանանք պահպանել հիշողությունն օրերի և դեմքերի, եթե, մյուս կողմից էլ, աշխարհի գեղեցկության առջև սովորենք չմոռանալ նվաստացողներին, այնժամ արևմտյան արվեստը քիչ-քիչ կվերագտնի իր ուժն ու իշխանությունը: Անժխտելի է, որ պատմության մեջ քիչ են արվեստագետների օրինակները, որոնք բախվել են նման դժվարին խնդիրների: Սակայն արդարև, երբ բառերն ու խոսքերը՝ անգամ ամենահասարակները, վճարվում են ազատության և արյան գնով, արվեստագետը սովորում է դրանք չափավոր օգտագործել: Վտանգը դառնում է ավանդական, և ամեն մի մեծություն, ի վերջո, իր արմատներն ունի վտանգավոր համարձակության մեջ:

Անպատասխանատու արվեստագետների ժամանակն անցել է: Մենք ափսոսում ենք, որ կորցրել ենք մեր փոքրիկ ուրախությունները: Բայց մենք պիտի կարողանանք ընդունել, որ այս փորձությունը միաժամանակ նպաստում է մեր արդիական հաջողություններին, և մենք ընդունում ենք մարտահրավերը: Արվեստի ազատությունը քանկ չի նստում, եթե այն ծառայում է միայն արվեստագետի հարմարավետության ապահովմանը: Որպեսզի որևէ

արժեք կամ առաքինություն արմատներ ձգի հասարակության մեջ, հարկ է չկեղծել ի շահ իր սեփական գործի, այսինքն՝ չվճարել իր օգտին, հենց հարմար առիթ լինի: Եթե ազատությունը դարձել է վտանգավոր, ուրեմն այլևս չի կարող այլասերվել: Եվ ես չեմ կարող համաձայնել, օրինակ, նրանց, ովքեր այսօր տրտնջում են իմաստության անկումից: Առերևույթ նրանք իրավացի են: Սակայն իրականում իմաստությունը երբևէ առավել անկում չի ապրել, որքան այն ժամանակները, երբ անվտանգ հաճույք էր մի քանի գրադարանային մարդասերների համար: Այսօր, երբ նա դեմ է առել վերջապես իրական վտանգների, հնարավորություն կա, ընդհակառակը, որ կարողանա վերստին ոտքի կանգնել, որ կրկին կարողանան նրան հարգել:

Ասում են, Նիցշեն՝ Լու Սալոմեից բաժանվելուց հետո, ամբողջովին ընկղմված միայնության մեջ, ընկճված ու միաժամանակ բռնկված այն հսկայական գործի հեռանկարով, որ նա պետք է աներ առանց որևէ մեկի օգնության, զբոսնում էր գիշերները Ջենովայի ծոցին իշխող լեռների վրա, հսկայական խարույկներ սարքում տերևներից ու ճյուղերից ու դիտում, թե ինչպես են դրանք այրվում: Ես հաճախ եմ մտածել այդ խարույկների մասին և հաճախ մտովի տեղափոխվել այնտեղ՝ նրանց առջև փորձության ենթարկելու արվեստի որոշ մարդկանց և որոշ ստեղծագործություններ: Եվ այսպես, մեր դարաշրջանը մեկն է այդ հրդեհներից, որոնց անկասելի բոցերն, անկասկած, մոխրի կվերածեն շատ ստեղծագործություններ: Սակայն նրանք, ովքեր կդիմանան և որոնց մետաղն անխաթար կլինի, մենք կկարողանանք հանուն նրանց տրվել մտավոր այն գերագույն հաճույքին, որի անունն է «հիացմունք»:

Իհարկե, կարելի է ցանկանալ, և ինքս էլ այդ եմ ցանկանում, որ այդ բոցը լինի մեղմ, լինի հանդարտ, բարեպատեհ կանգառ անրջանքների համար: Սակայն գուցե արվեստագետի համար չկա այլ հանգիստ, բացի ամենաթեժ պայքարում եղած հանգստից: «Յուրաքանչյուր պատ դուռ է»,- իրավացիորեն ասել է Էմերսոնը: Արդ, փնտրենք դուռը, ինչպես և ելքը, միայն պատի մեջ, որի առջև

ապրում ենք: Փնտրենք, ընդհակառակը, հանգիստն այնտեղ, որտեղ կա, ուզում եմ ասել՝ հենց ճակատամարտում: Քանզի ըստ իս (և այստեղ ես կավարտեմ) այստեղ է, որ նա կա: Մեծ գաղափարները, ինչպես ասում են, աշխարհ են գալիս աղավնու թևերով: Այնժամ, ուրեմն, եթե մենք ականջ դնենք, գուցե կայսրությունների և ազգերի վայնասունի մեջ կարողանանք լսել կյանքի և հույսի թույլ քևաբախումը, նրա մեղմ շնչառությունը: Ոմանք կասեն, թե այդ հույսը բերել է ինչ-որ ժողովուրդ, մյուսները՝ թե որևէ մարդ: Իմ կարծիքով, ընդհակառակը, այն ծնում, վերակենդանացնում ու սատարում են միլիոնավոր միայնակներ, որոնց գործերն ու գործողությունները ամեն օր ժխտում և խորտակում են պետությունների սահմանները և պատմության ամենազոհեիկ երևույթները, որպեսզի կրկին առկայծի մշտապես հալածվող ճշմարտությունը, որ յուրաքանչյուր մարդ իր տառապանքներով և ուրախություններով բարձրացնում է բոլորի համար:

1957

L'ÉTRANGER

-I-

Այսօր մահացել է մայրս: Կամ՝ գուցե երեկ, չգիտեմ: Հեռագիր ստացա ծերանոցից. «Մայրդ վախճանվեց: Թաղումը վաղը: Խորը ցավակցություններ»: Բայց ինչ իմանաս, գուցե դա երեկ է եղել:

Ծերանոցը Մարենգոյում է, Ալժիրից ութսուն կիլոմետր հեռու: Ժամը երկուսին ավտոբուս կնստեմ և օրվա երկրորդ կեսին տեղ կհասնեմ: Այդպես ես կկարողանամ գիշերը մնալ մորս մոտ և վերադառնալ վաղը երեկոյան: Պետիցս երկօրյա արձակուրդ խնդրեցի, և նա չկարողացավ մերժել. նման հարգելի պատճառ ունեի: Բայց գոհ տեսք էլ չուներ: Ես նրան անգամ ասացի. «Մեղավոր չեմ»: Նա չպատասխանեց: Այնժամ ես մտածեցի, որ իզուր նրան այդ ասացի: Ի վերջո, արդարանալու ոչինչ չունեի: Ավելի ճիշտ կլիներ, եթե նա ինձ ցավակցեր: Անկասկած նա դա կանի վաղը չէ մյուս օրը, երբ ինձ տեսնի սգո հագուստով: Իսկ հիմա կարծես մայրս դեռ չի մահացել: Թաղումից հետո, ընդհակառակը, այս ամենն ավելի արժեքավոր կլինի և պաշտոնական տեսք կընդունի:

Ավտոբուս նստեցի ժամը երկուսին: Շատ շոգ էր: Սովորականի նման ճաշեցի ռեստորանում՝ Սելեստի մոտ: Բոլորն էլ խորապես ցավակցում էին ինձ, իսկ Սելեստն ասաց. «Միայն մի մայր ենք ունենում»: Երբ դուրս էի գալիս, ինձ ուղեկցեցին մինչև դուռը: Ես մի քիչ շշմած էի, որովհետև հարկ եղավ բարձրանալ Էմանուելի մոտ սև փողկապ ու սգո թևկապ վերցնելու. մի քանի ամիս առաջ նա կորցրել էր քեռուն:

Վազեցի, որ չուշանամ ավտոբուսից: Հավանաբար այդ փութկոտության, վազքի, ինչպես նաև ցնցումների, բենզինի հոտի, ճանապարհի և երկնքի լուսացոլանքների պատճառով էր, որ թմրել էի: Գրեթե ամբողջ ճանապարհին քնած էի: Իսկ երբ արթնացա, հենված էի մի զինվորականի, որն ինձ ժպտաց ու հարցրեց՝ արդյոք հեռվի՞ց եմ գալիս: Ես ասացի՝ այո, որպեսզի այլևս չխոսեմ:

Ծերանոցը գյուղից երկու կիլոմետր է հեռու: Այդ ճանապարհը ես անցա ոտքով: Անմիջապես ցանկացա տեսնել մորս: Բայց դռնապանն ասաց, որ պետք է նախ հանդիպեմ տնօրենին: Եվ քանի որ նա զբաղված էր, ես փոքր-ինչ սպասեցի: Այդ ընթացքում դռնապանն անընդհատ խոսում էր, իսկ հետո տեսա տնօրենին: Նա ինձ ընդունեց իր առանձնասենյակում: Փոքրամարմին մի ծերուկ էր Պատվո լեգեոնի շքանշանով: Նայեց ինձ իր պայծառ աչքերով: Հետո սեղմեց ձեռքս ու այնքան երկար այդպես պահեց, որ չգիտեի՝ ինչպես ազատվեմ: Նա ինչ-որ անձնական գործ աչքի անցկացրեց ու ասաց.

- Տիկին Մյորսոն մեզ մոտ եկավ երեք տարի առաջ: Դուք նրա միակ նեցուկն էիք:

Կարծեցի, թե ինչ-որ բանում մեղադրում է ինձ և սկսեցի բացատրել: Բայց նա ընդհատեց.

- Դուք կարիք չունեք արդարանալու, բալիկս: Ես կարդացել եմ ձեր մոր գործը: Դուք ի վիճակի չէիք նրան խնամելու: Նրան հիվանդապահուհի էր պետք: Ձեր աշխատավարձը համեստ է: Եվ, ի վերջո, ամեն ինչ հաշվի առնելով՝ նա այստեղ ավելի երջանիկ էր:

Ես ասացի.

- Այո, պարոն տնօրեն:

Նա ավելացրեց.

- Իսկ գիտե՞ք, որ այստեղ նա ընկերներ ուներ, իր հասակակիցները: Նա կարող էր ընդհանուր հետաքրքրություններ ունենալ, որոնք պատկանում են մեկ այլ սերնդի: Դուք երիտասարդ եք, թերևս նա ձանձրանար ձեզ հետ:

Դա ճիշտ էր: Երբ մայրս տանն էր, առավոտից իրիկուն հայացքով լուռ հետևում էր ինձ: Իսկ երբ արդեն ծերանոցում էր, առաջին օրերին հաճախ էր լաց լինում: Պատճառը սովորությունն էր: Մի քանի ամիս անց նա լաց կլիներ, եթե նրան տանեիր ծերանոցից: Եվ դարձյալ սովորության պատճառով: Գուցե մի քիչ էլ այն պատճառով, որ վերջին ամիսներին ես նրան գրեթե չէի այցելում: Որովհետև դա ինձնից խլում էր իմ կիրակին, չհաշված այն ճիգերը, որ ես գործադրում էի ավտոբուսին հասնելու, տոմս գնելու

և երկու ժամվա ճանապարհ կտրելու համար:

Տնօրենը դեռ խոսում էր: Բայց ես նրան գրեթե չէի լսում: Հետո նա ասաց.

- Կարծում եմ՝ կուզենայիք տեսնել ձեր մորը:

Լուռ վեր կացա, և նա ինձ առաջնորդեց դեպի դուռը: Աստիճանների վրա ինձ բացատրեց.

- Մենք նրան տեղափոխեցինք մեր փոքրիկ դիարանը: Մյուսներին չհուզելու համար: Ամեն անգամ, երբ ծերանոցում մեկը մահանում է, մյուսները երկու-երեք օր նյարդայնացած են լինում: Իսկ դա դժվարացնում է մեր ծառայությունը:

Մենք անցանք բակով, որտեղ կային շատ ծերուհիներ: Նրանք զրուցում էին խմբերով: Երբ անցնում էինք նրանց մոտով, լռում էին: Մեր ետևից վերսկսում էին իրենց շատախոսությունը, որն ասես թութակների խուլ ճռճռոց լիներ: Մի փոքր տան մուտքի մոտ տնօրենը բաժանվեց ինձնից.

- Ես թողնում եմ ձեզ, պարոն Մյորսո: Միշտ պատրաստ եմ ձեզ ընդունել իմ առանձնասենյակում: Ըստ կարգի՝ թաղումը նշանակված է առավոտյան ժամը տասին: Մենք մտածեցինք, որ այդպես դուք կկարողանաք գիշերը մնալ հանգուցյալի մոտ: Եվ վերջին բանը. ձեր մայրը, ասում են, հաճախ է ցանկություն հայտնել, որ իրեն թաղեն կրոնական ծեսով: Ես անհրաժեշտ ամեն բան արել եմ, միայն ուզում էի ձեզ տեղյակ պահել այդ մասին:

Ես նրան շնորհակալություն հայտնեցի: Մայրս թեև աթեիստ չէր, բայց կենդանության օրոք երբեք չէր հետաքրքրվել կրոնով:

Ներս մտա չափազանց լուսավոր, կրով սպիտակեցրած և ապակեծածկ առաստաղով սենյակ, որը կահավորված էր աթոռներով և իշոտնուկներով: Դրանցից երկուսի վրա՝ կենտրոնում, դրված էր դագաղը, որի կափարիչը փակ էր: Դարչնագույն ներկված տախտակների վրա երևում էին միայն փայլուն պտուտակները, որոնք շատ թույլ էին ամրացված: Դագաղի մոտ նստած էր սպիտակ խալաթով ու վառ գլխաշորով արաբ հիվանդապահուհին:

Իմ ետևից անմիջապես ներս մտավ դռնապանը: Երևի վազել

էր: Մի քիչ կմկմալով՝ ասաց.

- Դագաղը փակել են, բայց հիմա ես կբացեմ, որ տեսնեք նրան:

Մոտենում էր դագաղին, բայց ես կանգնեցրի նրան: Նա հարցրեց.

- Չե՞ք ուզում:

Ես պատասխանեցի.

- Ոչ:

Նա կարկամեց, իսկ ես ձեղվեցի, որովհետև զգացի, որ նման բան չպետք է ասեի: Նա մի պահ նայեց ինձ ու հարցրեց.

- Ինչո՞ւ,- բայց առանց նախատինքի, ասես պարզապես իմանալու համար:

Ես ասացի.

- Չգիտեմ:

Այնժամ, ոլորելով ճերմակ բեղը, առանց ինձ նայելու նա հայտարարեց.

- Հասկանում եմ:

Նա ուներ գեղեցիկ, բաց երկնագույն աչքեր և կարմրավուն մաշկ: Աթոռ առաջարկեց, ինքն էլ նստեց ինձնից մի քիչ ետ: Հիվանդապահուհին վեր կացավ և ուղղվեց դեպի ելքը: Այդ պահին դռնապանն ինձ ասաց.

- Շանկր ունի:

Եվ քանի որ չհասկացա, նայեցի հիվանդապահուհուն և տեսա, որ աչքերի տակից վիրակապ էր փաթաթված գլխի շուրջը: Քթի ուռուցիկության փոխարեն փաթաթանի տակ հարթ տարածություն էր: Դեմքի վրա երևում էր միայն վիրակապի սպիտակությունը:

Երբ նա գնաց, դռնապանն ասաց.

- Ես ձեզ մենակ եմ թողնում:

Չգիտեմ՝ ինչ շարժում արեցի, բայց նա կանգնած մնաց իմ ետևում: Նրա ներկայությունը նեղում էր ինձ: Սենյակը լեփ-լեցուն էր ետմիջօրեի լույսերով: Երկու ճիաբոռ էին դզզում առաստաղի ապակիների վրա: Եվ զգում էի, որ քունը հաղթում է ինձ: Առանց շրջվելու նրա կողմը՝ հարցրի.

- Երկա՞ր ժամանակ է, որ այստեղ եք:

Նա իսկույն պատասխանեց.

- Հինգ տարի,- ասես վաղուց էր սպասում այդ հարցին:

Հետո սկսեց շատախոսել. շատ կզարմանար, եթե այն ժամանակ իրեն ասեին, որ կյանքի վերջում դռնապան է լինելու Մարեն-գոյի ծերանոցում: Վաթսունչորս տարեկան էր, փարիզցի: Այդ պահին ընդհատեցի նրան.

- Օ՜, դուք տեղացի՞ չեք:

Հետո հիշեցի, որ ինձ տնօրենի մոտ առաջնորդելիս՝ նա պատմում էր մորս մասին, ասում, որ պետք է նրան շուտափույթ քաղել, որովհետև այստեղ՝ հարթավայրում շոգ է, հատկապես այդ շրջանում: Այդ ժամանակ իմացա, որ նա ապրել է Փարիզում և հիմա չի կարողանում մոռանալ այդ քաղաքը: Փարիզում հանգուցյալին պահում են երեք, ամենաշատը՝ չորս օր: Այստեղ ժամանակ չկա. դեռ չհաշտված մահվան մտքի հետ՝ արդեն պետք է վազել դիակառքի ետևից: Կինն ընդհատեց նրան.

- Լռի՛ր: Դրանք պարոնին պատմելու բան չեն:

Ծերուկը կարմրեց ու ներողություն խնդրեց: Ես միջամտեցի.

- Դե, ոչ, ոչինչ:

Իմ կարծիքով՝ նրա պատմածը անկեղծ էր ու հետաքրքիր:

Հետո, փոքրիկ դիարանում ինձ պատմեց, որ ծերանոց էր ընդունվել որպես չքավոր: Բայց քանի որ իրեն առողջ էր զգում, խնդրել էր դռնապանի պաշտոնը: Ես նկատեցի, որ նա վերջին հաշվով ծերանոցի թոշակառուներից է: Նա պատասխանեց՝ ոչ: Ինձ արդեն ապշեցրել էր նրա խոսելաձևը, երբ ասում էր «նրանք», «մյուսները» և ավելի հազվադեպ՝ «ծերերը», խոսելով մյուս թոշակառուների մասին, որոնցից շատերը իրենից ավելի տարիքով չէին: Բայց, իհարկե, դա միևնույն բանը չէր, ինքը դռնապան էր և ինչ-որ չափով արտոնություն ուներ նրանց նկատմամբ:

Այդ պահին մտավ հիվանդապահուհին: Երեկոն իջել էր անսպասելիորեն: Խավարը շատ արագ էր թանձրացել ապակե առաստաղի վերևում: Դռնապանը պտտեցրեց անջատիչը, և աչքերս կուրացան հանկարծակի ու շլացուցիչ լույսից: Նա ինձ հրավիրեց ճաշարան ընթրելու, բայց ես քաղցած չէի: Այդ ժամանակ

նա ինձ առաջարկեց մի գավաթ կաթով սուրճ: Եվ քանի որ ես շատ եմ սիրում կաթով սուրճ, համաձայնեցի: Եվ չանցած մի րոպե՝ նա վերադարձավ սկուտեղով: Խմեցի: Դրանից հետո ծխելու ցանկություն ունեցա, բայց տատանվում էի, որովհետև չգիտեի՝ մայրիկի մոտ կարելի՞ էր ծխել, թե՞ ոչ: Հետո մտածեցի, որ դա բոլորովին նշանակություն չունի: Մի ծխախոտ տվեցի դռնապանին, և մենք ծխեցինք:

Քիչ անց դռնապանն ասաց.

- Գիտեք, ձեր հարգարժան մայրիկի ընկերներն էլ են գալու, որ գիշերը մնան նրա մոտ: Այդպես է կարգը: Ես պիտի գնամ աթոռներ և սև սուրճ բերելու:

Ես հարցրի, թե հնարավո՞ր չէ հանգցնել լամպերից մեկը: Ներմակ պատերից անդրադարձվող լույսը հոգնեցուցիչ էր: Նա ասաց, որ հնարավոր չէ. այդպես էր միացված՝ կամ բոլորը, կամ ոչ մեկը: Ես այլևս ուշադրություն չդարձրի նրան: Նա գնաց, եկավ, տեղավորեց աթոռները: Դրանցից մեկի վրա՝ սրճամանի շուրջը, շարեց գավաթները: Հետո նստեց իմ դիմաց՝ մորս մյուս կողմը: Հիվանդապահուհին էլ էր այնտեղ՝ մեջքով դեպի ինձ: Ես չէի տեսնում՝ ինչ էր անում նա, բայց ձեռքերի շարժումներից կարող էի գուշակել, որ հյուսում էր: Բավական զով էր, սուրճն ինձ ջերմացրել էր, իսկ բաց դռնից ներս էր թափանցում գիշերվա և ծաղիկների անուշաբույրը: Թերևս մի քիչ ննջեցի:

Ինչ-որ մեկը դիպավ ինձ ու արթնացրեց: Աչքերս փակ՝ սպիտակեցրած սենյակն ինձ էլ ավելի շլացուցիչ էր թվում: Իմ դիմաց չկար որևէ մութ կետ, ամեն բան, բոլոր իրերն ու անկյունները, բոլոր կորերը գծագրվում էին աչք ծակող մաքրությամբ: Այդ պահին ներս մտան մորս ընկերները: Բոլորը միասին մի տասը հոգի էին, որոնք ասես լուռ սահում էին այդ կուրացուցիչ լույսի միջով: Նրանք նստեցին, բայց ոչ մի աթոռ չճռռաց: Ես սկսեցի նայել նրանց, ինչպես չեմ նայել երբևէ ոչ մեկին. նրանց դեմքերի ու հագուստների ոչ մի մանրամասն չէր վրիպում իմ աչքից: Բայց ես նրանց չէի լսում, և դժվար էր հավատալ նրանց իրական գոյությանը: Գրեթե բոլոր կանայք գոգնոց էին կրում, որոնց գոտին, սեղմե-

լով իրանը, ավելի ցցուն էր դարձնում նրանց ուռուցիկ փորերը: Մինչ այդ երբեք չէի նկատել, որ ծեր կանայք այդքան մեծ փոր են ունենում: Տղամարդիկ գրեթե բոլորը շատ նիհար էին և հենված էին ձեռնափայտերին: Ապշեցուցիչն այն էր, որ նրանց դեմքերի վրա աչքեր չէին երևում, միայն մի աղոտ լույս էի նշմարում նրանց կնճիռների արանքում: Երբ նստեցի, նրանցից շատերը սկսեցին նայել ինձ ու շփոթված ծոճել գլուխները, շրթունքներն ասես ծամելով անատամ բերաններում, այնպես որ չէի կարողանում կռահել՝ ողջունո՞ւմ են ինձ, թե՞ սովորույթի համաձայն թափահարում գլուխները: Իմ կարծիքով, այնուամենայնիվ, բարևում էին: Նկատեցի, որ նրանք նստել էին դռնապանի շուրջը՝ իմ դիմաց, ու տմբտմբացնում էին գլուխները: Մի պահ այնպիսի ծիծաղելի զգացում ունեցա, թե եկել եմ ինձ դատելու:

Քիչ անց կանանցից մեկը սկսեց լացել: Նա նստած էր երկրորդ շարքում՝ իր ընկերուհիներից մեկի ետևը, և ես նրան վատ էի տեսնում: Նա լաց էր լինում համաչափ, կարճ հեծկլտանքներով, և ինձ թվում էր, թե երբեք կանգ չի առնի: Մյուսները կարծես չէին լսում: Նրանք ընկճված տեսք ունեին, մռայլ էին ու լուռ: Նայում էին դագաղին, ոմանք՝ իրենց ձեռնափայտին կամ մեկ ուրիշ տեղ, բայց նայում էին սևեռուն հայացքով: Կինը շարունակում էր լացը: Ես շատ էի զարմացել, որովհետև չէի ճանաչում նրան: Շատ կուզեի այլևս չլսել նրա ձայնը, բայց չէի համարձակվում այդ ասել: Դռնապանը խոնարհվեց նրա կողմը, ինչ-որ բան ասաց, բայց կինը թափահարեց գլուխը, քրթմնջաց և լացը շարունակեց նույն հաճախականությամբ: Այդ ժամանակ դռնապանը եկավ ու նստեց կողքս: Բավական երկար լռելուց հետո ասաց՝ առանց ինձ նայելու.

- Նա շատ մտերիմ էր ձեր մոր հետ: Ասում է, թե նա իր ամենամոտ ընկերուհին էր, և հիմա այլևս ոչ ոք չունի:

Այդպես նստած էինք երկար ժամանակ: Կնոջ հեծկլտանքներն ու հոգոցները նվազում էին: Քիթս անընդհատ վեր էր քաշում: Վերջապես լռեց: Իմ քունն այլևս չէր տանում, բայց հոգնած էի, ու մեջքս ցավում էր: Այժմ արդեն ծանր էր այդ մարդկանց լռությունը:

Միայն ժամանակ առ ժամանակ ինչ-որ յուրօրինակ ձայն էի լսում, բայց չէի հասկանում, թե ինչ է: Ի վերջո, գլխի ընկա, որ ծերուկներից ոմանք ծծում էին իրենց այտերը ներսից, իսկ դրանից առաջանում էր այդ տարօրինակ ճպճպոցը: Նրանք դա չէին զգում, որովհետև շատ էին տարված իրենց մտքերով: Ես անգամ այն տպավորությունը ստացա, որ մեջտեղում պառկած հանգուցյալը ոչ մի կարևորություն չուներ նրանց համար: Իսկ հիմա կարծում եմ, որ այդ տպավորությունը խաբուսիկ էր:

Մենք բոլորս խմեցինք դռնապանի մատուցած սուրճը: Հետո չիմացա՝ ինչ եղավ: Գիշերն անցավ: Հիշում եմ միայն մի պահ, երբ աչքերս բացեցի, տեսա, որ բոլոր ծերուկները քնած են՝ իրար կոթնած, բացի մեկից, որը, կզակը հենած ձեռնափայտի վրա կծկված ձեռքերին, ակնապիշ ինձ էր նայում, ասես սպասելով, թե երբ կարթնանամ: Հետո նորից էի քնել: Արթնացա, որովհետև մեջքիս ցավը սաստկացել էր: Լույսը սահում էր ապակեպատ առաստաղի վրայով: Քիչ անց ծերուկներից մեկն արթնացավ ու սկսեց երկար հազալ: Նա թքում էր մեծ, քառեկավոր թաշկինակի մեջ, և ամեն անգամ թքելիս նրա ներսից կարծես ինչ-որ բան էր պոկվում: Նրա հազն արթնացրեց մյուսներին, և դռնապանն ասաց, որ գնալու ժամանակն է: Բոլորը վեր կացան: Գիշերվա այդ հոգնեցուցիչ հսկումը նրանց դեմքերը դարձրել էր մոխրագույն: Դուրս գալիս, ի զարմանս ինձ, բոլորը սեղմեցին ձեռքս, ասես այդ գիշերը, որի ընթացքում մի բառ անգամ չէինք փոխանակել, մտերմացրել էր մեզ:

Հոգնած էի: Դռնապանն ինձ տարավ իր կացարանը, և ես կարողացա փոքրիշատե կարգի բերել ինձ: Նորից կաթով սուրճ խմեցի, որը շատ համեղ էր: Երբ դուրս եկա, լույսը լրիվ բացվել էր: Մարենգոն ծովից բաժանող բլուրների վերևում երկինքը լի էր կարմրավուն գույներով, որոնց վրայով անցնող քամին աղաբույր էր բերում: Գեղեցիկ օր էր լինելու: Վաղուց չէի եղել գյուղում և զգում էի, թե ինչ մեծ հաճույք կստանայի զբոսնելով, եթե չլիներ մայրս:

Սակայն սպասեցի բակում, սոսիի տակ: Ծնչում էի հողի թարմ անուշաբույրը: Քունս այլևս չէր տանում: Մտաբերեցի գրասենյակի իմ ընկերներին: Այդ ժամին նրանք վեր են կենում աշխատան-

քի գնալու համար. ինձ համար դա միշտ ամենադժվար ժամն է եղել: Ես դեռ մի քիչ էլ մտածեցի այդ ամենի մասին, բայց ինձ շեղեց շենքի ներսում հնչող զանգը: Պատուհանների ետևում ինչ-որ իրարանցում սկսվեց, հետո ամեն ինչ հանդարտվեց: Արևն ավելի էր բարձրացել երկնքում ու տաքացնում էր ոտքերս: Դռնապանն անցավ բակի միջով և ասաց, որ տնօրենն ինձ է հարցնում: Ես գնացի գրասենյակ: Նա ինձ ստորագրել տվեց մի շարք թղթեր: Նկատեցի, որ սև էր հագել, իսկ տաբատը զոլավոր էր: Վերցնելով հեռախոսը՝ նա դիմեց ինձ.

- Թաղման գրասենյակի ծառայողներն արդեն եկել են: Հիմա նրանց կխնդրեմ փակել դագաղը: Մինչ այդ չէի՞ք ցանկանա վերջին անգամ տեսնել ձեր մորը:

Ես ասացի՝ ոչ: Չայնն իջեցնելով՝ նա հեռախոսով կարգադրեց.

- Ֆիժակ, ասացեք, որ կարող են սկսել:

Հետո ասաց, որ ինքն էլ է մասնակցելու թաղմանը, և ես շնորհակալություն հայտնեցի: Նա ցատեց գրասեղանի առջև ու խաչեց կարճլիկ ոտքերը: Ապա տեղեկացրեց, որ ես և ինքը մենակ ենք լինելու հերթապահ հիվանդապահուհու հետ միասին: Ըստ կարգի՝ ծերանոցի բնակիչները չպետք է մասնակցեին թաղումներին: Ինքը նրանց թույլ էր տալիս միայն գիշերը հսկել հանգուցյալին:

- Մարդասիրության հարց է,- նկատեց նա: Բայց հիմա թափորին հետևելու թույլտվություն է տվել մորս հին ընկերոջը՝ Թոմա Պերեզին:

Այստեղ տնօրենը ժպտաց ու ասաց.

- Հասկանո՞ւմ եք, ոնց որ մանկական զգացմունք լիներ: Բայց նա և ձեր մայրը գրեթե չէին բաժանվում իրարից: Ծերանոցում կատակում էին՝ Պերեզին անվանում «փեսա»: Սա ծիծաղում էր. դա նրանց հաճելի էր: Եվ հարցն այն է, որ տիկին Մյորսոյի մահը շատ ազդեց նրա վրա, և, կարծում եմ, իրավունք չունեի մերժել նրա խնդրանքը: Բայց բժշկի խորհրդով նրան արգելեցի հսկել երեկ գիշեր:

Բավական երկար ժամանակ լուռ էինք: Տնօրենը վեր կացավ և նայեց առանձնասենյակի պատուհանից: Մի պահ անց ասաց.

- Ահա և Մարենգոյի քահանան: Շուտ է եկել:

Հետո ինձ զգուշացրեց, որ առնվազն երեք քառորդ ժամ է հարկավոր ոտքով նույն գյուղում գտնվող եկեղեցին հասնելու համար: Իջանք ներքև: Տան առջև սպասում էին քահանան և երկու փոքրավոր. նրանցից մեկը բռնել էր բուրվառը, իսկ քահանան կռացել էր ուղղելու արծաթյա շղթան: Երբ մոտեցանք, քահանան վեր կացավ: Նա ինձ անվանեց «որդյակ իմ» և ինչ-որ բառեր ասաց: Հետո ներս մտավ, ես՝ նրա ետևից:

Հենց առաջին հայացքից նկատեցի, որ դագաղի պտուտակները ամրացված են, և որ չորս սևազգեստ տղամարդ կա սենյակում: Տնօրենն ասաց, որ դիակառքը սպասում է ճանապարհին, ինչպես նաև քահանան, որ սկսել է աղոթքները: Այդ պահից սկսած՝ ամեն ինչ շատ արագ ընթացավ: Վերցնելով սավանը՝ տղամարդիկ շարժվեցին դեպի դագաղը: Քահանան, նրա ուղեկիցները, տնօրենն ու ես, մենք բոլորս դուրս եկանք: Դռան առջև մի անծանոթ կին կար, որին տնօրենը ներկայացրեց ինձ. «Պարոն Մյորսո»: Կնոջ անունը չլսեցի, միայն հասկացա, որ նա լիազոր հիվանդապահուհին է: Առանց ժպտալու նա խոնարհեց իր երկար ու ոսկրոտ դեմքը: Հետո մենք այնպես շարվեցինք, որ ճանապարհ տանք անցկացնելու դագաղը: Հետևեցինք դիակիրներին և դուրս եկանք ծերանոցից: Դռան առջև սպասում էր լաքապատ, երկար ու փայլուն գրչատուփ հիշեցնող դիակառքը: Կողքը կանգնած էին կարգադրիչը՝ ծիծաղելի հագուստներով փոքրամարմին մի մարդ և անճոռնի քայլվածքով մի ծերուկ: Ես գլխի ընկա, որ դա պարոն Պերեզն է: Նա դրել էր կլորավուն գագաթով փափուկ, ծղոտե լայնեզր գլխարկ (որը հանեց, երբ դագաղը դուրս բերեցին), հագել էր կոստյում, որի անդրավարտիքի փողքերը ծածանվում էին կոշիկների վրա, և հանգուցել էր սև կտորե մի վարդակապ՝ շատ փոքր իր ճերմակ, մեծ օձիքով վերնաշապիկի համար: Շրթունքները դողում էին ամբողջովին սև բծերով ծածկված քթի տակ: Ճերմակ, բավական նուրբ մազերի տակից երևում էին լոշտակ ու եզրերը վատ խծպված, ծիծաղաշարժ ականջները, որոնց արնակարմիր գույնն ինձ ապշեցրեց այդ դալուկ դեմքի վրա: Կարգադրիչը ցույց տվեց

մեր տեղը: Առջևից գնում էր քահանան, հետո՝ դիակառքը, կողքերից՝ չորս տղամարդ, նրանցից հետո՝ տնօրենն ու ես, իսկ թափորը եզրափակում էին լիազոր հիվանդապահուհին ու պարոն Պերեզը:

Երկինքն արդեն ողողված էր արևով, որն ասես կախվել էր գետնին, և շոգն արագ սաստկանում էր: Չգիտեմ ինչու այդքան երկար սպասեցինք մինչև ճանապարհ ընկնելը: Սև հագուստի մեջ շոգում էի: Փոքրամարմին ծերուկը, որը քիչ առաջ դրել էր գլխարկը, նորից հանեց: Ես շրջվել ու նայում էի, երբ տնօրենը սկսեց պատմել նրա մասին: Ասաց, որ երեկոները մայրս ու պարոն Պերեզը հիվանդապահուհու ուղեկցությամբ հաճախ էին զբոսնելով հասնում մինչև գյուղ: Նայում էի շուրջս փռված դաշտերին, դեպի երկնահաս բլուրները տանող նոճիներին, նրանց ուրվագծերի արանքից նշմարում դեղնականաչ հողը, նոսրաշար, լավ գծագրված տները և հասկանում էի մորս: Երեկոյան այստեղ երևի մելամաղձոտ անդորր էր տիրում: Իսկ այսօր հորդացող արևը, որ խարազանում էր բնապատկերը, այն դարձնում էր անմարդկային ու ճնշող:

Մենք ճամփա ընկանք: Այդ պահին նկատեցի, որ Պերեզը թեթևակի կաղում է: Դիակառքը քիչ-քիչ արագություն էր վերցնում, իսկ ծերուկը ետ էր մնում: Դիակառքն ուղեկցող տղամարդկանցից մեկը ևս ճանապարհ տվեց, որ նա անցնի իրենից. այժմ նա քայլում էր իմ կողքից: Ինձ զարմացրել էր երկնքում բարձրացող արևի արագությունը: Հանկարծ գլխի ընկա, որ այսքան ժամանակ դաշտերը երգում էին միջատների բզզոցով և խոտերի խշրտյունով: Քրտինքը հոսում էր այտերիս վրայով: Քանի որ գլխարկ չունեի, ինձ հով էի անում թաշկինակով: Այդ պահին թաղման գրասենյակի ծառայողն ինչ-որ բան ասաց, որը չլսեցի: Նա միաժամանակ գլուխն էր սրբում թաշկինակով, որ բռնել էր ձախ ձեռքով՝ աջով բարձրացնելով գդակի ծայրը: Ես նրան հարցրի.

- Ի՞նչ:

Նա կրկնեց՝ մատնացույց անելով երկինքը.

- Վառում է:

Ասացի.

- Այո:
Քիչ անց հարցրեց.
- Ձեր մա՞յրն է:
Նորից ասացի.
- Այո:
- Ծե՞ր էր:
Պատասխանեցի.
- Ոչ այնքան,- որովհետև չգիտեի ստույգ տարիքը:

Հետո նա լռեց: Ես շրջվեցի և մեր ետևում՝ մի հիսուն մետրի վրա, տեսա Պերեզին: Նա շտապում էր՝ մատների ծայրով թափահարելով ծղոտե գլխարկը: Նայեցի նաև տնօրենին, որը քայլում էր մեծ արժանապատվությամբ՝ չանելով ոչ մի անհմաստ շարժում: Քրտինքի մի քանի կաթիլ փայլում էր նրա ճակատին, բայց նա չէր սրբում:

Ինձ թվում էր, թե թափորը փոքր-ինչ ավելի արագ է շարժվում: Շուրջս շարունակ նույն դաշտն էր՝ լուսավոր և արևահեղձ: Երկնքի ճառագայթումն անտանելի էր: Որոշ ժամանակ անց մենք անցնում էինք ճանապարհի՝ վերջերս նորոգված մասով: Արևը հալեցրել էր ձյութը. ոտքերս խրվում էին դրա մեջ՝ բացելով փայլուն խյուսը: Դիակառքի վերևում ճոճվում էր կառապանի կաշվե գլխարկը, որն ասես դաբաղվել էր հենց այդ սև ձյութի մեջ: Ես մի քիչ հմել էի երկնքի կապույտ ու ճերմակ գույներից, սևաթույր երանգների միապաղաղությունից. բացված ձյութի կպչուն սևը, հագուստների փայլատ սևը, դիակառքի լաքած սևը: Արևը, կաշվի ու դիակառքի, քրտքի, լաքի ու խնկի հոտը, անքուն գիշերվա հոգնությունը, այս ամենը շաղում էր հայացքս ու խառնում մտքերս: Մեկ անգամ էլ շրջվեցի: Պերեզն ինձ թվաց շատ հեռու, կորած՝ շիկացած ամպի մեջ, իսկ հետո նրան այլևս չտեսա: Երբ փնտրեցի հայացքով, նկատեցի, որ ճանապարհից դուրս է եկել ու գնում է դաշտի միջով: Պարզեցի նաև, որ առջևում ճանապարհը թեքվում է: Գլխի ընկա, որ Պերեզը, լավ իմանալով տեղանքը, գնում է կարճ ճանապարհով՝ մեզ հասնելու համար: Շրջադարձին նա արդեն միացավ մեզ: Հետո նրան կորցրինք: Նա նորից գնաց դաշտերի

միջով, և այդպես մի քանի անգամ: Իսկ ես զգում էի քներակներիս տրոփյունը քունքերիս մեջ:

Հետո ամեն ինչ այնքան արագ ընթացավ, այնքան հավաստի ու բնական, որ այլևս ոչինչ չեմ հիշում: Թերևս միայն մեկ բան. գյուղ վերադառնալիս հիվանդապահուհին խոսում էր ինձ հետ: Նա առանձնահատուկ ձայն ուներ՝ մեղեդային ու դողդողացող, որը չէր սազում նրա դեմքին: Ինձ ասաց.

- Վտանգավոր է դանդաղ քայլելը, կարող ենք արևահարվել: Բայց եթե շատ արագ էլ գնանք, կքրտնենք, ինչպես եկեղեցում, որտեղ կարող ես և՛ մրսել, և՛ շոգել:

Նա իրավացի էր: Ելք չկար: Հիշողությանս մեջ այդ օրվանից դեռ մնացել են մի քանի պատկեր, օրինակ՝ Պերեզի դեմքը, երբ գյուղի մոտ վերջին անգամ միացավ մեզ. նյարդայնության ու տառապանքի խոշոր արցունքները հոսում էին այտերի վրայով, բայց հանդիպելով կճճիռների, կանգ էին առնում, հավաքվում, միանում էին իրար՝ կարծես ջրային շպար քսելով այդ թորշոմած դեմքին: Հիշում եմ նաև եկեղեցին, մայթերին կանգնած գյուղացիներին, կարմիր խորդենիները՝ գերեզմանոցի շիրմաքմբերի վրա, Պերեզի ուշաթափությունը (կարծես անդամահատ խամաճիկ լիներ), արնագույն հողը, որ թափվում էր մորս դագաղին, խճճված արմատների ճերմակ մաշկը, հետո էլի մարդիկ, ձայներ, գյուղը, կանգառը ինչ-որ սրճարանի մոտ, շարժիչի դողդոջը և իմ ուրախությունը, երբ մեր ավտոբուսը մտավ Ալժիրի լույսերի մեջ, և ես մտածեցի, որ հիմա, շատ շուտով կպառկեմ ու կքնեմ տասներկու ժամ:

- II -

Արթնանալով հասկացա, թե ինչու պետս այդքան դժգոհ տեսք ուներ, երբ նրանից երկօրյա արձակուրդ էի խնդրում. այսօր շաբաթ է: Ես դա, այսպես ասած, մոռացել էի, բայց հենց վեր կացա, գլխումս հայտնվեց այդ միտքը: Պետս բնականաբար մտածել էր, որ ես փաստորեն ազատ կլինեմ չորս օր՝ գումարած կիրակին, իսկ դա չէր կարող հաճույք պատճառել նրան: Բայց մի կողմից՝ ես մե-

ղավոր չեմ, որ մորս երեկ թաղեցին այսօրվա փոխարեն, իսկ մյուս կողմից, միևնույն է, բոլոր դեպքերում ես ազատ պիտի լինեի շաբաթ ու կիրակի օրերը: Պարզ է, դա չի խանգարում, որ ես, այսուհանդերձ, հասկանամ պետիս:

Դժվարությամբ վեր կացա, որովհետև երեկ շատ էի հոգնել: Սափրվելիս մտածեցի անելիքներիս մասին և որոշեցի գնալ լողալու: Տրամվայ նստեցի ու մեկնեցի նավահանգստի լողավազանները: Սուզվեցի ջրի մեջ: Երիտասարդներ շատ կային: Ջրի մեջ հանդիպեցի Մարի Կարդոնային՝ մեր գրասենյակի նախկին մեքենագրուհուն, որին ժամանակին ցանկացել էի: Կարծում եմ՝ նա նույնպես: Բայց նա քիչ մնաց մեզ մոտ, և մենք չհասցրինք հանդիպել: Երբ նրան օգնում էի բարձրանալ լողանի վրա, ձեռքս պատահաբար դիպավ նրա կրծքին: Ես դեռ ջրում էի, իսկ նա արդեն պառկած էր լողանին: Դեմքով շրջվեց դեպի ինձ. մազերը թափվել էին աչքերին, ծիծաղում էր: Ես փովեցի նրա կողքին՝ լողանի վրա: Հաճելի էր, և իբր թե կատակով գլուխս ետ գցեցի ու դրեցի նրա փորին: Նա ոչինչ չասաց, և ես այդպես էլ մնացի: Ողջ երկինքն արտացոլվում էր աչքերիս մեջ՝ կապույտ ու ոսկեզօծ: Ծոծրակիս տակ զգում էի Մարիի որովայնի մեղմ տրոփյունը: Մենք երկար մնացինք լողանի վրա՝ կիսաքուն, կիսարթուն: Երբ արևը սաստկացավ, Մարին սուզվեց ջրի մեջ: Ես հետևեցի նրան: Բռնեցի, գրկեցի մեջքը, և լողացինք միասին: Նա շարունակ ծիծաղում էր: Կառամատույցին, մինչ չորանում էինք, նա ասաց.

- Ես ավելի թուխ եմ, քան դուք:

Ես նրան հարցրի՝ երեկոյան չէ՞ր ցանկանա կինո գնալ: Նա նորից ծիծաղեց և ասաց, որ կուզենար դիտել Ֆերնանդելի ֆիլմերից որևէ մեկը: Երբ հագնվեցինք, նա շատ զարմացավ՝ տեսնելով իմ սև փողկապը և հարցրեց, թե արդյոք սգի մե՞ջ եմ: Ասացի, որ մայրս է մահացել: Եվ քանի որ ուզում էր իմանալ՝ երբ, պատասխանեցի. «Երեկ»: Նա փոքր-ինչ ընկրկեց, բայց ոչ մի դիտողություն չարեց: Ուզեցի ասել, որ մեղք չունեմ, բայց զսպեցի ինձ՝ մտածելով, որ նույնն արդեն ասել եմ պետիս: Դա ոչ մի նշանակություն չուներ: Ամեն դեպքում միշտ էլ մի քիչ մեղավոր ես լինում:

Երեկոյան Մարիճ ամեն ինչ մոռացել էր: Կինոնկարը տեղ-տեղ ծիծաղելի էր, բայց հիմնականում՝ չափազանց հիմար: Մարիի ոտքը կպել էր ոտքիս, ես փաղաքշում էր նրա կուրծքը: Սեանսի վերջում ես համբուրեցի նրան, բայց՝ անհաջող: Հետո նա եկավ ինձ մոտ:

Երբ արթնացա, Մարիճ արդեն գնացել էր: Նա ինձ ասել էր, որ գնալու է մորաքրոջ մոտ: Հիշեցի, որ կիրակի է, ու սրտնեղեցի. չեմ սիրում կիրակի օրը: Շուտ եկա մյուս կողքիս, գլուխս խոթեցի գլանաձև բարձի մեջ՝ փնտրելով Մարիի մազերի աղաբույրը, ու քնեցի մինչև ժամը տասը: Հետո մինչև կեսօր պառկած ծխում էի: Չէի ուզում սովորականի պես ճաշել Սելեստի մոտ, քանի որ նրանք, անկասկած, հարցուփորձ կանեին ինձ, մի բան, որ ինձ դուր չի գալիս: Չվածեղ սարքեցի ու կերա հենց թավայից, առանց հացի, որովհետև խանութ գնալ չէի ուզում:

Նախաճաշից հետո սկսեցի ծանծրանալ ու գնալ-գալ բնակարանում, որը հարմարավետ էր, երբ մայրս այստեղ էր: Այժմ այն շատ մեծ էր թվում, և ես ստիպված էի ճաշասենյակից սեղանը տեղափոխել իմ սենյակ: Հիմա ապրում եմ միայն այս սենյակում՝ փոս ընկած ծղոտե աթոռների, դեղնած հայելիով պահարանի, հարդարանքի սեղանիկի և երկաթե մահճակալի միջև: Մնացածը անուշադրության է մատնված: Քիչ անց, մի բան արած լինելու համար, վերցրի մի հին լրագիր ու սկսեցի կարդալ: Նրա միջից կտրեցի Կրյուշեն աղերի մի գովազդ ու կպցրեցի հին տետրիս մեջ, ուր հավաքում եմ լրագրերից կտրտած զանազան զվարճալի բաներ: Չեռքերս լվացի, իսկ հետո դուրս եկա պատշգամբ:

Սենյակիս պատուհանները նայում են արվարձանի գլխավոր փողոցին: Ետմիջօրեն գեղեցիկ էր: Բայց սալարկը լպրծուն էր, հատուկենտ մարդիկ՝ դեռևս աճապարող: Դրանք նախ զբոսանքի գնացող ընտանիքներն էին. ծովայինի համազգեստով երկու փոքրիկ տղա՝ ծնկներից կարճ վարտիքներով, մի քիչ նեղված իրենց հագուստներում, և մի աղջնակ՝ մեծ, վարդագույն ժապավենով ու սև լաքե կոշիկներով: Նրանց ետևից գնում էին հսկա, շագանակագույն մետաքսյա շրջազգեստով, գեր մայրիկը և փոքրամարմին,

դյուրաբեկ հայրիկը, որին դեմքով ճանաչում եմ: Նա դրել էր հարթ, ծղոտե գլխարկ, օձիքը հանգուցել վարդակապով ու քայլում էր ձեռնափայտով: Տեսնելով նրան կնոջ հետ՝ հասկացա, թե ինչու էին նրան մեր թաղում հարգված մարդ համարում: Ավելի ուշ անցան արվարձանի ջահելները՝ լաքած մազերով ու կարմիր փողկապներով, իրանը կիպ գրկած բաճկոններով, գրպանիկներում՝ ասեղնագործ թաշկինակներ, ու ոտքերին՝ քառակուսի քթով կոշիկներ: Իմ կարծիքով՝ նրանք գնում էին կենտրոնի կինոթատրոններ: Դրա համար էլ այդքան շուտ էին դուրս եկել և հոհոալով շտապում էին դեպի տրամվայը:

Նրանցից հետո փողոցը քիչ-քիչ ամայացավ: Երևի ամենուրեք սկսվել էին ներկայացումները: Մնացել էին միայն խանութպանները ու կատուները: Փողոցը եզերող թզենիների վերևում ջինջ, բայց անփայլ երկինքն էր: Դիմացի մայթին ծխախոտավաճառը դուրս բերեց մի աթոռ, տեղավորեց դռան առջև և հակառակ կողմից հեծնեց՝ ձեռքերը հենելով քիկնակին: Քիչ առաջվա լեփ-լեցուն տրամվայների փոխարեն այժմ անցնում էին գրեթե դատարկները: «Պիեռոյի մոտ» փոքրիկ սրճարանում, ծխախոտավաճառի կողքը, մատուցողը թեփով ավլում էր դատարկ սրահի հատակը: Իրոք, որ կիրակի էր: Ես շրջեցի աթոռս ու նստեցի ծխախոտավաճառի նման, որովհետև ենթադրեցի, որ այդպես ավելի հարմար է: Ծխեցի երկու ծխախոտ, ներս մտա, վերցրի երկու կտոր շոկոլադ ու վերադարձա, որ ուտեմ պատուհանի մոտ: Քիչ անց երկինքը մոայլվեց, և ինձ թվաց, թե շուտով ամառային ամպրոպ է լինելու: Քիչ-քիչ եղանակը նորից բացվեց: Սակայն երկնքով անցած ամպերն ասես անձրևի հույս էին թողել փողոցում, որից այն ավելի էր մթնել: Ես դեռ երկար մնացի այդ դիրքով. նայում էի երկնքին:

Ժամը հինգին երևացին դղրդալից տրամվայները: Նրանք արվարձանի մարզադաշտից բերում էին աստիճաններին ու բռնակներին թառած խումբ-խումբ հանդիսականներին: Հաջորդ տրամվայները բերեցին խաղացողներին, որոնց ես տարբերեցի փոքրիկ ճամպրուկներից: Նրանք երգում, ոռնում էին լիաթոք, թե իրենց ակումբը չի մեռնի երբեք: Նրանցից շատերը ձեռքով ողջունում էին

ինձ: Մեկը նույնիսկ բղավեց. «Նրանց հերն անիծեցինք»: Ես գլխով պատասխանեցի նրանց: Այս պահից սկսած փողոցը հեղեղվեց մեքենաներով:

Օրը նորից փոխվեց մի քիչ: Տանիքների վերևում երկինքը դարձավ կարմրավուն, և ծնվող երեկոյի հետ փողոցներն աշխուժացան: Զբոսնողները կամաց-կամաց վերադառնում էին: Նրանց մեջ ես ճանաչեցի մյուսներից տարբերվող պարոնին: Երեխաները լաց էին լինում կամ քարշ գալիս մեծերի ետևից: Գրեթե միաձգամից փողոցը հեղեղվեց թաղամասի կինոթատրոններից դուրս եկած հանդիսականների հորձանքով: Նրանց մեջ երիտասարդները սովորականից ավելի կտրուկ շարժումներ էին անում, և ես ենթադրեցի, որ դիտել են արկածային կինոնկար: Քաղաքի կինոթատրոններից վերադարձողները տեղ հասան ավելի ուշ: Նրանք ավելի լրջախոհ տեսք ունեին: Թեպետ նույնպես ծիծաղում էին, բայց ժամանակ առ ժամանակ հոգնած ու մտազբաղ էին թվում: Ոմանք մնացին փողոցում և սկսեցին վերուվար անել դիմացի մայթով: Թաղի ջահել աղջիկները հերարձակ էին և քայլում էին թևանցուկ: Տղաները հատուկ շարվել էին նրանց ճամփան կտրելու և կատակներ էին նետում՝ ծիծաղեցնելով աղջիկներին և ստիպելով շրջել գլուխները: Նրանցից շատերը, որոնց ճանաչում էի, ողջունեցին ինձ:

Հանկարծ վառվեցին փողոցի լապտերները և դալկացրին գիշերվա մեջ հառնող առաջին աստղերը: Զգացի, որ աչքերս հոգնել են մարդկանցով ու լույսերով լեցուն մայթերին նայելուց: Լապտերների լույսի տակ փայլում էր թաց սալարկը, իսկ տրամվայները կանոնավոր ընդմիջումներով իրենց լուսարձակներն էին ուղղում փայլուն մազերի, ժպտացող դեմքի կամ արծաթյա ապարանջանի վրա: Իսկ հետո, ավելի հազվադեպ դարձած տրամվայների հետ և արդեն սևաթույր մթության մեջ, ծառերի ու լապտերների ներքո քաղամասն աննկատելիորեն դատարկվեց, և ահա առաջին կատուն դանդաղ կտրեց-անցավ արդեն լրիվ ամայացած փողոցը: Այստեղ ես մտածեցի, որ ընթրել է պետք: Աթոռի թիկնակին երկար հենված մնալուց վիզս ցավում էր: Իջա ներքև հաց ու մակարոն

գնելու, հետո կերակուր պատրաստեցի ու կերա ոտքի վրա: Ուզում էի ծխել պատուհանի մոտ, բայց մի քիչ ցրտել էր. մրսեցի: Փակեցի պատուհանները, և ետ գալիս հայելու մեջ տեսա սեղանի անկյունը, որտեղ սպիրտայրոցի հարևանությամբ կային հացի կտորներ: Մտածեցի, որ դեռևս ձգձգվող կիրակին է, որ մայրիկն արդեն քաղված է, որ ես վերսկսելու եմ աշխատանքս և, ի վերջո, ոչինչ չի փոխվել:

- III -

Այսօր շատ աշխատեցի գրասենյակում: Պետս սիրալիր էր: Նա նախ հարցրեց, թե չե՞մ հոգնել, ապա ցանկացավ իմանալ մորս տարիքը: Չսխալվելու համար ասացի՝ «Վաթսունին մոտ»: Չգիտեմ ինչու նա թեթևացած տեսք ընդունեց՝ երևի գործը համարելով ավարտված:

Սեղանիս դիզված բեռնագրերի կույտը պիտի թերթեի: Նախաճաշի գնալուց առաջ, մինչ դուրս կգայի գրասենյակից, լվացի ձեռքերս: Կեսօրին սիրում եմ այդ պահը, բայց երեկոյան այնքան էլ հաճելի չէ, որովհետև գլանային սրբիչը ամբողջ օրը գործածելուց լրիվ թաց է լինում: Այդ մասին մի օր ակնարկեցի պետիս: Պատասխանեց, որ խիստ ցավում է, սակայն, այսուհանդերձ, դա աննշան մանրուք է: Դուրս եկա մի քիչ ուշացումով՝ տասներկուսն անց կեսին, Էմանուելի հետ, որն աշխատում է առաքման բաժնում: Գրասենյակը նայում է ծովին, և մենք մի պահ հապաղեցինք՝ հիանալու արևահեղձ նավահանգստում կանգնած բեռնանավերով: Այդ պահին, շղթաները դղրդացնելով ու ճայթյուններ արձակելով, մեզ մոտեցավ մի բեռնատար: Էմանուելը հարցրեց. «Չգնա՞ք սրանով», և ես սկսեցի վազել: Բեռնատարը մեզնից անցավ, իսկ մենք նետվեցինք նրա ետևից: Լրիվ խեղդվել էի աղմուկից ու փոշուց: Այլևս ոչինչ չէի տեսնում, միայն զգում էի վազքի անհեթեթ թափը, որն անցնում էր ամբարձիչների ու մեքենաների, հորիզոնի վրա պարող կայմերի ու նավիրանների միջով, որոնց երկայնքով սլանում էինք մենք: Առաջինը ես կարողացա հենա-

րան գտնել ու ցատկել մեքենայի մեջ: Հետո օգնեցի Էմանուելին, որ բարձրանա ու նստի: Հևասպառ էինք: Բեռնատարը թռչկոտում էր կառամատույցի անհավասար սալաքարերի վրայով, փոշու և արևի միջով: Էմանուելը հոհոում էր շնչակտուր:

Քրտինքի մեջ լողալով՝ հասանք Սելեստի մոտ: Նա, ինչպես միշտ, իր տեղում էր՝ մեծ փորով, գոգնոցով ու ճերմակ բեղերով: Հարցրեց ինձ՝ «Քայցևայցպես, լա՞վ ես»: Ասացի՝ այո, հետո ավելացրի. «Սոված եմ»: Արագ-արագ կերա ու սուրճ խմեցի: Տուն վերադառնալով՝ մի քիչ քնեցի, որովհետև շատ էի գինի խմել, իսկ երբ արթնացա, ծխելու ցանկություն ունեի: Բայց արդեն ուշ էր: Վազեցի, որ հասնեմ տրամվային: Աշխատեցի մինչև երեկո: Գրասենյակում շատ շոգ էր: Երեկոյան, երբ դուրս եկա, ուրախ էի, որ քայլելով եմ վերադառնում կառամատույցի երկայնքով: Երկինքը կաճաչավուն էր, և ես ինձ բավարարված էի զգում: Այսուհանդերձ, ուղիղ տուն գնացի, որովհետև ուզում էի կարտոֆիլ խաշել:

Մութ աստիճաններով բարձրանալիս բախվեցի ծերուկ Սալամանոյին՝ իմ սանդղահարթակի հարևանին: Իր շան հետ էր: Արդեն ութ տարի նրանք անբաժան էին: Այդ սպանիելը մաշկի հիվանդություն ունի, իմ կարծիքով՝ քոս, որը նրան ծածկում է դարչնագույն կեղևով ու խոցերով, և որից թափվել են նրա գրեթե բոլոր մազերը: Ստիպված լինելով ապրել երկուսով միասին մի փոքրիկ սենյակում՝ ծեր Սալամանոն ի վերջո նմանվել է իր շանը: Նա դեմքին նույնպես կեղևանք ունի, իսկ մազերը ցանցառ են ու դեղին: Շունը տիրոջից ընդօրինակել է նրա մի տեսակ կորացած քայլվածքը՝ դունչն առաջ ցցած ու վիզը ծգած: Նրանք ասես նույն ցեղից լինեն, բայցևայցպես ատում են իրար: Օրը երկու անգամ՝ ժամը տասնմեկին ու վեցին, ծերուկն իր շանը տանում է զբոսանքի: Ութ տարուց ի վեր նրանք չեն փոխել իրենց երթուղին: Նրանց կարելի է տեսնել Լիոնյան փողոցում. շունն այնպես ուժեղ է քաշում, որ ծերուկը քիչ է մնում ընկնի: Այդ ժամանակ նա ծեծում ու հայհոյում է շանը: Շունը վախից կառչում է գետնից ու ստիպում, որ իրեն քարշ տան: Այժմ արդեն ծերուկի քաշելու հերթն է: Երբ շունը մոռանում և նորից է քաշում տիրոջը, նորից է ծեծվում ու հայհոյվում:

Այնժամ նրանք երկուսն էլ կանգ են առնում մայթին և նայում իրար. շունը՝ սարսափով, մարդը՝ ատելությամբ: Եվ այդպես շարունակ, ամեն օր: Երբ շունն ուզում է միզել, ծերուկը նրան ժամանակ չի տալիս և քաշում է, սպանիելը քարշ է գալիս նրա ետևից՝ ցանցնելով փոքրիկ կաթիլների մի շարան: Եթե պատահաբար շունն այդ անում է սենյակում, ուրեմն դարձյալ ծեծվում է: Եվ այս ամենը շարունակվում է ութ տարի: Սելեստն անընդհատ ասում է՝ «Այդ դժբախտը», բայց ինչ իմանաս: Երբ աստիճանների վրա հանդիպեցի Սալամանոյին, նա հայհոյում էր շանը: Նա անընդհատ կրկնում էր. «Կեղտո՛տ: Սատկա՛ծ», իսկ շունը վնգստում էր: Ես ասացի. «Բարի երեկո», բայց ծերուկը շարունակեց հայհոյանքը: Այնժամ ես հարցրի, թե ինչ է արել շունը: Նա չպատասխանեց, միայն ասում էր. «Կեղտոտ: Սատկած»: Ես վատ էի տեսնում ծերուկին. նա կռացել էր և ինչ-որ բան էր ուղղում շան վզակապի վրա: Ես ավելի բարձրաձայն հարցրի: Այնժամ, առանց շրջվելու նա պատասխանեց մի տեսակ զսպված կատաղությամբ. «Ձզվեցրել է ինձ»: Հետո գնաց՝ ետևից քարշ տալով շանը, որը չռվել էր չորս թաթերի վրա ու վնգստում էր:

Հենց այդ պահին եկավ սանդղահարթակի իմ մյուս հարևանը: Թաղում խոսում են, որ նա ապրում է կանանց հաշվին: Բայց երբ մասնագիտությունն ես հարցնում, ասում է, որ պահեստապետ է: Ընդհանրապես նրան չեն սիրում: Բայց նա հաճախ է զրուցում ինձ հետ, երբեմն էլ մոտս է գալիս կարճ ժամանակով, որովհետև ես կարողանում եմ լսել իրեն: Իմ կարծիքով՝ նրա պատմածները հետաքրքիր են: Մյուս կողմից էլ, նրան չլսելու որևէ պատճառ չունեմ: Նրա անունն է Ռեյմոն Սընթես: Բավական ցածրահասակ է, լայն ուսերով ու բռնցքամարտիկի քթով: Նրա հագուկապը միշտ տեղին է: Սալամանոյի մասին խոսելիս ասաց. «Ի՞նչ դժբախտն է»: Նա ինձ հարցրեց, թե զզվելի՞ է այս ամենը, ես պատասխանեցի՝ ոչ:

Մենք բարձրացանք, և ես ուզում էի բաժանվել նրանից, երբ ասաց.

- Տանը արևաերշիկ ու գինի ունեմ: Չի՞ք ցանկանա մի կտոր

ուտել ինձ հետ:

Ես մտածեցի, որ ճաշ պատրաստելու գլխացավանքից կազատվեմ և համաձայնեցի: Նա էլ մի սենյակ ունի և խոհանոց՝ առանց պատուհանի: Մահճակալի վերևում ամրացված են ճերմակ-վարդագույն մարմարածեփ մի հրեշտակ, չեմպիոնների լուսանկարներ ու մի քանի մերկ կանանց կրկնօրինակներ: Սենյակը կեղտոտ էր, անկողինը՝ թափթփված: Նախ վառեց նավթալամպը, հետո գրպանից հանեց բավական կասկածելի մի վիրակապ ու փաթաթեց աջ ձեռքը: Նրան հարցրի, թե ինչ է պատահել: Ասաց, որ ծեծկվել է մեկի հետ, որը պոկ չէր գալիս իրենից:

- Հասկանո՞ւմ եք, պարոն Մյորսո,- ասաց նա,- ես ոչ թե չար եմ, այլ տաքարյուն: Երբ նա ինձ ասաց. «Թե տղամարդ ես, իջիր տրամվայից», ես ասացի. «Գնա գործիդ»: Նա թե՝ «Դու տղամարդ չես»: Այդ ժամանակ թռա ցած ու ասացի. «Հերի՛ք եղավ, չափդ ճանաչիր, թե չէ բուրդդ քամուն կտամ»: Նա թե՝ «Էդ ո՞նց»: Ես մի լավ հասցրի: Նա ընկավ: Ուզում էի վեր հանել, բայց պառկած տեղից քացի էր տալիս: Այդ ժամանակ ես ծնկով խփեցի, երկու աչքամ էլ ապտակեցի: Դեմքը լրիվ արյունլվիկ էր: Ես հարցրի. «Հաշիվդ փակվա՞ծ է»: Նա ասաց. «Այո»:

Այդ ամբողջ ընթացքում նա զբաղված էր իր վիրակապով: Ես նստած էի մահճակալին: Նա ասաց.

- Տեսնո՞ւմ եք, ես մեղավոր չեմ: Ինքն ինձ հասցրեց:

Ես ընդունեցի, որ դա ճիշտ էր: Այդ ժամանակ նա ինձ ասաց, որ հենց այդ գործի համար էր ուզում ինձնից խորհուրդ հարցնել, քանի որ ես տղամարդ եմ, գիտեմ կյանքը և կարող եմ օգնել իրեն, իսկ հետո ինքը կդառնա իմ ընկերը: Ես ոչինչ չասացի, իսկ նա կրկնեց, թե չե՞մ ուզում դառնալ իր ընկերը: Ասացի, որ ինձ համար միևնույնն է: Նա գոհ մնաց: Հետո հանեց արնաներշիկը, թավան, տապակեց, բաժակ ու ափսե դրեց, դանակ-պատառաքաղ և երկու շիշ գինի: Եվ այդ ամենը՝ առանց խոսելու: Հետո սեղան նստեցինք: Ուտելու ընթացքում նա շարունակեց իր պատմությունը: Սկզբում մի քիչ վարանում էր.

- Դե, ծանոթացել էի մի կնոջ...Կարելի է ասել, որ իմ սիրուհին էր:

Այդ մարդը, որի հետ կռվել էր, այդ կնոջ եղբայրն էր: Սընթեսը ասաց նաև, որ ամեն ինչում օգնում, օժանդակում էր այդ կնոջը: Ես ոչինչ չասացի, բայց նա անմիջապես ավելացրեց, որ տեղյակ է, թե քաղում ինչ են խոսում իր մասին, սակայն իր խիղճը հանգիստ է, և ինքը պահեստապետ է:

- Ինչ վերաբերում է իմ պատմությանը,- շարունակեց նա,- ես նկատեցի, որ այդ գործում խաբեություն կա:

Նա կնոջը տալիս էր ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ էր ապրելու համար: Ինքն էր վճարում սենյակի վարձը, իսկ սննդի համար տալիս էր օրական քսան ֆրանկ:

- Երեք հարյուր ֆրանկ՝ սենյակին, վեց հարյուր ֆրանկ՝ սննդին, ժամանակ առ ժամանակ մի զույգ գուլպա՝ դա անում է հազար ֆրանկ: Իսկ տիկինը չէր աշխատում, բայց ինձ ասում էր, որ իմ տվածով, իրականում, չի կարողանում ծայրը ծայրին հասցնել: Սակայն ես ասում էի նրան. «Ինչո՞ւ չես աշխատում՝ գոնե օրվա կեսը: Գործս լավ կհեշտացնեիր մանր-մունր հարցերում: Այս ամիս քեզ համար հագուստ-կապուստ եմ գնել, օրական տալիս եմ քսան ֆրանկ, տանդ վարձն եմ տալիս, իսկ դու կեսօրից հետո սուրճ ես խմում ընկերուհիներիդ հետ: Դու նրանց հյուրասիրում ես սուրճ ու շաքար, իսկ վճարողը ես եմ: Ես քեզ լավություն եմ անում, իսկ դու վատությամբ ես փոխհատուցում»: Բայց նա շարունակում էր չաշխատել և անընդհատ կրկնում էր, թե չի կարողանում գլուխ հանել, և ահա ես զգացի, որ այստեղ խաբեություն կա:

Հետո պատմեց, որ նրա պայուսակում վիճակախաղի տոմս էր գտել, և որ այդ կինը ոչ մի կերպ չէր կարողացել բացատրել, թե ինչպես էր գնել: Փոքր-ինչ ավելի ուշ նրա մոտ հայտնաբերել էր գրավատան ստացական, որից պարզ էր դարձել, որ նա երկու ապարանջան է գրավ դրել: Մինչ այդ նա անտեղյակ էր այդ ապարանջանների գոյության մասին:

- Լրիվ համոզվեցի, որ խաբեություն կա ու թողեցի նրան: Բայց նախևառաջ մի լավ ծեծեցի, հետո ասացի ողջ ճշմարտությունը: Ասացի, որ նրա ուզած-չուզածը անկողնում զվարճանալն է: Ես հենց այդպես էլ նրան ասացի, հասկանո՞ւմ եք, պարոն Մյորսո:

«Դու չես տեսնում, թե ուրիշներն ինչպես են նախանձում քո երջանկությանը, որ ես եմ քեզ տալիս: Այդ երջանկության արժեքը հետո կհասկանաս»:

Նա սիրուհուն այնքան էր ծեծել, որ արյունլվիկ էր արել: Առաջ նրան չէր ծեծում:

- Ես նրան քոթակում էի, բայց, այսպես ասած, քնքշանքով: Նա մի քիչ ճվճվում էր: Ես փակում էի լուսամուտի փեղկերը, և ամեն ինչ անցնում, վերջանում էր ինչպես միշտ: Բայց այս անգամ լուրջ էր: Չնայած դեռ նրա հախից չեմ եկել:

Նա բացատրեց, որ հենց դրա համար էր ուզում ինձնից խորհուրդ հարցնել: Պատմությունն ընդհատեց, որ կարգավորի լամպի ածխացած պատրույգը: Ես շարունակում էի լսել նրան: Մոտ մի լիտր գինի էի խմել, գլուխս տաքացել էր: Ծխում էի Ռեյմոնի սիգարետները, որովհետև ծխախոտ այլևս չունեի: Վերջին տրամվայներն էին անցնում՝ բերելով արվարձանի այժմ արդեն հեռավոր աղմուկը: Ռեյմոնը շարունակեց: Անհանգիստ էր, որովհետև «հնքը դեռ զգացմունքներ էր տածում բոզի նկատմամբ»: Բայց և ուզում էր պատժել: Սկզբում մտածում էր նրան տանել որևէ հյուրանոց, կանչել բարքերի ոստիկաններին, աղմուկ բարձրացնել և նրան մտցնել սև ցուցակի մեջ: Հետո դիմել էր շրջապատի տղերքին: Նրանք ոչինչ չէին կարողացել մոգոնել: Եվ ինչպես ինձ հասկացրեց Ռեյմոնը, շատ դժվար էր լինել նման շրջապատում: Հենց այդպես էլ ասել էր տղերքին: Նրանք առաջարկել էին մի լավ «նախշել» այդ կնոջ դեմքը: Բայց դա չէր իր ուզածը: Ուրիշ բան էր պետք մտածել: Նախ ուզում էր մի բան խնդրել ինձնից: Ասենք, մինչ խնդրելը կուզեր իմանալ, թե ինչ եմ մտածում այս պատմության մասին: Ես պատասխանեցի, որ ոչինչ չեմ մտածում, բայց հետաքրքիր է: Նա հարցրեց, թե ինչ եմ կարծում՝ խաբեություն կար, թե՞ ոչ: Իմ կարծիքով՝ այո, խաբեություն կար: Արդյոք նրան պե՞տք է պատժել, և ինչ կանեի ես նրա փոխարեն: Ես նրան ասացի, որ երբեք չես իմանա՝ որն է ճիշտ, որը՝ սխալ, բայց հասկանալի է, որ նա ուզում է պատժել: Ես մի քիչ էլ գինի խմեցի: Նա ծխախոտ վառեց ու բացատրեց իր մտահղացումը: Ուզում է նամակ

գրել, «քացու տակ գցել» և նաև այնպիսի բաներ, որ նրան ստիպեն զղջալ: Հետո, երբ կինը վերադառնա, նա կպառկի հետը և հենց «վերջացնելու պահին» կթքի նրա երեսին ու դուրս կվռնդի: Ես համարեցի, որ, իսկապես, այդ ձևով սիրուհին պատժված կլինի: Բայց Ռեյմոնն ասաց, որ ինքն իրեն անկարող է համարում նամակ գրել, ինչպես հարկն է, և որ մտածել է, թե ես կարող եմ այդ անել: Քանի որ լռում էի, նա հարցրեց, թե դժվա՞ր կլինի ինձ համար հենց հիմա գրել, և ես պատասխանեցի՝ ոչ:

Ռեյմոնը մի բաժակ էլ գինի խմեց ու վեր կացավ: Մի կողմ հրեց ափսեները և սառած արնաերշիկի կտորը: Խնամքով սրբեց սեղանի մոմլաքը, գիշերասեղանի դարակից հանեց վանդակավոր թուղթ, դեղին ծրար, կարմրափայտե մի գրիչ և մանիշակագույն թանաքով լի մի թանաքաման: Երբ ինձ ասաց կնոջ անունը, հասկացա, որ մավրուհի է: Կազմեցի նամակը: Մի քիչ անփույթ էի գրել, բայց ջանացել էի գոհացնել Ռեյմոնին, որովհետև նրան դժգոհ թողնելու պատճառ չունեի: Հետո բարձրաձայն կարդացի նամակը: Ռեյմոնը լսում էր ծխելով ու գլուխը տմբտմբացնելով, հետո խնդրեց նորից կարդալ: Շատ գոհ էր: Ինձ ասաց.

- Ես գիտեի, որ դու լավ գիտես կյանքը:

Սկզբում չէի նկատել, որ ինձ «դու»-ով է դիմում: Բայց երբ հայտարարեց՝ «Հիմա դու իմ իսկական ընկերն ես», ապշեցի: Նա կրկնեց իր բացականչությունը, և ես պատասխանեցի՝ այո:

Ինձ միևնույն էր՝ ես նրա ընկերն էի, թե ոչ, իսկ Ռեյմոնը, դատելով իր տեսքից, իրոք, շատ էր ուզում, որ այդպես լիներ: Նա կնքեց նամակը, և մենք մինչև վերջ խմեցինք գինին: Հետո որոշ ժամանակ լուռ ծխում էինք: Դրսում ամեն ինչ խաղաղ էր, լավեց անցնող մեքենայի աղմուկը: Ես ասացի.

- Ուշ է:

Ռեյմոնը նույն կարծիքին էր: Ասաց, որ ժամանակն արագ է անցնում, և դա ինչ-որ իմաստով ճիշտ էր: Քունս տանում էր, բայց ալարում էի վեր կենալ: Երևի հոգնած տեսք ունեի, որովհետև Ռեյմոնն ասաց. «Չպետք է թուլանալ»: Սկզբում չհասկացա: Այնժամ նա բացատրեց, որ իմացել է մորս մահվան մասին, բայց դա այն-

պիսի բան էր, որ վաղ թե ուշ պիտի կատարվեր: Ես նույն կարծիքին էի:

Վեր կացա: Ռեյմոնը շատ ամուր սեղմեց ձեռքս և ասաց, որ իսկական տղամարդիկ միշտ լավ են հասկանում իրար: Դուրս եկա նրա մոտից, փակեցի դուռը և սանդղահարթակում մի պահ մնացի մթության մեջ: Շենքում անդորր էր, աստիճանների ներքևից բարձրանում էր մի անորոշ ու խոնավ շունչ: Լսում էի միայն արյանս զարկերը, որ քզզում էին ականջներումս: Անշարժ կանգնել էի: Ծեր Սալամանոյի սենյակից լսվեց շան խուլ վնգստոցը:

- IV -

Ամբողջ շաբաթ լարված աշխատեցի: Ռեյմոնը եկավ և ասաց, որ ուղարկել է նամակը: Էմանուելի հետ երկու անգամ կինո գնացի. նա բոլորովին չի հասկանում՝ ինչ է կատարվում էկրանին: Հարկ է լինում անընդհատ բացատրություններ տալ: Իսկ երեկ՝ շաբաթ օրը, Մարին էր եկել, ինչպես պայմանավորվել էինք: Նրան տեսնելով՝ իմ մեջ ցանկություն առաջացավ, որովհետև հագել էր կարմիր ու ճերմակ զոլերով գեղեցիկ շրջազգեստ և կաշվե ոտնամաններ: Ընդգծված էր նրա պիրկ կուրծքը, իսկ արևառ դեմքը բացվել էր ծաղկի պես: Մենք ավտոբուս նստեցինք և, Ալժիրից մի քանի կիլոմետր հեռանալով, մի լողափ գտանք ժայռերի մեջ սեղմված ու ցամաքից եղեգներով եզերված: Ժամը չորսի արևը շատ ուժեղ չէր, բայց ջուրը տաք էր և ալիքվում էր փոքրիկ, երկարածիգ ու ալարկոտ կոհակներով:

Մարին խաղ սովորեցրեց ինձ. պետք էր լողալիս ալիքների ամենաբարձր կետից ջուր խմել, բերանում հավաքել ամբողջ փրփուրը և հետո, մեջքի վրա մեկնված, այդ ջուրը ցայտեցնել դեպի երկինք: Այդպիսով, ստացվում էր փրփրալից մի ժանեկահյուս, որը կամ չքանում էր օդում, կամ տաք անձրևի նման նորից թափվում դեմքիդ: Բայց որոշ ժամանակից հետո բերանս արդեն այրվում էր աղի դառնությունից: Մարին մոտեցավ ու սեղմվեց ինձ: Ջրի մեջ նա շուրթերը սեղմեց իմ շուրթերին: Նա լեզվով թրջում-

թարմացնում էր իմ շուրթերը, և մի պահ մենք միասին թավալվեցինք ալիքներում:

Երբ կրկին դուրս եկանք լողափ և հագնվում էինք, Մարին ինձ նայեց իր փայլուն աչքերով: Ես համբուրեցի նրան: Այդ պահից սկսած մենք այլևս չխոսեցինք: Ես գրկել էի նրան, և մենք շտապում էինք ավտոբուս գտնել, արագ վերադառնալ ու նետվել անկողին: Ես պատուհանը բաց էի թողել, և անչափ հաճելի էր զգալ, թե ինչպես է ամառային գիշերվա այուքը սահում մեր արևառ մարմինների վրայով:

Այդ առավոտ Մարին մնաց ինձ մոտ, և ես ասացի, որ մենք միասին կնախաճաշենք: Իջա միս գնելու: Վերադառնալիս Ռեյմոնի սենյակից կնոջ ձայն լսեցի: Դրանից քիչ հետո ծերուկ Սալամանոն հայհոյեց իր շանը: Լսվեց ներքանների ու ճանկերի աղմուկը փայտե աստիճանների վրա, հետո «Կեղտոտ: Սատկած»-ը, և նրանք իջան փողոց: Ես Մարիին պատմեցի ծերուկի մասին, և նա ծիծաղեց: Նա հագել էր իմ տնային հագուստներից մեկը ու թևքերը վեր էր քշտել: Երբ նա ծիծաղեց, ես նորից ցանկացա նրան: Մի պահ անց նա հարցրեց, թե սիրո՞ւմ եմ իրեն: Ես պատասխանեցի, որ դա ոչ մի նշանակություն չունի, բայց ինձ թվում է՝ ոչ: Նա կարծես տխրեց: Բայց նախաճաշ պատրաստելիս և առանց որևէ առիթի նա այնպես նորից ծիծաղեց, որ ես համբուրեցի նրան: Եվ հենց այդ պահին Ռեյմոնի սենյակից լսվեց տուրուդմփոցի աղմուկը:

Սկզբում հնչեց կնոջ սուր ճիչը, ապա Ռեյմոնի ձայնը, որն ասում էր.

- Ինձ խաբո՛ւմ էիր, խաբո՛ւմ էիր, քեզ խաբել ցույց կտամ:

Լսվեցին մի քանի խուլ հարվածներ, և կինն այնպես ահավոր ոռնաց, որ սանդղահարթակն իսկույն լցվեց մարդկանցով: Մենք նույնպես՝ Մարին ու ես, դուրս եկանք: Կինը շարունակում էր ճչալ, իսկ Ռեյմոնը՝ ծեծել: Մարին ասաց, որ սոսկալի է, իսկ ես ոչինչ չպատասխանեցի: Նա ինձ խնդրեց ոստիկան կանչել, բայց ես ասացի, որ չեմ սիրում ոստիկաններին: Այնուամենայնիվ, մի ոստիկան հայտնվեց երկրորդ հարկի ջրմուղագործ կենվորի ուղեկ-

ցությամբ: Նա բախեց դուռը: Մի պահ լռություն տիրեց: Ոստիկանն ավելի ուժգին բախեց դուռը, և մի փոքր անց կինը սկսեց լացել: Ռեյմոնը բացեց դուռը՝ ծխախոտը բերանում, կեղծավոր տեսքով: Կինը դուրս թռավ դռնից և հայտարարեց, որ Ռեյմոնը ծեծել է իրեն:

- Անունդ,- ասաց ոստիկանը:

Ռեյմոնը պատասխանեց:

- Հանի՛ր ծխախոտը բերանիցդ, երբ խոսում ես ինձ հետ,- ասաց ոստիկանը:

Ռեյմոնը վարանեց, նայեց ինձ ու ծուխը ներս քաշեց: Այդ պահին ոստիկանը որքան ուժ ուներ մի ծանր ու թափով ապտակ հասցրեց: Ծխախոտը մի քանի մետր հեռու թռավ: Ռեյմոնն այլայլվեց, բայց այդ պահին ոչինչ չասաց: Հետո խոնարհ ձայնով հարցրեց, թե կարելի՞ է ծխախոտի մնացորդը վերցնել: Ոստիկանն ասաց, որ կարելի է և ավելացրեց.

- Բայց մյուս անգամ կիմանաս, որ ոստիկանը խամաճիկ չէ քեզ համար:

Այդ ընթացքում աղջիկը լաց էր լինում ու կրկնում.

- Ինձ ծեծում էր սա, այս բոզարածը:

- Պարոն ոստիկան,- հարցրեց Ռեյմոնը,- ըստ օրենքի կարելի՞ է մարդուն բոզարած անվանել:

Բայց ոստիկանը հրամայեց «ռեխը փակել»: Այնժամ Ռեյմոնը շուռ եկավ աղջկա կողմն ու ասաց.

- Սպասի՞ր, փոքրիկս, մենք դեռ կհանդիպենք:

Ոստիկանը նրան հրամայեց փակել բերանը և ասաց, որ աղջիկը կարող է գնալ, իսկ ինքը պարտավոր է մնալ և սպասել, մինչև իրեն կանչեն ոստիկանատուն: Նա ավելացրեց, որ Ռեյմոնը պետք է ամաչի, որ այդքան հարբած է և դողում է ոտքի վրա: Այստեղ Ռեյմոնը սկսեց բացատրել.

- Ես հարբած չեմ, պարոն ոստիկան: Բայց քանի որ կանգնած եմ այստեղ՝ ձեր առջև, անկախ ինձնից դողում եմ:

Նա փակեց դուռը, և բոլորը ցրվեցին: Մարին ու ես վերջացրինք նախաճաշ պատրաստելը: Բայց նա քաղցած չէր, և ամբողջը գրե-

թե ես կերա: Նա գնաց ժամը մեկին, իսկ ես մի քիչ քնեցի:

Ժամը երեքի մոտ դուռը թակեցին: Ներս մտավ Ռեյմոնը: Ես պառկած մնացի: Նա նստեց անկողնուս եզրին: Մի պահ անխոս մնաց: Նրան հարցրի, թե ինչպես էին գործերը: Պատմեց, որ հասել էր ուզածին, բայց կինն ապտակել էր իրեն, դրա համար էլ ինքը սկսել էր ծեծել: Մնացածին ես ականատես էի եղել: Ասացի, որ, իմ կարծիքով, այժմ կինը պատժված է, և որ նա պետք է գոհ լինի: Համաձայն էր, բայց նկատեց, որ ոստիկանն իզուր այդպես վարվեց, միևնույն է, ոչինչ չի կարող փոխել, ինքն իր ուզած հարվածներն արդեն հասցրել է: Ավելացրեց նաև, որ լավ գիտի ոստիկաններին և նրանց հետ վարվելու ձևը: Հարցրեց, թե ես սպասո՞ւմ էի, որ ինքը կպատասխաներ ոստիկանի ապտակին: Ասացի, որ ոչինչ էլ չէի սպասում, և որ ընդհանրապես չեմ սիրում ոստիկաններին: Ռեյմոնը շատ գոհ տեսք ընդունեց: Հարցրեց, թե չէի՞ ուզենա դուրս գալ իր հետ: Ես վեր կացա և սկսեցի սանրվել: Նա ասաց, որ ինձ հարկ կլինի հանդես գալ որպես իր վկան: Ինձ համար միևնույն էր, սակայն չգիտեի ասելիքս: Ըստ Ռեյմոնի՝ բավական կլիներ հայտարարել, որ աղջիկն ինձ դավաճանել էր: Ես համաձայնեցի վկայություն տալ նրա օգտին:

Մենք դուրս եկանք, և Ռեյմոնն ինձ ընտիր կոնյակ հյուրասիրեց: Հետո ցանկացավ բիլիարդ խաղալ: Ինձ հաղթեց փոքր առավելությամբ: Այնուհետև ուզում էր հասարակաց տուն գնալ, բայց ես ասացի՝ ոչ, որովհետև դա ինձ դուր չի գալիս: Մենք դանդաղ վերադարձանք: Նա ինձ ասում էր, թե որքան ուրախ է, որ հաջողվել է պատժել սիրուհուն: Իմ կարծիքով՝ նա շատ սիրալիր էր իմ հանդեպ, և ես մտածեցի, որ մենք լավ ժամանակ անցկացրինք:

Հեռվից դռան շեմին նկատեցի ծերուկ Սալամանոյին, որը գրգռված էր երևում: Երբ մոտեցանք, տեսա, որ շունը հետը չէր: Ծերուկը նայում էր չորսբոլորը, պտտվում ինքն իր շուրջը, ջանում որևէ բան գտնել և նորից ու նորից տնտղում փողոցը իր մանրիկ ու կարմրավուն աչքերով: Երբ Ռեյմոնը հարցրեց, թե ինչ է պատահել, նա միանգամից չպատասխանեց: Ես անորոշ լսեցի, որ նա քրթմնջաց. «Կեղտոտ: Սատկած», և շարունակեց դեսուդեն ընկ-

նել: Ես հարցրի, թե որտեղ է շունը: Նա կտրուկ պատասխանեց, որ փախել է: Եվ հետո, հանկարծ սկսեց արագ-արագ վրա տալ.

- Սովորականի նման ես նրան տարել էի Զինավարժությունների դաշտ: Տոնավաճառային կրպակների մոտ շատ մարդ կար: Ես էլ կանգնեցի ու նայում էի «Փախստականների արքան»: Հետո, երբ ուզեցի նորից առաջ շարժվել, նա այլևս չկար: Իհարկե, երկար ժամանակ է՝ ուզում էի նրա համար ավելի փոքր վզնոց գնել, բայց մտքովս անգամ չէր անցնում, թե այդ սրիկան կարող է այդպես փախչել:

Ռեյմոնը նրան բացատրեց, որ շունը կարող էր մոլորվել և դեռ կարող է վերադառնալ: Նա բազմաթիվ օրինակներ բերեց, երբ շները տասնյակ կիլոմետրեր են կտրել տիրոջը գտնելու համար: Չնայած այդ ամենին՝ ծերուկը հուզված էր.

- Բայց, հասկացեք, շանս կխլեն ինձնից: Գոնե մեկնումեկը վերցներ նրան: Դե, ոչ, անհնար է, նա շատ զզվելի է իր վերքերով: Ոստիկանները կբռնեն, պարզ է:

Այդ ժամանակ ես նրան ասացի, որ պետք է գնալ անտեր շների փակարան, մուծել ինչ-որ տուգանք, և շանը կվերադարձնեն: Այստեղ ծերուկը բորբոքվեց.

- Փո՞ղ տալ այդ սրիկայի համար: Երբե՛ք, թող սատկի:

Եվ սկսեց հայհոյել: Ռեյմոնը ծիծաղեց ու ներս մտավ: Ես հետևեցի նրան: Մենք բաժանվեցինք մեր հարթակում: Քիչ անց լսեցի ծերուկի ոտնաձայնը: Նա թակեց իմ դուռը: Երբ բացեցի, մի պահ մնաց շեմին, հետո ասաց.

- Կներեք ինձ, կներեք:

Ես ներս հրավիրեցի, բայց նա չուզեց մտնել: Նայում էր կոշիկի քթերին: Կոշտուկներով ծածկված ձեռքերը դողում էին: Դեմքիս չնայելով՝ հարցրեց.

- Նրանք ինձնից չեն խլի իմ շանը, չէ՞, պարոն Մյորսո: Ասացեք, կվերադարձնե՞ն ինձ: Ի՞նչ պիտի անեմ:

Ես նրան ասացի, որ փակարանում շներին պահում են երեք օր: Տիրոջ տրամադրության տակ այդ երեք օրն է, իսկ հետո անում են այն, ինչ հարմար են գտնում:

Լուռ նայեց ինձ, հետո ասաց.

- Բարի գիշեր:

Դուռը փակվեց, և ես լսեցի, որ նա գնում-գալիս է սենյակում: Մահճակալը ճռռաց: Միջնորմի ետևից լսվող տարօրինակ, կարճ ձայներից հասկացա, որ ծերուկը լաց է լինում: Չգիտես ինչու՝ հիշեցի մորս: Բայց առավոտյան վաղ պիտի արթնանայի: Քաղցած չէի և պառկեցի առանց ընթրելու:

- V -

Ռեյմոնը գրասենյակ զանգահարեց: Ասաց, որ իր ընկերներից մեկը (ում պատմել է իմ մասին) հրավիրում է ինձ կիրակի օրն անցկացնել Ալժիրից ոչ հեռու գտնվող իր տնակում: Ես պատասխանեցի, որ շատ կուզենայի գնալ, սակայն խոստացել եմ այդ օրը նվիրել ընկերուհուս: Ռեյմոնն անմիջապես հայտարարեց, որ նրան էլ է հրավիրում: Ընկերոջ կինը շատ կուրախանա, որ մենակ չի լինի տղամարդկանց միջավայրում:

Ես ուզում էի շուտափույթ կախել հեռախոսը, որովհետև պետս չի սիրում, երբ մեզ զանգում են քաղաքից: Բայց Ռեյմոնը խնդրեց սպասել և ասաց, որ հրավերքի մասին կարող էր երեկոյան էլ հայտնել, բայց ուրիշ բան կա ասելու. ամբողջ օրն իրեն հետևել էին մի խումբ արաբներ, որոնց մեջ էր եղել նաև նախկին սիրուհու եղբայրը:

- Եթե երեկոյան նրան տեսնես մեր տան մոտակայքում, զգուշացրու ինձ:

Ես ասացի, որ հասկանալի է:

Քիչ անց պետս ինձ կանչեց, և մի պահ տրամադրությունս ընկավ, որովհետև կարծում էի, թե կասի՝ ավելի քիչ խոսեք հեռախոսով և ավելի լավ աշխատեք: Բնավ այդպես չէր: Նա հայտարարեց, որ ինձ հետ ցանկանում է խոսել դեռևս անորոշ մի ծրագրի մասին: Միայն ուզում է իմանալ իմ կարծիքը: Մտադիր է գրասենյակ բացել Փարիզում, որը տեղում գործարքներ կվարի անմիջականորեն խոշոր ձեռնարկությունների հետ: Եվ կուզենար

իմանալ իմ մտադրությունը տեղափոխվելու առնչությամբ: Դա ինձ հնարավորություն կընձեռեր ապրել Փարիզում և նաև ճանապարհորդել տարվա մի մասը:

- Դուք երիտասարդ եք, և, իմ կարծիքով, նման կյանքը ձեզ դուր կգա:

Ես ասացի՝ այո, բայց նաև, որ, ըստ էության, ինձ համար միևնույն է:

Այդ ժամանակ նա հարցրեց, թե շահագրգռված չե՞մ փոխել կյանքս: Պատասխանեցի, որ երբեք չես կարող փոխել կյանքդ, որ, ի վերջո, ամեն ինչ նույնն է, և իմ ունեցածը լիովին բավարարում է ինձ: Նա դժգոհ տեսք ընդունեց և ասաց, որ ես միշտ տարտամ պատասխաններ եմ տալիս, որ փառատենչ չեմ, մի բան, որ աղետալի է գործարարության մեջ: Վերադարձա աշխատանքիս: Իհարկե, կնախընտրեի նրան գոհացնել, բայց կյանքս փոխելու որևէ պատճառ չունեի: Եթե խորը մտածենք, ես դժբախտ չեմ: Երբ ուսանող էի, այդ կարգի նկրտումներ շատ էի ունենում: Բայց երբ ստիպված եղա թողնել ուսումս, շատ արագ հասկացա, որ այդ ամենը էական նշանակություն չունի:

Երեկոյան Մարին եկավ ու հարցրեց, թե չէի՞ ուզենա ամուսնանալ իր հետ: Ասացի, որ ինձ համար միևնույն է, և որ մենք կարող ենք դա անել, եթե ուզում է: Նա հարցրեց, թե սիրո՞ւմ եմ իրեն: Պատասխանեցի, ինչպես արդեն մի անգամ ասել էի, այսինքն՝ դա ոչ մի նշանակություն չունի, բայց, անկասկած, ես չեմ սիրում իրեն:

- Այդ դեպքում ինչո՞ւ ես ամուսնանում ինձ հետ,- հարցրեց նա:

Բացատրեցի, որ դա կարևոր չէ, և եթե ցանկանում է, մենք կարող ենք ամուսնանալ: Ասենք, հենց ինքն էր խնդրողը, իսկ ես գոհանում էի «այո» ասելով: Նա նկատեց, որ ամուսնությունը լուրջ խնդիր է: Պատասխանեցի՝ «Ոչ»: Մի պահ լռեց. անթարթ նայում էր ինձ: Հետո նորից խոսեց: Պարզապես ուզում էր իմանալ, թե ես կընդունեի՞ մեկ այլ կնոջ նույնատիպ առաջարկը, որի հետ կապված լիներ նույն ձևով: Ես ասացի. «Բնականաբար»: Այդ ժամանակ նա ինքն իրեն հարցրեց, թե արդյոք սիրո՞ւմ է ինձ: Ես անկարող էի իմանալ այդ մասին: Եվս մի րոպե լռելուց հետո մրմնջաց,

քե ես տարօրինակ եմ, և որ, անկասկած, հենց դրա համար է ինձ սիրում, բայց քերևս մի օր ես իրեն զզվեցնեմ հենց նույն պատճառով: Եվ քանի որ լռում էի, որովհետև ոչինչ չունեի ավելացնելու, նա ժպտալով թևանցուկ արեց ինձ և հայտարարեց, որ ուզում է ամուսնանալ ինձ հետ: Պատասխանեցի, որ մենք դա կանենք, երբ ինքն ուզենա: Այդ ժամանակ նրան պատմեցի պետիս առաջարկի մասին, և Մարին ասաց, որ կուզենար ծանոթանալ Փարիզին: Ես նրան հայտնեցի, որ որոշ ժամանակ ապրել եմ այնտեղ: Հարցրեց, քե ինչպիսին է այն: Ասացի.

- Աղտոտ քաղաք է, որտեղ կան աղավնիներ ու մութ բակեր: Մարդիկ սպիտակ մաշկ ունեն:

Հետո իջանք քաղաք ու քայլեցինք մեծ փողոցներով: Կանայք գեղեցիկ էին, և ես հարցրի, քե նկատո՞ւմ է դա: Որոշ ժամանակ մենք լուռ էինք: Սակայն ուզում էի, որ նա մնար ինձ հետ, և ասացի, որ կարող էինք միասին ճաշել Սելեստի մոտ: Շատ կուզեր, բայց գործ ուներ: Հասել էինք իմ տան մոտ, և ես նրան ասացի. «Ցտեսություն»: Նայեց ինձ.

- Չե՞ս ուզում իմանալ՝ ինչ գործ ունեմ:

Շատ էի ուզում, բայց մտքովս չէր անցնում հարցնել, որի համար նա կարծես հանդիմանում էր ինձ: Այդ ժամանակ, տեսնելով իմ շփոթմունքը, նա նորից ծիծաղեց, ողջ մարմնով ձգվեց դեպի ինձ ու համբուրեց շրթունքներս:

Ճաշեցի Սելեստի մոտ: Արդեն սկսել էի ուտել, երբ ներս մտավ փոքրամարմին, մի տարօրինակ կին և հարցրեց, քե կարելի՞ է նստել ինձ մոտ: Նրա շարժուձևերը կտրուկ էին, իսկ աչքերը փայլում էին խնճորի պես կլոր, փոքրիկ դեմքին: Հանեց ժակետը, նստեց ու սկսեց տենդագին ուսումնասիրել ճաշացուցակը: Կանչեց Սելեստին և իսկույն հստակ, բայց փութկոտ ձայնով պատվիրեց իր ուզած կերակրատեսակները: Խորտիկներին սպասելիս բացեց պայուսակը, հանեց փոքր, քառակուսի թուղթ ու մատիտ, նախօրոք կազմեց հաշիվը, բացեց դրամապանակը և, ավելացնելով թեյադրամը, ճշգրիտ գումարը դրեց իր առաջ: Այդ պահին բերեցին խորտիկները, որոնք նա կուլ տվեց մեծ արագությամբ:

Մինչ կբերեին հաջորդ կերակրատեսակները, պայուսակից նորից հանեց մի կապույտ մատիտ ու ամսագիր, որից կարելի էր իմանալ շաբաթվա ռադիոծրագրերի մասին: Մեծ խնամքով մեկ առ մեկ ընդգծեց գրեթե բոլոր հաղորդումները: Եվ քանի որ ամսագիրը մոտ տասներկու էջ ուներ, նա գործը մանրակրկիտ շարունակեց ամբողջ ճաշի ընթացքում: Ես արդեն վերջացրել էի, իսկ նա դեռ խզբզում էր նույն ջանասիրությամբ: Հետո վեր կացավ, ավտոմատի նման նույն ճշգրիտ շարժումներով հագավ ժակետն ու գնաց: Եվ քանի որ բան ու գործ չունեի, ես նույնպես դուրս եկա ու գնացի նրա ետևից: Նա քայլում էր մայթեզրով, անհավատալի արագությամբ ու ինքնավստահությամբ, առանց շեղվելու և առանց շրջվելու: Ի վերջո, նրան կորցնելով իմ տեսադաշտից, ես ետ դարձա: Մտածեցի, որ տարօրինակ կին էր, բայց իսկույնևեթ մոռացա նրան:

Դռանս մոտ հանդիպեցի ծերուկ Սալամանոյին: Ներս հրավիրեցի, և նա ինձ հայտնեց, որ շունը կորել է, որովհետև փակարանում էլ չի եղել: Այնտեղ նրան ասել էին, թե գուցե մեքենայի տակ է ընկել: Նա հարցրել էր, թե հնարավոր չէ՞ արդյոք պարզել ոստիկանատան միջոցով: Նրան պատասխանել էին, որ այդպիսի փոքր գործերը չեն գրանցվում, որովհետև նման դեպքեր պատահում են ամեն օր: Ես ծերուկ Սալամանոյին ասացի, որ նա կարող է ուրիշ շուն ձեռք բերել, բայց նա իրավացի էր, երբ բացատրեց, որ այդ մեկին սովոր էր:

Ես կծկվել էի մահճակալիս, իսկ Սալամանոն նստել էր սեղանի մոտ դրված աթոռին, դեմքով դեպի ինձ, երկու ձեռքն էլ ծնկներին: Նա չէր հանել իր հնամաշ ծղոտե գլխարկը: Դեղնած բեղերի տակից կցկտուր նախադասություններ էր ծամծմում: Ծերուկը փոքրինչ ձանձրացնում էր ինձ, բայց ես անելիք չունեի, և քունս չէր տանում: Ինչ-որ բան ասած լինելու համար ես հարցուփորձ արեցի շան մասին: Ասաց, որ շանը վերցրել էր կնոջ մահից հետո: Բավական ուշ էր ամուսնացել: Երիտասարդ ժամանակ ցանկացել էր դերասան դառնալ, գնդում ծառայելիս խաղացել էր զինվորական վոդևիլներում: Բայց, ի վերջո, մտել էր երկաթուղի և չէր զղջում,

քանի որ հիմա փոքրիկ թոշակ էր ստանում: Երջանիկ չէր եղել իր կնոջ հետ, բայց ընդհանուր առմամբ վարժվել էր նրան: Եվ երբ կինը մահացել էր, նա իրեն շատ մենակ էր զգացել: Դրա համար էլ արհեստանոցի մի ընկերոջից շուն էր խնդրել: Նրան տվել էին շատ փոքրիկ մի քոթոթ, որին հարկ էր եղել կերակրել ծծակով: Բայց քանի որ շունը մարդուց ավելի քիչ է ապրում, նրանք միասին էին ծերացել:

- Նա վատ բնավորություն ուներ,- ասաց Սալամանոն: - Ժամանակ առ ժամանակ մենք ծեծկվում էինք: Բայցևայնպես լավ շուն էր:

Ես ասացի, որ ցեղական շուն էր, և Սալամանոն գոհ մնաց:

- Դուք դեռ նրան չէիք տեսել մինչև հիվանդանալը,- ավելացրեց նա: - Ի՞նչ գեղեցիկ մազեր ուներ:

Իսկ ինչ ձեռք էր բերել այդ մաշկային հիվանդությունը, Սալամանոն ամեն առավոտ և ամեն երեկո քսուքով շփում էր նրան: Բայց, իր կարծիքով, նրա իսկական հիվանդությունը ծերությունն էր, իսկ ծերությունն անբուժելի է:

Այդ պահին ես հորանջեցի, և ծերուկն ասաց, որ գնում է: Ես ասացի, որ կարող է էլի մնալ, որ ես վշտացած եմ շան համար: Նա շնորհակալություն հայտնեց, ասաց, որ մայրս շատ էր սիրում շանը: Մորս մասին խոսելիս, ասում էր. «Ձեր խեղճ մայրը»: Նա ենթադրում էր, որ ինձ դժբախտ եմ զգում մորս մահից հետո: Ես ոչինչ չպատասխանեցի: Այդ ժամանակ նա արագ-արագ և նեղվելով ասաց, որ տեղյակ է, թե քաղում իմ մասին վատ են խոսում, որովհետև մորս ծերանոց եմ տարել, բայց ինքն ինձ լավ է ճանաչում և գիտի, որ ես շատ էի սիրում մորս: Չգիտեմ ինչու, ասացի, որ մինչև հիմա չեմ իմացել, որ ինձ դատապարտել են դրա համար, բայց մորս ծերանոց տեղափոխելը բնական է թվացել ինձ, որովհետև ես բավականաչափ դրամ չեմ ունեցել մորս պահելու համար:

- Եվ հետո,- ավելացրի ես,- արդեն երկար ժամանակ նա ոչինչ չուներ ինձ հետ խոսելու և միայնակ ձանձրանում էր:

- Այո,- նկատեց Սալամանոն,- ծերանոցում գոնե ընկերներ ես գտնում:

Հետո ներողություն խնդրեց. քնել էր ուզում: Այժմ իր կյանքը փոխվում էր, և լավ չէր պատկերացնում, թե ինչ է անելու: Մեր ծանոթությունից ի վեր առաջին անգամ նա աննկատելիորեն ինձ մենակեց ձեռքը, և ես զգացի նրա թեփուկավոր մաշկի կոշտությունը: Թեթևակի ժպտաց և մեկնելուց առաջ ասաց.

- Հույս ունեմ, որ այս գիշեր շները չեն հաչի: Անընդհատ ինձ թվում է, թե իմ շունն է:

- VI -

Կիրակի առավոտյան մեծ դժվարությամբ արթնացա: Հարկ եղավ, որ Մարին անունս տա, ցնցի ինձ: Չնախաճաշեցինք, քանի որ ուզում էինք հնարավորին չափ շուտ լողանալ: Ինձ լրիվ դատարկված էի զգում, գլուխս ցավում էր: Ծխախոտը դառնահամ էր թվում: Մարին սկսեց ծաղրել ինձ. «Կարծես քաղումից ես գալիս»: Ճերմակ շրջազգեստ էր հագել, մազերն էլ արձակ էին: Ես նրան ասացի, որ գեղեցիկ է, և նա ուրախությունից ծիծաղեց:

Իջնելիս թակեցինք Ռեյմոնի դուռը: Նա պատասխանեց, որ դուրս է գալիս: Փողոցում՝ հոգնածության, ինչպես նաև մեր սենյակի փակ լուսափեղկերի պատճառով ցերեկվա արևալից լույսն ասես ապտակեց դեմքս: Մարին հրճվանքից թռչկոտում էր և անընդհատ կրկնում, թե ինչ լավ եղանակ է: Կամաց-կամաց ինձ ավելի լավ զգացի: Գլխի ընկա, որ քաղցած եմ: Այդ մասին ասացի Մարիին: Բայց նա ցույց տվեց իր մոմլաթե պայուսակը, ուր տեղավորել էր միայն լողազգեստներն ու սրբիչը: Սպասելուց բացի ոչինչ չէի կարող անել: Լսեցինք, թե ինչպես Ռեյմոնը փակեց դուռը: Նա հագել էր կապույտ շալվար և կարճաթև սպիտակ վերնաշապիկ: Դրել էր մակույկավարի գլխարկ, որը Մարիի ծիծաղը շարժեց: Դաստակներից վեր մաշկը շատ սպիտակ էր, ծածկված սև մազերով, որն ինձ զզվելի էր թվում: Իջավ շվշվացնելով. տեսքը չափազանց ինքնագոհ էր: Ինձ ասաց. «Աղջո՞ւյն, ծերուկ», իսկ Մարիին «օրիորդ» անվանեց:

Նախորդ օրը մենք գնացել էինք ոստիկանատուն, և ես վկա-

յություն էի տվել, որ աղջիկը «պավաճանել» էր Ռեյմոնին: Բավարարվեցին նախազգուշացումով: Իմ ցուցմունքը չստուգեցին:

Մուտքի մոտ մենք դա քննարկեցինք Ռեյմոնի հետ: Հետո որոշեցինք ավտոբուս նստել: Լողափը շատ հեռու չէր, բայց մեքենայով ավելի արագ կհասնեինք: Ռեյմոնի կարծիքով ընկերն ուրախ կլիներ մեզ ավելի շուտ տեսնել: Ուզում էինք մեկնել, երբ հանկարծ Ռեյմոնն ինձ նշան արեց, որ դիմացս նայեմ: Ես տեսա մի խումբ արաբների, որոնք շարված էին կրպակի առջև: Նրանք լուռ մեզ էին նայում, բայց այնպիսի հայացքով, որ մենք կարծես ոչ ավելի, ոչ պակաս քար էինք կամ չոր փայտ: Ռեյմոնն ասաց, որ ձախից երկրորդն իր ասած մարդն էր: Նա մոայլվեց, սակայն ավելացրեց, որ այդ պատմությունն արդեն ավարտված է: Մարին այնքան էլ լավ չէր հասկանում, թե բանն ինչ է: Ես նրան բացատրեցի, որ դրանք արաբներ են, որոնք հաշիվներ ունեն Ռեյմոնի հետ: Մարին ուզեց, որ մենք անմիջապես մեկնենք: Ռեյմոնը ձգվեց ու ծիծաղելով ասաց, որ պետք է շտապել:

Գնացինք ավտոբուսի կանգառ, որն այնքան էլ մոտ չէր, և Ռեյմոնն ինձ ասաց, որ արաբները մեզ չեն հետապնդում: Ես շրջվեցի. նրանք նույն տեղում էին և նույն անտարբերությամբ նայում էին այնտեղ, որտեղից եկել էինք մենք: Ավտոբուս նստեցինք: Ռեյմոնը, որ լրիվ թեթևացած տեսք ուներ, շարունակ կատակներ էր անում Մարիի հետ: Ես զգացի, որ Մարին Ռեյմոնին դուր է գալիս, բայց նա գրեթե չէր պատասխանում, միայն մերթ-մերթ նայում էր Ռեյմոնին ու ծիծաղում:

Իջանք Ալժիրի արվարձանում: Լողափը հեռու չէր ավտոբուսի կանգառից, բայց հարկ եղավ կտրել-անցնել մի փոքրիկ սարավանդ, որն ասես վերից իշխում էր ծովին՝ իջնելով լողափ: Այն ծածկված էր շրեշներով, որոնք ճեփ-ճերմակ էին թվում երկնքի արդեն մուգ կապույտ պաստառի վրա: Մարին զվարճանում էր, մոմլաթե պայուսակով խփում, ցիրուցան անում ծաղկաթերթիկները: Մենք անցանք կանաչ կամ սպիտակ ցանկապատերով առանձնացված փոքրիկ ամառատների շարասյան միջով: Այդ տնակներից մի քանիսն իրենց պատշգամբներով թաքնված էին

կարմրաննների տակ, իսկ մյուսները կանաչազուրկ էին ու ցցված քարերի մեջ: Սարավանդի եզրին հասնելուց առաջ կարելի էր արդեն նշմարել անշարժ ծովը, իսկ ավելի հեռվում՝ վճիտ ջրի մեջ նիրհող հրվանդանի վիթխարի զանգվածը: Հանդարտ օդի միջով մեր ականջին հասավ շարժիչի թեթև հոնդյունը, և հեռու-հեռվում մենք տեսանք մի փոքրիկ ձկնորսանավ, որն աննկատ առաջանում էր փայլակնացայտ ծովի վրայով: Մարին մի քանի վայրի հիրիկ քաղեց: Դեպի ծովն իջնող զառիթափից մենք տեսանք, որ արդեն լողացողներ կային:

Ռեյմոնի ընկերն ապրում էր լողափի եզրին գտնվող փայտաշեն մի փոքրիկ հյուղակում: Տնակը կոթնած էր ժայռին, իսկ առջևի մասով հենվում էր ջրում խրված ցցագերանաններին: Ռեյմոնը մեզ ներկայացրեց ընկերոջը, որի անունը Մասոն էր: Նա հաղթանդամ էր, բարձրահասակ ու թիկնեղ, իսկ փոքրիկ կինը՝ գնդլիկ ու սիրուն աղջիկ, խոսում էր Փարիզի առոգանությամբ: Մասոնն անմիջապես ասաց, որ մենք մեզ ազատ զգանք, և որ իրենք ունեն տապալած ձուկ, որ հենց այդ առավոտ են բռնել: Ես նրան ասացի, որ իր տնակը շատ գեղեցիկ է: Նա ինձ հայտնեց, որ ամեն շաբաթ ու կիրակի, ինչպես նաև արձակուրդն այստեղ է անցկացնում:

- Ես ու կինս լավ ենք հասկանում իրար,- ավելացրեց նա:

Այդ պահին կինը ծիծաղելով զրուցում էր Մարիի հետ: Եվ թերևս առաջին անգամ ես մտածեցի, որ շուտով կամուսնանամ:

Մասոնը ցանկանում էր լողալ, բայց կինն ու Ռեյմոնը չուզեցին գալ: Մենք երեքով իջանք ներքև, և Մարին իսկույն նետվեց ջուրը: Մասոնն ու ես փոքր-ինչ հապաղեցինք: Մասոնը դանդաղ էր խոսում, և ես նկատեցի, որ սովորություն ունի ասածը լրացնել «ավելին կասեի»-ով, նույնիսկ, եթե ըստ էության ոչինչ չունի ավելացնելու նախադասության իմաստին: Մարիի մասին ինձ ասաց.

- Ապշեցուցիչ է, ավելին կասեի՝ հմայիչ է:

Հետո ես այլևս ուշադրություն չէի դարձնում նրա այդ մոլությանը, որովհետև տարված էի արևի բարերար ջերմությունն ընդունելով: Ավազն սկսեց այրել ոտքերս: Մեկ անգամ ևս հետաձգեցի ջուրը մտնելու ցանկությունս, բայց, ի վերջո, ասացի Մասոնին.

- Չգնա՞ք:

Սուզվեցի: Իսկ Մասոնը դանդաղ մտավ ջուրը և նետվեց այն ժամանակ, երբ ոտքերը կտրվեցին գետնից: Նա գորտնալող էր տալիս և այնքան վատ, որ թողեցի նրան ու հասա Մարիին: Ջուրը սառն էր, և ես հաճույքով էի լողում: Մարիի հետ մենք լողացինք հեռու և զգացինք մեր շարժումների ու բավարարվածության ներդաշնակությունը:

Բաց ծովում մենք ուղիղ ձգվեցինք ջրի վրա. առ երկինք շրջված իմ դեմքից արևը հեռացնում էր ջրաշիթերի վերջին շողաշները, որոնք լցվում էին բերանս: Մենք տեսանք, որ Մասոնը դուրս եկավ լողափ ու փովեց արևի տակ: Հեռվից նա հսկա էր թվում: Մարին ուզում էր, որ միասին լողայինք: Հետևի կողմից ես գրկեցի նրա մեջքը, և մենք լողացինք: Մարին ամբողջ ուժով շարժում էր թևերը, իսկ ես նրան ուժ էի տալիս ոտքերով: Առավոտվա անդորրի մեջ ջրային հարվածների այդ հազիվ լսելի ճողփյունը երկար ժամանակ ուղեկցում էր մեզ, մինչև որ ես հոգնություն զգացի: Այնժամ ես թողեցի Մարիին և, կանոնավոր լող տալով ու լիաթոք շնչելով, վերադարձա: Ափին բերանքսիվայր փովեցի Մասոնի կողքին ու դեմքս խրեցի ավազների մեջ: Ասացի. «Լա՞վ էր»: Նա նույն կարծիքին էր: Քիչ անց եկավ Մարին: Շրջվեցի, որ տեսնեմ՝ ինչպես է մոտենում: Աղաջրից լրիվ լպրծուն, մազերը ետ գցած՝ նա ձգվեց հենց իմ կողքին, և երկու ջերմություն՝ արևն ու նրա մարմինը, նիրհի սփռեցին վրաս:

Մարին ցնցեց ինձ ու ասաց, որ Մասոնը տուն է բարձրացել՝ նախաճաշել էր պետք: Իսկույն վեր կացա, որովհետև սոված էի: Սակայն Մարին ասաց, որ առավոտից իրեն չեմ համբուրել: Դա ճիշտ էր, չնայած նման ցանկություն ունեցել էի:

- Արի ջրի մեջ,- ասաց նա ինձ:

Մենք վազեցինք ու հանձնվեցինք հենց առաջին փոքրիկ ալիքներին: Մի քանի գորտնալող տալուց հետո Մարին կպավ ինձ: Զգացի՝ ինչպես են ոտքերը փաթաթվում իմ ոտքերին, և ցանկացա նրան:

Երբ ետ դարձանք, Մասոնն արդեն կանչում էր մեզ: Ասացի, որ

շատ սոված եմ, և նա անմիջապես հայտարարեց կնոջը, որ իրեն դուր եմ գալիս: Հացը համեղ էր, և ես խժռեցի իմ բաժին ծուկը: Հետո մատուցեցին միս ու տապակած կարտոֆիլ: Մենք բոլորս լուռ ուտում էինք: Մասոնը հաճախ էր դատարկում գինու բաժակը: Անընդհատ հյուրասիրում էր ինձ: Սուրճ խմելիս զգացի, որ գլուխս արդեն ծանրացել է: Շատ ծխեցի: Մասոնը, Ռեյմոնն ու ես որոշեցինք համատեղ ծախսերով օգոստոս ամիսն անցկացնել այստեղ: Հանկարծ Մարին ասաց.

- Իսկ գիտե՞ք ժամը քանիսն է. տասնմեկն անց կես:

Մենք բոլորս զարմացանք, իսկ Մասոնն ասաց, որ, իրոք, շատ վաղ նախաճաշեցինք, բայց եթե քաղցած ես, ուրեմն ուտելու ժամանակն է: Չգիտես ինչու, այս միտքը ծիծաղեցրեց Մարիին: Իմ կարծիքով՝ մի քիչ շատ էր խմել: Մասոնն ինձ հարցրեց, թե չե՞մ ուզում իր հետ զբոսնել լողափին:

- Կինս նախաճաշից հետո միշտ պառկում, հանգստանում է, մի բան, որ ինձ դուր չի գալիս: Ես պիտի քայլեմ: Նրան շարունակ բացատրում եմ, որ դա լավագույնն է առողջության համար, սակայն, ի վերջո, իր գործն է:

Մարին հայտարարեց, որ կմնա տիկին Մասոնին օգնելու, որպեսզի ամանները միասին լվանան: Իսկ փարիզցի փոքրիկ կինն ասաց, որ դրա համար անհրաժեշտ է վոնդել տղամարդկանց: Մենք երեքով իջանք ցած:

Արևը գրեթե ուղղածիգ էր խփում ավազներին, և նրա փայլատակումն անտանելի էր ծովի վրա: Լողափին այլևս ոչ ոք չկար: Սարավանդը եզերող և ծովի վրա կախված քողտիկներից լսվում էր պնակների ու սպասքեղենի չխկչխկոցը: Հազիվ էինք շնչում գետնից հառնող այդ քարեղեն տապի մեջ: Ռեյմոնն ու Մասոնը սկսեցին խոսել ինձ անծանոթ մարդկանց ու իրերի մասին: Ես հասկացա, որ նրանք իրար վաղուց են ճանաչում, և որ նույնիսկ միասին են ապրել մի ժամանակ: Մենք ուղղվեցինք դեպի ծովը ու քայլեցինք նրա երկայնքով: Մերթընդմերթ մի փոքրիկ, բայց մյուսներից ավելի երկար ալիք գալիս քրջում էր մեր շորերն ու կոշիկները: Ես ոչինչ չէի մտածում, որովհետև կիսաքնած էի. արևն անչափ

ուժեղ էր հարվածում բաց գլխիս:

Այդ ժամանակ Ռեյմոնը Մասոնին ինչ-որ բան ասաց, որ ես չլսեցի: Բայց լողափի ծայրին՝ սեղանից ահագին հեռու, նկատեցի մուգ կապույտ արտահագուստներով երկու արաբի, որոնք գալիս էին դեպի մեզ: Ես նայեցի Ռեյմոնին, որն ասաց.

- Նա է:

Մենք շարունակեցինք քայլել: Մասոնը հարցրեց, թե ինչպես են նրանք կարողացել հետևել մեզ մինչև այստեղ: Մտածեցի, որ նրանք մեզ տեսած կլինեն ավտոբուս բարձրանալիս, ձեռքերիս՝ լողափի պայուսակներ, բայց ոչինչ չասացի:

Արաբները դանդաղ էին առաջանում, բայց արդեն բավական մոտեցել էին մեզ: Մենք չփոխեցինք մեր քայլքը, բայց Ռեյմոնն ասաց.

- Եթե կռիվ լինի, Մասոն, դու կվերցնես երկրորդին, ես կզբաղվեմ իմով: Դու՝ Մյորսո, սպասիր, եթե հայտնվի մեկ ուրիշը, քոնը կլինի:

Ես ասացի. «Այո»: Եվ Մասոնը ձեռքերը դրեց գրպանը: Շիկացած ավազն այժմ կարմիր էր թվում: Մենք համաչափ քայլերով առաջ էինք շարժվում դեպի արաբները: Մեր միջև եղած տարածությունն ավելի ու ավելի էր կրճատվում: Երբ մեզ արդեն մի քանի քայլ էր բաժանում, արաբները կանգ առան: Մասոնն ու ես դանդաղեցրինք մեր քայլերը: Ռեյմոնը գնաց ուղիղ դեպի արաբը: Ես լավ չլսեցի, թե ինչ ասաց նրան, բայց սա կարծես պատրաստվեց գլխով հարվածել: Այդ ժամանակ Ռեյմոնը խփեց առաջինը և անմիջապես ձայն տվեց Մասոնին: Մասոնը գնաց դեպի իր համար նախանշվածը և երկու անգամ ամբողջ ուժով հարվածեց: Արաբը բերանքսիվայր ընկավ ջրի մեջ և մի քանի վայրկյան մնաց այդպես՝ գլխի շուրջը պղպջակներ պայթեցնելով ջրի մակերեսին: Այդ ընթացքում Ռեյմոնը նույնպես խփում էր՝ լրիվ արյունլվիկ անելով իր արաբի դեմքը: Հետո շրջվեց իմ կողմն ու ասաց.

- Տես, թե ինչ եմ անելու սրան:

Ես բղավեցի.

- Զգո՞ւյշ, դանակ ունի:

Բայց Ռեյմոնի թևն արդեն բացված էր, իսկ բերանը՝ պատռված:

Մասոնը ոստյուն արեց դեպի առաջ: Սակայն մյուս արաբն արդեն վեր էր կացել ու կանգնել այս զինվածի հետևը: Մենք չհամարձակվեցինք շարժվել: Նրանք դանդաղ ետ-ետ գնացին՝ անընդհատ մեզ նայելով ու դանակով սպառնալով: Ռեյմոնը սեղմել էր թևը, որից արյուն էր կաթում:

Մասոնն անմիջապես ասաց, որ մի բժշկի է ճանաչում, որը կիրակի օրերն այդտեղ է լինում: Ռեյմոնն իսկույն ցանկացավ գնալ նրա մոտ: Բայց հենց ուզում էր խոսել, վերքից արյունը լցվում էր բերանն ու պղպջակներ առաջացնում: Մենք նրան օգնեցինք և հնարավորինս արագ վերադարձանք տնակ: Այստեղ Ռեյմոնն ասաց, որ վերքերը խորը չեն, և որ ինքն ի վիճակի է գնալ բժշկի մոտ: Նա գնաց Մասոնի հետ, իսկ ես մնացի, որ կանանց բացատրեմ պատահածը: Տիկին Մասոնը լաց էր լինում, իսկ Մարին գույնը լրիվ գցել էր: Ինձ համար ծանծրալի էր նրանց բացատրելը: Շուտով լռեցի և սկսեցի ծխել՝ հայացքս հառած ծովին:

Ժամը մեկն անց կեսի մոտերքը Ռեյմոնը Մասոնի հետ վերադարձավ: Թևը կապել էին, իսկ բերանի անկյունում սպեղանի կպցրել: Բժիշկն ասել էր, որ լուրջ բան չկա, բայց Ռեյմոնը շատ մոայլ էր: Մասոնը ջանում էր նրան ծիծաղեցնել, բայց նա շարունակում էր լռել: Եվ երբ ասաց, թե իջնում է լողափ, ես հարցրի՝ ո՞ւր: Նա ասաց, որ կուզենար օդ շնչել: Մենք՝ Մասոնն ու ես, ասացինք, որ կուղեկցենք իրեն: Այդ ժամանակ նա զայրացավ ու հայհոյեց մեզ: Մասոնն ասաց, թե պետք է չհակաճառել: Բայց ես, այնուամենայնիվ, հետևեցի նրան:

Մենք երկար քայլեցինք լողափով: Հիմա արևն ավելի տաժանելի էր. ընկնում էր, ասես փշուր-փշուր լինում ավազների ու ծովի վրա: Ինձ թվում էր, թե Ռեյմոնը գիտի՝ ուր է գնում, բայց, իհարկե, սխալվում էի: Լողափի ծայրին մենք վերջապես հասանք մի աղբյուրի, որը ժայռի ետևից ցայտում էր ավազի մեջ: Հենց այստեղ էլ գտանք մեր երկու արաբներին: Նրանք պառկած էին իրենց յուղոտված, կապույտ արտահագուստներով և միանգամայն հան-

գիստ ու գրեթե գոհ տեսք ունեին: Մեր հայտնվելը ոչինչ չփոխեց: Նա, ով խփել էր Ռեյմոնին, նայում էր անխոս: Մյուսը մի փոքրիկ եղեգնափող էր շվացնում՝ աչքի պոչով նայելով մեզ, անվերջ կրկնում էր միայն նույն երեք նոտան, որ արտաբերում էր իր գործիքով:

Այդ ամբողջ ընթացքում միայն արևն էր ու լռությունը՝ աղբյուրի խոխոջյունով ու երեք նոտայով: Ռեյմոնը ծեռքը տարավ գրպանի ատրճանակին, բայց արաբը չշարժվեց. նրանք շարունակում էին իրար նայել: Ես նկատեցի, որ սրնգահարի ոտքի մատները շատ հետու էին միմյանցից: Բայց Ռեյմոնը, աչքը չկտրելով հակառակորդից, հարցրեց. «Վերացնե՞մ սրան»: Մտածեցի, որ եթե ասեմ ոչ, նա ավելի կգրգռվի ու հաստատ կկրակի: Միայն ասացի.

- Քեզ դեռ ոչինչ չի ասել: Գարշելի բան կլինի, եթե այդպես կրակես:

Լռության ու տապի խորքից դարձյալ լսվեց ջրի ու սրնգի գլգլոցը:

Ռեյմոնն ասաց.

- Այդ դեպքում կհայհոյեմ, հենց պատասխանեց, հերը կանիծեմ:

Ես պատասխանեցի.

- Ճիշտ այդպես: Բայց եթե նա դանակ չհանի, դու չես կարող կրակել:

Ռեյմոնը սկսեց նյարդայնանալ: Սրնգահարը շարունակ նվագում էր, իսկ մյուս երկու արաբները հետևում էին Ռեյմոնի յուրաքանչյուր շարժմանը:

- Ոչ,- ասացի ես Ռեյմոնին: - Կռվի մեջ մտիր տղամարդու պես, իսկ ատրճանակը տուր ինձ: Եթե մյուսը միջամտի կամ դանակ հանի, ես կվերացնեմ նրան:

Ռեյմոնն ինձ տվեց ատրճանակը, որը մի պահ փայլատակեց արևի տակ: Սակայն մենք դեռ անշարժ կանգնած էինք, կարծես ամեն բան պարփակվել էր մեր շուրջը: Ակնդետ նայում էինք իրար, և ամեն ինչ կանգ էր առել ծովի, ավազի և արևի, սրնգի ու ջրի կրկնակի լռության մեջ: Այդ պահին մտածեցի, որ կարելի է և՛

կրակել, և՛ չկրակել: Բայց հանկարծ արաբները ետ-ետ քաշվեցին ու չքացան ժայռի ետևը: Մենք էլ՝ Ռեյմոնն ու ես, գնացինք մեր ճանապարհով: Նա կարծես ավելի լավ էր զգում իրեն, խոսեց վերադարձի ավտոբուսի մասին:

Նրան ուղեկցեցի մինչև տնակ, և մինչ նա մագլցում էր փայտե սանդուղքը, կանգ առա առաջին աստիճանի մոտ, արևից դմբդմբացող գլխով, ընկճված այն մտքից, որ ստիպված եմ փայտե այդ մի հարկը բարձրանալ և նորից հանդիպել կանանց: Բայց շոգն այնքան ուժեղ էր, որ նաև անհնար էր անշարժ կանգնել կուրացուցիչ ճառագայթների տակ: Մնալ այդտեղ, թե գնալ՝ նույն բանն էր: Մեկ րոպե անց ես արդեն շրջվել ու քայլում էի լողափի ուղղությամբ:

Նորից նույն բոսորագույն հրավառությունն էր: Ավազների վրա ծովը հևում էր իր ողջ արագաթրթիռ ու հեղձված շնչառությամբ: Դանդաղ առաջանում էի դեպի ժայռերը՝ զգալով, որ գլուխս ուռչում է արևի տակ: Նրա ողջ ջերմությունը ծանրացել էր վրաս և ընդդիմանում էր իմ առաջընթացին: Եվ ամեն անգամ, երբ այդ ահռելի շնչառությունն էի զգում դեմքիս վրա, սեղմում էի ատամներս, տաբատիս գրպաններում փակում բռունցքներս, ճգվում, երկարում ամբողջ մարմնով, որպեսզի կարողանամ հաղթել արևին և նրանից իմ մեջ ներարկվող անորոշ հարբեցությանը: Ավազից, ճերմակած խեցուց և ապակու բեկորից անդրադարձվող, սուսերի նման ծակող լույսի ամեն մի շեղբից կծկվում էին ծնոտներս: Երկար ժամանակ քայլում էի այդպես:

Հեռվից երևում էր ժայռի փոքրիկ ու մութ զանգվածը՝ պարուրված լույսի և ծովափոշու կուրացուցիչ ճաճանչապսակով: Հիշեցի սառնորակ աղբյուրը ժայռի ետևում: Ուզում էի կրկին լսել ջրի խոխոջյունը, ցանկանում էի փախչել արևից, ամեն տեսակ լարումից, կանանց արցունքներից, երազում էի վերջապես ստվեր գտնել ու հանգստանալ այնտեղ: Սակայն երբ մոտեցա, տեսա, որ Ռեյմոնի արաբը վերադարձել է:

Նա մենակ էր: Հանգստանում էր մեջքին պառկած, ձեռքերը դրած ծոծրակին, ճակատը՝ ժայռի ստվերում, իսկ մարմինը՝ արևի

տակ: Նրա կապույտ արտահագուստն ասես ծխում էր ջերմությունից: Ես փոքր-ինչ անակնկալի էի եկել: Ինձ համար դա վերջացած պատմություն էր, և ես այդտեղ էի եկել այդ մասին չմտածելով:

Հենց ինձ տեսավ, փոքր-ինչ բարձրացավ ու ձեռքը տարավ գրպանը: Ես, բնականաբար, սեղմեցի Ռեյմոնի ատրճանակը բաճկոնիս մեջ: Այդ ժամանակ նա նորից ետ-ետ գնաց, բայց առանց ձեռքը գրպանից հանելու: Ես բավական հեռու էի նրանից՝ մոտ տասը մետր: Պահ առ պահ նրա հայացքն էի որսում իր կիսաբաց կոպերի արանքից: Բայց ավելի հաճախ նրա կերպարանքը պարում էր աչքերիս առաջ, հրակեզ օդի մեջ: Ալիքների շառաչն էլ ավելի ալարկոտ էր, ավելի մեղմ, քան կեսօրին: Նույն արևն էր, նույն լույսը՝ նույն ավազի վրա, որ սփռված էր այստեղ: Արդեն երկու ժամ էր, որ օրն առաջ չէր շարժվում, երկու ժամ էր, ինչ նա խարիսխ էր ձգել եռացող մետաղյա օվկիանոսում: Հորիզոնում մի փոքրիկ շոգենավ անցավ, և այդ սև բիծը ես ուշմարեցի աչքի պոչով, որովհետև անթարթ նայում էի արաբին:

Մտածեցի, որ բավական է կիսով չափ շրջվեմ, և ամեն ինչ կվերջանա: Բայց արևից թրթռացող ամբողջ լողափը հրում էր իմ ետևից: Մի քանի քայլ արեցի դեպի աղբյուրը: Արաբը չշարժվեց: Այնուամենայնիվ նա դեռ բավական հեռու էր ինձնից: Գուցե ստվերների պատճառով նրա դեմքն այնպիսին էր, որ ինձ թվաց, թե ծիծաղում է: Սպասեցի: Արևն արդեն այրում էր այտերս, ու ես զգացի, որ քրտինքի կաթիլներ են կուտակվում հոնքերիս մեջ: Նույն արևն էր, ինչ այն օրը, երբ թաղում էի մորս, և ինչպես այն ժամանակ, հիմա էլ ճակատս էր հատկապես ցավում, և նրա բոլոր երակները տրոփում էին մաշկիս տակ: Այդ կիզիչ արևի պատճառով, որն արդեն անտանելի էր ինձ համար, ես առաջ գնալու փորձ արեցի: Գիտեի, որ հիմար բան եմ անում, որ արևից չես ազատվի նման մի քայլով, բայց արեցի այդ քայլը՝ միայն մեկ քայլ դեպի առաջ: Եվ այս անգամ արաբը, առանց վեր կենալու, հանեց դանակն ու ցուցադրեց արևի տակ: Լույսը շողաց պողպատի վրա, ասես մի փայլուն ու երկար շեղբ իջավ ճակատիս: Նույն վայրկյա-

ինն հոնքերումս կուտակված քրտինքը միանգամից հոսեց կոպերիս վրա և ծածկեց տաք ու թանձրահյուս շղարշով: Աչքերս կուրացան արցունքի ու աղի այդ վարագույրի ետևում: Ես այլևս զգում էի միայն արևի ծնծղաների հարվածները ճակատիս ու տարտամորեն նաև՝ ասես դանակից դուրս ցայտող, շարունակ աչքերիս առջև պարող կայծեր: Այդ հրե սուսերը քրքրում էր թարթիչներս, ծակում, մրմռացնում աչքերս: Հենց այդ պահին ամեն ինչ երերաց: Ծովն արձակեց բարձր ու կիզիչ մի հառաչանք: Ինձ թվաց, թե երկիրը բացվեց իր ամբողջ տարածքով մեկ, որ հրե անձրև տեղա:

Ողջ էությունս լարվեց, ձեռքս կծկեցի ու սեղմեցի ատրճանակը: Չգանը տեղի տվեց, զգացի կոթի ողորկ գոգավորությունը, և հենց այդտեղ՝ այդ չոր ու միաժամանակ խլացուցիչ ճայթյունով սկսվեց ամեն բան:

Ես թոթափեցի քրտինքս ու արևը: Ես հասկացա, որ խախտեցի օրվա հավասարակշռությունը, լողափի բացառիկ լռությունը, որտեղ ես երջանիկ էի եղել: Այդ ժամանակ ես չորս անգամ ևս կրակեցի այդ անշարժ մարմնի վրա, որի մեջ գնդակները խրվում էին առանց հետք թողնելու: Եվ ասես այդ չորս կտրուկ հարվածներով ես բախում էի դժբախտության դուռը:

-I-

Ծերբակալությունից անմիջապես հետո ինձ բազմիցս հարցաքննեցին: Սակայն դրանք ինքնությանը վերաբերող հարցաքննություններ էին, որոնք երկար չէին տևում: Առաջին օրերին ոստիկանատանը իմ գործն ասես ոչ մեկին չէր հետաքրքրում: Ութ օր անց, ընդհակառակը, դատական քննիչն ինձ նայեց հետաքրքրասիրությամբ: Սկզբում սակայն հարցրեց միայն ազգանունս ու հասցես, մասնագիտությունս, ծննդյանս տարեթիվն ու վայրը: Հետո ցանկացավ իմանալ՝ ընտրե՞լ եմ փաստաբան: Ես խոստովանեցի՝ ոչ, և հարցրի՝ արդյոք դա պարտադիր անհրաժեշտությո՞ւն է:

- Ինչպե՞ս թե:

Ես պատասխանեցի, որ, ըստ իս, իմ գործը շատ պարզ է: Նա ժպտաց ու ասաց.

- Դա ձեր կարծիքն է: Սակայն գոյություն ունի օրենք: Եթե դուք չեք ընտրում փաստաբան, մենք ենք նշանակում որևէ մեկին:

Իմ կարծիքով՝ շատ հարմար էր, որ արդարադատությունն ինքն էր զբաղվում նման մանրուքներով: Նրան ասացի այդ: Նա համաձայնեց և եզրակացրեց, որ օրենքը հաջող է կազմված:

Սկզբում ես նրան լուրջ չէի վերաբերվում: Նա ինձ ընդունեց վարագույրները փակ առանձնասենյակում: Գրասեղանին կար միայն մի լուսամփոփ, որը լուսավորում էր բազկաթոռը: Այնտեղ էլ նստեցրեց ինձ, իսկ ինքը մնաց մթության մեջ: Նման տեսարաններն ինձ արդեն ծանոթ էին գրքերից, և այդ ամենն ինձ խաղ թվաց: Մեր խոսակցությունից հետո հակառակը կատարվեց. ես նայեցի նրան ու տեսա նուրբ դիմագծերով, կապույտ, փոս ընկած աչքերով, բարձրահասակ, երկար, ալեխառն բեղերով ու գրեթե լրիվ սպիտակած, խիտ մազերով մի մարդու: Նա ինձ շատ ողջամիտ թվաց, և նաև՝ հաճելի, չնայած բերանը մերթընդմերթ ծռվում էր ջղաձգումներից: Անգամ դուրս գալիս ուզում էի սեղմել նրա ձեռքը, բայց ժամանակին հիշեցի, որ մարդ եմ սպանել:

Հաջորդ օրը մի փաստաբան եկավ բանտ ինձ այցելության: Փոքրամարմին էր, կլորավուն, բավական երիտասարդ, մազերը խնամքով սվաղած: Չնայած շոգին (ես միայն վերնաշապիկով էի), նա մուգ գույնի կոստյումով էր և օսլայած օձիքի տակ կապել էր տարօրինակ, սև ու սպիտակ խոշոր զոլերով փողկապ: Նա մահճակալիս դրեց թևատակի պայուսակը, ներկայացավ և ասաց, որ ուսումնասիրել է իմ գործը: Գործս ընթին է, բայց ինքը չի կասկածում հաջողությանը, եթե ես վստահեմ իրեն: Ես շնորհակալություն հայտնեցի, իսկ նա ասաց.

- Անցնենք բուն նյութին:

Նստեց մահճակալիս ու սկսեց բացատրել, որ տեղեկություններ են հավաքել իմ անձնական կյանքի վերաբերյալ: Իմացել են, որ մայրս վերջերս է մահացել ծերանոցում: Այդ ժամանակ հարցաթերթիկ են լրացրել Մարենգոյում: Քննիչներն իմացել են, որ մորս թաղման օրը ես «անզգայունություն եմ ցուցաբերել»:

- Հասկանո՞ւմ եք,- ասաց փաստաբանն,- ես մի քիչ անհարմար եմ զգում այդ մասին ձեզ հարցնել: Բայց շատ կարևոր է: Դա մեծ փաստարկ կլինի ձեզ մեղադրելու համար, եթե ես ոչինչ չկարողանամ հակադրել:

Նա ուզում էր, որ իրեն օգնեմ: Հարցրեց՝ արդյոք տխո՞ւր էի այդ օրը: Հարցն ինձ ապշեցրեց. ինձ թվում է, որ ես շատ վատ կզգայի, եթե ինքս ստիպված լինեի նման հարց տալ: Այսուհանդերձ, պատասխանեցի, որ կորցրել եմ ինքս ինձ հարցաքննելու սովորությունը, և դժվարանում եմ որևէ բան ասել: Անշուշտ, ես շատ էի սիրում մորս, բայց դա որևէ նշանակություն չուներ: Բոլոր բանական էակներն էլ ավելի կամ պակաս չափով ցանկանում են իրենց սիրելի մարդու մահը: Այստեղ փաստաբանն ինձ ընդհատեց ու կարծես վրդովվեց: Նա ինձ ստիպեց խոստանալ, որ այդ չեմ ասի ոչ դատական ատյանին, ոչ գլխավոր քննիչին: Սակայն ես բացատրեցի, որ իմ խառնվածքի պատճառով ֆիզիկական պահանջներս հաճախ խոչընդոտում են զգացմունքներիս: Մորս թաղման օրը ես շատ էի հոգնած, և քունս տանում էր: Այն աստիճան, որ չէի հասկանում, թե ինչ էր կատարվում շուրջս: Միայն վստահաբար

կարող եմ ասել, որ կգերադասեի, որ մայրս չմեռներ: Բայց փաստաբանը երևի չգոհացավ: Նա ասաց.

- Բավարար չէ:

Եվ մտածմունքի մեջ ընկավ: Հետո հարցրեց՝ կարելի՞ է ասել, թե այդ օրը ես չէի տիրապետում էի իմ զգացմունքներին: Ասացի.

- Ոչ, որովհետև դա սուտ է:

Նա տարօրինակ հայացքով նայեց ինձ, կարծես իր մեջ զզվանք էի առաջացրել: Հետո գրեթե չարությամբ ասաց, որ ծերանոցի աշխատակազմն ու տնօրենը հանդես կգան որպես վկա, և «դա կարող է ինձ վրա քանկ նստել»: Ես նրա ուշադրությունը հրավիրեցի այն բանին, որ այդ պատմությունը ոչ մի կապ չուներ իմ գործի հետ: Բայց նա միայն ասաց, որ երևում է, որ ես երբևէ գործ չեմ ունեցել արդարադատության հետ:

Եվ զայրացած հեռացավ: Ես կուզենայի նրան ետ պահել, բացատրել, որ իր համակրանքի կարիքն ունեմ՝ ոչ թե ավելի լավ պաշտպանվելու համար, այլ որովհետև, եթե կարելի է ասել, դա բնական է: Հատկապես, որ տեսնում էի, թե ինչպիսի վատ վիճակի մեջ էի նրան գցում: Նա չէր հասկանում ինձ և այնքան էլ բարյացակամ չէր իմ նկատմամբ: Ես ուզում էի նրան հավաստիացնել, որ այնպիսին էի, ինչպես բոլորը, բացարձակապես ինչպես բոլորը: Բայց այդ ամենն, ըստ էության, անօգուտ էր, և ես հրաժարվեցի դրանից ծուլությանս պատճառով:

Որոշ ժամանակ անց ինձ կրկին տարան քննիչի մոտ: Ցերեկվա ժամը երկուսն էր: Այս անգամ նրա աշխատասենյակը ողողված էր լույսով, որն անընշան էր մաղվում շղարշե վարագույրի միջով: Շատ շոգ էր: Քննիչն ինձ առաջարկեց նստել և բարեկրթորեն հայտնեց, որ իմ փաստաբանը չի կարողացել գալ «խանգարող հանգամանքների պատճառով»: Բայց նաև, որ ես իրավունք ունեմ չպատասխանել իր հարցերին և սպասել մինչև փաստաբանիս գալը: Ես ասացի, որ կարող եմ պատասխանել և մենակ: Նա մատով մի կոճակ սեղմեց սեղանի վրա: Մի երիտասարդ գրագիր մտավ և նստեց հենց թիկունքիս ետևում:

Մենք երկուսս էլ ավելի հարմար տեղավորվեցինք մեր բազկա-

թոռներում: Հարցաքննությունը սկսվեց: Նախևառաջ նա ասաց, որ ինձ ներկայացրել էին իբրև լռակյաց, ինքնամփոփ բնավորությամբ մարդ, և այդ մասին կուզենար իմանալ իմ կարծիքը: Ես պատասխանեցի.

- Բանն այն է, որ երբ ասելիք չեմ ունենում, լռում եմ:

Քննիչը ժպտաց, ինչպես առաջին անգամ, համարեց, որ ասածս լավագույն պատճառաբանությունն է, և ավելացրեց.

- Ասենք, դա ոչ մի նշանակություն չունի:

Ապա լռեց, նայեց ինձ և, կտրուկ վեր կենալով, արագ-արագ վրա տվեց.

- Դուք եք, որ հետաքրքրում եք ինձ:

Ես այնքան էլ լավ չհասկացա, թե ինչ էր ուզում դրանով ասել, և ոչինչ չպատասխանեցի:

- Ձեր արարքում կան բաներ,- ասաց նա,- որոնք ինձ համար անմեկնելի են: Վստահ եմ, որ դուք կօգնեք ինձ հասկանալ դրանք:

Ասացի, որ ամեն ինչ շատ պարզ է: Նա ինձ ստիպեց նորից վերապատմել այդ օրը: Եվ ես կրկին վերապատմեցի այն, ինչ արդեն պատմել էի իրեն. Ռեյմոնը, լողափը, լոգանքը, վեճը, նորից լողափը, փոքրիկ աղբյուրը, արևը և ատրճանակի հինգ կրակոցը: Ամեն խոսքից հետո նա ասում էր. «Լավ, լավ»: Երբ հասա փռված մարմնին, նա հավանություն տվեց ու ասաց. «Շատ լավ»: Իսկ ես հոգնել էի շարունակ նույն պատմությունը կրկնելուց, և ինձ թվում էր, թե երբեք այդքան երկար չէի խոսել:

Մի պահ լռություն տիրեց: Հետո նա վեր կացավ և ասաց, որ ցանկանում է օգնել ինձ, որ ես հետաքրքրում եմ իրեն և որ Աստծո օգնությամբ նա կանի որևէ բան ինձ համար: Բայց նախապես կուզենար էլի մի քանի հարց տալ: Եվ առանց անցումի հարցրեց, թե սիրո՞ւմ էի մորս: Ես ասացի.

- Այո, ինչպես բոլորը:

Եվ գրագիրը, որը մինչ այդ մեքենագրում էր համաչափորեն, շփոթվեց, խառնեց ստեղները և ստիպված եղավ ետ գնալ: Այդ ժամանակ, շարունակ առանց թվացյալ տրամաբանության քննիչը հարցրեց ինձ, թե հինգ անգամ կրակել եմ անընդմե՞ջ: Մի քիչ

մտածեցի ու ճշտեցի, որ սկզբում կրակել եմ միայն մի անգամ, իսկ հետո, մի քանի վայրկյան անց՝ ևս չորս անգամ:

- Ինչո՞ւ հապաղեցիք առաջին և երկրորդ կրակոցների արանքում:

Մեկ անգամ ևս աչքերիս առջև հառնեց քոսորագույն լողափը, ու ճակատիս զգացի կիզիչ արևը: Բայց այս անգամ ոչինչ չպատասխանեցի: Դրան հետևեց լռություն, որի ընթացքում քննիչը գրգռված տեսք ուներ: Նստեց, խառնշտեց մազերը, արմունկները հենեց գրասեղանին և, փոքր-ինչ կռանալով ինձ վրա, արտառոց տեսքով հարցրեց.

- Ինչո՞ւ, ինչո՞ւ կրակեցիք գետնին ընկած մարմնի վրա:

Այստեղ ևս չիմացա ինչ պատասխանել: Քննիչը ձեռքերով շփեց ճակատը և ասաց բեկբեկուն ձայնով.

- Ինչո՞ւ, ինձ պիտի ասեք՝ ինչո՞ւ:

Ես շարունակում էի լռել:

Նա կտրուկ վեր կացավ, մեծ-մեծ քայլերով գնաց աշխատասենյակի մյուս ծայրը, բացեց պահարանն ու դուրս քաշեց մի դարակ: Այնտեղից հանեց արծաթյա մի խաչ և, այն ճոճելով, ետ եկավ ինձ մոտ: Լրիվ փոխված, գրեթե դողդոջուն ձայնով նա բացականչեց.

- Արդյոք գիտե՞ք, թե ինչ է սա:

Ասացի.

- Այո, իհարկե:

Այդ ժամանակ նա հապշտապ և զարմանալի խանդավառությամբ ասաց, որ ինքը հավատում է Աստծուն, որ իր խորին համոզմամբ ոչ մի մահկանացու այնքան մեղավոր չէ, որ Աստված չկարողանա ներել նրան, սակայն դրա համար պետք է, որ մարդն իր զղջումով դառնա երեխա, որի հոգին դատարկ է և պատրաստ ընդունելու ամեն բան: Ամբողջ մարմնով խոնարհվել էր սեղանին: Գրեթե հենց իմ գլխավերևում խաչն էր թափահարում: Ճիշտն ասած՝ ես այնքան էլ լավ չէի հետևում նրա մտքերին, որովհետև, նախ՝ շոգում էի, և հետո առանձնասենյակում մեծ-մեծ ճաճճեր կային, որոնք նստում էին դեմքիս, և բացի այդ ես մի քիչ վախե-

նում էի այդ մարդուց: Միևնույն ժամանակ գիտակցում էի, որ դա ծիծաղելի էր, քանի որ հանցագործը, ի վերջո, ես էի: Այսուհանդերձ նա շարունակում էր: Ես մոտավորապես հասկացա, որ, իր կարծիքով, իմ խոստովանանքի մեջ մի մութ կետ կար. այն փաստը, որ ես սպասել էի մինչև երկրորդ կրակոցը: Մնացած ամեն բան շատ լավ էր, միայն այդ նա չէր հասկանում:

Ուզում էի նրան ասել, որ զուր է համառում, որ այդ վերջին կետն այդքան էլ կարևորություն չունի: Բայց նա ընդհատեց ինձ, հասակով մեկ ծգվեց ու մի վերջին անգամ փորձեց հորդորել ինձ պատասխանել՝ հավատո՞ւմ եմ արդյոք Աստծուն: Ես պատասխանեցի՝ ոչ: Նա վրդովված նստեց: Ասաց, որ դա անհնարին է, որ բոլոր մարդիկ հավատում են Աստծուն, անգամ նրանք, ովքեր երես են թեքում նրանից: Հենց սա էր իր համոզմունքը: Ու թե երբևէ պիտի կասկածներ ունենար, ապա իր կյանքը կկորցներ իմաստը:

- Ուզում եք,- բացականչեց նա,- որ կյանքս կորցնի՞ իմաստը:

Իմ կարծիքով՝ դա ինձ չէր վերաբերում, և այդպես էլ ասացի նրան: Սակայն սեղանի վրայով նա արդեն աչքս էր խոթում խաչված Քրիստոսին՝ խենթի պես գոռալով.

- Ես քրիստոնյա եմ: Ես նրանից թողություն եմ հայցում քո մեղքերի համար: Ինչպե՞ս կարող ես չհավատալ, որ նա տառապել է քեզ համար:

Ես նկատեցի, որ նա ինձ «դու»-ով էր դիմում, սակայն լրիվ ձանձրացել էի: Շոգը գնալով ավելի էր սաստկանում: Ինչպես միշտ, երբ ուզում եմ ազատվել մեկից, ում հազիվ եմ լսում, ձևացնում եմ, թե համաձայն եմ նրան: Ի զարմանս ինձ, նա վեր թռավ ցնծությունից:

- Տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես,- ասում էր նա,- դու նրան հավատում ես, չէ՞, դու նրան ես ապավինելու, չէ՞:

Բնականաբար մեկ անգամ ևս ասացի՝ ոչ, և նա դարձյալ փլվեց բազկաթոռին:

Շատ հոգնած տեսք ուներ: Մի պահ լուռ մնաց, մինչև գրամեքենան, որն անընդհատ հետևում էր երկխոսությանը, կավարտեր վերջին նախադասությունները: Հետո նայեց ինձ ուշադիր, բայց

թախծոտ հայացքով ու կմկմաց.

- Ես երբևէ չեմ տեսել նման քարացած հոգի, ինչպիսին ձերն է: Ինձ մոտ եկող բոլոր հանցագործներն արտասվում են այս ողբալի պատկերի առջև:

Ես ուզում էի ասել, որ այդպես էլ պետք է լինի, քանի որ նրանք հանցագործ են: Բայց հետո մտածեցի, որ ես էլ եմ նրանց նման: Այս մտքի հետ չէի կարողանում հաշտվել: Այդ ժամանակ քննիչը վեր կացավ, կարծես ցանկանալով ինձ հասկացնել, որ հարցաքննությունն ավարտված է: Միայն հարցրեց նույն հոգնաբեկ տեսքով, թե զղջո՞ւմ եմ արածիս համար: Մի պահ մտածեցի ու ասացի, որ ոչ թե իսկական զղջման, այլ ավելի շուտ տհաճության զգացում ունեմ: Այնպիսի տպավորություն ստացա, որ ինձ չէր հասկանում: Բայց այդ օրը գործն այլևս չշարունակվեց:

Հետագայում ես հաճախ էի տեսնում քննիչին: Միայն թե ամեն անգամ փաստաբանս ուղեկցում էր ինձ: Նրանք սահմանափակվում էին իմ նախորդ ցուցմունքների որոշ մասեր ճշտելով: Կամ էլ քննիչը մեղադրանքներն էր վիճարկում փաստաբանիս հետ: Սակայն այդ պահերին նրանք իրականում բոլորովին չէին զբաղվում ինձնով: Ամեն դեպքում հարցաքննությունների հնչերանգը քիչ-քիչ փոխվեց: Թվում էր, թե քննիչն այլևս չի հետաքրքրվում ինձնով, և որ նա արդեն ինչ-որ կերպ դասակարգել է իմ գործը: Աստծո մասին նա այլևս չխոսեց ինձ հետ, և ես նրան այլևս երբեք չտեսա այնքան գրգռված, որքան առաջին օրը: Արդյունքը եղավ այն, որ մեր խոսակցությունները դարձան ավելի սրտաբուխ. մի քանի հարց, մի փոքրիկ զրույց փաստաբանիս հետ, և հարցաքննությունն ավարտվում էր: Քննիչի խոսքերով՝ գործն ընթանում էր իր հունով: Երբեմն, երբ խոսակցությունն ընդհանուր բնույթի էր լինում, նրանք ինձ էլ էին ներգրավում դրա մեջ: Ես սկսեցի թեթև շնչել: Այդ ժամերին ոչ ոք չար չէր իմ հանդեպ: Ամեն բան այնքան բնական էր, այնքան օրինավոր և այնքան պարզ խաղացված, որ ես այն ծիծաղելի զգացումն ունեցա, թե ես «ընտանիքի անդամներից» եմ: Եվ տասնմեկ ամիս տևած այդ քննության ընթացքում կարող եմ ասել, որ զարմանալի կլիներ, եթե ես հրճվանքի այլ պա-

հեր էլ ունեցած լինեի, բացի այն հազվագյուտ րոպեներից, երբ քննիչն ինձ առաջնորդում էր մինչև առանձնասենյակի դուռը, ուսիս թփթփացնում և մտերմիկ ձայնով ասում.

- Այսօր բավական է, պարոն Հակաքրիստոս:

Իսկ հետո դարձյալ ինձ հանձնում էին ոստիկանների ձեռքը:

- II -

Կան բաներ, որոնց մասին երբեք չեմ սիրել խոսել: Բանտ ընկնելով՝ մի քանի օրից հասկացա, որ ինձ հաճելի չի լինի խոսել կյանքիս այս հատվածի մասին:

Ավելի ուշ նման տհաճ զգացումները բոլորովին կորցրին իրենց կարևորությունն ինձ համար: Առաջին օրերին իրականում ես ոչ թե բանտում էի ըստ էության, այլ տարտամորեն սպասում էի ինչ-որ իրադարձության: Ամեն բան սկսվեց միայն Մարիի առաջին և միակ տեսակցությունից հետո: Այն օրից, երբ ստացա նրա նամակը (նա ինձ հայտնում էր, որ իրեն այլևս թույլ չեն տա այցելության գալ, որովհետև իմ կինը չէ), զգացի, որ իմ տանն եմ, իմ խցիկում, և որ կյանքս կանգ է առնում այստեղ: Ձերբակալման օրը նախ ինձ գցեցին մի ընդհանուր սենյակ, որտեղ շատ բանտարկյալներ կային՝ հիմնականում արաբներ: Ինձ տեսնելուն պես նրանք սկսեցին հոհոալ: Հետո հարցրին, թե ինչ եմ արել: Ես ասացի, որ արաբ եմ սպանել, և նրանք սկվեցին: Բայց շուտով մութն ընկավ: Նրանք ինձ բացատրեցին, թե ինչպես պետք է փռել խսիրը, որի վրա պառկելու էի: Մի ծայրը փաթաթելով՝ կարելի էր օգտագործել որպես բարձ: Ամբողջ գիշեր դեմքիս վրայով փայտոջիլներ էին վազվզում: Մի քանի օր անց ինձ առանձնացրին մենախցում, որտեղ քնում էի փայտե թախտին: Ունեի պետքաման և երկաթե թաս: Բանտը քաղաքի բարձրադիր մասում էր, և իմ փոքրիկ պատուհանից երևում էր ծովը: Այդ օրը, դեմքս պարզած լույսին, ես կախվել էի ճաղերից, երբ ներս մտավ բանտապանն ու ասաց, որ ինձ տեսակցության են կանչում: Մտածեցի՝ Մարին կլինի: Եվ, իրոք, նա էր:

Ջրուցարան հասնելու համար ես անցա երկար միջանցքով, հե-

տո աստիճաններով, իսկ վերջում՝ մեկ այլ միջանցքով: Ներս մտա մի ընդարձակ դահլիճ, ուր լույսը թափանցում էր հսկայական լուսամուտից: Դահլիճը երեք մասի էր բաժանված՝ երկայնքով անցնող երկու մեծ ճաղաշարով: Երկու ճաղաշարի արանքում կար ութ-տասը մետրանոց մի տարածություն, որն այցելուներին բաժանում էր բանտարկյալներից: Իմ դիմաց նկատեցի Մարիին իր զոլավոր զգեստով և արևառ դեմքով: Այն կողմում, որտեղ ես էի, մեկ տասնյակի չափ կալանավոր կար՝ հիմնականում արաբներ: Մարին շրջապատված էր մավրուհիներով ու կանգնած էր երկու այցելուների արանքում՝ մեկը փոքրիկ, սևազգեստ մի պառավ՝ ամուր սեղմած շրթունքներով, մյուսը՝ գլխաբաց, մի գեր կին, որ խոսում էր շատ բարձրաձայն ու շարժուձևերով: Ճաղաշարերի միջև հեռավորությունն այնքան մեծ էր, որ այցելուներն ու բանտարկյալները ստիպված էին խոսել գոռգոռալով: Երբ ներս մտա, ձայների աղմուկը, որ արձագանքվում էր, դիպչելով դահլիճի հսկայական, մերկ պատերին, աչք ծակող լույսը, որն ասես երկնքից ծորում էր ապակիների վրա և կրկին ժայթքում դահլիճի մեջ, ինձ գցեցին մի տեսակ թմբիրի մեջ: Իմ խցիկն ավելի խաղաղ էր և ավելի մութ: Ժամանակ պահանջվեց, մինչև կվարժվեի: Սակայն, ի վերջո, բոլորի դեմքերն էլ սկսեցի հստակ տարբերակել: Նկատեցի, որ միջանցքի ծայրում՝ երկու ճաղաշարի արանքում, անշարժ նստած էր հսկիչը: Արաբ բանտարկյալների մեծ մասը, ինչպես և նրանց հարազատները պպզել էին դեմառդեմ: Նրանք չէին բղավում: Չնայած աղմուկ-աղաղակին՝ նրանք կարողանում էին հասկանալ միմյանց՝ խոսելով ցածրաձայն: Շատ ցածրից արձակվող նրանց խուլ քրթմնջոցներն անվերջանալի բասի նման հնչում էին խոսակցությունների մեջ, որոնք սավառնում էին իրենց գլխավերևում: Այդ ամենը ես անմիջապես նկատեցի, երբ գնում էի Մարիի մոտ: Արդեն ճաղաշարին կպած՝ նա ինձ էր ժպտում՝ լարելով ողջ ուժերը: Իմ աչքին նա շատ գեղեցիկ թվաց, բայց այդ մասին չկարողացա նրան ասել:

- Դե՞,- շատ բարձր ասաց նա:

- Դե ի՞նչ:

րակները: Գյուղի խորքը տանող ճանապարհն այնուհետև անցնում է փոքրիկ լուսաշտարակի առջևով, որի ցածում մանուշակագույն, դեղին ու կարմիր ծաղիկներով խոշոր, հաստ բույսեր իջնում են դեպի ամենաստորին քարափները, որոնց ծովը լիզում է համբուրաճայն աղմուկով: Կանգնել ենք թեթև քամու դիմաց՝ մեր դեմքի միայն մի կողմը տաքացնող արևի տակ, և դիտում ենք երկնահոս լույսը, անկնճիռ ծովը ու նրա շողացող ատամների ժպիտը: Ավերակների թագավորություն մտնելուց առաջ մի վերջին անգամ մենք հանդիսատես ենք:

Մի քանի քայլի վրա օշինդրների հոտը բռնում է մեր կոկորդը: Ամենուրեք՝ որքան աչքդ կտրի, նրանց մոխրագույն մազմզուկները ծածկում են ավերակները: Նրանց բնանյութը խմորվում է ջերմությունից և հողից, աշխարհի ողջ տարածքի վրայով դեպի արևն է բարձրանում մի առատածոր ալկոհոլ, որից օրորվում է երկինքը: Մենք ընդառաջ ենք գնում սիրուն և ցանկությանը: Մենք վարդապետություն չենք փնտրում, ոչ էլ դառը փիլիսոփայություն, որոնք ծնվում են վեհությունից: Արևից, համբույրներից ու վայրի բուրմունքներից զատ մեզ ամեն ինչ ճղճիմ է թվում: Ինչ վերաբերում է ինձ, ես այստեղ մեծություն չեմ փնտրում: Ես հաճախ եմ եղել նրանց հետ, ում սիրել եմ և որոնց դիմագծերում կարդացել եմ այն պայծառ ժպիտը, որն այստեղ սիրո կերպարանք է ստանում: Այստեղ ես գործ չունեմ կարգուկանոնի ու չափավորության հետ: Բնության և ծովի այս մեծ անառակությունը ամբողջովին համակում է ինձ: Գարնան հետ զուգակցվելով՝ ավերակները կրկին քարեր են դարձել և, կորցնելով մարդու պարտադրած ողորկությունը, վերադարձել են բնությանը: Ի պատիվ անառակ դուստրերի վերադարձի, բնությունը շռայլորեն ծաղիկներ է սփռել: Ֆորումի սալաքարերի արանքից իր կլոր ու սպիտակ գլուխն է ցցում խամբարը, իսկ կարմիր խորդենիները իրենց արյունը թափում են երբեմնի տների, տաճարների և հանրային հրապարակների վրա: Այն մարդկանց նման, որոնց գիտելիքների առատությունը կրկին առաջնորդում է առ Աստված, այս ավերակներն էլ երկարաձիգ տարիների ընթացքում վերադառնում են դեպի իրենց հայրական

տուն: Այսօր, վերջապես, անցյալը լքում է նրանց, և ոչինչ չի անջատում այն անհաղթահարելի ուժից, որը նրանց կրկին տանում է դեպի ընկնող իրերի կենտրոնը:

Որքա՞ն ժամեր եմ անցկացրել օշինդրները կոխկրտելով, ավերակները փաղաքշելով, փորձելով շնչառությունս համաձայնեցնել աշխարհի խռովահույզ հառաչանքների հետ: Վայրի բուրմունքների և ալարկոտ միջատների համերգների մեջ ընկղմված՝ ես աչքերս ու սիրտս բացում եմ ջերմությունից լիացած այս երկնքի անտանելի մեծության առջև: Այղքան հեշտ չէ դառնալ այն, ինչ որ ես, վերագտնել ներքին դաշնությունդ: Բայց Շենուայի ամուր ողնաշարին նայելիս սիրտս հանդարտվում էր մի տարօրինակ առհավատչյայով: Ես սովորում էի շնչել, ես ամբողջանում էի, ես իրագործվում էի: Մեկը մյուսի ետևից բլուրներ էի մագլցում, որոնցից յուրաքանչյուրը վարձահատույց էր լինում ինձ, ինչպես, օրինակ, այս տաճարը, որի սյուները չափում են արևի վազքը, և որտեղից երևում է ողջ գյուղը իր սպիտակ ու վարդագույն պատերով, իր կանաչածածկ պատշգամբներով: Ինչպես նաև Արևելյան բլրի վրա գտնվող այս բազիլիկը. պահպանվել են պատերը, իսկ շուրջը մեծ շառավիղով շարված են շիրմից հանված սարկոֆագներ, որոնցից շատերը դեռ կիսով չափ թաղված են հողում և դրա մասն են կազմում: Դրանց մեջ մեռելներ են եղել: Հիմա այստեղ աճում են եղեսպակ ու վայրի բողկուկ: Սուրբ Սալսայի բազիլիկը քրիստոնեական է, բայց ամեն անգամ, երբ նայում ես որևէ ճեղքից, քեզ է հասնում երկրային մեղեդին՝ եղևնիներով ու նոճիներով ծածկված լեռնալանջեր, իսկ քիչ հեռվում՝ քսան մետրի վրա, ծով, որի վրա կարծես թավալվում են սպիտակ շնիկներ: Բլրի գագաթը, որի վրա հենվում է Սուրբ Սալսան, տափակ է, և քամին ավելի անկաշկանդ է փչում սյունաշարքերի միջով: Առավոտյան արևի ներքո մի մեծ երջանկություն է թևածում տիեզերքում:

Ողորմելի են նրանք, ովքեր կարիք ունեն առասպելների: Այստեղ աստվածներն օրերի ընթացքի հունն են կամ ուղենիշը: Նկարագրում եմ և ասում. «Սա կարմիր է, սա՝ կապույտ, սա՝ կանաչ: Սա ծովն է, սա՝ լեռը, սրանք՝ ծաղիկները»: Եվ կարիք կա՞ հիշա-

տակել Դիոնիսոսին, որպեսզի ասեմ, թե սիրում եմ մազտաքիի գնդիկներ ճզմել քթիս տակ: Եվ արդյոք Դեմետրայի՞ն է ծոնված այս հին հիմնը, որի մասին ավելի ուշ ես անկաշկանդ կխորհեմ. «Երկրի վրա ապրողներից նա է երջանիկը, ով տեսել է սրանք»: Տեսնել և տեսնել ամենայն երկրային բան՝ ինչպես մոռանալ պատգամը: Էլևսիսյան ծիսակատարությունների ժամանակ բավական էր հայել: Ես գիտեմ, որ անգամ այստեղ երբեք չեմ կարողանա բավականաչափ մերձենալ աշխարհին: Ես պետք է մերկանամ և ապա սուզվեմ ծովի մեջ, դեռևս ամբողջովին օծված հողի անուշայուղերով, դրանք լվանամ ծովի ջրում, և իմ մարմնով հանգուցեմ այն գրկախառնությունը, որի համար վաղուց ի վեր շուրթ առ շուրթ տնքում են ցամաքն ու ծովը: Մտնում եմ ծով՝ սարսուռ է, սառն ու անթափանց խեժի հոսք, հետո սուզվում եմ, որից դժժում են ականջներս, իսկ բերանս դառնանում է, լողում եմ, քաց թևերս փայլում են արևի տակ, պրկված մկաններով բարձրանում, իջնում, մարմնիս վրայով հոսում է ջուրը, ջանում եմ ոտքերով տիրապետել ալիքին, իսկ առջևում հորիզոն չկա: Ափին ընկնում եմ ավազի մեջ՝ տրվելով աշխարհին, կրկին զգալով միս ու արյան իմ ծանրությունը, արևից չշմած, ժամանակ առ ժամանակ հայացք նետելով թևերիս, որոնց վրայով գլորվում է ջուրը, և տեղ-տեղ չորացած մաշկիս վրա երևում են շեկ աղվամազն ու աղափոշին:

Այստեղ ես հասկանում, թե ինչ է փառքը՝ անսահման սիրելու իրավունքը: Այս աշխարհում կա միայն մեկ սեր. գրկել կնոջ մարմինը կամ, որ նույնն է, կրծքիդ սեղմես այս տարօրինակ ուրախությունը, որը երկնքից իջնում է դեպի ծով: Հենց հիմա, երբ կնետվեմ օշինդրների մեջ՝ նրանց բուրմունքը մարմնովս կլանելու, հակառակ բոլոր նախապաշարումների, ես կգիտակցեմ, որ իրագործում եմ մի ճշմարտություն, որն արևի ճշմարտությունն է և կլինի նաև իմ մահվան ճշմարտությունը: Ինչ-որ իմաստով այստեղ ես հենց իմ կյանքն եմ խաղում, տաք քարի պես հրակեզ մի կյանք, որը լի է ծովի և այժմ արդեն երգել սկսող մորեխների հառաչանքով: Քամին զով է, իսկ երկինքը՝ կապույտ: Ես ինքնամոռաց սիրում եմ այս կյանքը և նրա մասին ուզում եմ ազատ խոսել. նա ինձ

ներշնչում է մարդ լինելու իմ ճակատագրի հպարտությունը: Սակայն ինձ բազմիցս ասել են. «Հպարտանալու ոչինչ չկա»: Ոչ, կա, այս արևը, այս ծովը, ջահելությունից ուռչող իմ սիրտը, իմ աղահամ մարմինը և անծայրածիր բնապատկերը, որտեղ քնքշանքը և վեհությունը իրար են հանդիպում դեղինի ու կապույտի մեջ: Այս ամենը նվաճելու համար գործի պիտի դնեմ ողջ ուժս ու հնարքներս: Այստեղ ոչինչ չի դիպչում ինձ, ես էլ ոչինչ չեմ թողնում ինձնից և չեմ կրում ոչ մի դիմակ, ինձ բավական է սովորել ապրելու դժվարին գիտությունը, որն արժի մարդկանց ամբողջ կենցաղագիտությունը:

Կեսօրից քիչ առաջ ավերակների միջով վերադառնում էինք նավահանգստի եզրին գտնվող փոքրիկ սրճարանը: Արևային ու գունային ծնծղաներից դմբդմբացող գլխի համար ինչպիսի՞ բարեբախտ թարմություն է այդ ստվերաշատ սենյակը, կանաչ անանուխով ու սառույցով լի մեծ բաժակը: Դրսում ծովն է ու փոշոտ, հրացայտ ճամփան: Սեղանի առջև նստած փորձում եմ քրքրացող թարթիչներով որսալ տապից շիկացած երկնքի գույնզգույն շլացումը: Քրտնաթոր դեմքով, բայց բարակ քաթանե շապիկ հագած զով մարմիններով մենք բոլորս ի ցույց ենք դնում աշխարհի հետ զուգակցվելու երջանիկ հոգնությունը:

Այս սրճարանում վատ են կերակրում, բայց միրգ շատ կա, հատկապես դեղձ, որն ուտում ես կծելով, այնպես, որ հյութը թափվի կզակիդ: Ատամներս խրած դեղձի մեջ՝ ականջ եմ դնում արյանս հոսքին, որը բարձրանում է մինչև ականջներս: Նայում եմ ակնապիշ: Ծովի վրա միջօրեի ահռելի լռությունն է: Ամեն մի գեղեցիկ էակ ունի իր գեղեցկության բնական հպարտությունը, և աշխարհի հպարտությունն այսօր ծորում է ամենուստ: Նրա առջև ինչո՞ւ պիտի ես ժխտեմ ապրելու հրճվանքը, եթե գիտեմ, որ ինձ համար ամեն ինչ չի սահմանափակվում դրանով: Երջանիկ լինելն ամոթալի չէ: Բայց այսօր տխմարն արքա է, իսկ ես տխմար եմ անվանում նրան, ով վախենում է վայելելուց: Մեզ այնքան շատ են ասել հպարտության մասին. «Իմացե՛ք, դա մահացու մեղք է»: «Զգուշացե՛ք,- ճչում էին նրանք,- դուք կկործանեք ձեզ և ձեր կեն-

սական ուժերը»: Այդ ժամանակից ի վեր ես զգացի որոշակի հպարտություն, իրոք... Բայց որոշ պահերի ես չեմ կարող հրաժարվել ապրելու հպարտությունը պահանջելուց, քանի դեռ ողջ աշխարհը նպաստում է, որ այն ինձ տրվի: Տիպազայում տեսնելը և հավատալը համազոր են, և ես համառորեն չեմ ժխտի այն, ինչին ձեռքս կարող է դիպչել և ինչը շուրթերս կարող են փաղաքշել: Ես կարիք չունեմ իմ տեսածը արվեստի գործ դարձնելու, այլ ուզում եմ միայն պատմել այդ մասին, իսկ դա բոլորովին այլ բան է: Տիպազան ինձ համար այն գործող անձանցից է, որոնց նկարագրում են աշխարհի մասին որևէ կարծիք անուղղակիորեն արտահայտելու համար: Այդ գործող անձանց նման Տիպազան վկայություն է տալիս և այն էլ՝ տղամարդու պես: Այսօր նա իմ գործող անձն է, և ինձ թվում է՝ նրան փայփայելու ու նկարագրելու իմ գինովությունն այլևս վերջ չի ունենա: Ժամանակ կա, որ պիտի ապրես, և ժամանակ, որ վկայություն տաս ապրելու օգտին: Կա նաև ժամանակ, որ պիտի ստեղծագործես, մի բան, որ պակաս բնական է: Ինձ համար բավական է, որ ապրեմ ամբողջ մարմնով և վկայություն տամ ամբողջ սրտով: Ապրել Տիպազայում, հավաստել կյանքը, իսկ հետո կստեղծվի նաև արվեստի գործը: Հենց այստեղ է ազատությունը:

***

Մեկ օրից ավելի ես երբեք չէի մնում Տիպազայում: Միշտ գալիս է մի պահ, երբ զգում ես, որ չափազանց շատ ես տեսել մի բնապատկեր, բայց նաև երկար ժամանակ է հարկավոր այն բավականաչափ տեսնելու համար: Լեռները, երկինքը, ծովը նման են դեմքերի, որոնց վրա կամ չորություն, կամ վեհություն ես հայտնաբերում, որովհետև նայում ես՝ տեսնելու փոխարեն: Բայց յուրաքանչյուր դեմք պերճախոս լինելու համար պետք է որոշակիորեն նորոգվի: Եվ ոմանք տրտնջում են չափազանց արագ ծաղկրանալուց, մինչդեռ նրանք պետք է հիանային, որ աշխարհը մեզ նոր է թվում միայն այն պատճառով, որ մոռացվել էր:

Երեկոյան կողմ ես վերադառնում էի մայրուղու եզրին գտնվող զբոսայգու ավելի բարեկարգված, պարտեզի վերածված մասը: Բուրմունքների և արևի խառնաշփոթից դուրս գալով, իրիկվա արդեն զովացած օդում միտքը խաղաղվում էր, և հանգստացած մարմինը ճաշակում էր բավարարված սիրուց ծնված ներքին լռությունը: Նստած մի նստարանի՝ նայում էի, թե ինչպես է գյուղը բոլորակվում օրվա հետ: Ես գերհագեցած էի: Իմ գլխավերևում մի նոճենի կախ էր գցել իր ծաղկակոկոնները՝ փակ ու ցցված եզրերով, ինչպես փոքրիկ, սեղմված բռունցքներ, որոնց մեջ էր բովանդակվելու գարնան ամբողջ հույսը: Իսկ իմ ետևում հազրեվարդ կար, որի միայն ալկոհոլային բուրմունքն էի զգում: Ծառերի արանքում բլուրներ էին գծագրվում, իսկ ավելի հեռվում՝ ծովի մի եզրաճախշ, որի վրա խոտորված առագաստի նման հանգչում էր երկինքն իր ողջ շքեղությամբ: Սիրտս լի էր մի այնպիսի տարօրինակ ուրախությամբ, որ ծնվում է, երբ հանգիստ է խիղճդ: Կա մի զգացում, որ ապրում են դերասանները, երբ գիտակցում են, թե լավ են կատարել իրենց դերը, այսինքն, ավելի ճիշտ, երբ մարմնավորված իդեալական կերպարի և իրենց շարժումները համընկել են, երբ կարծես մտել են նախօրոք արված նկարի մեջ և որին միանգամից կյանք են տվել իրենց սեփական սրտի բաբախյունով: Հենց դա էր իմ զգացածը. ես լավ էի խաղացել իմ դերը: Ես մարդու իմ գործն արել էի, և մի ամբողջ օրվա ուրախություն ճաշակելը բացառիկ հաջողություն չէր թվում ինձ, այլ այն պայմանի հուզիչ իրագործումը, որը որոշ հանգամանքներում մեզ պարտավորեցնում է երջանիկ լինել: Այնժամ մենք նորից մենության մեջ ենք գտնում, բայց այս անգամ բավարարվածության մեջ:

***

Այժմ ծառերը ծածկված են թռչուններով: Խավարի մեջ սուզվելուց առաջ գետինը տարտամորեն հոգոց էր հանում: Շուտով՝ առաջին աստղի հետ, գիշերը կիջնի աշխարհի բեմահարթակին: Ցերեկվա հրաշավառ աստվածները կվերադառնան իրենց հանա-

պազօրյա մահվանը: Բայց ուրիշ աստվածներ կգան: Եվ ավելի մոայլ լինելու համար նրանց ավերված դեմքերը ծնված կլինեն հողի ընդերքում:

Այժմ դեռևս ալիքների անդադար վազքը ավազների վրայով ինձ էր հասնում այն լուսնաշերտի միջով, ուր պար էր բռնել ոսկեզօծ ծաղկափոշին: Ծով, գյուղ, լռություն, այս հողի բույրերը. ես լցվում էի անուշահոտ կյանքով, ես խածնում էի աշխարհի արդեն հասունացած պտուղը և ցնցվում էի՝ զգալով շուրթերս ի վար հոսող քաղցր ու թունդ մրգահյութը: Ոչ, ես հաշիվ չունեի, ոչ էլ աշխարհը, կար միայն դաշնություն, իսկ լռությունն իմ մեջ սեր էր ներարկում: Սեր, որ ես թուլություն չունեի իմ մենաշնորհը համարելու: Հպարտ էի՝ գիտակցելով, որ այն կիսում եմ մարդկային մի ամբողջ ցեղի հետ, ցեղ, որն իր մեծությունը վերցնում է իր պարզությունից և, ծովեզերքին կանգնած, իր մեղսակից ժպիտն է ուղղում երկնքի լուսափայլ ժպիտին:

LE VENT À DJEMILA

Կան վայրեր, որտեղ մեռնում է միտքը, որպեսզի ծնվի մի ճշմարտություն, որն ինքն իր բացատումն է: Երբ ես հասա Ջեմիլա, քամի էր ու արև, բայց խոսքն այդ մասին չէ: Նախևառաջ, հարկ է ասել, որ այնտեղ մի ահռելի լռություն էր տիրում՝ ծանր ու հաստատուն, ինչպես կշեռքի հավասարակշռությունը: Թռչունների ճռվողյուն, երեք փոքրիկ անցք ունեցող սրճգի կերկերուն ծայն, այծերի կճղակների դոփդոփյուն, երկնառաք դղրդյուններ. ահա այսպիսի աղմուկ էին պարունակում այս վայրի լռությունն ու ամայությունը: Ժամանակ առ ժամանակ մի կտրուկ քնաբախում կամ մի սուր ճիչ ազդարարում էին քարերի մեջ թաքնված թռչնի սլացքը: Յուրաքանչյուր ճանապարհը, տների ավերակների արանքում եղած արահետները, փայլփլող սյուների տակ սալապատված մեծ փողոցները, հաղթական կամարի և տաճարի միջև տարածված հսկայական ֆորումը, ամեն, ամեն ինչ առաջնորդում է դեպի այն կիրճերը, որոնք չորս կողմից եզերում են Ջեմիլան և, ասես, բաց թղթախաղում խաղաթղթերի նման շարվել են անհուն երկնքի ներքո: Եվ հիմա մենք այստեղ ենք՝ մտասույզ, քարերի ու լռության դեմ-հանդիման, մինչ օրը իրիկնանում է, իսկ լեռները ստվերանալով դառնում են մանուշակագույն: Բայց քամին փչում է Ջեմիլայի բարձրավանդակի վրա: Ավերակներին լույս սփռող քամու և արևի այս մեծ խառնաշփոթի մեջ ստեղծվում է մի այնպիսի բան, որը մարդուն տալիս է միայնություն և մեռած քաղաքի լռության հետ իր նույնության չափի զգացումը:

Ջեմիլա գնալու համար շատ ժամանակ է հարկավոր: Սա այնպիսի քաղաք չէ, ուր իջևանում են, իսկ հետո շարունակում ճանապարհը: Այն ոչ մի տեղ չի առաջնորդում և չի նայում ոչ մի բնակավայրի: Սա մի վայր է, որտեղից ետ են դառնում: Մեռած քաղաքը երկար, ոլորապտույտ ճանապարհի ծայրին է, և յուրաքանչյուր շրջադարձից հետո կարծում ես, թե հասել ես, իսկ դրանից ճանապարհն ավելի երկար է թվում: Երբ վերջապես բարձրավանդակի

վրա խամրած գույներով, բարձր լեռան մեջ ընկղմված, ոսկրակույտ անտառի նման հառնում է Ջեմիլայի դեղին կմախքը, այնժամ զգում ես, որ սիրո և համբերության պատվանդանի միակ խորհրդանիշը նա է, որ կարող է մեզ առաջնորդել դեպի աշխարհի բաբախող սիրտը: Այնտեղ, հատուկենտ ծառերի ու չորացած խոտերի մեջ, իր բոլոր լեռներով ու բոլոր քարերով նա պատսպարվում է գեհենիկ զմայլանքից, գունագեղությունից կամ սրամտության խաղերից:

Ամբողջ օրը թափառում էինք այդ անբերրի հրաշալիքների մեջ: Քամին, որ հազիվ զգալի էր կեսօրին, կամաց-կամաց ուժեղանում էր անցնող ժամերի հետ ու լրացնում ամբողջ տեսարանը: Այն փչում էր ժայռերի նեղ կիրճերից, հետո դեպի արևելք, վազում էր հորիզոնի խորքից և գնում ոստոստալու քարերի ու արևի մեջ: Չդադարող քամին ուժգնորեն սուլում էր ավերակների միջից, պտույտներ գործում քարերի և գետնի կրկեսային հրապարակում, սրբում կարկտահար աղյուսակույտերը, իր շնչով օդակում ամեն ույտ և անընդմեջ ճչալով տարածվում երկնքում բացվող ֆորումի վրա: Կարծես քամուն զարնվող կայմակալ լինեի: Ճեղքվում էի մեջտեղից, աչքերս այրվում էին, շրթունքներս՝ ճաքճքում, մաշկս չորանում էր այլևս ինձ չպատկանելու աստիճան: Մի ժամանակ ես իմ մաշկով վերծանում էի տիեզերքի ձեռագիրը: Երկիրը մաշկիս վրա էր թողնում իր քնքշության կամ զայրույթի նշանները, երբ ջերմացնում էր իր ամառային շնչով կամ կծում էր եղյամե ատամներով: Բայց այսքան երկար ժամանակ ծեծվելով ու թափահարվելով քամուց, նրա դիմադրությունից շշմած, ես այլևս չէի գիտակցում, թե նա ինչ պատկեր էր գծում մաշկիս վրա: Ինչպես ալեբախությունից փայլեցված գլաքար, ես հղկվել էի քամուց՝ մաշվելով մինչև հոգիս: Ես փոքր-ինչ պատկանում էի ինձ ծածանող այդ ուժին, հետո ավելի շատ էի պատկանում, իսկ ավելի ուշ ամբողջովին այդ ուժինն էի և իմ արյան զարկը շփոթում էի բնության ամենուրեք ներկա այդ սրտի ուժգին ու հնչեղ բաբախյունի հետ: Քամին ինձ կերպավորում էր շրջապատի հրացայտ մերկության պատկերով: Եվ քամու հետ վաղանցիկ գրկախառնության մեջ ես

քար առ քար զգում էի այան կամ ձիթենու միայնությունը ամառվա երկնքի ներքո:

Արևի և քամու այդ հզոր լոգանքը հյուծում էր իմ բոլոր կենսաուժերը: Իմ մեջ հազիվ էր թպրտում կամքը, հեծեծում էր կյանքը, և տկարորեն ընդվզում էր միտքը: Սակայն շուտով, կարծես սփռվելով աշխարհի չորս կողմը, մտամոլոր, մոռացած ևաև ինքս ինձ, ես արդեն այս քամին եմ և նրա սլացքի մեջ եմ, այս այուներն եմ և այս կամարը, այս տաք սալաքարերը և ամայի քաղաքը շրջափակող այս գունատ լեռները: Եվ երբեք նախկինում այսպես չեմ զգացել իմ կապվածությունը ինքս ինձ և միաժամանակ իմ ներկայությունն աշխարհում:

Այո, ես ներկա եմ: Եվ այս պահին չշմեգուցիչն այն է, որ ես չեմ կարող սրանից ավելի հեռու գնալ, ինչպես ցման բանտարկյալ, որի համար ամեն ինչ ներկա է: Բայց ևաև ինչպես մի մարդ, որը գիտի, որ վաղը նման կլինի այսօրվան, ինչպես և մնացած բոլոր օրերը: Որովհետև իր ներկան գիտակցող մարդն այլևս սպասելիքներ չունի: Եթե կան հոգեվիճակներ արտահայտող բնապատկերներ, ապա դրանք ամենագոեհիկներն են: Եվ այս երկրի ամբողջ երկայնքով ես գնում էի ինչ-որ բանի ետևից, որն իմը չէր, այլ նրանը, ինչպես մահվան զգացումը, որն ընդհանուր էր մեզ համար: Այուների միջև, որոնց ստվերներն արդեն շեղվել էին, տագնապները փլվում էին օդում՝ վիրավոր թռչունների նման: Նրանց փոխարեն հառնում էր այս ամուլ պայծառամտությունը. անհանգստությունը ծնվում է ապրողների սրտում, բայց այդ կենդանի սրտերը շուտով կկանգնեն: Ահա սա է իմ ամբողջ հեռատեսությունը: Մինչ օրը իրիկնանում էր, աղմուկն ու լույսերը մարում էին երկնահոս մոխիրների տակ, ես, լքվելով ինքս ինձնից, ինձ անպաշտպան էի զգում այն տարտամ ուժերի դեմ, որոնք իմ մեջ ասում էին՝ ոչ:

Քչերն են հասկանում, որ կա մերժում, որն ընդհանուր ոչինչ չունի հրաժարումի հետ: Այս դեպքում ի՞նչ են նշանակում ապագա, բարձր կենսամակարդակ, ուսեցվածք բառերը: Ի՞նչ է հոգևոր առաջընթացը: Եթե ես համառորեն մերժում եմ աշխարհի վաղվա օրը, դա հենց նշանակում է, որ խոսքը ներկայիս հարստությունից

չհրաժարվելու մասին է: Չեմ ուզում հավատալ, որ մահը տանում է դեպի մեկ ուրիշ կյանք: Դա փակ դուռ է ինձ համար: Դա մի քայլ չէ, որ պիտի անես շեմն անցնելու համար, այլ քստմնելի ու պիղծ բախտախնդրություն: Ինձ առաջարկվող ամեն բան ձգտում է մարդուն ազատել իր սեփական կյանքի ծանրությունից: Եվ նայելով Ջեմիլայի երկնքում ծանրորեն սավառնող մեծ-մեծ թռչուններին, ես իսկապես կյանքի որոշ ծանրություն եմ նկրտում ու ձեռք եմ բերում այն: Ամբողջությամբ լինել այս պասիվ մոլորության մեջ, իսկ մնացյալն այլևս ինձ չի վերաբերում: Ես չափազանց երիտասարդ եմ, որպեսզի կարողանամ խոսել մահվան մասին: Բայց եթե հարկ լիներ այդ անել, ինձ թվում է, հենց այստեղ ես կգտնեի այն ճշգրիտ բառը, որը սարսափի ու լռության մեջ կարտահայտեր անխուսափելի մահվան գիտակցված հավաստիությունը:

Ունենում ես մի քանի հարազատ գաղափար՝ երկու կամ երեք: Աշխարհին ու մարդկանց պատահականորեն հանդիպելով՝ դրանք հղկվում են, փոխակերպվում: Տասը տարի է հարկավոր, որպեսզի ունենաս քո սեփական գաղափարը և որի մասին կարողանաս խոսել: Բնականաբար սա մի փոքր վիատեցնում է: Բայց այդ ընթացքում մարդն ինչ-որ չափով ընտելանում է աշխարհի գեղեցիկ դեմքին: Մինչ այդ նա աշխարհը տեսնում է դիմացից: Այժմ պետք է կողքից նայել նրա կիսադեմը դիտելու համար: Երիտասարդ մարդն աշխարհին նայում է դեմառդեմ: Նա ժամանակ չի ունեցել հղկելու մահվան կամ անէության գաղափարը, սակայն սարսափի համն արդեն առել է: Միգուցե ջահելությունը հենց այս դաժան առերեսումն է մահվան հետ, արևասեր կենդանու ֆիզիկական այս վախը: Հակառակ գոյություն ունեցող կարծիքների, գոնե այս տեսակետից, ջահելությունը պատրանքներ չունի: Նա պատրանքներ ստեղծելու ո՛չ ժամանակ է ունեցել, ո՛չ էլ բարեպաշտություն: Եվ չգիտեմ ինչու, այս ավերված տեսարանի, սգալի ու հանդիսավոր այս քարե աղաղակի, մայրամուտի մեջ անշունչ Ջեմիլայի, հույսի ու գույների այս վախճանի առջև, ես վստահ էի, որ հասնելով կյանքի ավարտին, իրենց անվանն արժանի մարդիկ պետք է նորից գտնեն այդ առերեսումը, պետք է նորից ժխտեն

իրենց սեփական գաղափարները և պետք է վերագտնեն անմեղությունը և արդարադատությունը, որը փայլում է ճակատագրին դեմ հանդիման կանգնած անտիկ մարդու հայացքում: Նրանք վերագտնում են իրենց ջահելությունը, սակայն միայն մահվան գրկում: Այս տեսակետից ամենաարհամարհելին հիվանդությունն է: Նա դեղատոմս է մահվան դեմ: Նա նախապատրաստում է մահվանը: Նա մահվան ուսուցումն է, որի առաջին փուլը ինքնախղճահարությունն է: Բայց Ջեմիլան... և ես հիմա զգում եմ՝ քաղաքակրթության ճշմարիտ, միակ առաջադիմությունը, որից ժամանակ առ ժամանակ կառչում է մարդը, գիտակից մեռյալներ ստեղծելն է:

Ինձ միշտ զարմացնում է, որ մենք այնքան հնարամիտ ու իմաստուն ենք զանազան թեմաների շուրջ խորհրդածելիս, սակայն աղքատիկ մտքեր ունենք մահվան վերաբերյալ: Դա կամ լավ է, կամ վատ: Ես վախենում եմ մահից կամ կանչում եմ նրան (քող ասեն): Բայց սա նույնպես ապացուցում է, որ ամեն պարզ բան վեր է մեր հասկացողությունից: Ի՞նչ է կապույտը, և ի՞նչ ենք մտածում կապույտի մասին: Նույն դժվարությունն է և մահվան հարցում: Մենք չգիտենք բանավիճել մահվան և գույների շուրջ: Եվ այնուամենայնիվ, ինձ համար շատ կարևոր է իմ դիմացի այս մարդը, որը ծանր է հողի պես և որն իմ ապագայի նախակերպարն է: Բայց իսկապես ես կարող եմ խորհել ապագայի մասին: Ինքս ինձ ասում եմ. «Ես պետք է մեռնեմ»: Սակայն սա ոչինչ չի նշանակում, քանի որ ես չեմ կարող դրան հավատալ, որովհետև ես կարող եմ ունենալ միայն ուրիշների մահվան փորձը: Ես տեսել եմ մարդկանց մեռնելիս: Հատկապես՝ շների մահը: Միայն նրանց դիպչելը տակնուվրա էր անում ինձ: Մտածում եմ՝ ծաղիկներ, ժպիտներ, կանայք, և հասկանում եմ, որ մեռնելու իմ ամբողջ սարսափը ապրելու նախանձիս մեջ է: Ես նախանձում եմ նրանց, ովքեր ապրելու են և որոնց համար ծաղիկներն ու կանայք լինելու են նրանց ուղնուծուծի ողջ իմաստը: Ես նախանձ եմ, որովհետև չափազանց շատ եմ սիրում կյանքը և անկարող եմ եսասեր չլինել: Ինչի՞ս է պետք հավերժությունը: Հնարավոր է, որ մի օր այստեղ պառկած լինես ու լսես. «Դուք ուժեղ եք, և ես պետք է անկեղծ լի-

նեմ ձեզ հետ: Կարող եմ ասել, որ դուք մեռնելու եք»: Լինել այնտեղ, ձեռքերով կառչած կյանքից, վախը աղիքներումդ և մի ապուշ հայացք դեմքիդ: Ի՞նչ արժեք ունի մնացյալը, արյան զարկեր եմ զգում քունքերումս ու թվում է, թե շուրջս ջարդուփշուր կանեմ ամեն բան:

Բայց մարդիկ մեռնում են անկախ իրենցից, անկախ իրենց շրջապատից: Նրանց ասում են. «Երբ դու առողջանաս...», իսկ նրանք մեռնում են: Ես նման բան չեմ ուզում: Որովհետև եթե կան օրեր, երբ բնությունը խաբում է, ապա կան նաև այնպիսի օրեր, երբ նա ճշմարիտն է ասում: Այս երեկո Ջեմիլան ճիշտն է ասում և այն էլ այնպիսի թախիծով և սրտառուչ գեղեցկությամբ: Իսկ ես այս աշխարհի առջև չեմ ուզում խաբել և չեմ ուզում, որ ինձ խաբեն: Ուզում եմ մինչև վերջ կրել իմ պայծառամտությունը և իմ վախճանին նայել նախանձի ու սարսափի ամբողջ առատությամբ: Ես վախենում եմ մահից այնքանով, որքանով բաժանվում եմ աշխարհից, որքանով կապված եմ մարդկանց ճակատագրին, որոնք ապրում են, փոխանակ զննելու հավերժական երկինքը: Ստեղծել գիտակից մեռյալներ՝ նշանակում է կրճատել այն տարածությունը, որը մեզ բաժանում է աշխարհից, նշանակում է առանց ուրախության մտնել դերի մեջ՝ գիտակցելով ընդմիշտ կորսված աշխարհից արձակվող պատկերները: Իսկ Ջեմիլայի բլուրների թախծոտ երգը հոգուս մեջ ավելի է խորացնում այս ուսմունքի դառնությունը:

***

Երեկոյան կողմ մենք մագլցում էինք գյուղ տանող կածանները և վերադառնալով, լսում էինք բացատրություններ. «Այստեղ է գտնվում հեթանոս քաղաքը, այս կացարանը, որ դուրս է ցցվել գետնի միջից, քրիստոնեական է: Ավելի ուշ...»: Այո, ճշմարիտ է: Այստեղ մարդիկ ու հասարակություններ են հաջորդել միմյանց, նվաճողներն իրենց ենթասպայական քաղաքակրթության հետքն են թողել այս երկրի վրա: Նրանք մեծության մասին ճղճիմ ու ծի-

ծաղելի պատկերացում ունեին և իրենց մեծությունը չափում էին նրա զբաղեցրած տարածությամբ: Հրաշքն այն է, որ նրանց քաղաքակրթության ավերակները կլինեն հենց իրենց իդեալի ժխտումը: Որովհետև այս կմախք-քաղաքը, որը երևում է այնքան բարձրից, իրիկնամուտին հաղթական կամարի շուրջը թևածող սպիտակ աղավնիներով, երկնքում չի գծում հաղթության ու փառամոլության նշաններ: Աշխարհը վերջում միշտ հաղթում է պատմությանը: Լեռների, երկնքի ու լռության մեջ Ջեմիլան քարե մեծ աղմուկ է բարձրացնում, որի պոեզիան ես լավ գիտեմ՝ պայծառամտություն, անտարբերություն: Սրանք հուսալքության կամ գեղեցկության իսկական նշաններն են: Սիրտս ճմլվում է այս մեծության առջև, որն արդեն լքում ենք: Ջեմիլան մնում է մեր ետևում իր թախծոտ, ջրամած երկնքով, բարձրավանդակի մյուս կողմից մեզ հասնող թռչնի երգով, հանկարծակի ու կտրուկ, բլուրների լանջերն ի վեր վտակների նման վազող այծերով, խորանի ճակատին պերճախոս վերջալույսով պարուրված եղջերավոր աստծո կենդանի դեմքով:

LA MORT HEUREUSE

ԲՆԱԿԱՆ ՄԱՀ

Առավոտյան ժամը տասն էր: Պատրիս Մերսոն համաչափ քայլերով գնում էր Զագրևսի ամառատուն: Այդ ժամին պահակը դուրս էր եկել գնումների, և ամառատունը դատարկ էր: Ապրիլն էր, գարնանային մի գեղեցիկ առավոտ՝ պայծառ ու ցրտաշունչ, մաքուր ու սառցանման կապույտ երկնքով և շլացուցիչ, բայց չտաքացնող, հսկայական արևով: Ամառատնից ոչ հեռու, բլրակները զարդարող սոճիների արանքներից մի անաղարտ լույս էր ծորում ծառաբների երկայնքով: Ճանապարհին ամայի էր և փոքր-ինչ զառիվեր: Մերսոն՝ ճամպրուկը ձեռքին և լի աշխարհի այդ առավոտվա փառավորությամբ, առաջ էր շարժվում սառնաշունչ ճանապարհով, իր ոտնաձայների խուլ աղմուկի ու ճամպրուկի բռնակի համաչափ ճռճռոցների միջով:

Մինչև ամառատուն հասնելը ճանապարհին անցնում էր ծաղկանոցներով ու նստարաններով առանձնացված մի հրապարակով: Վաղահաս ալ խորդենիները գորշավուն հալվեների արանքներում, լաջվարդ երկինքը, ցանկապատի կլոր, սպիտակեցված քարերը, այս ամենն այնքան թարմ էր և այնքան մանկական, որ Մերսոն մի պահ հապաղեց, ապա շարունակեց ճանապարհը, որը հրապարակից իջնում էր Զագրևսի ամառատուն: Դռան առջև կանգ առավ ու դրեց ձեռնոցը: Բացեց դուռը, որ հաշմանդամը սովորաբար բաց էր թողնում, և, բնականաբար, նորից փակեց: Առաջ շարժվեց միջանցքով և, հասնելով ձախից երրորդ դռանը, թակեց ու մտավ: Զագրևսն այնտեղ էր, բազկաթոռի մեջ, անդամահատ ոտքերի մնացորդները շալով ծածկած, բուխարիկի առջև, ճիշտ նույն տեղում, որը զբաղեցնում էր Մերսոն երկու օր առաջ: Կարդում էր: Նրա կլոր աչքերը, որոնք դույզն-ինչ զարմանք չէին արտահայտում, սևեռված էին այժմ արդեն փակ դռան մոտ կանգնած Մերսոյին: Գիրքը դրված էր ծածկոցին: Պատուհանների վարագույրները ետ էին քաշված: Հատակին, կահույքի վրա, բոլոր անկյուններում լողում էին արևային լճակներ: Ապակիների

հետևում առավոտն էր ցնծում ոսկեզօծ ու ցրտաշունչ գետնի վրա: Այդ մեծ ու սառած ուրախությունը, թռչնակների անվստահ ձայներանգներով սուր ճովողյունը, լույսի անողոք հեղեղումը առավոտին տալիս էին անմեղության և արդարության կերպարանք: Մերսոն քարացել էր, կոկորդն ու ականջները բռնվել էին սենյակի հեղձուցիչ ջերմությունից: Չնայած եղանակի փոփոխությանը, Զագրևսը թեժ կրակ էր արել: Եվ Մերսոն զգում էր՝ ինչպես է արյունը բարձրանում քունքերը և տրոփում ականջների ծայրերում: Մյուսը՝ շարունակ լուռ, հայացքով հետևում էր նրան: Պատրիսը մոտեցավ սնդուկին, որ բուխարիկի մյուս կողմում էր, և առանց նայելու հաշմանդամին, ճամպրուկը դրեց սեղանին: Այստեղ անընկատելի դող զգաց կոճերում: Կանգ առավ, բերանը դրեց ծխախոտը, որ վառեց անճարակի նման. ձեռնոցը խանգարում էր: Հետևում աննշան աղմուկ լսվեց: Ծխախոտը շրթունքների արանքում՝ շրջվեց: Զագրևսը շարունակում էր նայել իրեն, բայց փակել էր գիրքը: Մերսոն զգում էր, որ կրակը ցավեցնելու աստիճան տաքացնում է ծնկները, բայց և այնպես, հակառակ կողմից հասցրեց կարդալ գրքի վերնագիրը. Բալթազար Գրասիան* «Պալատականը»: Առանց վարանելու կռացավ սնդուկի վրա ու բացեց: Սպիտակի վրա սև ատրճանակը փայլում էր իր բոլոր կորագծերով, ինչպես խնամքով հարդարված կատու: Այդ ընթացքում բաց չէր թողնում Զագրևսի նամակը, որն այժմ բռնեց ձախ ձեռքով, իսկ աջով՝ ատրճանակը: Փոքր-ինչ տատանվելուց հետո զենքը տեղափոխեց ձախ թևատակն ու բացեց նամակը, որն ընդամենը մի մեծ թուղթ էր, վրան մի քանի տող՝ խզբզած Զագրևսի խոշոր, ծուռումուռ ձեռագրով. «Ինքնասպանությամբ ես ոչնչացնում եմ միայն մարդուս կեսը: Շատ կուզենայի, որ ներողամիտ լինեին իմ հանդեպ, քանզի փոքրիկ սնդուկիս մեջ եղածը հազիվ թե բավարարի նրանց, ովքեր ինձ հետ են եղել մինչև այստեղ: Ի լրումն ասեմ, որ ցանկություն ունեմ դրանով բարելավել նաև մահապարտների վիճակը: Սակայն գիտակցում եմ, որ չափից ավելին եմ պահանջում»:

---

* *Բալթազար Գրասիան* (1601-1658) - իսպանացի ճիզվիտ գրող, բարոյախոս:

Առանց դեմքի արտահայտությունը փոխելու Մերսոն ծալեց նամակը: Այդ պահին ծխից կսկծացին աչքերը, և մոխրի մի փոքրիկ կտոր ընկավ ծրարին: Թափ տվեց թուղթը, դրեց սեղանի ամենահաճախ տեսանելի մասում ու շրջվեց Չագրևսի կողմը: Վերջինս այժմ նայում էր ծրարին, իսկ կարճ ու մկանուտ ձեռքերը մնացել էին գրքի վրա: Մերսոն կոացավ, պտտեցրեց սնդուկի բանալին և հանեց լրագրով փաթեթավորված կապոցները, որոնց միայն եզրերն էին երևում: Չենքը թևատակին, դրանք մի ձեռքով կանոնավոր դասավորեց իր ճամպրուկի մեջ: Հարյուրանոցների քսան կապոց էլ չկար այնտեղ, և Մերսոն հասկացավ, որ չափազանց մեծ ճամպրուկ է ընտրել: Մի կապ հարյուրանոց թողեց սնդուկում: Փակեց ճամպրուկը, կիսատ ծխախոտը նետեց կրակի մեջ և, ատրճանակը վերցնելով աջ ձեռքը, մոտեցավ հաշմանդամին:

Չագրևսն այժմ նայում էր պատուհանին: Լսվեց դռան առջևից դանդաղ անցնող մեքենայի թեթև ու ծամծմված հոնդյունը: Չագրևսը չէր շարժվում, ասես զննում էր այդ ապրիլյան առավոտի ամբողջ անմարդկային գեղեցկությունը: Քունքին զգալով ատրճանակի փողի հպումը՝ նա չշրջեց հայացքը: Բայց Պատրիսը, որ նայում էր նրան, տեսավ, որ Չագրևսի աչքերը լցվեցին արցունքով: Եվ ինքը փակեց իր աչքերը: Մի քայլ ետ գնաց ու կրակեց: Մի պահ հենվեց պատին՝ չբացելով աչքերը: Ականջներում կրկին զգաց զարկերակի տրոփյունը: Նայեց: Գլուխն ընկած էր ձախ ուսին, մարմինն անշարժ էր թեքված: Բայց այնպես, որ այլևս ոչ թե Չագրևսն էր երևում, այլ մի հսկայական վերք՝ ուղեղային, ոսկրային և արյան իր ցցուն գծագրությամբ: Մերսոն սկսեց դողալ: Անցավ բազկաթոռի մյուս կողմը, խարխափելով վերցրեց Չագրևսի աջ ձեռքը, նրա մեջ հարմարեցրեց ատրճանակը, տարավ մինչև քունքը ու բաց թողեց: Ատրճանակն ընկավ բազկաթոռի արմնկակալին, իսկ այնտեղից՝ Չագրևսի ծնկներին: Այս գործողության ընթացքում Մերսոն հայացք ձգեց հաշմանդամի դեմքին: Նա ուներ նույնքան լուրջ, թախծոտ արտահայտություն, որքան երբ նայում էր պատուհանին: Այդ պահին շեփորի մի սուր ձայն հնչեց դռների մոտ: Անիրական կանչը լսվեց երկրորդ ան-

գամ: Բազկաթոռին խոնարհված՝ Մերսոն չշարժվեց: Շարժվող մեքենան ազդարարեց, որ մսավաճառը մեկնեց: Մերսոն վերցրեց ճամպրուկը, բացեց դուռը, որի սողնակը փայլում էր արևի ճառագայթների տակ և դուրս եկավ. գլուխը դմբդմբում էր, բերանը չորացել էր: Անցավ մուտքի դռնից ու քայլեց արագ-արագ: Ոչ ոք չկար, բացի փոքրիկ հրապարակի խորքում խոնված մի խումբ երեխաներից: Բավական հեռացավ: Հրապարակ հասնելով՝ հանկարծ գիտակցեց, որ ցուրտ է և սրսփաց քեթև բաճկոնի մեջ: Երկու անգամ փոշտաց, և հովիտը լցվեց հնչեղ, հեգնալից արձագանքներով, որ երկնքի բյուրեղյա մաքրությունը տանում էր ավելի ու ավելի վեր: Վարանում էր մի քիչ, բայցևայնպես կանգ առավ ու լիաթոք շնչեց: Կապույտ երկնքից իջնում էին միլիոնավոր փոքրիկ, ճերմակ ժպիտներ: Նրանք խաղում էին դեռևս անձրևակաթիլներով լի սպաղաթներում, ծառուղիների խոնավ տուֆաքարերի վրա, թռչում էին դեպի թարմ արյան գույն ունեցող կղմինդրածածկ տները և կրկին բարձրանում դեպի օդային ու արևային լճակները, որտեղից քիչ առաջ էին իջել: Մի մեղմանուշ մոռոց էր իջնում-բարձրանում սավառնող փոքրիկ ինքնաթիռից: Եթերային այդ փքթումի և երկնքի բեղուններյան մեջ թվում էր, թե մարդկանց միակ պարտականությունը ապրելն է ու երջանիկ լինելը: Ամեն ինչ սկսվել էր Մերսոյի ներսում: Երրորդ փոշտոցը սթափեցրեց նրան, մի տեսակ տենդային սարսուռ զգաց: Եվ սկսեց փախչել առանց շուրջը նայելու՝ լսելով միայն ճամպրուկի ճռռոցն ու ոտնաձայների աղմուկը: Տուն հասնելով՝ ճամպրուկը գցեց մի անկյուն ու քնեց մինչև հաջորդ օրվա կեսօր:

Ամառը ժխորով ու արևով էր լցրել նավահանգիստը: Ժամը տասնմեկն անց կես էր: Օրն ասես կիսվում էր մեջտեղից, որպեսզի ճգմեր կառամատույցները իր տապի ողջ ծանրությամբ: Ալժիրյան Առևտրի պալատի պահեստների առջև սև նավիրաններով ու կարմիր ծխնելույզներով «սկիաֆինոնները» բեռնավորվում էին ցորենի պարկերով: Նրանց նուրբ փոշու բուրմունքը միախառնվում էր բարկ արևից բացվող հանքածյութի բազմաշերտ հոտերին: Վերնիճի ու անիսօղու հոտով լի մի փոքրիկ պանդոկի առջև տղամարդիկ խմում էին, իսկ կարմիր շապիկավոր արաբ ակրոբատները անվերջ պտտեցնում էին իրենց մարմինները հրացայտ սալաքարերի վրա, ծովին ի տես, որտեղ ոստոստում էր լույսը: Առանց նրանց կողմը նայելու, պարկերը շալակած բեռնակիրները գնում-գալիս էին երկու ճկվող տախտակների վրա, որոնք կառամատույցից բարձրանում էին մինչև բեռնանավերի կամուրջը: Վերև հասնելով և հանկարծ իրենց կտրված զգալով երկնքի բարձունքում, ծովածոցի վրա, ամբարձիչների ու կայմերի միջև, նրանք մի պահ կանգ էին առնում՝ շլացած երկնքի հետ առճակատումից, աչքերն էին փայլեցնում քրտինքի ու փոշու շաղախով շպարված իրենց դեմքերի վրա, և ապա կուրորեն սուզվում եռացող արյան հոտով լի նավամբարի մեջ: Շիկացած օդի մեջ անընդմեջ ոռնում էր շչակը:

Հանկարծ տախտակամածի վրա մարդիկ խառնվեցին իրար: Բեռնակիրներից մեկն ընկել էր գերանների արանքը, որոնք իրար բավական մոտ լինելով, կարողացել էին պահել նրան: Բայց թևը մնացել էր թիկունքի տակ ու կոտրվել պարկի ահռելի ծանրությունից: Մարդն աղաղակում էր ցավից: Այդ պահին Պատրիս Մերսոն դուրս եկավ իր գրասենյակից: Հենց դռան շեմն անցավ, շունչը կտրվեց ամառային շոգից: Բերանը լայն բացած՝ նա ներս քաշեց հանքածյութի գոլորշին, որը քերծեց կոկորդը: Կանգնեց բեռնակիրների մոտ: Նրանք ազատել էին վիրավորին, պառկեցրել փոշե-

ծածկ տախտակամածին: Նա ընկած էր տանջանքից ճերմակած շրթունքներով և կախ էր գցել արմունկից վերև կոտրված թևը: Գլորվելով թևի երկարությամբ՝ արյան կաթիլներն աննշան ճրճթոցով, մեկը մյուսի հետևից ընկնում էին շիկացած քարերին, որոնցից գոլորշի էր բարձրանում: Մերսոն անշարժ դիտում էր այդ արյունը, երբ քաշեցին թևից: Էմանուելն էր՝ ցրիչը, «վազվզան ճստիկը»: Ցույց տվեց ճայթյուններով ու շղթաների դղրդյունով իրենց կողմն եկող մի բեռնատար: «Գնացինք»: Պատրիսը վազեց: Բեռնատարն անցավ: Իսկույն նետվեցին նրա հետևից՝ խեղդվելով փոշու և աղմուկի մեջ, շնչահեղձ ու կուրացած, միայն հստակ գիտակցելով, որ քշվում են վազքի անսանձ մղումով, ամբարձիչների ու մեքենաների շարժման խելահեղ ռիթմով, և որ իրենց ուղեկցում են հորիզոնի եզրին պարող կայմերն ու ասես կեղևահան, ճոճվող նավիրանները, որոնց երկայնքով վազում էին իրենք: Առաջինը Մերսոն կառչեց թափքից և, վստահ իր ուժին ու ճկունությանը, թռավ մեքենայի մեջ: Ապա օգնեց Էմանուելին, որ նստի ոտքերը կախ գցած, և ճերմակ կավճային փոշու, երկնքից իջնող լուսափայլ ջերմության, արեգակի, կայմերով ու սևաթույր վերհանքերով խճողված նավահանգստի անծայրածիր ու երևակայական համայնապատկերի մեջ բեռնատարը սլացավ իր ողջ արագությամբ, կառամատույցի անհավասար սալարկների վրայով՝ ստիպելով ոստոստալ Էմանուելին ու Մերսոյին, որոնք շնչահեղձ էին լինում քրքջալուց և արյան շրջանառության արագացումից:

Բելկուր հասնելով՝ Մերսոն ու Էմանուելը իջան: Էմանուելը երգում էր: Երգում էր բարձրածայն ու շինծու: «Հասկանո՞ւմ ես,- ասում էր Մերսոն,- կուրծքս ուռչում է, երբ գոհ եմ կամ լողում եմ»:

Իրոք այդպես էր: Լողալիս Էմանուելը երգում էր, և նրա ձայնը, որ խոպոտվում էր լարվածությունից և անորսալի դառնում ծովի վրա, ռիթմ էր հաղորդում նրա կարճ ու մկանուտ թևերի շարժումներին: Նրանք գնացին Լիոնի փողոցով: Մերսոն մեծ-մեծ քայլեր էր գցում՝ ճոճելով լայն ու ջլապինդ ուսերը: Մայթ բարձրանալիս ոտքը դնելու ձևից, ինչպես նաև դեմը ելնող մարդկանցից ճարպկորեն խուսափելուց զգացվում էր զարմանալիորեն երիտասարդ և

առողջ մարմինը՝ ընդունակ իր տիրոջը հասցնելու ֆիզիկական հաճույքի ծայրագույն սահմանները: Հանգստանալիս նա մարմնի ողջ ծանրությունը ինչ-որ թեթև հնարքով տեղափոխում էր միայն մի կոնքի վրա, ինչպես մարմնակազմության ոճն ու ձևը լավ ուսումնասիրած, հմուտ մարզիկ: Հոնքերի մեծ կամարակապի տակ փայլում էին աչքերը: Այն ընթացքում, երբ մեքենայական շարժուձևերով, ուռուցիկ ու շարժուն շուրթերի կծկումներով խոսում էր Էմանուելի հետ, մերթընդմերթ քաշում էր օձիքից՝ ասես ցանկանալով ազատել վիզը:

Մտան իրենց ճաշարանը: Տեղավորվեցին և սկսեցին լուռ ուտել: Ստվերում զով էր: Ճանճեր կային: Լսվում էին ամանեղենի չխկչխկոց ու խոսակցության ձայներ: Մոտեցավ ճաշարանատերը՝ Սելեստը: Հաղթանդամ էր, բեղավոր: Փորն էր քորում գոգնոցի տակից, որի բարձրացրած փեշերը հետո նորից կախ գցեց:

- Ո՞նց ես,- հարցրեց Էմանուելը:

- Բոլոր բիծուկների պես:

Սկսեցին զրուցել: Փոխադարձաբար շրմփացրին իրար ուսի և ասացին. «Է՜, ախպեր»:

- Բիծուկները, հասկանո՞ւմ ես,- ասաց Սելեստը,- մի քիչ դմբո են: Ասում են, թե իբր միայն հիսուն տարեկանում ես մարդ դառնում: Դե, որովհետև իրենք հիսուն տարեկան են: Բայց մի ընկեր ունեի, իրեն շատ լավ էր զգում որդու հետ, միշտ միասին էին, միասին էին տեղ գնում, միասին քեֆ անում: Գնում էին խաղատուն: Ընկերս ասում էր. «Ինչո՞ւ եք ուզում, որ բիծաների հետ ընկերություն անեմ, ուզում եք, որ առավոտից իրիկուն լսեմ, թե ինչպես են լուծողական խմում կամ ինչպես են լարդերը ցավում: Ավելի լավ է տղուս հետ լինեմ: Իսկ եթե պատահում է, որ թոչնակի է կպչում, ձևացնում եմ, թե ոչինչ չեմ տեսնում և անմիջապես տրամվայ եմ գցվում՝ ցտեսություն և շնորհակալություն: Շատ գոհ եմ»:

Էմանուելը ծիծաղեց:

- Դե, ասեմ, որ այդ մարդը մեծ հեղինակություն չէր ինձ համար,- ասաց Սելեստը,- բայց շատ էի սիրում նրան:

Հետո շարունակեց՝ դիմելով Մերսոյին.

- Ի վերջո, սա ավելի լավն էր, քան էն մյուս ընկերս, որը հենց հաջողության հասավ, քիթը ցցեց, սկսեց հետս խոսել ձևեր թափելով: Հիմա համեստացել է, որովհետև ամեն ինչ կորցրեց:

- Շատ էլ լավ եղավ:

- Է՞, կյանքում սրիկա չպետք է լինել: Բայց կարողացավ օգտվել հարմար պահից և ճիշտն էլ ինքն արեց... Նրա ինն հարյուր հազար ֆրանկը թե իմը լինե՞ր...

- Ի՞նչ կանեիր,- հարցրեց Էմանուելը:

- Մի քողտիկ կառնեի, կամարի պորտին սոսինձ կքսեի ու դրոշակ կխփեի: Հետո կսպասեի, տեսնեի՝ քամին որ կողմից է փչում:

Մերսոն ուտում էր հանգիստ, առանց շտապելու: Այդ ընթացքում Էմանուելը ճաշարանի տիրոջը սկսեց կրկին պատմել Մարնի հանրահայտ ճակատամարտի իր պատմությունը:

- Մենք՝ զուավներս, աֆրիկյան հետևակային էինք, մեզ դարձրին հրաձիգ...

- Գլուխ տարար,- ասաց Մերսոն առանց վրդովմունքի:

- Հրամանատարն ասաց՝ «Գրոհե՛լ»: Հետո իջանք ձորակի պես մի տեղ, որտեղ ծառեր էլ կային: Ասացին՝ գրոհել, բայց դիմացը ոչ ոք չկար: Այդ ժամանակ հենց այնպես գնացինք, առաջ շարժվեցինք: Իսկ հետո հանկարծ միանգամից թնդանոթները սկսեցին հնձել: Բոլորն ընկան, մեկը մյուսի վրա թափվեցին: Էնքան շատ զոհեր ու վիրավորներ եղան, էնքան արյուն հոսեց կիրճի խորքում, որ մակույկով կարելի էր նավարկել: Եղան մարդիկ, որ բղավեցին. «Օ՜, մայրի՜կ, ահավոր է»:

Մերսոն վեր կացավ, հանգուցեց անձեռոցիկը: Տերը գնաց նախաճաշը կավիճով գրանցելու խոհանոցի դռան ետևում, որն իր հաշվեգիրքն էր: Երբ որևէ վեճ էր ծագում, նա դուռը հանում էր ծխնիներից ու, մեջքին դրած, քարշ տալիս հաշվարկները: Ռընեն՝ տիրոջ որդին, մի անկյուն քաշված, թերխաշ ձու էր ուտում:

- Խեղճը չոփ է դարձել,- ասաց Էմանուելը:

Ընդհանրապես Ռընեն լուրջ էր ու լռակյաց: Այնքան էլ նիհար չէր, բայց աչքերում հիվանդագին փայլ կար: Այդ պահին մի հաճախորդ նրան բացատրում էր, որ թոքախտը բուժվում է «ժամա-

նակի ընթացքում և մեծ հոգատարությամբ»: Ռընեն գլխով հավանություն էր տալիս և լրջախոհ պատասխանում ամեն պատառը կուլ տալուց հետո: Մերսոն մոտեցավ և, հենվելով հաշվեսեղանին, սուրճ պատվիրեց: Հաճախորդը շարունակում էր իր պատմությունը.

- Պերեզին գիտեի՞ր՝ գազի ընկերությունից: Մեռավ: Մի թոքն էր միայն հիվանդ, բայց չուզեց երկար պառկել հիվանդանոցում: Տուն պիտի գնար, կինը սպասում էր: Կինն էլ՝ ոնց որ զամբիկ: Հիվանդությունը այդ մարդուն էնպես էր դարձրել, որ, հասկանո՞ւմ ես, ամբողջ օրը չէր իջնում կնոջ վրայից: Կինն առանձնապես չէր ուզում, բայց մարդն ահավոր էր: Դե, օրական երկու-երեք անգամ, իսկ դա, ի վերջո, մահ է հիվանդի համար:

Ռընեն՝ հացի պատառն ատամների արանքում, դադարեցրել էր ծամելը և անթարթ նայում էր այդ մարդուն:

- Այո,- վերջապես ասաց նա,- ցավի տեր դառնալը հեշտ է, ազատվելը՝ դժվար:

Մերսոն մատով իր ազգանունը գրեց գոլորշապատ սրճեփի վրա: Աչքերը կկոցեց: Այդ անվրդով թոքախտավորից մինչև երգերով փքված Էմանուելը, ամեն օր իր կյանքը ճոճվում էր սրճարանային ու հանքածյութի հոտերի մեջ, անջատված իրենից, իր պահանջմունքներից, օտար իր հոգուն և իր ճշմարտությանը: Նույն բաները, որոնք այլ պարագաներում կարող էին հրապուրել իրեն, այժմ ընդունվում էին լռությամբ, քանի որ դրանցով ապրում էր մինչև այն պահը, երբ իրեն վերագտնում էր իր սենյակում, որտեղ լարում էր ողջ խոհեմությունը՝ հանգցնելու ներքուստ բոցկլտացող կենսական հուրը:

- Դո՛ւ ասա, Մերսո՛, դու կրթված տղա ես, ես ճի՞շտ եմ հաշվել,- ասաց տերը:

- Ճիշտ է,- պատասխանեց Պատրիսը,- կարող ես չստուգել:

- Բա՞, այս առավոտ գայլի պես կերար:

Մերսոն ժպտաց ու դուրս եկավ ճաշարանից: Փողոցն անցնելով՝ բարձրացավ իր սենյակը, որը ծիամսի խանութի վերևում էր: Երբ կախվում էր պատշգամբից, արյան հոտը քթին էր տալիս, կա-

ողողանում էր կարդալ նաև ցուցանակը. «Մարդու ազնվագույն բարեկամը»: Փովեց, հետո ծխեց ու քնեց:

Նա ապրում էր մոր տանը: Այդ փոքրիկ երեք սենյականոց բնակարանում երկար տարիներ էր անցկացրել մոր հետ: Մնալով մենակ՝ Մերսոն երկու սենյակը վարձով էր տվել իր տակառագործ ընկերոջը, որն ապրում էր քրոջ հետ, իսկ իրեն վերցրել էր ամենալավ սենյակը: Մայրը մահացել էր հիսունվեց տարեկանում: Գեղեցկուհի լինելով՝ նա կարծել էր, թե կկարողանա պչրուհի դառնալ, աչքի ընկնել և լավ կյանքի հասնել: Քառասունին մոտ մի ահավոր ցավ էր ընկել մարմինը: Ստիպված էր եղել հրաժարվել շքեղ զգեստներից, դադարել էր շպարվել և ամփոփվել էր հիվանդի շապիկի մեջ՝ դեմքը տձևացած սոսկալի այտուցներից: Շարժունությունը գրեթե կորցրել էր այտուցված և ուժատ ոտքերի պատճառով, իսկ վերջում կիսակույր, մթագնած հիշողությամբ խարխափում էր գունազուրկ բնակարանում, որը շուտով լքելու էր: Հիվանդությունը հանկարծահաս էր եղել և կարճատև: Շաքարախտով էր հիվանդ, որ բանի տեղ չէր դնում, այլ ընդհակառակը, ծաղկեցնում էր իր անհոգ ապրելակերպով: Մերսոն ստիպված թողեց ուսումն ու անցավ աշխատանքի: Կարդալն ու խորհրդածելը շարունակում էր մինչև մոր մահը: Տասը տարի շարունակ հիվանդն ապրեց այդ կյանքով: Այդ տառապանքն այնքան ծգծգվեց, որ շրջապատի մարդիկ ընտելացան նրա հիվանդությանը և անգամ մոռացան, թե այդ ծանր հիվանդը կարող է մեռնել: Մի օր նա մահացավ: Թաղի բնակիչները ցավակցում էին Մերսոյին: Թաղմանը երկար էին սպասել: Հիշում էին նրա որդիական մեծ սերը մոր նկատմամբ: Հեռավոր ազգականներին աղաչում էին լաց չլինել, որպեսզի Պատրիսն իր վիշտն ավելի ծանր չտանի: Նրանց աղերսում էին սատար կանգնել Մերսոյին, նվիրվել նրան: Ինքը, սակայն, որքան կարող էր լավ հագնվեց և գլխարկը ձեռքին սկսեց հետևել նախապատրաստական աշխատանքներին: Գնաց թափորի ետևից, մասնակցեց կրոնական արարողություններին, գերեզմանի մեջ իր բուռ հողը գցեց ու սեղմեց բոլորի ձեռքը: Միայն մի անգամ իր զարմանքն ու դժգոհությունը հայտնեց, երբ պարզ-

վեց, որ հրավիրյալների համար բավականաչափ մեքենաներ չեն պատվիրել: Այս էր եղածը: Հաջորդ օրն արդեն պատուհաններից մեկի վրա կարելի էր կարդալ «Տրվում է վարձով» ցուցանակը: Այժմ նա ապրում էր մոր սենյակում: Այն ժամանակ, մոր կողքին չքավորությունը մի տեսակ քնքշություն էր պարունակում: Երեկոյան, երբ կրկին հանդիպում և լուռ ընթրում էին նավթալամպի շուրջը, մի թաքուն երջանկություն էր թևածում այդ պարզության ու նեղվածքի մեջ: Նրանց թաղամասը խաղաղ էր: Մերսոն նայում էր մոր թուլացած ծնոտներին ու ժպտում էր: Մայրն էլ էր ժպտում: Շարունակում էր ուտել: Լամպը ծուխ էր արձակում: Մայրը կարգավորում էր պատրույգը միշտ նույն, սովորական ձևով՝ մարմինն անշարժ, միայն աջ ձեռքը երկարացնելով:

- Էլ չե՞ս ուզում ուտել,- հարցնում էր նա:

- Ոչ,- պատասխանում էր Մերսոն:

Ծխում էր կամ կարդում: Առաջին դեպքում մայրն ասում էր. «Էլի՞»: Երկրորդի ժամանակ. «Մոտեցիր լամպին, աչքերդ կփչացնես»:

Այժմ, ընդհակառակը, մենության մեջ աղքատությունն ահավոր դժբախտություն էր: Եվ եթե Մերսոն տխրում էր՝ մտածելով հանգուցյալի մասին, իրականում ինքն իրեն էր խղճում: Նա կարող էր ավելի հարմարավետ բնակարան տեղափոխվել, բայց թանկ էր գնահատում չքավորության բույրը: Այստեղ գոնե վերագտնում էր իրեն, և այդ կյանքում, որից ինքը կամովին չքվել էր ուզում, այդ զազրելի ու համառ դիմակայումը թույլ էր տալիս ապավինել իրեն տրտմության ու զղջման պահերին: Դռան վրա փակցված էր թողել գորշավուն, եզրերը քրքրված ստվարաթղթե մի կտոր, որի վրա կապույտ մատիտով մայրն իր անունն էր գրել: Պահել էր նաև հին, սնդուսե սփռոցով ծածկված պղնձե մահճակալը, պապի դիմանկարը՝ փոքրիկ մորուքով, աչքերն անշարժ ու պայծառ: Բուխարիկի վրա, հին, կանգնած ժամացույցի և գրեթե երբեք չվառվող նավթալամպի շուրջը շարված էին հովիվներ և հովվուհիներ: Գոգավոր ծղոտե աթոռների, դեղնած հայելիներով պահարանի և անկյունը կոտրված հարդարանքի սեղանի անորոշ

միջավայրն այլևս գոյություն չուներ իր համար. սովորույթը հարթեցրել էր ամեն ինչ: Առանց որևէ ճիգ գործադրելու նա շարժվում էր այդ կարծեցյալ բնակարանում: Մեկ ուրիշ, նոր սենյակում հարկ կլիներ վարժվել և նորից պայքարել: Այնինչ կուզենար նվազագույնի հասցնել աշխարհում իրեն տրված մակերեսը և քուն մտնել, չարթնանալ, մինչև ամեն բան ավարտված լիներ: Այդ նպատակին էր ծառայում իր սենյակը, որը մի կողմով նայում էր փողոցին, իսկ մյուսով՝ միշտ փռած լվացքով լի դարավանդին և դարավանդից անդին՝ նարնջի փոքրիկ այգիներին, որոնք շրջափակված էին պարիսպներով: Ամառվա գիշերները երբեմն նա սենյակը թողնում էր մթության մեջ և պատուհանը բացում դարավանդի ու մթամած այգիների վրա: Նարնջենու գիշերից գիշեր ուժգնացող բույրն ավելի էր վեր բարձրանում և իրեն պարուրում եթերային կապանքներով: Ուրեմն, ողջ գիշեր սենյակն ու ինքը նուրբ և միաժամանակ թանձր անուշահոտության մեջ էին, և ասես երկար ժամանակ մեռած լինելուց հետո հարություն առնելով, նա առաջին անգամ պատուհան էր բացում կյանքի առջև:

Արթնացավ քրտինքի մեջ կորած, անընդհատ հորանջում էր: Շատ ուշ էր: Սանրվեց, քառատրոփ իջավ ու ցատկեց տրամվայի մեջ: Երկուս անց հինգ նա արդեն գրասենյակում էր: Աշխատում էր մեծ սենյակում, որի չորս պատերն էլ որմնախորշեր ունեին՝ լի անձնական գործերով: Սենյակը աղտոտ չէր, ոչ էլ զզվելի, սակայն օրվա բոլոր ժամերին կոլումբարիում էր հիշեցնում, որտեղ սպանված ժամեր էին փտելու: Մերսոն ստուգում էր բեռնագրերը, թարգմանում անգլիական նավերի ապրանքագուցակները, իսկ ժամը երեքից չորսը ընդունում ծանրոց ուղարկող հաճախորդներին: Նա ինքն էր ընտրել այդ աշխատանքը, որն իրականում սրտովը չէր: Բայց այստեղ էր կարծես կյանք տանող դուռը: Կային կենդանի դեմքեր, մշտական հաճախորդներ, կար անցուդարձ ու շնչառություն, որտեղ վերջապես զգում էր իր սրտի բաբախյունը: Այսպես նա կարողանում էր խույս տալ երեք մեքենագրուհիներից և գրասենյակի պետից՝ պարոն Լանգլուայից: Մեքենագրուհիներից մեկը բավական գեղեցիկ էր ու վերջերս էր ամուսնացել: Մյուսն ապ-

րում էր մոր հետ, իսկ երրորդը ծեր, եռանդուն ու պատվարժան կին էր, որի գուներ խոսելածևը դուր էր գալիս Մերսոյին, ինչպես նաև իր դժբախտությունների մասին վերապահումներով արտահայտվելը, ինչպես կասեր Լանգլուան: Վերջինս հաճախ էր սուր բախումներ ունենում նրա հետ, և ծեր կինը միշտ հասնում էր առավելության: Տիկին Հերբիյոնն արհամարհում էր նրան, որովհետև անդրավարտիքը քրտինքից կպչում էր հետույքին, և որովհետև ծոմովում էր տնօրենի առջև, ինչպես նաև հեռախոսով խոսելիս, երբ լսում էր որևէ փաստաբանի կամ ոմն երևելիի ձայն: Թշվառականը զուր էր փորձում սիրաշահել ծեր կնոջը կամ գտնել նրա համակրանքը շահելու ուղին: Այդ երեկո նա գրասենյակում պատեպատ էր ընկել. «Տիկին Հերբիյոն, ձեր կարծիքով, ասացեք, ես համակրելի չե՞մ»: Մերսոն թարգմանում էր անգլերենից՝ vegetables, vegetables, գլխավերևում դիտելով կանաչ խավաքարտե ծալքավոր լուսամփոփը: Դիմացի պատից կախված էր գունավոր օրացույցը՝ «Տեր-Նյովաների թողությունը» նկարով: Սեղանին դրված էին հացի կտորներ, ծծած, թանաքամաս ու քանոն: Սենյակի պատուհանները նայում էին փայտի հսկայական դեզերին, որ դեղին ու ճերմակ բեռնանավերով բերել էին Նորվեգիայից: Մերսոն լարեց ականջը: Պատի ետևում կյանքի խուլ, ահռելի բաբախյունով լեցուն շնչառությունն էր ծովի վրա: Այնքան մոտ և միաժամանակ այնքան հեռու...Ժամը վեցն ազդարարող զանգը սթափեցրեց նրան: Շաբաթ օր էր:

Տուն վերադառնալով՝ պառկեց ու քնեց մինչև ընթրիք: Չվածեղ արեց և կերավ հենց թավայից (առանց հացի, որովհետև մոռացել էր գնել), հետո նորից պառկեց և անմիջապես քնեց մինչև առավոտ: Արթնացավ նախաճաշից մի քիչ շուտ, հարդարվեց ու գնաց ուտելու: Վերադարձավ, լուծեց երկու խաչբառ, բարեխղճորեն կտրեց «Կրյուշենի աղերի» գովազդը և կպցրեց տետրում, որն արդեն լի էր սանդուղքի բազրիքի վրայով սահող թզուկ պապիկների նկարներով: Վերջացնելով՝ լվաց ձեռքերն ու գնաց կանգնեց պատշգամբում: Ետմիջօրեն գեղեցիկ էր: Բայց սալարկը լպրծուն էր: Սակավաթիվ անցորդները շտապում էին: Նրանցից յուրա-

քաճչյուրին Մերսոն ուղեկցում էր հայացքով և աչքից բաց էր թողնում միայն մեկ ուրիշին անցնելու համար: Դրանք նախ զբոսանքի ելած ընտանիքներն էին. ծովայինի համազգեստով երկու փոքրիկ տղաներ՝ ծնկներից ցած վարտիքներով, կաշկանդված նեղլիկ հագուստների մեջ և մի աղջնակ՝ մեծ, վարդագույն ժապավենով ու սև լաքե կոշիկներով: Նրանց հետևից գնում էր մայրը՝ շագանակագույն մետաքսե շրջազգեստով. ասես մի հրեշավոր գազան լիներ՝ վիզը փաթաթած հսկայական վիշապով: Հետո գնում էր հայրը՝ ձեռնափայտով և հեղինակավոր տեսքով: Ավելի ուշ անցան թաղամասի ջահելները՝ լաքած մազերով ու կարմիր փողկապներով, իրանը կիպ գրկած բաճկոններով, գրպանիկներում՝ ասեղնագործ թաշկինակ և քառակուսի քիթ ունեցող կոշիկներով: Նրանք անգուսպ հոհոցներով վազում էին դեպի տրամվայները՝ շտապելով հասնել կենտրոնի կինոթատրոնները: Նրանցից հետո փողոցը կամաց-կամաց ամայացավ: Ամենուրեք սկսվել էին կինոնկարների ցուցադրումները: Այժմ թաղամասում մնացել էին միայն խանութպաններն ու կատուները: Փողոցը երիզող թզենիների վերևում ջինջ, բայց փայլատ երկինքն էր: Ծխախոտավաճառը դուրս բերեց աթոռը, դրեց դռան մոտ ու հեծավ՝ ձեռքերը հենելով թիկնակին:

Քիչ առաջվա լեփ-լեցուն տրամվայների փոխարեն հիմա անցնում էին գրեթե դատարկները: «Պիեռոյի մոտ» փոքրիկ սրճարանում մատուցողը թեփով ավլում էր դատարկ սրահի հատակը: Մերսոն շրջեց աթոռը, դրեց ծխախոտավաճառի նման ու իրար հետևից ծխեց երկու ծխախոտ: Սենյակ մտավ, շոկոլադից մի կտոր կոտրեց և ետ եկավ, որ ուտի պատուհանի մոտ: Սակայն երկնքով անցած ամպերն ասես անձրևի հույս էին թողել, որից փողոցն ավելի էր մթնել: Ժամը հինգին երևացին դղրդալից տրամվայները, որոնք մարզադաշտից բերում էին աստիճաններին ու բռնակներին խումբ-խումբ թառած հանդիսականներին: Հաջորդ տրամվայները բերեցին խաղացողներին, որոնց կարելի էր ճանաչել ճամպրուկներից: Նրանք ոռնում էին կոկորդով մեկ, երգում լիաթոք՝ ի փառս իրենց մարզակումբի: Շատերը ողջունեցին Մեր-

սոյին: Մեկն էլ բղավեց. «Նրանց հերն անիծեցինք»: Մերսոն միայն «հա» ասաց ու թափահարեց գլուխը: Փողոցում ավելացավ մեքենաների թիվը: Նրանցից շատերը ծաղիկներով զարդարել էին շարժիչի ծածկոցներն ու թափարգելները: Հետո եղանակը դարձյալ փոխվեց: Տանիքների վերևում երկինքը դարձավ կարմրավուն:

Ծնվող երեկոյի հետ փողոցները կրկին աշխուժացան: Վերադառնում էին զբոսանքից: Հոգնած երեխաները կամ լաց էին լինում, կամ քարշ գալիս մեծերի հետևից: Այդ պահին փողոցը հեղեղվեց կինոթատրոններից դուրս եկած հանդիսատեսների հորձանքով: Նրանց մեջ ամենաերիտասարդների կտրուկ ու հավակնոտ շարժումներից Մերսոն ենթադրեց, որ արկածային կինոնկար էին դիտել: Քաղաքի կենտրոնից վերադարձողները տեղ հասան փոքր-ինչ ուշացումով: Նրանք ավելի լրջախոհ տեսք ունեին: Չնայած քրքիջներին ու կոպիտ կատակներին, նրանց կեցվածքում, նաև աչքերում զգացվում էր ճոխ կյանքի կարոտը, որ կինոնկարը բացահայտել էր իրենց համար: Ոմանք մնացին փողոցում ու սկսեցին վերուվար անել: Ի վերջո, Մերսոյի դիմացի մայթին գոյացավ երկու հոսանք՝ քաղի ջահել, հերարձակ աղջիկները, որոնք քայլում էին զույգ-զույգ և թևանցուկ, և մյուսը՝ տղաները, որոնք սրախոսություններ էին նետում աղջիկներին, ծիծաղեցնում նրանց և ստիպում շրջել գլուխները: Ավելի լրջախոհները մտնում էին սրճարան կամ խմբերով կանգնում մայթերին, իսկ երթևեկող մարդկանց հոսանքը ստիպված շրջանցում էր նրանց կողչակները: Փողոցը հիմա լուսավորված էր, և էլեկտրական լապտերների լույսից խամրում էին գիշերվա մեջ հառնող առաջին աստղերը: Մերսոյի պատշգամբի տակ ճգվում էին մայթերը՝ ցուցադրելով իրենց մարդկային ու լուսային հանդերձանքը: Լապտերների ներքո փայլփլում էր լպրծուն սալարկը, իսկ տրամվայների լույսերը կանոնավոր ընդմիջումներով իրենց արտացոլանքն էին թողնում փայլուն մազերի, ժպտացող դեմքի կամ արծաթյա ապարանջանի վրա: Իսկ հետո, ավելի հազվադեպ դարձած տրամվայների հետ և արդեն սևաթույր գիշերվա մեջ, ծառերի ու լամպերի վերևում թաղամասն աննկատ դատարկվեց, և առաջին կատուն դանդաղ

կտրեց-անցավ կրկին ամայացած փողոցը: Մերսոն մտածեց, որ պետք է ընթրել: Աթոռի թիկնակին երկար հենվելուց վիզը ցավում էր: Իջավ հաց ու մսեղեն գնելու: Խոհանոցում կերակուր պատրաստեց ու կերավ: Կրկին մոտեցավ պատուհանին: Մարդիկ քաշվում էին իրենց տները: Ցրտել էր: Նա սրսփաց, փակեց պատուհանները և մոտեցավ բուխարիկի վերևում կախված հայելուն: Քացի այն հատուկենտ երեկոներից, երբ ընդունել էր Մարթային կամ դուրս եկել նրա հետ, ինչպես նաև թունիսցի ընկերուհիների հետ ունեցած նամակագրությունից, իր ողջ կյանքն անցել էր այդ խղճուկ հայելու հեռանկարով, որն արտացոլում էր սենյակը, որտեղ միշտ աղտոտ սպիրտայրոցն էր՝ հացի կտորների կողքին:

«Եվս մի ծգծգված կիրակի»,- ինքն իրեն ասաց Մերսոն:

Երբ երեկոյան Մերսոն զբոսնում էր փողոցներում և հրճվում, տեսնելով՝ ինչպես են լույսերն ու ստվերները փոխնիփոխ ցոլցլում Մարթայի դեմքին, ամեն ինչ աներևակայելիորեն մատչելի էր թվում, և իպարտ էր զգում իր ուժով ու համարձակությամբ: Որպես ընթագույն արբեցում Մարթան ամեն օր իր մեջ էր ներարկում այդ գեղեցկությունը, և նա երախտապարտ էր Մարթային, որ նա դա ցուցադրում է ամենուր՝ և՛ իր կողքին, և՛ հասարակության մեջ: Մարթայի աննշան լինելն էլ ցավ կպատճառեր իրեն, որքան հիմա, երբ երջանիկ էր՝ գայթակղելով տղամարդկանց: Մարթան քայլում էր առջևից, հիացական հայացքների ներքո, ժպտում, ծաղկափթիթ դեմքով և բուռն գեղեցկությամբ: Ինքը՝ ընթաքաղիքե գլխարկը ձեռքին, գերբնական բավարարվածություն էր զգում իր մեջ՝ ասես ներքուստ գիտակցելով իր սեփական վայելչագեղությունը: Օտար ու լրջմիտ մարդու տեսք ընդունեց: Ցուցադրեց չափազանցված քաղաքավարություն. մի կողմ քաշվեց, որ ճանապարհը զիջի դռնապան կնոջը, իջեցրեց աթոռը, որ Մարթան նստի: Այնինչ համեստ էր իր ցանկությունը՝ արտահայտել ողջ երախտագիտությունը, որից ուռչում էր սիրտը և սիրով լցվում բոլոր մարդկանց նկատմամբ: Եթե չափազանց մեծ թեյադրամ էր տվել դռնապան կնոջը, ապա հենց այն պատճառով, որ չգիտեր ինչպես փոխհատուցեր իր հրճվանքի համար, և որ այդ առօրեական վարմունքով նա ասես երկրպագում էր այն աստվածությունը, որի պայծառ ժպիտը օծման ձիթայուղի պես փայլում էր նրա հայացքում: Ընդմիջմանը, երբ զբոսնում էին հայելազարդ ճեմասրահում, պատերն արտացոլում էին իր երջանկության պատկերը, դահլիճը լցնում իրենց պերճաշուք և երերուն կերպարանքներով՝ իր խոշոր ու մոայլ ուրվանկարը և Մարթան՝ իր գունագեղ շրջազգեստով: Իհարկե, իրեն դուր էր գալիս սեփական դեմքը՝ փոքր-ինչ փոս ընկած աչքերով և ծխախոտը դողդոջուն շրթունքների արանքում: Սակայն չէ՞ որ տղամարդու գեղեցկությունը նրա ներքին ու գործ-

նական ճշմարտությունների թարգմանն է: Նրա դեմքին ընդգծվում է այն, ինչին ընդունակ է: Եվ ամեն բան նա անում է հանուն կնոջ ունայն գեղեցկության: Մերսոն լավ էր հասկանում այս ամենը, զվարճանում էր իր սնափառությամբ և փայփայում իր մեջ թաքնված չար ոգիներին:

Վերադառնալով դահլիճ՝ մտածեց, որ ընդմիջմանը երբեք մենակ դուրս չի գա, կնախընտրի ծխել ու լսել թեթև երաժշտության սկավառակները, որ միացնում էին այդ պահերին: Սակայն այդ երեկո խաղը լավ էր ընթանում: Այն ձգձգելու և բորբոքելու պայմանները բարենպաստ էին: Այդ միջոցին Մարթան ողջունեց մի քանի կարգ իրենցից ետ նստած մի մարդու: Իսկ երբ Մերսոն ևս բարևեց, նրա շրթունքների արանքում մի թույլ ժպիտ նշմարեց: Նստեց, չնկատեց, որ Մարթան ձեռքը դրել էր իր ուսին, ցանկանալով ինչ-որ բան ասել, և կորցրեց պահի ուրախությունը՝ իբրև նոր ապացույց Մարթայի կողմից ընդունված իր իշխանության:

- Ո՞վ է,- հարցրեց նա, սպասելով, որ այդ «ով»-ը միանգամայն բնական կհամարվի և այդպես էլ կընդունվի: «Դու լավ գիտես, այդ մարդը...»:

- Ա՜,- ասաց Մարթան ու լռեց:

- Եվ ի՞նչ:

- Ուզում ես ամեն ինչ իմանա՞լ:

- Ոչ,- ասաց Մերսոն ու թեթևակի շրջվեց:

Տղամարդը, չփոխելով դեմքի արտահայտությունը, նայում էր Մարթայի ծոծրակին: Նա բավական սիրունատես էր, ալ կարմիր շրթունքներով, բայց անարտահայտիչ ու մի քիչ դուրս պրծած աչքերով: Մերսոն զգաց՝ ինչպես է արյունը տրոփում քունքերում: Այդ երազային միջավայրի փայլուն գույները, որի մեջ արդեն մի քանի ժամ ապրում էր նա, հանկարծ մրոտվեցին նրա սևացած հայացքի առջև: Իսկ ի՞նչ էր ուզում, որ իրեն ասեին: Համոզված էր, որ Մարթան պառկել էր այդ մարդու հետ: Եվ Մերսոյի տագնապն ահագնանում էր այն հարցից, թե ինչ է մտածում այդ մարդն իր մասին: Երևի նույնը, ինչ ինքն էր մտածել. «Կարող ես գլուխդ գովել...»: Այն մտքից, որ այդ մարդը նույն պահին կրկին տեսնում է

Մարթայի նույն շարժումները՝ ինչպես է ձեռքով փակում աչքերը հաճույքի պահին, ինչպես է ինքը նույնպես ջանում հեռացնել այդ ձեռքը, որպեսզի կնոջ աչքերում կարդա աստվածությունների փայլի ծնունդը, Մերսոն զգաց, որ ամեն բան փլուզվում է իր մեջ, և իր փակ կոպերի տակ ուռչում էին կատաղության հեծկլտանքները, մինչ զանգը ազդարարում էր կինոնկարի վերսկսումը: Նա մոռացել էր Մարթային, որը քիչ առաջ իր ուրախության աղբյուրն էր, իսկ այժմ՝ զայրույթի ողջ էությունը: Երկար ժամանակ Մերսոն չէր բացում աչքերը, հետո վերջապես նայեց էկրանին: Ինչ-որ մեքենա շուռ եկավ, և դահլիճի համատարած լռության մեջ նրա միայն մի անիվն էր շարունակում դանդաղ պտտվել, ասես իր բոլորակի մեջ քարշ տալով Մերսոյի չար սրտի ողջ ամոթն ու նվաստացումը: Բայց նրա մեջ որոշակիության ձգտումը ստիպում էր մոռանալ արժանապատվությունը:

- Մարթա, նա քո սիրեկա՞նն է եղել:

- Այո, բայց մի խանգարիր, հետաքրքիր կինոնկար է:

Այդ օրվանից Մերսոն կապվեց Մարթային: Ընդամենը մի քանի ամիս էր, ինչ ճանաչում էր: Հմայված էր նրա գեղեցկությամբ ու վայելչությամբ: Փոքր-ինչ լայն, բայց կանոնավոր դիմագծերի մեջ առանձնանում էին մեղրագույն աչքերը և այնքան մեծ հմտությամբ ներկված շրթունքները, որ քանդակված աստվածուհի էր թվում: Աչքերում փայլող տհասությունն է՛լ ավելի էր շեշտում նրա անմատչելիությունն ու զսպվածությունը: Մինչև այժմ ամեն անգամ, երբ Մերսոն կապվում էր որևէ կնոջ և առաջին պարտավորեցնող քայլերն էր ձեռնարկում, ջանալով, որ սերն ու հաճույքը ներդաշնակորեն արտահայտվեն, գիտակցելով նաև դրանց ողբերգականությունը, այդ էակին իր գրկում սեղմելուց առաջ արդեն մտածում էր բաժանման մասին: Բայց Մարթան հայտնվեց այն պահին, երբ Մերսոն ազատվում էր ամեն ինչից, նաև ինքն իրենից: Ազատության և անկախության գաղափարն ըմբռնում է միայն նա, ով դեռ հույս ունի: Իսկ Մերսոյի համար այլևս ոչինչ չկար: Եվ առաջին անգամ, երբ Մարթան նվաղեց իր գրկում, և մերձեցումից թալկացած դիմագծերում Մերսոն տեսավ, թե ինչպես են նկարած

ծաղիկների նման անկենդան շրթունքները շունչ առնելով ծգվում դեպի իրեն, չկարողացավ այդ կնոջ միջով տեսնել ապագան. իր տենչանքի ողջ ուժը սևեռեց նրա վրա ու լցվեց այդ կերպարանքով: Դեպի իրեն ծգվող այդ շրթունքներն ասես անհույզ աշխարհից եկած ու տենչանքից այտուցված պատգամ լինեին, որտեղ հագենալու էր իր հոգին: Դա հրաշք էր Մերսոյի համար: Սիրտը բաբախում էր խռովքից, որ քիչ մնար սեր անվաներ: Եվ երբ իր ատամների տակ զգաց նրանց հյութեղ ու առածգական մորքը, մի վայրագ ազատությամբ կծեց կատաղորեն: Իսկ հետո երկար ժամանակ փայփայում էր շրթունքներով: Հենց նույն օրը Մարթան դարձավ իր սիրուհին: Որոշ ժամանակ անց կատարյալ դաշնություն էր նրանց սիրո մեջ: Բայց նրան ավելի լավ ճանաչելով՝ Մերսոն քիչ-քիչ նրա մեջ կորցրեց իր ընթերցած ներընմբռնողական արտասովորությունը և հիմա, երբ խոնարհվում էր նրա դեմքին, ուզում էր, որ նորից ծնվեր այդ զգացումը: Իսկ Մարթան, ընտելացած Մերսոյի զսպվածությանն ու սառնությանը, այդպես էլ չհասկացավ, թե ինչու մարդաշատ տրամվայում Մերսոն մի օր ցանկացավ համբուրել իրեն: Ապշահար՝ նա պարզեց շրթունքները: Եվ Մերսոն համբուրեց իր նախընտրելի ձևով՝ սկզբում շոյելով շրթունքներով, ապա դանդաղ կծոտելով: «Քեզ ի՞նչ պատահեց»,- հարցրեց Մարթան: Նա ժպտաց Մարթայի սիրած, վաղանցուկ ժպիտով, որն ինքնին պատասխան էր արդեն: «Վատ բան եմ ուզում անել»,- ասաց՝ դարձյալ վերադառնալով իր լռությանը: Մերսոյի բառապաշարն էլ էր անհասկանալի Մարթային: Սիրուց հետո, երբ ազատագրված ու խոնջացած մարմնում նիրհում է հոգին՝ լի այնպիսի քնքուշ խանդաղատանքով, որ ցվիրում են սիրունիկ շանը, Մերսոն ասում էր. «Ողջո՞ւյն, տեսիլք»:

Մեքենագրուհի էր Մարթան: Մերսոյին չէր սիրում, բայց կապված էր այնքանով, որ նա հետաքրքրում էր իրեն և դուր էր գալիս: Այն օրից, երբ Էմանուելը, որին ներկայացրել էր Մերսոն, ասաց նրա մասին՝ «Գիտե՞ս, ինչ լավ տղա է Մերսոն: Գլխում շատ բան կա, բայց փակ է պահում: Դրա համար էլ շատերը սխալ կարծիք ունեն», Մարթան նրան սկսեց նայել հետաքրքրասիրությամբ: Եվ

քանի որ նա իրեն երջանկացնում էր սիրո մեջ, ավելին չէր պահանջում նրանից, առավելս հարմարվելով այդ լռակյաց ու անխոով սիրեկանին, որն իրեն ոչինչ չէր պարտադրում և ընդունում էր, երբ ինքն էր ցանկանում: Միայն մի քիչ նեղվում էր այդ մարդուց, որի մեջ թերություն չէր նկատում:

Սակայն այդ երեկո, կինոթատրոնից դուրս գալով, նա հասկացավ, որ Մերսոյի մեջ էլ կարելի է խոցելի տեղ գտնել: Ամբողջ երեկո լուռ մնաց: Քնեց նրա տանը: Այդ գիշեր նա իրեն չկպավ: Բայց այդ ժամանակից ի վեր սկսեց օգտագործել իր առավելությունը: Մերսոյին արդեն ասել էր, որ սիրեկաններ էր ունեցել: Ու հիմա կարող էր անհրաժեշտ փաստարկներ բերել:

Հաջորդ օրը, հակառակ իր սովորության, Մարթան աշխատանքից հետո գնաց նրա մոտ: Տեսնելով, որ քնած է, չարթնացրեց, նստեց մահճակալի եզրին: Մերսոն շապիկով էր: Վեր քշտված թևքերի տակից երևում էր մկանուտ ու արևաո նախաբազկի ճերմակ մնացած մաշկը: Ընչառությունը կանոնավոր էր, շնչում էր կրծքով ու փորով միաժամանակ: Հոնքերի արանքում երկու խորշոմ նրա դեմքին տալիս էին ուժի և համառության արտահայտություն, որը լավ ծանոթ էր իրեն: Մազերի գանգուրները ընկած էին թխավուն ճակատին, որի վրա ցցվել էր մի հաստ երակ: Այսպես՝ լայն թիկունքի վրա փռված, թևերը մարմնի երկայնքով ձգած, ոտքերից մեկը ծալած, նա նմանվում էր միայնակ ու կամակոր աստծու, որը վհատված ննջում էր օտար հողում: Նրա հյութեղ ու քնից ուռած շրթունքները գրգռեցին Մարթայի ցանկասիրությունը: Այդ պահին Մերսոն կիսաբաց արեց աչքերը և, կրկին փակելով, ասաց առանց բարկության.

- Չեմ սիրում, երբ քնած ժամանակ նայում են ինձ:

Մարթան ընկավ նրա վզովն ու համբուրեց: Մերսոն մնաց անշարժ:

- Օ՞, սիրելիս, ևս մի խենթություն:

- Ինձ սիրելիս մի ասա, քանի անգամ եմ ասել:

Մարթան ձգվեց նրա կողքին ու նայեց կիսադեմից:

- Ինքս ինձ հարցնում եմ՝ ում եմ նման այսպես:

Նա բարձրացրեց շալվարն ու շրջվեց մեջքով: Հաճախ կինոյում կամ թատրոնում Մարքաև անծանոթների մեջ հայտնաբերում էր Մերսոյի շարժուձևերը կամ դիմախաղը: Ասենք, այստեղ ևս, մեծ էր նրա ազդեցությունը, սակայն ուրիշների հետ համեմատելու այդ սովորությունը, որ հաճախ շոյում էր իրեն, այսօր զայրացնում էր: Մարքաև հպվեց նրա մեջքին և կրծքերի ու փորի միջով զգաց նրա քնաբույր ջերմությունը: Երեկոն շատ արագ էր իջնում, և սենյակը ընկղմվում էր խավարի մեջ; Շենքի ներսից լսվում էին ծեծված երեխայի հեծկլտանք, կատվի մլավոց, դռան շրխկոց: Փողոցի լույսերը պատշգամբ էին ընկել: Հատուկենտ տրամվայներ էին անցնում: Թաղամասում տարածված խորովածի և անիսօղու հոտը բարձրանում էր վեր ու սենյակը լցնում ծանր ժանտաբույրով:

Մարքաև զգաց, որ քունը հաղթում է իրեն:

- Ձայրացած տեսք ունես,- ասաց նա: - Արդեն երեկ... հենց դրա համար եմ եկել: Ոչինչ չունե՞ս ասելու:

Նա թափահարեց Մերսոյին: Վերջինս անշարժ էր: Արդեն թանձրացած մթության մեջ նայում էր զարդասեղանի տակ փայլող կոշիկներին:

- Գիտես,- ասաց Մարքաև,- երեկվա մարդը... դե, մի խոսքով, ես չափազանցրի, նա իմ սիրեկանը չի եղել:

- Հա՞:

- Դե, ոչ:

Մերսոն ոչինչ չասաց: Նա հիանալի պատկերացնում էր շարժումները, ժպիտները... Սեղմեց ատամները: Հետո վեր կացավ, բացեց պատուհանը և կրկին եկավ նստելու մահճակալին: Մարքաև փարվեց նրան, ձեռքը շապիկի կոճակների արանքից մտցրեց ներս ու շոյեց կուրծքը:

- Քանի՞ սիրեկան ես ունեցել,- վերջապես հարցրեց նա:

- Գլուխ ես տանում:

Մերսոն լռեց:

- Մի տասնյակի չափ,- ասաց Մարքաև:

Քնից արթնանալով՝ Մերսոն ծխելու պահանջ էր զգում:

- Ես ճանաչո՞ւմ եմ դրանց,- հարցրեց նա՝ հանելով ծխախոտատուփը:

Այժմ Մարթայի դեմքի փոխարեն նա տեսնում էր միայն ինչ-որ սպիտակ բծեր: «Ինչպես սիրո մեջ»,- մտածեց նա:

- Մի քանիսին՝ այո: Մեր թաղեցիներին:

Գլուխն իր ուսին էր քսում և խոսում աղջնակի ձայնով, որը միշտ նվաղեցնում էր Մերսոյին:

- Լսիր, ճստիկ,- ասաց նա՝ վառելով ծխախոտը: - Հասկացի՛ր ինձ: Հիմա ինձ կխոստանաս ասել նրանց անունները: Իսկ որոնց չեմ ճանաչում, խոստացիր ցույց տալ, երբ հանդիպենք:

Մարթան ընկրկեց.

- Օ՞, ոչ:

Պատուհանների տակ մի մեքենա վայրենաբար ազդանշան տվեց, հետո նորից, ապա երկու անգամ շատ երկար: Գիշերվա մեջ հնչեց տրամվայի զնգզնգոցը: Զարդասեղանի մարմարի վրա զարթուցիչն անտարբեր թիկ-թակ էր անում: Մերսոն մի կերպ ասաց.

- Հարցնում եմ, որովհետև գիտեմ ինձ: Եթե չիմանամ, ամեն մեկին հանդիպելիս նույն բանը կլինի. քեզ եմ հարցաքննելու, ենթադրություններ եմ անելու: Այս է: Երևակայությունս շատ ուժեղ է աշխատում: Չգիտեմ, հասկանո՞ւմ ես ինձ, թե՞ ոչ:

Մարթան հիանալի էր հասկանում: Ասաց անունները: Միայն մեկն էր անծանոթ Մերսոյին: Վերջինը մի ջահել տղա էր, որին ճանաչում էր: Դրա մասին սկսեց մտածել, որովհետև գիտեր, որ գեղեցիկ է, և կանայք գժվում են նրա համար: Սիրո մեջ Մերսոյին ամենից շատ ապշեցնում էր այն, թե ինչպես կարող էր կինը հեշտությամբ, մանավանդ առաջին անգամ, համաձայնել սոսկալի մերձեցմանը և իր ընդերքում ընդունել անծանոթի մարմնի անդամը: Նման անփութության, անուշադրության և գլխապտույտի մեջ էր նա ըմբռնում սիրո բորբոքիչ ու զազրելի իշխանությունը: Եվ հենց այդ մերձեցումն էր նախևառաջ պատկերացնում Մարթայի և նրա սիրեկանի միջև: Այդ պահին Մարթան նստեց մահճակալի եզրին, ոտքը ոտքին գցեց: Քարձր կրունկներն ընկան ցած. մեկը՝

ուղիղ, մյուսը՝ կողքի: Մերսոն զգաց, որ կոկորդը սեղմվում է: Ստամոքսում ինչ-որ բան էր ճմլվում:

- Ռընեի հե՞տ էլ էիր այդպես անում:

Մարթան բարձրացրեց աչքերը:

- Ի՞նչ ես գլուխդ մտցրել: Նրա հետ մենք միայն մի անգամ ենք պառկել:

- Ա՜,- ասաց Մերսոն:

- Եվ ասեմ, որ կոշիկներս անգամ չէի հանել:

Մերսոն վեր կացավ: Նրան պատկերացնում էր իր նման, անկողնում փռված, շորերը հագին, տրված ամբողջովին, անմնացորդ: Գոռաց. «Փակի՛ր» ու մոտեցավ պատուհանին:

- Օ՜, սիրելիս,- ասաց Մարթան, որ նստած էր մահճակալին, ոտքերը գետնին, առանց կոշիկների, միայն գուլպաներով:

Մերսոն խաղաղվեց՝ դիտելով լույսերի խաղը ռելսերի վրա: Երբեք այդքան հարազատ չէր զգացել Մարթային: Եվ միաժամանակ գիտակցելով, որ չափից ավելի է բացվել նրա համար, գոռոզամտությունից արյունն աչքերը կոխեց:

Վերադարձավ Մարթայի մոտ: Բթով ու ծալած ցուցամատով բռնեց պարանոցի տաք մաշկը ականջի տակ: Ժպտաց.

- Իսկ այդ Զագրևսն ո՞վ է, միակը, որին չեմ ճանաչում:

- Նրան,- ասաց Մարթան ծիծաղելով,- նրան դեռ հանդիպում եմ ես:

Մերսոյի մատներն ավելի ուժեղ սեղմեցին մաշկը:

- Նա իմ առաջինն է եղել, հասկանո՞ւմ ես: Այն ժամանակ ես շատ երիտասարդ էի: Մի քիչ մեծ էր ինձնից: Հիմա ոտքեր չունի: Լրիվ մենակ է: Դե, ես էլ մեկ-մեկ այցելում եմ նրան: Լավ մարդ է, կրթված: Ամբողջ օրը կարդում է: Այն ժամանակ նա ուսանող էր: Շատ ուրախ է, իսկական տիպ: Հա, քեզ նման էլ ինձ ասում է. «Եկ այստեղ, տեսիլք»:

Մերսոն ընկավ մտածմունքի մեջ: Բաց թողեց Մարթային, որը փլվեց անկողնում ու փակեց աչքերը: Մեկ րոպե անց մոտ նստեց ու, կռանալով նրա կիսախուփ շրթունքների վրա, սկսեց փնտրել իր կենդանական աստվածության նշանները և մոռացումը տառա-

պանքի, որ քամահրելի էր համարում: Բայց ետ քաշվեց շրթունքներից՝ չցանկանալով ավելի հեռուն գնալ:

Երբ ճանապարհում էր Մարթայինն, նա պատմեց Զագրևսի մասին.

- Նրան պատմել եմ քո մասին: Ասել եմ, որ սիրեցյալս շատ գեղեցիկ է և ուժեղ: Ասաց, որ կուզենար ծանոթանալ քեզ հետ: Որովհետև, ինչպես ինքն ասաց, գեղեցիկ մարմինն օգնում է, որ ավելի հեշտ շնչես:

- Եվս մի բարդույթավորված,- ասաց Մերսոն:

Մարթան ուզում էր հանդոյանալ Մերսոյին, և, ըստ իրեն, պահը հարմար էր խանդի մի փոքր տեսարան սարքելու համար, որ մտաղիր էր մի կերպ պարտադրել նրան:

- Օ՜, բայց ավելի քիչ, քան քո ընկերուհիները:

- Ի՞նչ ընկերուհիներ,- ասաց Մերսոն՝ անկեղծորեն զարմացած:

- Փոքրիկ իշուկները, չգիտե՞ս:

Փոքրիկ իշուկները Ռոզն ու Քլերն էին, թունիսցի ծանոթ ուսանողուհիները, որոնց հետ Մերսոն պահպանում էր իր կյանքում միակ նամակագրական կապը:

Նա ժպտաց ու ձեռքը դրեց Մարթայի ծոծրակին: Երկար քայլեցին: Մարթան ապրում էր Խուսավարումների հրապարակի մոտ: Փողոցը երկար էր ու փայլում էր իր վերին հարկերի բոլոր պատուհաններով, այնինչ ներքևի մասը, որտեղ փակ էին խանութները, մութ էր ու չարագուշակ:

- Ասա, սիրելիս, դու չե՞ս սիրում այդ իշուկներին, չէ՞:

- Օ՜, ոչ,- ասաց Մերսոն:

Քայլում էին: Մերսոյի ձեռքը, որ գրկել էր Մարթայի պարանոցը, լցված էր մազերի ջերմությամբ:

- Դու ինձ ես սիրում, չէ՞,- հարցրեց Մարթան առանց այլևայլության:

Մերսոն միանգամից աշխուժացավ և սկսեց հռհռալ:

- Ա՜յ քեզ լուրջ հարց:

- Պատասխանի՛ր:

- Բայց մեր տարիքում չեն սիրում: Իրար դուր են գալիս, և վերջ: Ավելի ուշ, երբ արդեն ծեր են և անկարող, կարող են սիրել: Իսկ մեր տարիքում միայն կարծում ես, թե սիրում ես: Ահա և բոլորը:

Մարթան կարծես թե տխրեց: Բայց երբ Մերսոն համբուրեց նրան, ասաց.

- Ցտեսություն, սիրելիս:

Մերսոն վերադարձավ մութ փողոցներով: Արագ-արագ էր քայլում՝ զգալով ազդրերի մկանների խաղը շալվարի հարթ կարի երկայնքով: Հիշեց Զագրևսին: Մտածեց նրա անդամահատված ոտքերի մասին: Ցանկություն առաջացավ ծանոթանալ նրա հետ: Որոշեց խնդրել Մարթային՝ ներկայացնել իրեն:

Երբ առաջին անգամ Մերսոն տեսավ Զագրևսին, սաստիկ վրդովվեց: Սակայն Զագրևսը փորձեց մեղմել նեղվածության զգացումը, որ կարող են ունենալ նույն կնոջ երկու սիրեկանները նրա ներկայությամբ հանդիպելիս: Այդ նպատակով փորձեց Մերսոյին իրեն համախոհ դարձնել. Մարթային «վավ աղջիկ» անվանեց, սկսեց բարձրաձայն ծիծաղել: Մերսոն մնաց անդրդվելի: Հենց մենակ մնացին, իր կարծիքը կոպտորեն հայտնեց Մարթային:

- Տանել չեմ կարող «կիսվողներին»: Նյարդայնանում եմ դրանցից: Իսկ առավել ատում եմ այն կիսվողներին, որոնք մեծ-մեծ են բրդում:

- Է՞, դու էլ,- ասաց Մարթան, որ ոչինչ չէր հասկացել,- եթե քեզ լսե՞նք...

Բայց Զագրևսի երիտասարդ քրքիջը, որը սկզբում նրա տանը գրգռել էր իրեն, այժմ գրավել էր իր ուշադրությունն ու շարժել հետաքրքրասիրությունը: Զագրևսին տեսնելով՝ հօդս ցնդեց նաև անհաջող սքողված խանդը, որը Մերսոյին ուղեկցում էր իր դատողությունների մեջ: Մարթային, որն ամենայն անմեղությամբ վերհիշում էր Զագրևսի հետ անցկացրած նախկին օրերը, խորհուրդ տվեց.

- Ժամանակդ զուր մի՛ վատնիր: Ես չեմ կարող խանդել մեկին, որը ոտք չունի: Ամենաշատը կարող եմ պատկերացնել, թե ինչպես

է նա մարմնիդ վրայով սողում հսկայական որդի նման: Իսկ դա, ինքդ էլ ես հասկանում, կարող է ինձ ընդամենը զվարճացնել: Այնպես որ, հրեշտակս, հանգիստ պահիր քեզ:

Իսկ հետո մենակ եկավ Զագրևսի մոտ: Վերջինս խոսում էր երկար ու մեծ արագությամբ: Ծիծաղում էր: Հետո լռեց: Մերսոն իրեն լավ էր զգում Զագրևսի մեծ սենյակում, նրա գրքերի, մարդկյան պղնձեղենի և աշխատասեղանին դրված քմերական Բուդդայի խոհական դեմքի վրա արտացոլվող կրակի լեզվակների միջև: Լսում էր Զագրևսին և ապշում, որ հաշմանդամը խոսելուց առաջ մտածում էր: Եվ սակայն նրա մեջ ամփոփված կիրքը, բոցկլտացող կենսահուրը, որով բռնկվում էր այդ ծիծաղելի կոճղը, բավական էր, որ գրավեր Մերսոյին և նրա մեջ ծներ ինչ-որ բան, որն ինքն անփութորեն կարող էր համարել բարեկամություն:

Այդ կիրակի, ետմիջօրեին, երկար խոսելուց ու կատակելուց հետո Ռոլան Զագրևսը լուռ նստած էր բուխարիկի մոտ, իր անվավոր մեծ բազկաթոռում՝ պարուրված սպիտակ ծածկոցներով: Գրապահարանին հենված՝ Մերսոն պատուհանի սպիտակ վարագույրների արանքից նայում էր երկնքին ու շրջակա դաշտերին: Նա եկել էր մաղող անձրևի տակ և վախենալով, թե շուտ տեղ կհասնի, մի ժամ թափառել էր շրջակայքում: Մռայլ եղանակ էր, ու թեև Մերսոն չէր լսում քամու ծայնը, բայց տեսնում էր, թե ծառերն ու սաղարթներն ինչպես են լուռ գալարվում փոքրիկ հովտում: Փողոցով անցավ կաթնավաճառի սայլը՝ երկաթի ու փայտի ուժգին դղրդյունով: Դրանից գրեթե անմիջապես հետո ուժեղ անձրև սկսվեց և հեղեղեց պատուհանները: Ապակիների վրայով թանձր ձեթի պես հոսող ջուրը, ձիու սմբակների զրնգուն ու հեռավոր դոփդոփյունը՝ այժմ արդեն ավելի զգալի, քան սայլի ճռինչը, խուլ ու երկարատև տեղատարափը, այդ մարդ-սկահակը կրակի առջև, սենյակի լռությունը, ամեն բան անցյալի կերպարանքն էր ստանում, ու նրա տարտամ մելամաղձը թափանցում էր Մերսոյի հոգին, ինչպես քիչ առաջ ջուրը՝ իր թաց կոշիկների մեջ, ինչպես ցուրտը՝ բարակ կտորով մի կերպ պատսպարված ծնկների մեջ: Մի քանի րոպե առաջ գոլորշիացած ջուրը, որ ոչ մառախուղ էր, ոչ անձրև, թափվում էր հիմա. ասես մի թեթև ձեռք լվանում էր նրա դեմքը ու շղարշում խոր, սևածիր աչքերը: Այժմ նա նայում էր երկնքի վրայով անընդմեջ անցնող թուխ ամպերին, որոնք արագ անհետանում էին և գրեթե իսկույն փոխարինվում ուրիշներով: Տաբատի ծալքը չքացել էր, և նրա հետ էլ ջերմությունն ու վստահությունը, որ բնականոն մարդը կրում է իր մեջ և ապրում իր համար ստեղծված աշխարհում: Այդ պատճառով էր, որ նա դարձյալ մոտեցավ կրակին ու նստեց Զագրևսի դիմաց՝ բարձր բուխարիկի փոքրիկ ստվերում, սակայն աչքերը շարունակում էին սևեռուն նայել երկնքին: Զագրևսը նայեց նրան, շրջեց հայացքը ու կրակի

մեջ գցեց թղթի գնդիկը, որ պահել էր ձախ ձեռքում: Այդ ծիծաղելի շարժման մեջ Մերսոն որսաց այն տհաճ զգացումը, որ իրեն ներշնչում էր այդ միայն կիսով չափ կենդանի մարմինը: Զագրևսը ժպտաց, բայց ոչինչ չասաց: Եվ կտրուկ շրջվեց նրա կողմը: Բոցի լեզվակները փայլփլում էին նրա միայն ձախ այտի վրա, սակայն և՛ ձայնի, և՛ հայացքի մեջ ինչ-որ ջերմություն էր զգացվում:

- Հոգնած տեսք ունես,- ասաց նա:

Լոկ պատկառանքից դրդված՝ Մերսոն պատասխանեց.

- Այո, ձանձրանում եմ:

Որոշ ժամանակ անց վեր կացավ, մոտեցավ պատուհանին և դուրս նայելով ավելացրեց.

- Ուզում եմ ամուսնանալ, ինքնասպան լինել կամ բաժանորդագրվել «Իլյուստրասիոն» հանդեսը: Դե, որևէ հիմար բան անել:

Զագրևսը ժպտաց.

- Աղքատ եք, Մերսո: Դրանով է բացատրվում ձեր տաղտկության կեսը: Մյուս կեսի համար դուք պարտական եք այն անհեթեթ համերաշխությանը, որով վերաբերվում եք աղքատությանը:

Մեջքով շրջված՝ Մերսոն նայում էր քամուց ճոճվող ծառերին: Զագրևսը կոկեց ազդրերին գցած ծածկոցը:

- Գիտե՞ք ինչ: Մարդն իր մասին դատում է միշտ այն հավասարակշռությամբ, որ կարողանում է հաստատել իր մարմնական կարիքների ու հոգեկան պահանջների միջև: Դուք հիմա դատում եք ձեզ, Մերսո, և դատում եք նողկալի ձևով: Եվ վատ եք ապրում՝ բարբարոսի նման:

Նա շրջեց գլուխը Պատրիսի կողմը:

- Մեքենա վարել սիրո՞ւմ եք, չէ՞:

- Այո:

- Իսկ կանա՞ց:

- Եթե գեղեցիկ են:

- Հենց դա էի ուզում ասել:

Զագրևսը շուռ եկավ կրակի կողմը:

Մի պահ անց շարունակեց. «Այս ամենը...»: Մերսոն շրջվեց և, հենվելով ապակյա շրջանակներին, որոնք ճկվում էին իր ետևում,

սպասեց նախադասության ավարտին: Զագրևսը լուռ էր: Վաղեկ մի ճանճ բզզաց ապակու վրա: Մերսոն շրջվեց, ձեռքով բանտեց ճանճին, ապա բաց թողեց: Զագրևսը նայեց նրան և վարանելով ասաց.

- Ես լուրջ չեմ սիրում խոսել, որովհետև միայն մեկ բան կա, որի շուրջ կարելի է խոսել՝ կյանքիդ արդարացումը: Բայց չգիտեմ, թե իմ աչքում ինչպես արդարացնեմ հաշվված ոտքերս:

- Ես էլ չգիտեմ,- ասաց Մերսոն առանց շրջվելու:

Հանկարծ Զագրևսը լիաթոք քրքջաց.

- Շնորհակալություն: Դուք ինձ զրկում եք պատրանքներից:

Հետո փոխեց ձայնի հնչերանգը.

- Ձեր խստությունն արդարացի է: Սակայն մի բան կուզենայի ձեզ ասել...

Եվ լրջացած՝ լռեց: Մերսոն նստեց նրա դիմաց:

- Լսեք,- շարունակեց Զագրևսը: - Եվ նայեք ինձ: Բնական պահանջներս բավարարելու համար ինձ օգնում են, լողացնում, սրբում: Ավելին, ես վճարում եմ դրա համար: Բայց ես երբեք ոչինչ չեմ ձեռնարկի կյանքս կրճատելու համար, որին այնքան հավատում եմ: Եվ դեռ վատթարագույնին էլ կհամաձայնեմ՝ լինել կույր, խուլ, համր, ինչ կուզեք, միայն թե որովայնումս զգամ կյանքի այս անորոշ ու բորբ հուրը, այսինքն՝ որ ես դեռ կամ և ողջ եմ: Իմ միակ մտահոգությունը պետք է լինի՝ ինչպես երախտապարտ լինել կյանքին, որն ինձ թույլ է տալիս դեռևս այրվել:

Զագրևսը ետ նայեց: Շնչակտուր էր մի քիչ: Դեմքը գրեթե չէր երևում: Միայն ծածկոցը կզակի վրա մերթընդմերթ թողնում էր իր արտացոլանքը: Հետո ավելացրեց.

- Իսկ դուք, Մերսո, ունենալով այդպիսի մարմին, պարտավոր եք ապրել և երջանիկ լինել:

- Մի՛ ծիծաղեցրեք ինձ,- ասաց Մերսոն: - Ութ ժամ գրասենյակում լինելուց հետո...Ա՞յ, եթե ազատ լինեի:

Խոսակցության ընթացքում նա աշխուժացել էր: Եվ ինչպես երբեմն պատահում էր, նորից համակվել էր հույսով, այսօր առավել մեծ հույսով, քանզի զգում էր, որ աջակցում են իրեն: Վստահութ-

յուն էր ձեռք բերում, որ վերջապես կարող է վստահություն ներշնչել: Մի քիչ հանդարտվելով՝ սկսեց ճզմել ծխախոտը և խոսեց ավելի մեղմորեն.

- Մի քանի տարի առաջ ես ամեն ինչ ունեի, ինձ հետ խոսում էին իմ կյանքի, ապագայի մասին: Ես ասում էի՝ այո: Նույնիսկ արեցի այն, ինչ պահանջեցին ինձնից: Բայց արդեն այդ ժամանակ ամեն ինչ օտար էր ինձ: Հարմարվել իմ անանձնականությանը՝ ահա թե ինչն էր ինձ գրավում: Չլինել երջանիկ, այլ՝ «ընդհակառակը»: Ես վատ եմ բացատրում, բայց դո՛ւք, Զագրևս, կհասկանաք ինձ:

- Այո,- ասաց վերջինս:

- Հիմա էլ եթե ժամանակ ունենայի... լրիվ կտրվեի ազատությանը: Դրանից ավելի, ինչ որ պատահեր ինձ, կլիներ, ասենք, ինչպես անձրևը գլաքարի վրա. միայն կզովացներ, իսկ դա արդեն շատ գեղեցիկ է: Իսկ մեկ օր անց այն կշիկանար արևի տակ: Ինձ միշտ թվացել է, թե դա է երջանկությունը:

Զագրևսը խաչել էր ձեռքերը: Տիրող լռության մեջ անձրևն ասես կրկնապատկել էր իր ուժը, և ամպերը փքվեցին աղոտ մառախուղի մեջ: Սենյակն ավելի մթնեց. թվում էր, թե երկինքն այստեղ էր դատարկում աղջամուղջի ու լռության իր ամբողջ բեռը: Եվ հաշմանդամն ասաց հետաքրքրասիրությամբ.

- Մարմինը միշտ ունի այն իդեալը, որին արժանի է: Գլաքարի իդեալը պահելու համար, համարձակվում եմ ասել, հարկավոր է ունենալ կիսաստծո մարմին:

- Ճիշտ է,- ասաց Մերսոն մի քիչ զարմացած,- սակայն չպետք է չափազանցնել: Պարզապես ես շատ եմ սպորտով զբաղվել, և վերջ: Եվ կարող եմ հեռուն գնալ հեշտանքի մեջ:

Զագրևսը մտորում էր:

- Այո,- ասաց նա: - Եվ ավելի լավ ձեզ համար: Ճանաչել սեփական մարմնի սահմանները՝ սա է իսկական հոգեբանությունը: Ասենք, դա ոչ մի նշանակություն չունի: Մենք ժամանակ չունենք, որպեսզի լինենք մենք ինքներս: Մեզ ժամանակ է տրված միայն երջանիկ լինելու համար: Իսկ չէի՞ք բարեհաճի ինձ համար ճշտել

անանձնականության ծեր գաղափարը:

- Ոչ,- ասաց Մերսոն ու լռեց:

Զագրևսը թեյից մի կում արեց և ետ հրեց լիքը բաժակը: Նա շատ քիչ էր խմում, որպեսզի օրը գոնե մեկ անգամ միզի: Կամքի ուժով նրան գրեթե միշտ հաջողվում էր նվազագույնի հասցնել նվաստացումների բեռը, որ ամեն մի նոր օր հրամցնում էր իրեն: «Փոքրիկ նվաճումներ չեն լինում: Սա ևս բարձրագույն ցուցանիշ է, ինչպես մյուսները»,- ասաց մի օր Մերսոյին: Ջրի մի քանի կաթիլ ընկավ ծխնելույզի մեջ: Կրակը թշշաց: Անձրևը կրկնապատկեց հարվածները ապակիների վրա: Ինչ-որ տեղ շրխկաց դուռը: Դիմացը՝ ճանապարհի վրա, փայլուն առնետների նման մեքենաներ էին սլանում: Դրանցից մեկը երկար ազդանշան տվեց, և ամբողջ հովիտը լցվեց այդ չարագուշակ ձայնով, որն ասես էլ ավելի լայնացրեց աշխարհի խոնավ տարածությունները, այնպես, որ հիշողությունն անգամ այդ աշխարհի մասին Մերսոյի համար դարձավ երկնային լռության ու թախծի բաղադրամասը:

- Ներեցեք, Զագրևս, կան բաներ, որոնց շուրջ վաղուց չեմ խոսել, և հիմա չգիտեմ կամ լավ չգիտեմ՝ ինչից և ինչպես սկսել: Երբ խորհում եմ կյանքի, նրա խորհրդավոր իմաստի մասին, թվում է՝ արցունքները խեղդում են ինձ: Ինչպես այս երկնքում՝ միաժամանակ և՛ անձրև է, և՛ արև, և՛ կեսօր, և՛ կեսգիշեր: Է՞ն, Զագրևս, մտածում եմ շրթունքների մասին, որ համբուրել եմ, խեղճ մանկիկի մասին, որ եղել եմ, խենթ կյանքի ու սնափառ նկրտումների մասին, որոնք երբեմն համակում էին ինձ: Այդ բոլորը միասին ես եմ: Վստահ եմ, որ կլինեն պահեր, երբ չեք ճանաչի ինձ: Ծայրահեղ՝ դժբախտության մեջ, չափազուրկ՝ երջանկության ժամին, չգիտեմ՝ ինչպես բացատրեմ:

- Ուրեմն, միաժամանակ մի քանի դե՞ր եք խաղում:

- Այո, բայց ոչ սիրողաբար,- ասաց Մերսոն: - Ամեն անգամ, երբ կշռադատում եմ իմ մեջ փոթորկվող ցավն ու ուրախությունը, համոզվում եմ, որ այն դերը, որ խաղում եմ այդ պահին, և այն էլ այդպիսի ոգևորությամբ, ամենալուրջն է, ամենահուզիչը:

Զագրևսը ժպտում էր:

- Ուրեմն, ինչ-որ բանով զբաղվո՞ւմ եք:

- Ապրուստս եմ վաստակում,- կտրուկ պատասխանեց Մերսոն:

- Աշխատանքային այդ ութ ժամը, որ ուրիշների համար տանելի են, ինձ միայն խանգարում են:

Լռեց ու վառեց մինչ այդ մատների արանքում պահած ծխախոտը:

- Այսուհանդերձ,- ասաց նա՝ չհասցնելով հանգցնել լուցկին,- քե ունենայի բավական ուժ ու համբերություն...

Փչեց լուցկին ու ձախ ձեռքի երեսին ճզմեց լուցկու ածխացած ծայրը:

- Ես գիտեմ՝ կյանքում ինչ աստիճանի կհասնեմ: Փորձ չեմ անի կյանքիս հետ... Կլինեմ իմ կյանքի փորձը... Այո, ես լավ գիտեմ, քե ինչ կիրք կարող է ինձ բորբոքել: Առաջ շատ երիտասարդ էի: Խուսափում էի ծայրահեղություններից: Այսօր հասկացել եմ, որ գործել, սիրել, տառապել՝ նշանակում է ապրել, սակայն ապրել այնքանով, որքանով դյուրամատչելի ես և ընդունում ես քո ճակատագիրը իբրև ուրախությունների ու կրքերի միակ արտահայտություն, որը նույնն է բոլորի համար:

- Այո,- ասաց Ջագրևսը,- բայց չեք կարող այդպես ապրել, եթե աշխատում եք...

- Իհարկե՝ ոչ, որովհետև անընդհատ ընդվզում եմ, իսկ դա շատ վատ է:

Ջագրևսը լռեց: Անձրևը դադարել էր, բայց երկնքի ամպերի փոխարեն հայտնվել էր գիշերը, և սենյակն այժմ գրեթե ամբողջովին մթության մեջ էր: Միայն կրակն էր իր ցոլքերը գցում հաշմանդամի ու Մերսոյի փայլուն դեմքերի վրա: Երկար լռելուց հետո Ջագրևսը նայեց Պատրիսին ու ասաց.

- Մեծ վիշտ ու տառապանք է սպասվում նրանց, ովքեր սիրում են ձեզ...- և զարմացած կանգ առավ, որովհետև Մերսոն հանկարծ վեր թռավ և, դեմքն արդեն մթության մեջ, կատաղորեն նետեց.

- Նրանց սերն ինձ չի պարտավորեցնում:

- Ճիշտ է,- ասաց Ջագրևսը,- ես միայն արձանագրում եմ. մի օր

դուք մենակ կմնաք, ահա թե ինչ: Բայց նստեք ու լսեք ինձ: Ձեր ասածն ինձ ապշեցրեց: Հատկապես մի բան, որը հավաստում է այն ամենը, ինչ իմ մարդկային փորձը ուսուցանել է ինձ: Ես սիրում եմ ձեզ, Մերսո: Թերևս ձեր մարմնի համար: Նա է ձեզ սովորեցրել այդ ամենը: Այսօր ինձ թվում է, թե ձեզ հետ կարող եմ բացեիբաց խոսել այդ մասին:

Մերսոն դանդաղ նստեց, և նրա դեմքը նորից սուզվեց լույսի մեջ. այն դարձել էր ավելի կարմրավուն ու մարմրուն: Հանկարծ պատուհանի քառակուսու մեջ, մետաքսյա վարագույրների ետևում գիշերն ասես պատռվեց: Ինչ-որ բան էր արձակվում ապակիների ետևում: Կաթնագույն լույսը թափանցեց սենյակ, և Մերսոն բողիսատվայի հեգնական ու անխոս շրթունքների և փորագրված պղնձյա իրերի վրա զգաց աստղալից գիշերների և լուսնալույսի մտերմիկ ու վաղանցուկ դեմքը, որ սիրում էր այնքան: Ասես գիշերը թոթափել էր իր ամպային աստառը և այժմ շողում էր հանդարտ փայլով: Ճանապարհի վրա մեքենաները սլանում էին ավելի դանդաղ: Հովտի խորքում մի հանկարծակի խլրտոց թռչնակներին տրամադրեց քնելու: Տաճ առջևից ոտնաձայներ էին լսվում, և այդ գիշերվա մեջ աշխարհի վրա ծորացող կաթի ծլթոցի նման ձայները հնչում էին ավելի լայնածավալ ու ավելի հստակ: Կարմրացող կրակի, զարթուցիչի թրթռոցի և իրեն շրջապատող մտերմիկ իրերի խորհրդավոր իրականության մեջ հյուսվում էր մի վաղանցուկ բանաստեղծություն, որը Մերսոյին տրամադրում էր սիրով ու վստահությամբ՝ մեկ ուրիշ սրտից ընդունելու այն ամենը, ինչի մասին խոսում էր Զագրևսը: Նա ավելի խորն ընկղմվեց բազկաթոռի մեջ և, հայացքը հառած երկնքին, ականջ դրեց Զագրևսի տարօրինակ պատմությանը:

- Վստահ եմ,- սկսեց նա,- որ երջանիկ չես կարող լինել առանց փողի: Միայն ու միայն նրա օգնությամբ: Ես չեմ ընդունում ո՛չ հեշտ ճանապարհ, ո՛չ ռոմանտիզմ: Սիրում եմ ինքս ինձ հաշիվ տալ: Այսպես, վերնախավային որոշ ընտրյալներ, տառապելով մի տեսակ հոգևոր սնոբիզմից, կարծում են, թե դրամն անհրաժեշտություն չէ երջանիկ լինելու համար: Դա հիմարություն է, կեղծիք

և ինչ-որ չափով թուլամորթություն:

Հասկանո՞ւմ եք, Մերսո, լավ պայմաններում ծնվածի համար մեծ դժվարություն չէ երջանիկ լինելը: Բավական է միայն ստանձնել ճակատագիրը ոչ թե ինքնահրաժարման ճանապարհով, ինչպես թյուրիմացաբար կարծել են մեծ մարդկանցից շատերը, այլ երջանկության ձգտումով: Միայն թե երջանիկ դառնալու համար ժամանակ է պետք: Շատ ժամանակ: Երջանկությունը՝ ինքը, երկարատև համբերություն է: Մենք շատ հաճախ կյանքը վատնում ենք փող վաստակելու վրա, այնինչ պետք է դրամի միջոցով ժամանակ շահել: Հենց այս է խնդիրը, որ միշտ հետաքրքրել է ինձ: Որոշակի խնդիր է, միանգամայն հստակ:

Ջագրևսը կանգ առավ ու փակեց աչքերը: Մերսոն համառորեն նայում էր երկնքին: Մի պահ ճանապարհից ու դաշտերից հասնող ձայներն ավելի որոշակի դարձան, և Ջագրևսը շարունակեց առանց շտապելու.

- Օ՜, ես հիանալի հասկանում եմ, որ հարուստների մեծ մասը չունի երջանկության զգացողություն: Բայց հարցն այդ չէ: Փող ունենալ՝ նշանակում է ժամանակ ունենալ: Այս է իմ միակ ելակետը: Ժամանակը գնվում է: Ամեն ինչ գնվում է: Լինել կամ դառնալ հարուստ՝ նշանակում է ժամանակ ունենալ երջանիկ լինելու համար, եթե արժանի ես:

Նա նայեց Պատրիսին:

- Քսանհինգ տարեկանում ես արդեն հասկացել էի, որ յուրաքանչյուր էակ, որն ունի երջանկության հասկացողությունը, ձգտումն ու պահանջը, ունի նաև հարուստ լինելու իրավունքը: Երջանկության պահանջը, ինձ թվում է, ամենաազնիվն է մարդկային սրտում եղած զգացումներից: Իմ աչքում ամեն բան սրանով է արդարանում: Միայն թե պետք է մաքուր սիրտ ունենալ:

Ջագրևսը, որն անընդհատ նայում էր Մերսոյին, հանկարծ սկսեց ավելի դանդաղ խոսել, սառը, կոպիտ հնչերանգով՝ ասես ցանկանալով Մերսոյին դուրս բերել նրա թվացյալ ցրվածությունից:

- Քսանհինգ տարեկանից սկսեցի հարստություն կուտակել:

Չընկրկեցի խարդախության առջև: Ոչ մի բանի առջև կանգ չառա: Մի քանի տարուց արդեն ունեի առձեռն հարստություն: Մոտ երկու միլիոն, Մերսո, կարո՞ղ եք պատկերացնել: Իմ առջև բացվել էր աշխարհը, և նրա հետ էլ՝ կյանքը, որ երազել էի մեծության ու մոլեգնության պահերին:

Որոշ ժամանակ անց Զագրևսը շարունակեց, բայց ավելի խուլ ձայնով.

- Ի՞նչ կյանք կունենայի, Մերսո, եթե վթարը չլիներ, որի պատճառով զրկվեցի ոտքերից: Ոչինչ չկարողացա ավարտել... Իսկ հիմա՞: Հասկանո՞ւմ եք, ես չեմ ուզում ապրել թերի կյանքով: Քսան տարուց ի վեր իմ վաղն այստեղ է, ինձ մոտ: Ես համեստ եմ ապրել, շատ քիչ եմ ծախսել:

Կոշտ ձեռքերով շփեց կոպերն ու ավելացրեց ավելի ցածր ձայնով.

- Կյանքը չպետք է աղտոտել հաշմանդամի համբույրներով:

Այդ պահին Զագրևսը բացել էր փոքրիկ սնդուկը, որ դրված էր բուխարիկին շատ մոտ, և ցույց տվեց գորշացած պողպատե մի մեծ տուփ՝ իր բանալիով: Սպիտակ ծրար ու մի սև, ծանր ատրճանակ տուփի վրա: Մերսոյի ակամա հետաքրքրասեր հայացքին Զագրևսը պատասխանեց ժպիտով: Ամեն ինչ շատ պարզ էր: Այն օրերին, երբ շատ խորն էր զգում իրեն իսկական կյանքից զրկած ողբերգությունը, իր առջև էր դնում նամակը, որի վրա չկար ամսաթիվ, և որն արտահայտում էր մեռնելու իր ցանկությունը, հետո գենքը մոտեցնում ու հպում էր քունքին՝ փորձելով այտերի տենդը մեղմել երկաթի սառնությամբ: Այսպես մնում էր ահագին ժամանակ, մատները տանում-բերում ճգանի երկայնքով, շոշափելով շնիկը, մինչև շուրջն ամեն բան լռում էր, իսկ ինքը՝ թմբիրի մեջ, իր ողջ էությամբ պարփակվում էր սառն ու աղահամ երկաթի զգացողության մեջ, որտեղից կարող էր դուրս թռչել մահը: Այն մտքից, թե բավական է միայն ամսաթիվ նշանակել ու կրակել, զգալու համար մահվան անհեթեթ դյուրինությունը, երևակայությունը հստակորեն իրեն էր ներկայացնում մահվան ողջ սարսափը, որն իր համար նշանակում էր կյանքի ժխտում, և կիսարթուն տրվում էր տենչան-

քին՝ դարձյալ այրվել արժանապատվությամբ ու լռելյայն: Հետո լրիվ արթնանալով, բերանն արդեն լի դառնահամ թքով, լիզում էր ատրճանակը, փողի մեջ խցկում լեզուն և, ի վերջո, խռխռում անհնարին երջանկությունից:

- Ի՞նչ արած, կյանքս չստացվեց: Բայց այն ժամանակ ես իրավացի էի՝ ամեն բան հանուն երջանկության, ի հեճուկս աշխարհի, որը մեզ շրջապատում է իր հիմարությամբ ու բռնությամբ:

Զագրևսը ծիծաղեց և ավելացրեց.

- Հասկանո՞ւմ եք, Մերսո, մեր քաղաքակրթության ողջ ստորությունն ու դաժանությունը չափվում է մի հիմար, անվերապահ ճշմարտությամբ՝ երջանիկ ժողովուրդները պատմություն չունեն:

Արդեն շատ ուշ էր: Բայց Մերսոն չէր կարողանում տարբերել շուտն ու ուշը: Գլուխը դժժում էր տենդագին գրգռվածությունից: Բերանը վառվում էր ծխած գլանակների տտիպ դառնահամից: Լույսն էլ էր մեղսակից: Այս ամբողջ խոսակցության ընթացքում նա առաջին անգամ նայեց Զագրևսին և ասաց.

- Կարծում եմ՝ հասկացա:

Հաշմանդամը, հոգնած իր քափած ճիգերից, ծանր էր շնչում: Այնուամենայնիվ, մի փոքր լռելուց հետո, թեև դժվարությամբ, բայց կարողացավ շարունակել:

- Կուզեի վստահ լինել, որ այդպես է: Ինձ մի ստիպեք ասել, որ փողն է երջանկություն ստեղծում: Ես միայն կարծում եմ, որ մարդկանց մի որոշակի խավի համար երջանկությունը հնարավոր է (ժամանակ ունենալու պայմանով), և որ փող ունենալ՝ նշանակում է նրանից ազատագրվել:

Նա կծկվել էր աթոռի վրա, ծածկոցների տակ: Գիշերը կրկին պարփակվել էր ինքն իր մեջ, և այժմ Մերսոն գրեթե չէր տեսնում Ռոլանին: Երկար լռություն տիրեց, և Պատրիսը, ցանկանալով վերահաստատել կապը, համոզվելու համար այդ մարդու իրողության մեջ, վեր կացավ և ասաց՝ ասես բախտին ապավինած.

- Գուցե վտանգավոր է, բայց պետք է փորձել, ինչ եղավ, եղավ:

- Այո,- խուլ ձայնով պատասխանեց Զագրևսը: - Եվ ավելի լավ է գրազ գալ հենց այս կյանքի վրա և ոչ թե մեկ ուրիշի: Պարզ է, որ

իմ խնդիրն այլ է:

«Փալաս է,- մտածեց Մերսոն: - Ոչնչություն՝ կյանքում»:

- Քսան տարի է, չեմ կարող փորձարկել որևէ երջանկություն: Այս կյանքը, որն ինձ լափում է, անհասկանալի մնաց ինձ: Իսկ մահը սարսափելի է այնքանով, որ ինձ հավաստիացնելու է, թե կյանքս ապրել եմ առանց ինձ, մնացել եմ խաղից դուրս, հասկանո՞ւմ եք:

Առանց միջանկյալ խոսքի այդ ստվերից դուրս թռավ մի երիտասարդ, առողջ քրքիջ.

- Ասել կուզի, Մերսո, նույնիսկ իմ վիճակում դեռ հույս կա:

Մերսոն մի քանի քայլ արեց դեպի սեղանը:

- Մտածե՛ք այս ամենի մասին,- ասաց Զագրևսը,- մտածե՛ք:

Մերսոն կարողացավ միայն հարցնել.

- Վառե՞մ լույսը:

- Խնդրեմ:

Լույսի ճառագայթներում Ռոլանի կլոր աչքերն ու քթանցքներն ավելի դժգույն թվացին: Դժվար էր շնչում: Մերսոյի մեկնած ձեռքին նա պատասխանեց գլխի շարժումով ու բարձր հռհռոցով.

- Ինձ շատ լուրջ մի՛ ընդունեք: Գիտեք, ինձ միշտ զայրացրել է մարդկանց ողբերգական կեցվածքը, որ ընդունում են կտրված ոտքերիս առջև:

«Չեռ է առնում»,- մտածեց Մերսոն:

- Ողբերգական ընդունեք միայն երջանկությունը: Լավ մտածեք այդ մասին, Մերսո, դուք մաքուր սիրտ ունեք: Մտածե՛ք այդ մասին:

Հետո նայելով նրա աչքերի մեջ՝ մի պահ հապաղեց, ապա ասաց.

- Եվ նաև երկու ոտք ունեք, որ գործին չեն վնասի:

Ժպտաց ու թափահարեց զանգակը.

- Դուրս եկեք, փոքրիկս, ջուր եմ թափելու:

Այդ կիրակի երեկոյան տուն վերադառնալով, մտքերով լրիվ տրված Զագրևսին, իր բնակարան մտնելուց առաջ Մերսոն լացուկոծ լսեց Կարդոնայի՝ տակառագործի բնակարանից: Դուռը թակեց: Չպատասխանեցին: Ողբը շարունակվում էր: Առանց վարանելու ներս մտավ: Տակառագործը, կծկված մահճակալի վրա, ողբում էր մանկան ուժգին հեծկլտանքով: Ոտքերի մոտ ընկած էր մի ծեր կնոջ լուսանկար:

- Մահացել է,- ասաց նա Մերսոյին՝ մեծ ճիգ գործադրելով:

Իրոք, այդպես էր, բայց դա վաղուց էր եղել:

Տակառագործը խուլ էր, կիսահամր: Կոպիտ ու չոր մարդ էր: Մինչ այդ քրոջ հետ էր ապրում: Սակայն վերջինս, հոգնելով չար եղբոր բռնակալությունից, փախել էր իր երեխաների մոտ: Եվ նա մնացել էր մենակ, անօգնական, ինչպիսին կարող է լինել տնտեսությամբ ու խոհանոցով առաջին անգամ զբաղվող տղամարդը: Քույրը Մերսոյին պատմել էր իրենց վեճերի մասին, երբ մի օր հանդիպել էին փողոցում: Տակառագործը երեսուն տարեկան էր, փոքրամարմին, բավական սիրունատես: Մանկուց ապրել էր մոր հետ: Նա միակ էակն էր, որ կարողացել էր իրեն մի տեսակ անհիմն, սնոտի երկյուղ ներշնչել: Մորը սիրել էր իր բիրտ հոգով, միաժամանակ և՛ կոպտությամբ, և՛ զեղումներով: Նրա զգացմունքների լավագույն արտահայտությունը ծեր կնոջ հոգու հետ խաղալն էր, երբ եկեղեցու և հոգևորականների հասցեին ահավոր լուտանքներ էր թափում: Եվ այդքան երկար ժամանակ մոր մոտ էր մնացել, որովհետև ոչ մի կին լուրջ ուշադրության չէր արժանացրել նրան: Այդուհանդերձ, հազվադեպ սիրային արկածները կամ հասարակաց տան այցելությունները իրեն իրավունք էին վերապահում տղամարդ կոչվելու:

Մայրը մահացավ: Այդ ժամանակից ի վեր նա ապրում էր քրոջ հետ: Մերսոն էր նրանց վարձով սենյակ տվել: Այդպես նրանք տանջվում էին երկուսով՝ քարշ տալով իրենց գորշ ու աղտոտ գո-

յությունը: Մեծ դժվարությամբ էին հաղորդակցվում իրար: Լինում էին օրեր, երբ բառ անգամ չէին փոխանակում: Բայց քույրը չմնաց: Ինքն էլ չափազանց գոռոզ էր, որպեսզի աղաչեր նրան, խնդրեր վերադառնալ: Ապրում էր մենակ: Առավոտյան ուտում էր ճաշարանում, երեկոյան տանը յոլա գնում երշիկեղենով: Ինքն էր լվանում իր սպիտակեղենն ու բանվորական կապույտ հագուստը: Սակայն սենյակը պահում էր սոսկալի աղտոտության մեջ: Սկզբում, կիրակի օրերին, մեկ-մեկ ձեռքը ջնջոց էր վերցնում ու փորձում կարգի բերել սենյակները: Բայց տղամարդու թեթևամտությամբ երբեմն մի աղտոտ կաթսա էր մոռանում բուխարիկի վրա (այն ժամանակին զարդարված էր ծաղիկներով ու զանազան մանր-մունր իրերով) և դրանով իսկ մատնում տան լրիվ բարձիթողի վիճակը: Հավաքել սենյակը՝ նրա համար նշանակում էր թաքցնել անկարգությունը, բարձերի ետևում պարտակել կամ սպասքապահարանի վրա շարել ամեն տեսակ հին ու անպետք իրեր: Ի վերջո, հոգնելով այս ամենից, նա սկսեց նույնիսկ անկողինը չհավաքել և շան հետ քնում էր կեղտոտ ու գարշահոտ սավանների վրա: Քույրը Մերսոյին ասել էր.

- Սրճարաններում մեծ-մեծ է բղդում, բայց տիրուհին ասաց, որ տեսել է, թե ինչպես է լացում սպիտակեղենը լվանալիս:

Եվ մեծ իրողություն էր, որ այդչափ կոշտացած մարդուն ժամանակ առ ժամանակ սարսափ էր համակում և ստիպում չափել իր լքվածության աստիճանը: «Անշուշտ, խղճահարությունից դրդված եմ ապրում նրա հետ»,- ասել էր քույրը Մերսոյին: Բայց եղբայրը խանգարում էր հանդիպել սիրած մարդու հետ: Ասենք, իրենց տարիքում դա այլևս առանձնակի նշանակություն չուներ: Այդ մարդն ամուսնացած էր: Իր ընկերուհուն բերում էր դաշտերից քաղած ծաղիկներ, նվիրում նարինջ ու լիկյոր, որ շահում էր տոնավաճառում: Ամենևին գեղեցիկ չէր: Բայց սիրուն երեսին փլավ չեն ուտում, և հետո, նա լավ մարդ էր: Նրանք փոխադարձաբար պահպանում էին միմյանց: Իսկ գուցե հենց դա է սերը: Կինը նրա շորերն էր լվանում, ջանում նրան միշտ մաքուր պահել: Նա սովորություն ուներ գրպանը զարդարել եռանկյունաձև, իսկ վիզը փա-

թաթել երկտակ ծալած թաշկինակով: Կինը ճեփ-ճերմակացնում էր այդ թաշկինակները, և դա նրա ամենամեծ ուրախություններից էր:

Սակայն եղբայրը չէր ուզում, որ քույրն ընդունի ընկերոջը: Հարկ էր լինում թաքուն հանդիպել: Մի անգամ նրան տանը ընդունեց: Եղբայրը, անակնկալի գալով, ահավոր տուրուդմբոց սարքեց: Նրանց գնալուց հետո եռանկյունածև թաշկինակը մնացել էր սենյակի կեղտոտ անկյունում: Քույրը փախավ որդու մոտ: Այդ գարշելի սենյակը Մերսոյին հիշեցրեց թաշկինակի մասին:

Քայցևայնպես, տակառագործի մենակությունը ժամանակին մարդկանց գութն էր շարժում: Նա Մերսոյին պատմել էր իր հնարավոր ամուսնության մասին: Խոսքը վերաբերում էր իրենից տարիքով մեծ մի կնոջ, որը, անկասկած, հրապուրված էր ջահել, առողջ գգվանքների հույսով... Դրան նա հասավ մինչև ամուսնությունը: Սակայն որոշ ժամանակ անց սիրեկանը հրաժարվեց իր ծրագրից, հայտարարելով, որ իր համար նա շատ ծեր է: Եվ այդ քաղամասի փոքրիկ տանը նա կրկին մենակ մնաց: Քիչ-քիչ աղտոտությունը պաշարեց նրան, խոնվեց շուրջը, եկավ հասավ մինչև անկողին, հետո թաղեց նրան իր անմաքրելի խորխորատներում: Իր տունն արդեն շատ տգեղ էր: Իսկ աղքատ մարդու համար, որին դուր չի գալիս սեփական կացարանը, միշտ ավելի հասանելի, հարուստ, լուսավոր և բարեհամբույր տեղ է սրճարանը: Հատկապես այդ քաղամասի սրճարանները շատ կենսուրախ էին: Այնտեղ իշխում էր նախրային այն ջերմությունը, որը վերջին օթևանն է մենության սարսափներից ու տարտամ իղձերից փախչելիս: Համր տակառագործը այնտեղ էր գտել իր ապաստանը: Ամեն երեկո Մերսոն այնտեղ հանդիպում էր նրան: Սրճարանների շնորհիվ նա հնարավորինս հետաձգում էր վերադարձի պահը: Մարդկանց մեջ հատկացված իր տեղը նա այստեղ էր գտնում: Այդ երեկո, անշուշտ, սրճարանն էլ չէր բավարարել իրեն: Եվ վերադառնալով տուն՝ հանել էր մոր լուսանկարը, որն արթնացրել էր մեռած անցյալի արձագանքները: Նորից գտել էր նրան, ում սիրել էր, ում հոգու հետ խաղացել: Այդ նողկալի սենյակում, կյանքի անօգտակարության առջև մեն-մենակ, հավաքելով իր բոլոր ուժե-

րը, նա վերապրում էր անցյալը, որն իր երջանկությունն էր եղել: Թերևս պետք էր դրան հավատալ. այդ անցյալի ու իր թշվառ ներկայի միակցումից ժայթքեց աստվածային մի կայծ, քանի որ սկսեց հեկեկալ:

Ինչպես ամեն անգամ, երբ դեմառդեմ էր հայտնվում բիրտ իրականության որևէ դրսևորման հետ, Մերսոն իրեն անզոր էր զգում, նաև հարգանքով լցվում մարդկային ցավի հանդեպ: Նա նստեց անկողնու կեղտոտ ու ճմռթված սպիտակեղենի վրա ու ձեռքը դրեց Կարդոնայի ուսին: Դիմացը՝ մոմլաթապատ սեղանին, խառնիխուռն շարված էին սպիրտայրոցը, գինու շիշը, չոր հացի կտորներ, պանրի մի շերտ և գործիքների արկղը: Առաստաղից սարդոստայններ էին կախված: Մերսոն, որ մոր մահից ի վեր երբեք չէր մտել այդ սենյակը, այդ մարդու անցած ուղին կարող էր չափել աղտոտությամբ ու կպչուն թշվառությամբ: Բակին նայող պատուհանը փակ էր, իսկ մյուսը՝ կիսաբաց: Մանրանկարազարդ խաղաթղթերով շրջանակված լուսամփոփի նավթավառը իր կլոր ու հանդարտ լույսն էր ձգել սեղանի, Մերսոյի և Կարդոնայի ոտքերի, ինչպես նաև դիմացի պատից փոքր-ինչ հեռու աթոռի վրա: Այդ ընթացքում Կարդոնան ձեռքն էր վերցրել լուսանկարը, նայում էր և, նորից ու նորից համբուրելով, ասում էր իր թլվատ լեզվով.

- Խե՞ղճ մայրիկ:

Իրականում ինքն իրեն էր խղճում: Մայրը թաղված էր քաղաքի ծայրում գտնվող մի ողորմելի գերեզմանոցում, որը Մերսոն լավ գիտեր:

Ցանկացավ հեռանալ, և որպեսզի ավելի հասկանալի լինի, ասաց՝ վանկարկելով բառերը.

- Չի-կարելի-մնալ-այսպես:

- Էլ չեմ աշխատում,- ասաց Կարդոնան մեծ դժվարությամբ և, բռնելով լուսանկարը, ավելացրեց կերկերուն ձայնով.

- Ես սիրում էի նրան:

Իսկ Մերսոն թարգմանում էր. «Նա սիրում էր ինձ»:

- Նա մեռավ:

Իսկ Մերսոն հասկացավ. «Ես մենակ եմ»:

- Տոնի առթիվ նրա համար էի սարքել,- շարունակեց Կարդոնան՝ ցույց տալով բուխարիկին դրված լաքապատ փայտե տակառիկը՝ պղնձյա օղակներով ու փայլուն ծորակով:

Մերսոն բաց թողեց Կարդոնայի ուսը, որը փլվեց ճենճոտ բարձերի վրա: Մահճակալի տակից դուրս թռավ մի խոր հառաչանք ու զզվելի գարշահոտություն տարածվեց: Դանդաղ դուրս եկավ շունը՝ դատարկելով միզապարկը: Նա իր երկայնականջ ու ոսկեգույն աչքերով գլուխը դրեց Մերսոյի ծնկներին: Մերսոն նայում էր տակառիկին: Դժվարությամբ շնչող այդ մարդու նողկալի սենյակում, մատների տակ զգալով շան ջերմությունը, Մերսոն փակել էր աչքերը հուսահատության առջև, որն առաջին անգամ երկար ժամանակից ի վեր ծովի նման հառնել էր իր մեջ: Թշվառությանն ու միայնությանը իր սիրտն այսօր ասում էր՝ ոչ: Եվ իրեն համակող այդ ահռելի անձկության մեջ Մերսոն զգում էր, որ միակ ճշմարիտը իր ըմբոստացումն էր, որ մնացյալը ունայնություն էր և ինքնազմայլում: Փողոցը, որ երեկ ապրում էր լիառատ կյանքով իր պատուհանների տակ, դեռ լի էր եռուզեռով: Դարավանդի տակ ձգվող այգիներից բարձրացավ խոտի անուշաբույրը: Մերսոն ծխախոտ հյուրասիրեց Կարդոնային, և նրանք լուռ ծխեցին: Անցան վերջին տրամվայները, և նրանց հետ էլ դեռ թարմ հիշողությունները մարդկանց և լույսերի մասին: Կարդոնան քնեց, և շուտով արցունքներից թրջված քթով սկսեց խոմփացնել: Շունը, որը գունդուկծիկ էր եղել Մերսոյի ոտքերի առջև, ձգվում էր երբեմն ու վնգվնգում երազի մեջ: Նրա ամեն մի շարժումից Մերսոն շնահոտ էր առնում: Պատին հենված՝ նա ջանում էր ճնշել սրտում բռնկված խռովությունը: Լամպը ծխաց, աճխացավ ու վերջապես հանգավ՝ տարածելով նավթի ահավոր հոտը: Մերսոն ննջում էր, իսկ երբ արթնացավ, աչքերը հառեց գինու շշին: Մեծ ճիգ գործադրելով՝ վեր կացավ, մոտեցավ պատուհանին ու անշարժացավ: Գիշերվա խորքից իրեն էին հասնում կանչեր, անխոս շշուկներ: Նիրհող աշխարհի հեռավոր սահմաններից մի նավ մարդկանց կանչում էր մեկնումի և նոր ձեռնարկումների:

Հաջորդ օրը Մերսոն սպանեց Զագրևսին, վերադարձավ տուն

և քնեց ամբողջ ցերեկը: Արթնացավ տենդի մեջ: Իսկ երեկոյան, անկողնում պառկած, քաղի բժշկին կանչել տվեց, որը հարբուխ ախտորոշեց: Գրասենյակից այցելության եկավ մի ծառայող: Տեղեկություններ ստացավ ու իր հետ տարավ Մերսոյի դիմումը՝ արձակուրդ խնդրելու վերաբերյալ: Մի քանի օրից ամեն ինչ արդեն կարգին էր՝ հողվածը մամուլում Զագրևսի մահվան մասին, նախաքննության ամփոփաթերթիկը: Ամեն բան արդարացնում էր նրա ինքնասպանությունը: Մարթան այցելեց Մերսոյին և ասաց հառաչելով.

- Լինում են օրեր, երբ կուզեի նրա փոխարեն լինել: Բայց երբեմն էլ, ինձ թվում է, որ ապրելու համար ավելի մեծ քաջություն է պետք, քան՝ ինքնասպանություն գործելու:

Մեկ շաբաթ անց Մերսոն նավ նստեց ու մեկնեց Մարսել: Բոլորին ասել էր, որ մեկնում է հանգստանալու և կմնա Ֆրանսիայում: Լիոնից Մարթան նամակ ստացավ իրենց խզման մասին, որից միայն նրա ինքնասիրությունը վիրավորվեց: Միաժամանակ Պատրիսը հայտնում էր, որ մի բացառիկ պաշտոն են իրեն առաջարկել Կենտրոնական Եվրոպայում: Մարթան իր տառապանքների մասին գրեց ցպահանջ: Այդ նամակն այդպես էլ չստացավ Մերսոն, որը Լիոն հասնելու հենց հաջորդ օրը տենդի ուժեղ նոպա ունեցավ և անմիջապես նստեց Պրահա մեկնող գնացքը: Մինչդեռ Մարթան հայտնում էր, որ դիարանում, շատ երկար պահելուց հետո, վերջապես թաղել էին Զագրևսին, և որ հարկ էր եղել մի քանի բարձ խցկել դագաղի մեջ՝ մարմնի շուրջը եղած դատարկությունը լցնելու համար:

ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՍԱՀ

- Կարո՞ղ եմ սենյակ վարձել,- ասաց տղամարդը գերմաներեն:

Բարապանը կանգնած էր բանալիներով բեռնված տախտակի առջև, որը սրահից առանձնացված էր լայն սեղանով: Նա ուսումնասիրեց եկվորին, որն ուսերին էր գցել երկար, մոխրագույն անձրևանոցը և խոսում էր՝ աջ ու ձախ շրջելով գլուխը:

- Իհարկե, պարոն: Մի գիշերվա համա՞ր:

- Ոչ: Չգիտեմ:

- Մենք ունենք տասնութ, քսանհինգ և երեսուն կրոնանոց սենյակներ:

Մերսոն դիտում էր Պրահայի այդ փոքրիկ փողոցը, որ երևում էր հյուրանոցի ապակյա դռնից: Ձեռքերը գրպանում էին, գլխաբաց էր, մազերը՝ խառնիխուռն: Մի քանի քայլի վրա լսվում էին տրամվայների ճռնչոցները, որոնք իջնում էին Վենցեսլավ պողոտայով:

- Ի՞նչ սենյակ եք ցանկանում, պարոն:

- Միևնույն է,- ասաց Մերսոն՝ աչքը չկտրելով ապակյա դռնից:

Բարապանը տախտակի վրայից մի բանալի վերցրեց ու մեկնեց Մերսոյին:

- Թիվ 12 սենյակը:

Մերսոն սթափվեց:

- Ի՞նչ արժի:

- Երեսուն կրոն:

- Շատ քանկ է: Կուզենայի 18 կրոնանոց սենյակ:

Բարապանն առանց որևէ բան ասելու վերցրեց մի նոր բանալի և Մերսոյին ցույց տվեց վրան կախված պղնձյա աստղիկը՝ «Սենյակ թիվ 34»:

Նստելով իր սենյակում՝ Մերսոն հանեց բաճկոնը, առանց քանդելու մի քիչ թուլացրեց փողկապն ու մեխանիկորեն վեր քշտեց վերնաշապիկի թևքերը: Մոտեցավ լվացարանի վերևում կախված հայելուն ու հանդիպեց ընդգծված դիմագծերով, տեղ-տեղ արնոտ դեմքին, որը չէր սևացել մի քանի օրվա աճած մորուքից: Գնաց-

քում խճճված մազերն անկանոն թափված էին ճակատին՝ մինչև հոնքերի արանքում եղած երկու խոր ծալքերը, որոնք նրա հայացքին հաղորդում էին մի տեսակ լուրջ ու քնքուշ արտահայտություն, որը նույնիսկ իրեն ապշեցրեց: Եվ այդ պահին միայն մտածեց, որ պետք է ուսումնասիրել շուրջը, այդ խղճուկ սենյակը, որն իր միակ ունեցվածքն էր, և որից անդին նա այլևս ոչինչ չէր տեսնում: Գորշ հիմնաներկի վրա խոշոր, դեղին ծաղիկներով, սրտխառնուք առաջացնող պաստառին աղտոտությունների մի ամբողջ աշխարհագրություն գծագրում էր թշվառության աներես աշխարհը: Ջեռուցման հսկայական խողովակների ետևում աղտոտ, ցեխոտ անկյուններ էին: Կոտրված անջատիչի միջից կախ էին ընկել պղնձալարերը: Պատից հեռու քաշված մետաղյա մահճակալի վերևում կեղտից փայլող մի լար էր անցնում, որի վրա չորանում էին սատկած ճանճերը: Լարից կախված էր մի լամպ առանց լուսամփոփի, որին ձեռք տալիս կպչում էին մատներդ: Մերսոն զննեց սպիտակեղենը. զարմանալիորեն մաքուր էր: Ճամպրուկից հանեց հարդարանքի առարկաներն ու մեկառմեկ շարեց լվացարանի վրա: Հետո ուզեց լվանալ ձեռքերը, բայց դեռ լրիվ չբացած, նորից փակեց ծորակն ու գնաց բացելու պատուհանը, որը վարագույր չուներ: Պատուհանը նայում էր ետնաբակին, որտեղ լվացքատուն կար, իսկ պատերին՝ փոքրիկ լուսամուտներ: Դրանցից մեկի առջև սպիտակեղեն էր չորանում:

Մերսոն պառկեց և իսկույն քնեց: Արթնացավ քրտինքի մեջ, ջարդված մարմնով ու սկսեց պտտվել սենյակում: Հետո ծխախոտ վառեց ու նստեց՝ գլուխը դատարկ, սկսեց նայել ճմռթված տաբատի ծալքերին: Բերանում քնից ու ծխախոտից առաջացած դառնահամն էր: Նորից հայացքով զննեց սենյակը՝ վերնաշապիկի տակից քորելով անութները: Ահավոր լքվածության ու մենության առջև, զգալով, թե որքան հեռու էր ամեն ինչից, նույնիսկ սեփական տենդից, հստակ պատկերացնելով, թե որն է անհեթեթը և թշվառը ցանկացած լավագույնս դասավորված կյանքի խորքում, այդ սենյակում իր առջև հառնում էր ամոթալի ու խորհրդավոր դեմքն այն ազատության, որ ծնվում է կասկածից ու ենթգամտութ-

յունից: Շուրջը թույլ ու կակուղ ժամերն էին, ժամանակը ճիճփում էր ճահճատիղմի պես:

Դուռն ուժգին թակեցին, և Մերսոն, ուշքի գալով, հասկացավ, որ արթնացել է հենց այդ հարվածներից: Բացեց դուռն ու հանդիպեց մի փոքրիկ, շիկամազ ծերուկի, որը ճկվել էր Մերսոյի՝ իր համեմատ հսկայական թվացող երկու ճամպրուկների ծանրությունից: Երևում էր, որ պայթում է կատաղությունից. հատուկենտ ատամների արանքից թափվում էր հայհոյանքների ու լուտանքների թույնը: Մերսոն հիշեց, որ ամենամեծ ճամպրուկի բռնակը պոկված է և շատ անհարմար է տանելու համար: Ուզում էր ներողություն խնդրել, բայց ինչպես ասեր, եթե չէր կարող գուշակել բեռնակրի տարիքը: Ծերուկն ընդհատեց նրան.

- Տասնչորս կրոն:

- Մեկ օրվա համա՞ր:

Երկար բացատրություններից վերջապես հասկացավ, որ ծերուկը տաքսի էր վարձել, բայց չհամարձակվեց ասել, որ այդ դեպքում ինքն էլ կարող էր այդպես վարվել: Վճարեց դանդաղ, դժկամորեն: Դուռը փակեց ու զգաց, որ անբացատրելի արցունքներից փքվում է կուրծքը: Մոտակայքում ժամացույցը խփեց ժամը չորսը: Երկու ժամ քնել էր: Գլխի ընկավ, որ փողոցից բաժանված է միայն դիմացի շենքով: Զգում էր այնտեղ հորդացող կյանքի խուլ ու խորհրդավոր հևքը: Ավելի լավ էր դուրս գար: Մերսոն երկար լվաց ձեռքերը: Եղունգները խարտելու համար նորից նստեց մահճակալի ծայրին և սկսեց համաչափ շարժել խարտոցը: Մեքենայի երկու-երեք ազդանշան այնքան գոհեկորեն հնչեցին բակում, որ Մերսոն կրկին մոտեցավ պատուհանին: Նկատեց, որ շենքի տակից մի կամարաձև անցում տանում է փողոց: Ասես փողոցի բոլոր ձայները, տների մյուս կողմի անծանոթ կյանքը, մարդկանց աղմուկը, որոնք ունեն հասցե, ընտանիք, անախորժություններ քեռու հետ, նախընտրելի ուտելիքներ սեղանի շուրջը, քրոնիկական հիվանդություն, մարդկային էակների մրջնանոց, որոնցից ամեն մեկն ունի իր անհատականությունը, այդ ամենը, ինչպես ամբոխի հրեշավոր սրտից հավետ պոկված ուժգին բաբախյուն անցումի

մեջ էին և, բարձրանալով բակի երկայնքով, պղպջակների նման պայթում էին Մերսոյի սենյակում: Լինելով չափազանց դյուրագրգիռ և ուշադիր աշխարհի ամեն մի ազդանշանի նկատմամբ՝ Մերսոն զգում էր, որ իր ներսում խորը ճեղքվածք է առաջանում և իրեն բացում է կյանքի առջև: Վառեց մեկ ուրիշ ծխախոտ և սկսեց տենդագին հագնվել: Բաճկոնը կոճկելիս՝ ծուխը ծակեց աչքերը: Վերադարձավ լվացարանի մոտ, սրբեց աչքերը և ուզեց սանրվել: Բայց սանրն անհետացել էր: Քնելիս այնպես էին խճճվել մազերը, որ զուր էր փորձում շտկել: Առանց ուղղելու՝ իջեցրեց ճակատին: Սակայն հետևում մազերը մնացին ցցված: Իրեն ավելի փոքրամարմին զգաց: Փողոց իջնելով՝ հյուրանոցի շուրջը պտույտ գործեց, հասավ անցումին, որ նկատել էր պատուհանից: Այն տանում էր հին քաղաքապետարանի հրապարակ: Փոքր-ինչ ծանր երեկոյի մեջ, որ իջնում էր Պրահայի վրա, քաղաքապետարանի և հինավուրց Տին եկեղեցու գոթական սրածողերը կտրատվում էին մթության մեջ: Մարդկանց մեծ բազմություն էր երթևեկում կամարածածկ փոքրիկ փողոցներում: Ամեն անցորդ կնոջ Մերսոն հետևում էր հայացքով, ջանալով ստուգել, թե արդյոք դեռ ունա՞կ է խաղալու կյանքի նուրբ ու քնքուշ խաղը: Բայց առողջ մարդիկ մի տեսակ բնական արվեստով կարողանում են խույս տալ հիվանդագին հայացքներից: Չսափրված, մազերը գզգզված, աչքերում հալածված կենդանու արտահայտություն, ճմոթված տաբատով ու օձիքով, այս կերպարանքով նա կորցրել էր վստահությունը, որ տալիս է լավ նստող հագուստը կամ շքեղ մեքենայի ղեկը:

Լույսը դառնում էր պղնձագույն, և ցերեկը ձգձգվում էր հրապարակի խորքից երևացող բարոկոյական գմբեթների վրա: Ուղղվեց դեպի այդ եկեղեցիներից մեկը, ներս մտավ և հեղձուկ օդի մեջ նստեց նստարանին: Կամարն ամբողջովին խավարի մեջ էր, բայց խոյակների ոսկիները թափում էին ոսկեզօծ ու խորհրդավոր ջուր, որ հոսում էր սյուների ակոսներով, ցողում զվարթ հրեշտակների ու սրբերի ուռած դեմքերը: Քնքշություն, այո, քնքշություն կար այնտեղ, բայց այնքան դառը, որ Մերսոն նետվեց դեպի շեմը և, աստիճաններին կանգնած, շնչեց գիշերվա այժմ արդեն զովացած օդը, գիշերվա,

որի մեջ շուտով սուզվելու էր ինքը: Եվս մեկ րոպե, և Տինի սրածողերի արանքում վառվեց առաջին աստղը՝ անաղարտ ու մերկանդամ:

Սկսեց փնտրել էժանագին ճաշարան: Խորացավ ավելի մութ ու սակավամարդ փողոցներում: Չնայած ցերեկն անծրև չէր եկել, բայց գետինը թաց էր, և Մերսոն ստիպված էր խույս տալ նոսրաշար սալաքարերի արանքներում եղած սևաթույր ջրակույտերից: Հետո հազիվ զգալի անձրև սկսեց կաթկթել: Մարդաշատ փողոցները հավանաբար հեռու չէին, որովհետև լրագրավաճառների կանչերը հասնում էին մինչև այստեղ՝ գովազդելով «Նարոդնի պոլիտիկան»: Այս ընթացքում պտույտ էր գործել: Հանկարծ կանգնեց: Մթության մեջ արտառոց հոտ զգաց՝ ծակող, կիսակծու, որն իր մեջ ուժգին տագնապ արթնացրեց:

Հոտը զգում էր լեզվի վրա, ռունգերի խորքում, աչքերի մեջ: Սկզբում հեռու էր, հետո փողոցի անկյունում, այժմ այստեղ՝ մթամած երկնքի և յուղոտ, կպչուն սալարկի միջև, ինչպես Պրահայի գիշերների չարագուշակ կախարդություններ: Գնաց այդ հոտին ընդառաջ, որն աստիճանաբար դառնում էր ավելի իրական, նվաճում իրեն ամբողջովին, աչքերը լցնում ծակող արցունքներով և թողնում անպաշտպան: Փողոցի անկյունում ամեն ինչ պարզ դարձավ. մի ծեր կին թթու վարունգ էր վաճառում. դրա հոտն էր ընկել քիթը: Անցորդներից մեկը կանգ առավ, գնեց մի վարունգ, որ պառավը փաթաթեց թղթով: Մարդը մի քանի քայլ արեց, Մերսոյի առջև բացեց փաթեթը, ատամների ծայրով կծեց վարունգը, որի կտրված թաց կեղևից արձակվեց էլ ավելի ուժեղ հոտ: Մերսոն վատ զգաց, հենվեց սյանը և ահագին երկար շնչեց՝ կլանելով այն ամենը, ինչ ընծայում էր իրեն օտարոտի ու միայնակ աշխարհն այդ պահին: Հետո քայլեց և առանց երկար մտածելու մտավ մի ճաշարան, որտեղից ակորդեոնի ծայն էր լսվում: Մի քանի աստիճան իջնելով՝ կանգնեց սանդուղքի մեջտեղը, հետո հայտնվեց մի փոքրիկ, բավական մռայլ, կարմիր լույսերով մառանում: Հավանաբար շատ արտառոց տեսք ուներ, քանի որ ակորդեոնի նվագը խլացավ, խոսակցությունները դադարեցին, իսկ հաճախորդները շրջվեցին իր կողմը: Անկյունում նստած աղջիկներն ուտում էին

յուղոտված շրթունքներով: Հաճախորդներից ոմանք խմում էին չեխական մուգ ու կիսաքաղցր գարեջուր: Ծատերը ծխում էին առանց ուտելու: Մերսոն մոտեցավ մի բավական երկար սեղանի, որի մոտ միայն մի մարդ էր նստած: Բարձրահասակ էր ու նիհար, դեղնամազ, կծկված աթոռի վրա, ձեռքերը գրպաններում: Ճաքճքած շրթունքներով սեղմել էր լուցկու չոփը, որի ծայրն արդեն փքվել էր թքից. այն ծծում էր տհաճ աղմուկով կամ բերանի մի անկյունից քշում մյուսը: Երբ Մերսոն նստեց, նա հազիվ շարժվեց, ավելի հարմար հենվեց պատին, լուցկին ուղղեց եկվորի կողմը և աննկատելիորեն կկոցեց աչքերը: Այդ պահին Մերսոն նրա լամբակին կարմիր աստղ նշմարեց: Մերսոն կերավ արագ-արագ, բայց քիչ. քաղցած չէր: Ակորդեոնի ձայնն այժմ հնչում էր ավելի հստակ, և նվագողն ակնդետ նայում էր նորեկին: Երկու անգամ վերջինս փորձեց ընդունել մարտահրավերը և բռնել հայացքը: Սակայն տենդը շատ էր թուլացրել իրեն: Մարդը շարունակում էր նայել: Հանկարծ աղջիկներից մեկը բարձր քրքջաց, կարմիր աստղով մարդը թափով ներս քաշեց լուցկու չոփը, որի ծայրին թքաբշտիկ առաջացավ, իսկ երաժիշտը դադարեցրեց աշխույժ պարեղանակն ու սկսեց նվագել ասես դարերի ամեն տեսակ փոշիներից աղտոտված մի դանդաղ մեղեդի:

Այդ պահին դուռը բացվեց նոր հաճախորդի համար: Մերսոն նրան չտեսավ, բայց դռան բացվածքից անմիջապես տարածվեց քացախի ու վարունգի հոտը: Այն միանգամից լցրեց մութ մառանը՝ խառնվելով ակորդեոնի խորհրդավոր մեղեդուն, ուռեցնելով թքաբշտիկը լուցկու չոփի ծայրին՝ խոսակցությունները հանկարծ դարձնելով ավելի իմաստալից. ասես Պրահայի վրա ննջող գիշերվա սահմաններից եկել էին չարամիտ ու տառապալից աշխարհի զգայարանները՝ պատսպարվելու այդ դահլիճի ու մարդկանց ջերմության մեջ: Մերսոն, որ քաղցր մարմելադ էր ուտում, հանկարծ անջատվելով ինքն իրենից, զգաց, որ իր ներքին ճեղքվածքը ճարճատում է և ավելի լայն բացվում անձկության ու տենդի առջև: Անսպասելի վեր կացավ, կանչեց մատուցողին և, ոչինչ չհասկանալով նրա բացատրություններից, առատածեռն վճարեց՝

դարձյալ նկատելով երաժշտի բացահայտ սևեռուն հայացքն իր վրա: Գնաց դեպի դուռը, անցավ ակորդեոնահարից ու նկատեց, որ նա շարունակում է դիտել իր թողած սեղանը: Այդ ժամանակ գլխի ընկավ, որ մարդը կույր էր: Մագլցեց աստիճաններով, բացեց դուռը՝ իրեն ամբողջովին զգալով այդ մշտական հոտի տիրույթում, և կարճ փողոցներով գնաց դեպի խավարի խորքը:

Աստղեր էին փայլում տների վերևում: Երևի մոտակայքում գետ կար, որովհետև լսվում էր նրա խուլ ու հզոր երգը: Եբրայական գրերով ծածկված հաստ պատի փոքրիկ վանդակի առջև նա հասկացավ, որ հրեական թաղամասում էր: Պատի վերևից թափվում էին անուշաբույր ուռենու ճյուղերը: Ճաղերի արանքներից երևում էին խոտերի մեջ թաքնված գորշավուն, խոշոր քարերը: Պրահայի հրեական հին գերեզմանատունն էր: Այդտեղից մի քանի քայլ վազելով՝ Մերսոն հասավ քաղաքապետարանի հին հրապարակը: Իր հյուրանոցի մոտ ստիպված եղավ հենվել պատին ու փսխել մեծ դժվարությամբ: Լրիվ պայծառացած գլխով, որի պատճառը ծայրահեղ թուլությունն էր, առանց որևէ սխալմունքի գտավ իր սենյակը, պառկեց և իսկույն քնեց:

Հաջորդ օրն արթնացավ լրագրավաճառների գոռգոռոցներից: Եղանակը դեռ մռայլ էր, սակայն կարելի էր գուշակել, որ արևը ամպերի ետևում է: Մերսոն՝ թեպետ դեռ թույլ, իրեն ավելի լավ էր զգում: Բայց մտածում էր, որ առջևում նոր բացվող, երկարաձիգ օրն էր: Այսպես, ապրելով ինքն իր ներկայությամբ, երբ ժամանակը ծավալվում է անսահմանորեն, նրան թվում էր, թե օրվա ժամերից յուրաքանչյուրը մի ուրույն աշխարհ է պարունակում: Ամենից առաջ պետք էր խուսափել այնպիսի նոպաներից, ինչպիսին երեկ էր ունեցել: Լավագույնը քաղաքի տեսարժան վայրեր այցելելն էր՝ ըստ նախատեսած ծրագրի: Տնային զգեստով նստեց սեղանի մոտ ու կազմեց կանոնավոր ժամատախտակ շաբաթվա բոլոր օրերի համար: Բարոկո ոճի վանքեր ու եկեղեցիներ, թանգարաններ ու հին թաղամասեր՝ ոչինչ չմոռացավ: Հետո հարդարվեց և այդ ժամանակ միայն հիշեց, որ մոռացել է սանր գնել: Իջավ, ինչպես նախորդ օրը, գզգզված մազերով, սուսուփուս, բայց օրը ցերե-

կով բարապանը նկատեց, որ մազերը բիզ-բիզ էին, տեսքը՝ տագնապահար, իսկ բաճկոնի երրորդ կոճակը չկար: Հյուրանոցից դուրս գալով՝ ականջին հասավ ակորդեոնի մանկական քնքուշ մեղեդին: Երեկվա կույրը հին հրապարակի անկյունում՝ կրունկների վրա պպզած, իր գործիքն էր նվագում դեմքի նույն դատարկ ու ժպտուն արտահայտությամբ՝ ասես ազատագրված ինքն իրենից և ամբողջովին միաձուլված իրենից առաջ վազող կյանքի հորձանքին: Փողոցի անկյունում Մերսոն շրջվեց ու դարձյալ որսաց վարունգի հոտը: Եվ նրա հետ՝ իր անձկությունը:

Այդ օրը եղավ այնպիսին, ինչպիսին լինելու էին նրան հաջորդած օրերը: Մերսոն ուշ էր վեր կենում, այցելում վանքեր ու եկեղեցիներ, ապաստան փնտրում նրանց նկուղային ու խնկային բույրերի մեջ, հետո վերադառնալով, վերագտնում էր իր թաքուն վախը վարունգ վաճառողների հանդեպ, որոնց հանդիպում էր փողոցի բոլոր անկյուններում: Այդ բույրի միջով էր նա տեսնում քանգարանները և հասկանում բարոկոյի հանճարի շռայլությունն ու առեղծվածը, որ լցնում էր Պրահան իր ոսկով ու պերճանքով: Ոսկեթաթախ լույսը, որ մեղմիվ ցոլցլում էր խորանների վրա, կիսախավարի մեջ ասես հոսում էր պղնձյա երկնքից ծուլված մշուշներից ու արևից, որոնք այնքան հաճախ են հայտնվում Պրահայի գլխավերևում: Խոյազարդերի և վարդանշանների երկաթեղենը, բարդ զարդարանքները, որոնք ասես ոսկյա նրբաթիթեղից լինեին և իրենց հուզիչ նմանությամբ հիշեցնում էին Ծնունդի մանկական մսուրները, ստիպում էին Մերսոյին հիանալ բարոկոյի վիթխարիությամբ, գրոտեսկայնությամբ ու համաչափությամբ, ինչպես տենդալից, մանկական ու վերամբարձ ռոմանտիզմ, որով մարդ պաշտպանվում է իր սեփական դևերից: Աստված, որին պաշտում էին այստեղ, նա էր, ումից երկյուղում էին ու մեծարում: Նա նման չէր այն Աստծուն, որը ծիծաղում էր մարդկանց հետ՝ հրճվելով ծովի ու արևի հրաշունչ խաղերով: Մռայլ կամարների տակ իշխող փոշուց և անէության նուրբ հոտից դուրս գալով՝ Մերսոն իրեն անհայրենիք զգաց:

Ամեն երեկո նա այցելում էր քաղաքի արևմուտքում գտնվող

չեխ վանականների մենաստան: Վանքի այգում ժամերը թռչում էին աղավնիների պես, զանգերը մեղմորեն հարվածում էին խոտերին, բայց դա դեռևս տենդն էր, որ բարբառում էր իր մեջ: Ժամանակն անցնում էր: Այդ ժամին եկեղեցիներն ու թանգարանները արդեն փակվում էին, իսկ ռեստորանները դեռ բաց չէին: Այստեղ էր վտանգը: Մերսոն զբոսնում էր այգիներով ծաղրաբեռնված Վլտավայի ափերին, որտեղ ավարտվող օրվա վերջալույսի մեջ որոտում էին նվագախմբերը: Փոքրիկ նավեր էին լողում գետի հոսանքն ի վեր, ամբարտակից ամբարտակ: Մերսոն էլ էր բարձրանում նրանց հետ՝ ետևում թողնելով բլթբլթացող ջրարգելակի խլացուցիչ աղմուկը, կամաց-կամաց ընկղմվելով երեկոյի անդորրի ու լռության մեջ, հետո դարձյալ քայլում ահագնացող աղմուկին ընդառաջ: Հասնելով նոր ամբարտակի՝ հիանում էր գույնզգույն նավակներով, որոնք ջանում էին անցնել առանց շուռ գալու, և սպասում էր, որ վերջապես դրանցից մեկնումեկը հաղթահարի վտանգավոր տեղը, և ճիչերը ջրերի աղմուկից ավելի ուժգին թնդան: Այս ամբողջ ջուրը, որ իջնում էր աղաղակների, մեղեդիների և այգիների իր ծաղրաբեռնվածությամբ, լի մայրամուտի երկնքի բրոնզագույն լույսերով և Կառլովի կամրջին շարված արձանների ծամածռվող ու հաղթական ստվերներով, Մերսոյին տալիս էր տառապագին ու հրկեզ գիտակցումն այն անկրակ միայնության, որտեղ սերն այլևս անելիք չունի: Եվ կանգ էր առնում ջրերի ու խոտերի անուշաբույրի առջև, սեղմվում էր կոկորդը, պատկերացնում էր արցունքները, որոնք այդպես էլ չէին գալիս: Միայն բարեկամը կփրկեր կամ լայն բացված գիրկը: Եվ արցունքները կանգ էին առնում այն բիրտ աշխարհի սահմանագլխին, որի մեջ ընկղմված էր հիմա: Շատ անգամ էլ՝ երեկոյան միշտ նույն ժամին, անցնելով Կառլովի կամրջով, զբոսնում էր Հրադչինի թաղամասում, ամայի ու խաղաղ գետի վերևում, քաղաքի աշխույժ փողոցներից մի քանի քայլ հեռու: Թափառում էր հսկա պալատների միջև, անցնում անծայրածիր, սալարկված հրապարակներով, տաճարը շուրջկալող անձեռակերտ ճաղաշարքի երկայնքով: Լռության մեջ նրա ոտնաձայները զրնգում էին պալատների հսկա պատերի արանք-

ներում: Մի խուլ աղմուկ էր նրան հասնում քաղաքից: Թաղամասում վարունգ վաճառողներ չկային, բայց ինչ-որ ճնշող բան կար այդ անխոս վեհության մեջ: Եվ դա այնքան ուժեղ էր, որ Մերսոն, ի վերջո, իջնում էր դեպի այն հոտը կամ մեղեդին, որոնք հետայսու իր հարազատներն էին: Ճաշում էր իր հայտնաբերած ռեստորանում, որի հետ արդեն մտերմացել էր: Իր մշտական տեղն ուներ կարմիր խաչով մարդու մոտ, որը գալիս էր միայն երեկոյան, վերցնում մի գավաթ գարեջուր ու ծամծմում իր լուցկու չոփը: Ճաշին նորից հայտնվում էր կույր երաժիշտը, և Մերսոն շտապում էր արագ-արագ ուտել, վճարել ու վերադառնալ հյուրանոց, դեպի ջերմող երեխայի իր քունը. ամեն գիշեր տենդում էր:

Ամեն օր Մերսոն մտածում էր մեկնելու մասին և, օրեցօր խորասուզվելով լքվածության մեջ՝ նրա երջանկության ծգտումն ավելի էր թուլանում: Չորս օր էր, ինչ Պրահայում էր, բայց սանր դեռ չէր գնել, որի կարիքը զգում էր ամեն առավոտ: Զգում էր, որ ինչ-որ բան չի հերիքում իրեն, բայց սպասումները չափազանց տարտամ էին: Մի երեկո ռեստորան գնաց այն փողոցով, որտեղ առաջին անգամ հանդիպել էր հոտին: Հեռվից արդեն այն զգաց, ռեստորանից երկու քայլի վրա, բայց դիմացի մայթին ինչ-որ բան կանգնեցրեց նրան ու ստիպեց մոտենալ: Մի մարդ էր ընկած մայթին՝ ձեռքերը խաչած, ձախ այտը՝ գետնին: Երեք-չորս հոգի էին կանգնած, հենված պատին, ասես ինչ-որ բանի սպասելով, սակայն շատ անվրդով տեսք ունեին: Մեկը ծխում էր, մյուսները խոսում էին ցածրաձայն: Մեկն էլ միայն վերնաշապիկով, բաճկոնը՝ թևին, ծղոտե գլխարկը ետ գցած, մնջախաղային մի տեսակ վայրի պար էր պարում՝ հնդիկի նման ոտքերը դոփելով ու ծամածռելով: Բավական բարձրից եկող լապտերի թույլ լուսավորությունը խառնվում էր ռեստորանի աղոտ լույսին: Այդ անդադար պարող մարդը, ձեռքերը խաչած դիակը, չափազանց անվրդով հանդիսականները, այդ ամբողջ զավեշտական հակադրությունը և պարապ լռությունը, վերջապես հայեցողությամբ և անմեղությամբ ստեղծված հավասարակշռության այդ պահը՝ լույսի ու ստվերի ճնշող խաղերի մեջ Մերսոյին ներշնչեցին, թե ուր որ է աշխարհը խելա-

հեղորեն կփլուզվի: Ավելի մոտեցավ: Մեռածի գլուխը լողում էր արյան մեջ: Գլուխը վերքի կողմն էր շրջված և հանգչում էր հանգիստ: Պրահայի այդ խուլ անկյունում, փոքր-ինչ աղտոտ սալահատակի վրա, հազիվ տեսանելի լույսի մեջ, մի քանի քայլի վրա անցնող մեքենաների թաց աղմուկը, դղրդալից ու հատուկենտ տրամվայների հեռավոր երթևեկը արթնացնում էին մահը՝ քաղցրավուն ու պնդաճակատ, ինչպես նաև նրա կանչը և խոնավ շունչը, որ զգաց Մերսոն այդ պահին և արագաքայլ հեռացավ առանց ետ նայելու: Հանկարծ քթին խփեց հոտը, որ մոռացել էր: Մառան մտավ ու նստեց իր սեղանի առջև: Մարդն այնտեղ էր, բայց առանց լուցկու: Մերսոյին թվաց, թե իր հայացքում նա ինչ-որ չփոթված բան նկատեց: Փորձեց հեռու վանել այդ հիմար միտքը: Բայց ամեն ինչ խառնվել էր գլխում: Ոչինչ չպատվիրեց, անսպասելիորեն վեր թռավ, վազեց հյուրանոց ու փլվեց անկողնում: Ինչ-որ սուր բան ծակում, այրում էր քունքը: Սիրտը դատարկ էր, ստամոքսը ճմլվում էր, ըմբոստացած մարմինը պայթում: Աչքերը հեղեղված էին անցյալի պատկերներով: Ինչ-որ բան էր աղաղակում իր մեջ՝ կանացի շարժումներ, բացվող գրկեր, տաք շրթունքներ: Պրահայի տառապալից գիշերների խորխորատներից, քացախահոտերից ու մանկական մեղեդիներից իր առջև հառնում էր բարոկոյի աշխարհի հնավանդ ու տագնապահար կերպարանքը, որն իրեն ուղեկցել էր տենդի ժամանակ: Հազիվ շնչելով ու կույրի պես խարխափելով՝ մեքենաբար նստեց անկողնում: Պահարանի դարակը բաց էր, անգլերեն թերթ կար այնտեղ, որից մի ամբողջ հոդված կարդաց: Հետո նորից փռվեց անկողնում: Մարդու գլուխն էր՝ շրջված վերքի վրա, իսկ վերքի մեջ կարելի էր մի ամբողջ ձեռք մտցնել: Նայեց իր ձեռքերին, և հոգում մանկական ցանկություններ արթնացան: Մի կիզիչ ու թաքուն ջերմեռանդություն, միահյուսվելով արցունքներին, ուռչում էր կրծքում, և դա կարոտն էր քաղաքների՝ լի արևով ու կանաչով, կանաչավուն երեկոներով, որոնք փակում են վերքերը: Արցունքները հորդեցին՝ իր մեջ ընդարձակելով միայնության ու լռության հսկայածավալ լիճը, որի վրա թևածում էր իր ազատագրության թախծոտ մեղեդին:

Գնացքում, որն իրեն հյուսիս էր տանում, Մերսոն զննում էր ձեռքերը: Երկինքն ամպրոպաշունչ էր, և նրա միջով սուրացող գնացքն իր հետևից թողնում էր ծանր ու ցածրակախ ամպերի շարաններ: Մերսոն մենակ էր տաք, հեղձուցիչ վագոնում: Նա հապճեպ էր մեկնել գիշերը և այժմ մենակ, մոայլ առավոտվա մեջ ընդբոշխնում էր Բոհեմիայի քնքուշ բնապատկերները, որտեղ աննշան սպասումը մետաքսավետ հսկա բարդիների ու գործարանային հեռավոր ծխնելույզների միջև ասես վերածվում էր լացելու ցանկության: Հետո նայեց ներմակ տախտակին, որի վրա կար եռալեզվյա մի գրություն. «Nicht hinauslehnen, E pericoloso sporgersi, Դուրս չկախվել»: Հետո կրկին նայեց ձեռքերին, որոնք կենդանի ու մոլեգին գազանիկների նման ուշադրություն էին գրավում: Մեկը՝ ձախը, երկար էր ու ճկուն, մյուսը՝ կոշտ ու մկանուտ: Նա գիտեր իր ձեռքերը, բայց ասես նորից էր ճանաչում, միաժամանակ զգալով, որ դրանք ինքնուրույն են և ընդունակ գործելու իր կամքից անկախ: Նրանցից մեկը հենվեց ճակատին՝ ասես խոչընդոտելով քունքերում տրոփող տենդին: Մյուսը սահեց բաճկոնի երկայնքով, մտավ գրպանն ու ծխախոտ հանեց, բայց իսկույն մի կողմ գցեց, երբ մտաբերեց փսխելու ցանկությունը, որից հյուծվում էին ուժերը: Վերադառնալով ծնկների վրա՝ նրանք թուլացան, շրջվեցին ափով դեպի վեր, գավաթի ձև ստացան և Մերսոյին ընծայեցին արտացոլանքն իր կյանքի՝ լի անտարբերությամբ և պատրաստ տրվելու ցանկացածին, ով կուզենար վերցնել:

Երկու օր է՝ ճանապարհորդում էր: Բայց այս անգամ փախչելու բնազդը չէր, որ առաջ էր մղում նրան: Վագոնը, որով անցավ Եվրոպայի կեսը, նրան պահում էր երկու աշխարհի սահմանագծին: Երեկ նստել էր, իջնելու էր վաղը: Այժմ նա իրեն դուրս էր հանում մի կյանքից, որից կուզենար ջնջել ամեն հիշատակ: Թող նա իրեն հասցնի մի նոր աշխարհի շեմը, ուր ցանկությունն է միայն արքա: Մերսոն բոլորովին չէր ճանճրանում: Կծկված անկ-

յունում, որտեղ ոչ ոք գրեթե չխանգարեց իրեն, նա մերթ նայում էր ձեռքերին, մերթ բնապատկերներին ու խորհում էր: Կամովին երկարածգեց ճանապարհորդությունը մինչև Բրեսլաու՝ չարչարվելով միայն մաքսատներում տոմս փոխելու համար: Նա ուզում էր էլի մնալ իր ազատությանը դեմառդեմ: Բայցանչափ հոգնած էր և ուժ չուներ շարժվելու: Ի մի էր բերում իր մեջ եղած ուժի և հույսերի փոքրագույն մասնիկներն անգամ, սեղմում դրանք, վերախմբավորում՝ ձգտելով վերստեղծել ինքն իրեն, միաժամանակ նաև իր հետագա ճակատագիրը: Իրեն դուր էին գալիս երկար գիշերները, երբ գնացքը սուրում էր սահուն ռելսերի վրայով, թաքուռի նման անցնում փոքրիկ կայարաններով, ուր միայն պատի ժամացույցն է լուսավորվում, հանկարծակի արգելակում մեծ կայարանների լույսերի առջև, որ հազիվ հասցնում ես նկատել, բայց նա արդեն կլանել է գնացքը և խցիկները շռայլորեն լցրել ոսկով, լույսով ու ջերմությամբ: Մուրճերն էին զրնգում անիվների վրա, շոգեքարշն էր փնչացնում գոլորշու մեջ, իսկ երկաթուղայինի ինքնաբերական շարժումը, երբ իջեցնում էր կարմիր սկավառակը, Մերսոյին նորից էր նետում գնացքի խելահեղ ընթացքի մեջ, որտեղ արթուն էին մնում իր պայծառամտությունն ու անհանգստությունը: Խցիկում կրկին լույսի ու ստվերի խաչաձև խաղն էր, սևի ու ոսկեգույնի բոլորակարը: Դրեզդեն, Բաուտցեն, Հյորլից, Լիգնից: Եվ նորից երկար գիշերն է առջևում, այդ հսկայական ժամանակը՝ գալիք կյանքի ձևավորումները նախագծելու համար, երկարատև պայքար մղելու այն մտքի հետ, որ խույս է տալիս կայարանի կեռմանում, թողնում, որ հետապնդեն, հասնեն հետևից, բռնեն, և կրկին փախչում, ընկնում է անձրևից, լույսերից փայլող ռելսաթելերի պարի առջև: Մերսոն բառ, դարձվածք էր փնտրում ձևավորելու սրտի հույսը, ուր պարփակված էր իր անձկությունը: Նման թույլ վիճակում նրան անհրաժեշտ էին ձևակերպումներ: Ողջ ցերեկն ու գիշերը անցնում էին համառ պայքարում այդ բառի, պատկերի հետ, որոնք այսուհետ պետք է որոշեին իր հայացքի գույնը կյանքի նկատմամբ, սրտաշարժ կամ թշվառ երազանքը, որով հյուսում էր իր ապագան: Փակում էր աչքերը: Ապրելու համար

ժամանակ է պետք: Ինչպես արվեստի ամեն գործ, կյանքը ևս խորհել է պահանջում: Մերսոն մտորում էր իր կյանքի մասին և իր խենթացած խիղճն ու երջանկության ձգտումը քարշ տալիս խցում, որն այդ օրերին ասես Եվրոպայի այն բանտախցիկներից լիներ, որտեղ մարդը ճանաչում է մարդուն այն չափով, որքանով նա գերազանցում է իրեն:

Երկրորդ առավոտյան գնացքը զգալիորեն դանդաղեցրեց ընթացքը, չնայած շուրջը միայն դաշտեր էին: Մի քանի ժամ էր մնացել, որ հասնեին Բրեսլաու, և օրը բացվում էր Սիլեզիայի երկայնածիգ հայթավայրի վրա, որտեղ ծառեր չէին երևում, ոչինչ՝ բացի կպչուն ցեխից՝ քխպամած ու անձրևից ուռած երկնքի ներքո: Աչքդ որքան կտրեր՝ կանոնավոր հեռավորությունների վրա խոշոր թռչուններ՝ փայլուն թևերով սավառնում էին խմբերով, գետնից ընդամենը մի քանի մետրի վրա, անընդունակ ավելի վեր բարձրանալու սալաքարի նման ծանր երկնքի ներքո: Նրանք դանդաղ ու ծանր պտույտներ էին գործում, և երբեմն նրանցից մեկը լքում էր երամը, թևածում գետնին շատ մոտիկ, գրեթե միաձուլվում նրան և ապա հեռանում նույն թռիչքով՝ երկարատև, անվերջանալի, մինչև երկնքում վերածվեր սև կետի: Մերսոն ձեռքով մաքրել էր լուսամուտի գոլորշին և հիմա ագահորեն նայում էր ապակու վրա մատների թողած ակոսների միջից: Վշտահար երկրից դեպի անգույն երկինք էր ձգվում կերպարանքը ապերախտ աշխարհի, որտեղ առաջին անգամ նա վերադառնալու էր ինքն իրեն: Անմեղ հուսահատության հասցված այս երկրի վրա, իբրև կորած ճանապարհորդ այդ նախնադարյան աշխարհում, նա վերագտնում էր իր կապվածությունը աշխարհին և, բոունցքները սեղմած կրծքին, դեմքը հենած ապակուն, փորձում էր կերպավորել իր խոյանքը դեպի ինքն իրեն և դեպի իր մեջ ննջող հավատի մեծությունները: Նա կուզենար խրվել այդ ցեխում, թաղվել գետնի մեջ, թավալվել կավային լոգանքում, հետո բարձրանալ անսահման դաշտավայրի վրա՝ ցեխածածկ և թևերը լայն բացած, սպունգանման ու մետաքսյա երկնքի առջև, ասես կյանքի պայծառ ու հուսահատեցնող խորհրդանիշին դեմառդեմ՝ հավաստելու իր համերաշխությու-

ը աշխարհի հետ, որքան էլ վանող լիներ, կուզենար իրեն հռչակել համախոհ, չնայած նրա երախտամոռությանն ու զազրելիությանը: Ահավոր խոյանքը, որն իրեն լարված էր պահում մեկնումից ի վեր, վերջապես տապալվեց: Մերսոն դեմքը սեղմեց լուսամուտին, և արցունքները ճզմվեցին սառը ապակու վրա: Ապակին նորից մշուշվեց, հարթավայրն անհետացավ:

Մի քանի ժամ անց նա ժամանեց Բրեսլաու: Հեռվից քաղաքը նրան թվաց գործարանային ծխնելույզների ու տաճարների սրածողերի անտառ: Մոտիկից՝ կառուցված էր աղյուսից ու սև քարից: Կարճ հովհարավոր սաղավարտներով մարդիկ էին թափառում: Հետևեց նրանց, առավոտն անցկացրեց բանվորական սրճարանում: Այնտեղ մի երիտասարդ հարմոնիկա էր նվագում. բարի և հիմարավուն մեղեդիներ, որոնք խաղաղեցնում են հոգիդ: Մերսոն որոշեց նորից մեկնել հարավ, սակը գնելուց հետո: Հաջորդ օրն արդեն Վիեննայում էր: Ցերեկով պառկեց և քնեց ողջ գիշեր: Երբ արթնացավ, տենդը լրիվ անցել էր: Նախաճաշին ագահաբար կերավ թերխաշ ձու և թարմ սերուցք: Սիրտը մի քիչ խառնեց: Դուրս եկավ: Առավոտը լցված էր արևով ու անձրևով: Պարզվեց՝ Վիեննան խաբուսիկ քաղաք էր, ոչինչ չկար այցելելու: Սուրբ Ստեփանոս տաճարը չափազանց մեծ էր, շուտ ձանձրացրեց: Նա նախընտրում էր սրճարանները, իսկ երեկոյան՝ պարահրապարակը ջրանցքի ափին: Օրվա ընթացքում զբոսնում էր Ռինգի երկայնքով, գեղեցիկ ցուցափեղկերի ու վայելչատես կանանց շքեղության մեջ: Միաժամանակ հրճվում էր այդ թեթևսոլիկ և պերճաշուք միջավայրում, որը մարդուն տարանջատում էր ինքն իրենից աշխարհի անբնական քաղաքներից մեկում: Բայց կանայք գեղեցիկ էին, այգիների ծաղիկները՝ փթթուն ու զգլխիչ: Եվ իրիկնապահին, Ռինգում փայլուն ու մատչելի, ճեմող ամբոխի մեջ Մերսոն հուշարձանների վերևում դիտում էր քարեղեն ձիերի ունայն քոհիչքը բոսորագույն վերջալույսի մեջ: Այդ ժամանակ էր, որ հիշեց իր ընկերուհիներին՝ Ռոզին ու Քլերին: Առաջին անգամ իր մեկնումից ի վեր նա նամակ գրեց: Իրականում դա իր լռության ավելցուկն էր, որ թափվեց թղթին:

«Մանկիկներս

Գրում եմ ձեզ Վիեննայից: Չգիտեմ՝ ուր եք կորել: Ես ապրուստս վաստակում եմ ճանապարհորդելով: Չքնաղ բաներ տեսա՝ թեպետ դառնացած սրտով: Այստեղ գեղեցկությունն իր տեղը զիջել է քաղաքակրթությանը: Դա հանգստացնում է մարդուն: Եկեղեցիներ կամ հինավուրց վայրեր չեմ այցելում, զբոսնում եմ օղակածև Ռինգի երկայնքով: Իսկ երբ երեկոն է իջնում թատրոնների ու պերճաշուք պալատների վրա, քարեղեն ձիերի կույր խոյանքը վերջալույսի բոսորագույնի մեջ սիրտս լցնում է դառնության ու երջանկության մի ուրույն խառնուրդով: Առավոտյան ուտում եմ թերխաշ ձու և թարմ սերուցք: Ուշ եմ վեր կենում, հյուրանոցում բոլորը շատ բարյացակամ են: Չգացված եմ հյուրանոցի աշխատակիցների վերաբերմունքից, բտված՝ հոյակապ սնունդով (օ՜, այդ թարմ սերուցքը): Կան տեսարժան բաներ և գեղեցիկ կանայք: Միայն իսկական արև չկա:

Դուք ի՞նչ եք անում: Գրեք ձեր և արևի մասին ինձ՝ դժբախտիս, որը ոչինչ չունի, անօթևան է և մնում է ձեր հավատարիմ՝

Պատրիս Մերսո»:

Այդ երեկո, ավարտելով նամակը, նա վերադարձավ պարահրապարակ: Երեկոն անցկացրեց պարուհիներից մեկի՝ Հելենայի հետ, որը մի քիչ ֆրանսերեն գիտեր և հասկանում էր իր վատ գերմաներենը: Գիշերվա ժամը երկուսին, երբ դուրս եկան պարահրապարակից, նրան տուն ուղեկցեց, սեր արեց աշխարհի ամենավայելուչ ձևով և առավոտյան իրեն հայտնաբերեց մերկ, օտար անկողնում՝ Հելենայի կողքին, որի երկար ոտքերն ու լայն ուսերն իր մեջ արթնացրին հիացական, անշահախնդիր տրամադրություն: Չցանկանալով արթնացնել նրան՝ մի թղթադրամ դրեց նրա կոշիկներից մեկի մեջ և պատրաստվեց հեռանալ: Երբ հասավ դռանը, լսեց, որ կանչում են.

- Բայց սխալվել ես, սիրելիս:

Մոտեցավ անկողնում: Իրոք, սխալվել էր: Վատ տարբերելով ավստրիական դրամը՝ նա հարյուր շիլինգի փոխարեն թողել էր

հինգհարյուրանոց:

- Դա քեզ համար է: Դու հոյակապ էիր:

Ծեկ ու խառնիխուռն մազերի տակից Հելենայի դեմքը լուսավորվեց պայծառ ժպիտով: Միանգամից վեր թռավ, կանգնեց անկողնում և համբուրեց նրա այտերը: Այդ համբույրն, անկասկած, առաջինն էր նրա կյանքում, որ տվել էր ի սրտե, և որը Մերսոյին հուզեց: Նրան պառկեցրեց, մոտեցավ դռանը, նայեց ժպտալով և ասաց.

- Մնաս բարով:

Հելենան աչքերը չռեց քթի տակ քաշած վերմակի վրայից և, պատասխան չգտնելով, թողեց, որ անհետանար:

Մի քանի օր անց Մերսոն Ալժիրից պատասխան ստացավ.

«Միրելի Պատրիս

Մենք Ալժիրում ենք: Ձեր մանկիկները երջանիկ կլինեն ձեզ տեսնելով: Եթե այդտեղ ոչինչ չկա ձեզ կապող, ուրեմն եկեք Ալժիր, մենք ձեզ կընդունենք Տանը: Մենք լավ ենք: Իհարկե, մի քիչ ամաչում ենք՝ բայց ավելի շուտ պատշաճությունից ելնելով: Ինչպես նաև՝ նախապաշարումներից: Եթե երջանկություն եք փնտրում, փորձեք գտնել այստեղ: Դա ավելի լավ է, քան լինել պաշտոնաթող ենթասպա: Խոնարհաբար պարզում ենք մեր ճակատները ձեր հայրական համբույրների առջև:

Ռոզ, Քլեր, Կատրին:

Հ.Գ. – Կատրինը բողոքում է «հայրական» բառի դեմ: Նա մեզ հետ է ապրում: Եթե ուզեք, նա կդառնա ձեր երրորդ դուստրը»:

Ալժիր որոշեց հասնել Ջենովայով: Բախտորոշ վճիռ կայացնելուց և իրենց կյանքի էական փուլը խաղալուց առաջ շատերը կարիք ունեն միայնության, այնպես էլ նա՝ միայնությամբ և օտարոտիությամբ թունավորված, ուզում էր քաշվել բարեկամության ու վստահության մեջ և իր խաղը սկսելուց առաջ ճաշակել թվացյալ անվտանգությունը:

Գնացքում, որն իրեն Ջենովա էր տանում հյուսիսային Իտա-

լիայով, նա ունկնդրում էր հազարավոր ձայներ, որոնք գովերգում էին գալիք երջանկությունը: Հենց հայտնվեց առաջին նոճին՝ սլացիկ, մաքուր հողի վրա, Մերսոյի նյարդերը տեղի տվեցին: Իրենց զգալ էին տալիս թուլությունն ու տենդը: Բայց ինչ-որ բան փափկել, հալվել էր իր մեջ: Շուտով այնքանով, որքանով արևը բարձրանում էր զենիթում, և ծովն ավելի մոտիկ էր թվում շողացող ու ոստոստուն երկնքի ներքո, որտեղից սարսռեցնող ձիթենիների վրա հոսում էին եթերային ու լուսաշող գետեր, փթթումը, որ խլրտացնում էր աշխարհը, միաձուլվեց իր սրտի ցնծությանը: Գնացքի աղմուկը, մանկան շաղակրատանքը՝ լեփ-լեցուն խցում, այն ամենը, ինչ հրճվում ու զգում էր շուրջը, ոիթմ ու չափ էր հաղորդում իր ներքին պարեղանակին, որ հյուսում էր նա ժամեր շարունակ, անշարժ նստած, աշխարհի չորսդին, և վերջապես այդ ամենը պարպվեց ցնծալով, երբ հայտնվեց ժխորային Ժենում, որը պայթում էր առողջությունից ծովածոցի ու երկնքի առջև, ուր մինչև ուշ երեկո մենամարտում էին տենչանքն ու ծուլությունը: Ծարավ էր, քաղցած, սիրելու, հրճվելու ու համբուրելու ծարավ: Աստվածները, որ այրել էին իրեն, նետեցին ծովը, նավահանգստի մի փոքրիկ անկյունում, որտեղ ճաշակելով հանքածյութի ու աղի միախառնված համը, լողաց ամբողջ ուժով, մինչև իր հնարավորությունների վերջին սահմանը: Հետո մոլորվեց հին քաղամասի նեղլիկ ու զանազան հոտերով լի փողոցներում, ըմբոշխնեց գույների խառնիճաղանջությունը, վայելեց արևից ծանրացած երկինքը տների վերևում և հանգստացավ կատուների կողքին ամառվա աղտոտությունների մեջ: Հետո բարձրացավ Ջենովայի վրա իշխող ճանապարհով, և ահագնացող ծովը հառնեց իր առջև՝ ծանրաբեռնված անուշաբույրերով ու լույսերով: Փակեց աչքերն ու ամուր գրկեց տաք քարը, որի վրա նստած էր, հետո կրկին նայեց քաղաքին, որտեղ կյանքը եռում էր գրգռիչ ու գարշահամ զեղությամբ: Հաջորդ օրերին նա հաճույքով նստում.էր նավահանգիստ իջնող աստիճաններին և հիանում ջահել աղջիկներով, որոնք կեսօրին բարձրանում էին կառամատույցի գրասենյակները: Նայելով նրանց՝ բոկոտիկներ հագած, պայծառերանգ ու թեթև շրջազգեստ-

ների տակ անբռնազբոս թրթռացող կրծքերով, Մերսոյի թուքը չորանում էր բերանում, սիրտը նվաղում տենչանքից, որի մեջ էր նա գտնում և՛ ազատությունը, և՛ արդարացումը: Երեկոյան նույն կանանց նա հանդիպում էր փողոցներում, հետևում՝ նրանց կոնքերում զգալով տաք, ցանկությունից գալարվող, վայրի ու քնքուշ գազանին: Երկու օր նա այրվում էր այդ անմարդկային գրգիռների մեջ: Երրորդ օրը նա թողեց Ջենովան և մեկնեց Ալժիր:

Ամբողջ ճանապարհորդության ընթացքում դիտում էր ջրի ու լույսի խաղերը, ծովը՝ առավոտյան, կեսօրին, երեկոյան, և իր սրտի բաբախյունը համաձայնեցնում երկնքի դանդաղ զարկերակի հետ, վերագտնում ինքն իրեն: Նա չէր հավատում բուժման ընդունված ձևերին: Կամրջակին փռված՝ հասկանում էր, որ չի կարելի քնել, պետք է արթուն լինել, չտրվել մարմնի և հոգու բարեկեցությանը: Նա պետք է ստեղծեր իր երջանկությունն ու իր արդարացումը: Եվ այժմ, անշուշտ, ավելի հեշտ էր այդ պարտականության կատարումը: Մի արտասովոր անդորր էր իր մեջ ներարկում՝ միանգամից զովացած երեկոյի մեջ հառնող առաջին աստղը, դանդաղ ամրապնդվելով երկնքում, ուր մարում էր կանաչավունը, որպեսզի ծնվեր դեղինը, և զգում էր, որ մեծ խռովքից ու ամպրոպից հետո իր մեջ եղած ողջ խավարն ու չարությունը թոթափվում է՝ տեղ բացելով բարության ու վճռականության համար: Նա ամեն ինչ հստակ պատկերացնում էր: Երկար էր երազել կնոջ սեր, սակայն դրա համար չէր ստեղծված ինքը: Իր ողջ կյանքում, սկսած կառամատույցի գրասենյակից, բնակարանից, քնից, ճաշարանից ու սիրուհուց, նա միայն մի բան էր որոնել՝ երջանկություն, որի գոյությանն իր խորքում չէր հավատում, ինչպես բոլորը: Չնացրել էր, թե երջանկություն է ուզում, բայց երբեք չէր ձգտել գիտակցական և ազատագրված կամքով: Երբեք, մինչև այն օրը...

Եվ այդ պահից սկսած, սթափ գլխով հաշվարկած արարքի շնորհիվ իր կյանքը փոխվեց, և երջանկությունը հնարավոր դարձավ: Անկասկած, ցավերով էր լույս աշխարհ բերել նորընծա էակին: Իսկ գուցե իր խաղացած նվաստացուցիչ կատակերգության գնո՞վ: Այժմ նա տեսնում էր, օրինակ, որ Մարթայի հետ իրեն կա-

պում էր ավելի շուտ սնափառությունը, քան սերը: Նույնիսկ իրեն պարզած շուրթերի այդ հրաշքը սոսկ ուրախալի զարմանք էր, երբ հավաստիանում էր, որ իր ուժն ընդունվել և հասել է նվաճման: Իր սիրո ամբողջ պատմությունն իրականում այդ սկզբնական զարմանքի փոխարինումն էր ինքնավստահությամբ, համեստության փոխարինումը սնափառությամբ: Մարթայի միջոցով նա սիրում էր այն երեկոները, երբ կինո էին գնում, երբ հետաքրքրասեր հայացքները պտտվում էին նրա շուրջը, և երբ նրան ներկայացնում էր հասարակությանը: Մարթայի մեջ նա իրեն էր սիրում, իր ուժը, իր կենսական փառամոլությունը: Նույնիսկ իր ցանկասիրությունը բխում էր այդ առաջնային զարմանքից՝ ունենալ այդ առանձնահատուկ, չքնաղ մարմինը, տիրանալ նրան և նվաստացնել: Իսկ այժմ գիտեր, որ ստեղծված չէր նման սիրո համար, այլ այն անմեղ և ահեղ սիրո, որի սև աստծուն ծառայելու էր այսուհետ:

Ինչպես հաճախ է պատահում, այն լավագույնը, որ կար իր կյանքում, բյուրեղացել էր վատթարագույնի շուրջը: Քլերն ու իր ընկերուհիները, Զագրևսն ու իր երջանկության ճգտումը հավաքվել էին Մարթայի շուրջը: Գիտեր, որ այժմ քայլ անելու հերթը երջանկության իր ճգտումինն է: Բայց դրա համար պետք էր կառչել ժամանակից. ժամանակ ունենալ՝ նշանակում է լինել փորձարկումներում՝ միաժամանակ և՛ հոյակապ, և՛ վտանգավոր: Պարապությունը ճակատագրական է լոկ միջակությունների համար: Շատերն անկարող են նույնիսկ ապացուցել, որ իրենք միջակ չեն: Նա նվաճել էր այդ իրավունքը: Բայց ապացույցներ էին հարկավոր: Միայն մի բան էր փոխվել: Նա իրեն ազատ էր զգում անցյալից և այն ամենից, ինչ կորցրել էր: Նրան պետք էր լոկ այդ նեղվածությունն ու փակ տարածությունը, իր լուսավոր և համբերատար ջերմեռանդությունը աշխարհի նկատմամբ: Ինչպես տաք հաց, որ բռնում և ճզմում ես ուզածիդ պես, այդպես էլ նա կուզեր կյանքն ունենալ ձեռքերում: Ինչպես այն երկու երկար գիշերների ընթացքում, երբ կարող էր ինքն իր հետ խոսել ու նախապատրաստվել ապրելու, նաբաթ շաքարի նման ծծելու կյանքը, ճևավորելու, հեսանելու և, վերջապես, սիրելու այն: Այսպիսին էր նրա ողջ կիր-

քը: Այսուհետև իր ջանքերը պետք է ուղղված լինեն պահպանելու իրենից եկող և իրեն պատկանող ներկայությունը՝ կյանքի բոլոր կերպավորումներում, նույնիսկ մեծության գնով, չնայած գիտեր, որ այժմ այն գրեթե անտանելի է: Բայց նա չէր դավաճանելու: Այստեղ նրան օգնության էր հասնելու իր հախուռն բնավորությունը և իրեն առաջնորդելու էր դեպի այն կետը, ուր միահյուսվելու էր սիրո հետ՝ որպես ամեհի մի կենսատենչ:

Ծովը դանդաղ քսմսվում էր նավի ողնափայտերին: Երկինքը բեռնվում էր աստղերով: Եվ Մերսոն լռելյայն զգում էր իր մեջ փոթորկվող ծայրահեղ ու խորը ուժերը, որոնք ի զորու էին սիրելու այդ կյանքը, հիանալու նրա արտասվաթոր ու արևահամ դեմքով, այդ կյանքը՝ աղի և տաք քարի մեջ, և նրան թվում էր՝ գգվանքներից սիրելու և վհատության նրա բոլոր ուժերը բազմապատկվելու են: Հենց այս էր նրա աղքատությունը և միակ հարստությունը: Ասես խաղը վերսկսվում էր զրոյից, սակայն վստահ էր իր ուժերին և գիտակցված լավատեսությանը, որոնք իրեն տանում էին ճակատագրին դեմ հանդիման:

Իսկ հետո եկավ Ալժիրը, արշալույսի դանդաղ բացվելը, Կասբահի շլացուցիչ ջրվեժը ծովի վրա, բլուրները, երկինքը, ծովախորշը՝ լայն պարզած բազուկներով, տները ծառերի արանքներում և կառամատույցների արդեն մերձակա հոտը: Այդ ժամանակ Մերսոն անդրադարձավ, որ Վիեննայից մեկնելուց ի վեր ոչ մի անգամ չէր մտաբերել Զագրևսին, այն մարդուն, որին սպանել էր սեփական ձեռքերով: Ուրեմն, օժտված էր մոռանալու այն հատկությամբ, որը բնորոշ է միայն երեխային, հանճարին և անմեղին: Անմե՞ղ. ուրախությունից խուճապահար, վերջապես հասկացավ, որ ինքը ստեղծված է երջանկության համար:

Պատրիսն ու Կատրինը առավոտյան նախաճաշում են արևով ողողված դարավանդին: Կատրինը լողազգեստով է: «Տղան», ինչպես անվանում են ընկերուհիները, կարճ վարտիքով է, թաշկինակը՝ օձիքին: Աղով լոլիկ են ուտում, կարտոֆիլով աղցան, մեղր ու մեծ քանակությամբ միրգ: Դեղձը դնում են սառույցի մեջ պաղելու, հետո հանելով, լիզում են նրա թավշանման կեղևի աղվամազի վրա գոյացած կաթիլները: Պատրաստում են նաև խաղողի հյութ, որ խմում են դեմքերը պարզած արևին՝ սևանալու համար (գոնե Պատրիսը գիտի, թե որն է թուխ լինելու առավելությունը):

- Ճաշակիր արևը,- ասում է Պատրիսը՝ թևը պարզելով Կատրինին:

Աղջիկը լիզում է թևը:

- Այո,- ասում է նա,- դու էլ ճաշակիր:

Նա էլ է ճաշակում, հետո փռվում է՝ քորելով կողերը: Կատրինը պառկում է փորի վրա ու լողազգեստն իջեցնում մինչև կոնքերը:

- Անամոթ չե՞մ:

- Ոչ,- ասում է տղան՝ առանց նայելու:

Արևը հոսում է և հապաղում նրա դեմքին: Ծակոտիները մի թեթև խոնավ են: Ծնչում է ներսից հորդացող կրակը, որ քննեցնում է իրեն: Կատրինը հնձաձում է իր արևը, հառաչում է ու տնքում:

- Լավ է,- ասում է նա:

- Այո,- ասում է տղան:

Տունը կախված է բլրակի գագաթից, որտեղից երևում է ծովախորշը: Թաղամասում այն անվանում են «Երեք ուսանողուհիների տուն»: Այնտեղ բարձրանում են շատ դժվարին ճանապարհով, որը սկսվում ու ավարտվում է ձիթենիներով: Ճանապարհի մեջտեղում ասես սանդղահարթակ է բացվում մի գորշ պատի երկայնքով, որը ծածկված է անպատկառ նկարներով ու քաղաքական կոչերով. դրանց ընթերցումը թարմ շունչ է հաղորդում հոգնաբեկ ճանապարհորդին: Հետո նորից ձիթենիներն են, երկնքի կապույտ

պաստառը ճյուղերի արանքում, մազտաքիի բույրը շիկակարմրին տվող մարգագետնի երկայնքով, ուր չորանում են մանիշակագույն, դեղին ու կարմիր կտորները: Քրտնաթոր, շնչասպառ և հուսահատ՝ հասնում ես մի փոքրիկ կապտավուն պարսպի, խույս տալով բուգենվիլյեների ճանկերից, հրում ես դռնակը, ապա նորից մագլցում աստիճաններով, որոնք սանդուղք են հիշեցնում և թաքնված են կապտավուն կիսախավարում. այստեղ արդեն կարող ես հագեցնել ծարավդ: Ռոզը, Քլերը, Կատրինն ու տղան այդ կայարանը կոչում են «Աշխարհին առճակատ տուն»: Ամբողջովին բացված բնապատկերի առջև՝ ասես մակույկ լինի, որ կախված է պայծառ երկնքում, աշխարհի ամենագունագեղ պատի վերևում: Ներքևում, ծովախորշի կատարյալ կորագծից սկսած, ինչ-որ մի խոյանք շաղախում է խոտերն ու արևը, մինչև տան մատույցները սփռում սոճիներ, փոշեթաթավ ձիթենիներ, նոճիներ ու տենդածառեր: Աստվածային այդ ընծայի խորքում, ըստ տարվա եղանակների ծաղկում են ճերմակ մասրենիներն ու միմոզաները, իսկ ցախակեռասը թույլ է տալիս, որ ամռան երեկոները տան պատերից վեր բարձրանա իր անուշաբույրը: Ճերմակ ներքնազգեստ ու կարմիր տանիքներ, ծովի ժպիտներ՝ զեհավոր երկնքի ներքո, անկնճիռ հորիզոնի մի ծայրից մինչև մյուսը. «Աշխարհին առճակատ տունը» իր լայն ծովախորշերն է բացում գույների ու լույսերի այս տոնավաճառի վրա: Սակայն հեռվում մանիշակագույն բարձր լեռնապարերը կտրուկ զառիվայրով միանում են ծովախորշին և ասես այդ արբածությունն են պարունակում հեռավոր ուրվագծերի մեջ: Այդժամ ոչ ոք չի տրտնջում դիք ճանապարհից և հոգնությունից: Ամեն օր կարելի է հրճվանք նվաճել:

Ապրելով այսպես՝ աշխարհին ի տես, զգալով սեփական կշիռդ, ամեն օր տեսնելով՝ ինչպես է լուսավորվում դեմքդ, հետո ողջ երիտասարդությամբ հանգչելով՝ վաղը կրկին վառվելու համար, չորս բնակիչները գիտակցում էին աշխարհի ներկայությունը, որն իրենց համար միաժամանակ և՛ դատավոր էր, և՛ արդարացում: Աշխարհն այստեղ դառնում է գործող անձ, հենվելով այն մարդկանց, որոնցից մենք հաճույքով ենք խորհուրդ ընդունում, և որոնց

մեջ հավասարակշռությունը չի սպանել սերը: Նրան են ընտրել վկա:

- Աշխարհն ու ես, մենք իրար չենք հասկանում,- ասում էր Պատրիսն առանց որևէ առիթի:

Կատրինը, որի համար մերկ լինել՝ նշանակում էր ազատագրվել նախապաշարումներից, օգտվում էր տղայի բացակայությունից, որպեսզի հանվեր դարավանդի վրա: Եվ երկար հիանալով երկնքի գույների փոփոխություններով, սեղանի շուրջը նստած՝ ասում էր մի տեսակ հուզախառն հպարտությամբ:

- Ես մերկ էի աշխարհի առջև:

- Այո,- ասում էր Պատրիսն արհամարհանքով,- կանանց համար իրենց մտքերը բնականաբար նախընտրելի են զգացմունքներից:

Այդ պահին Կատրինը ոստնում էր, որովհետև չէր ուզում մտավորականի դերում լինել: Իսկ Ռոզը և Քլերը կրկնում էին միաձայն:

- Լռի՛ր, Կատրին, դու իրավացի չես:

Պարզ էր, որ Կատրինը միշտ սխալվում էր, որովհետև այն կանանցից էր, որին բոլորը սիրում են նույն ձևով: Նրա մարմինը ծանր էր, լավ գծագրված, ուներ ցորնագույն մաշկ ու կենդանական բնազդ, որը շատ կարևոր է աշխարհում: Ոչ ոք նրանից ավելի լավ չէր միահյուսում ծառերի, ծովի և քամու խորախորհուրդ բարբառները:

- Այդ փոքրիկը,- ասում էր Քլերը՝ անընդմեջ ուտելով,- բնական ուժ է:

Հետո բոլորը գնում էին արևի տակ տաքանալու, նաև՝ լռելու: Մարդը մարդու ուժը նվազեցնում է, աշխարհը նրան թողնում է անխաթար: Ռոզը, Քլերը, Կատրինն ու Պատրիսը իրենց պատուհանների ետևում ապրում էին պատկերներով, երևույթներով, համաձայնելով իրենց ստեղծած խաղի մեջ, ծիծաղելով բարեկամության մեջ, ինչպես քնքշանքի պահին, սակայն երկնքի և ծովի զուգապարի առջև վերագտնում էին իրենց ճակատագրի գաղտնի գույները և, ի վերջո, սուզվում սեփական էության խորխորատները: Երբեմն կատուները միանում էին իրենց տերերին: Գյուլան

առաջ էր շարժվում՝ հավերժ խռոված, սև, նիհար ու նուրբ, հարցական նշանները կանաչ աչքերում և, բռնկվելով հանկարծահաս խենթությամբ, կռվում էր ստվերների հետ:

- Ներքին գեղձերն են տանջում,- ասում էր Ռոզը:

Հետո ծիծաղում էր, լրիվ տրվում ծիծաղին, խոպոպիկների տակից, ծալ-ծալ կոպերով ու կլոր ակնոցի միջից ժպտացող, զվարթ աչքերով, երբ Գյուլան ցատկում էր նրա վրա (ինչպիսի՞ շնորհ): Ռոզը շոյում էր փայլուն մազերը, ինքն էլ մեղմանում, թուլանում էր, դառնում քնքուշ աչքերով էգ կատու՝ հանգստացնելով կենդանուն իր նուրբ, եղբայրական ձեռքերով: Քանզի կատուն Ռոզի համար նույնպիսի ելք էր դեպի աշխարհը, ինչպես մերկությունը՝ Կատրինի համար: Կատրինը նախընտրում էր Կալի անունով կատվին: Նա դուրեկան էր, հիմարիկ, աղտոտ, ճերմակավուն մազերով և թույլ էր տալիս, որ լավ չարչարեն իրեն: Կատվի հետ գգուզներից Քլերի ֆլորենտական դեմքը շողում էր, հոգին լողում երանության մեջ: Լռակյաց էր, ինքնամփոփ, անսպասելի բռնկումներ էր ունենում և լավ ախորժակ: Տեսնելով, թե ինչպես է գիրանում, Պատրիսը փնթփնթում էր.

- Զզվեցնում ես,- ասում էր նա: - Գեղեցիկ էակն իրավունք չունի իրեն տգեղացնելու:

Բայց Ռոզը միջամտում էր.

- Հանգիստ թող երեխային: Կե՛ր, քույրիկս, մի՛ լսիր նրան:

Իսկ օրը արևելքից արևմուտք էր շրջվում բլրակների շուրջը, ծովի վրա, նուրբ արևի տակ: Ծիծաղում են, կատակում, ծրագրեր կազմում: Ծաղրում են պատշաճության կարգուկանոնը և ձևացնում, թե ենթարկվում են դրանց: Պատրիսն աշխարհի դեմքից անցնում էր ջահել կանանց լուրջ ու ժպտուն կերպարանքներին: Երբեմն զարմանում էր իր շուրջը հայտնված այդ տիեզերքից: Վստահություն ու բարեկամություն, արև ու ճերմակ տներ, ակնարկներ՝ հազիվ նշմարելի, բայց հասկանալի նրբերանգներով. այստեղ ծնվում էին անխաթար երջանկություններ, որոնց ճշգրիտ արձագանքը զգում էր իր մեջ: «Աշխարհին առճակատ տունը»,- ասում էին իրար մեջ,- տուն չէ, որտեղ զվարճանում են, այլ տուն,

որտեղ երջանիկ են»: Պատրիսը դա լավ էր զգում հատկապես երեկոյան, երբ ամեն մեկն ամփոփվում էր իր մեջ իրիկնապահի վերջին սյուքի հետ՝ տրվելով մարդկային ու վտանգավոր, ոչնչի չնմանվելու փորձությանը:

Այսօր Կատրինը արևային լոգանքից հետո գնաց գրասենյակ:

- Սիրելի Պատրիս,- ասաց հանկարծակի հայտնված Ռոզը,- լավ նորություն ունեմ ձեզ հայտնելու:

Դարավանդային սենյակում տղան այդ պահին անկաշկանդ փռված է բազմոցին, ոստիկանական վեպը ձեռքին:

- Լսում եմ ձեզ, սիրելի Ռոզ:

- Այսօր խոհանոցում ձեր հերթն է:

- Շատ լավ,- ասում է Պատրիսն առանց շարժվելու:

Ռոզը գնում է՝ վերցնելով ուսանողական պայուսակը, որի մեջ անտարբերությամբ դնում է նախաճաշի տաքդեղները և Լավիսի ճանճրալի «Պատմության» երրորդ հատորը: Պատրիսը, որ ոսպ է եփելու, մինչև ժամը տասնմեկը պարապ մաև է գալիս, զննում օքրագույն պատերով մեծ սենյակը, որ կահավորված է բազմոցներով, գրադարակներով, կանաչ, դեղին ու կարմիր դիմակներով, ևարնջագույն զոլեր ունեցող մետաքսե պաստառներով, հետո հապճեպ եռացնում է ոսպը առանձին, ձեթը լցնում կաթսայի մեջ, սոխեռած անում, ավելացնում լոլիկ, խառը կանաչի, այս ամենն իրար խառնելով և հայհոյելով Գյուլային ու Կալիին, որոնք սովից բողոքում են, չնայած Ռոզը երեկ նրանց ջանացել էր բացատրել.

- Հասկացեք, գազանիկներ, որ ամռանը շատ շոգ է, և ախորժակը փակվում է:

Կեսօրին քառորդ պակաս Կատրինը վերադառնում է՝ թեթև շրջազգեստով ու բոկոտիկներով: Ուզում է ցնցուղ և արևի լոգանք ընդունել: Սեղանին կմոտենա ամենավերջում: Ռոզը կասի խստորեն.

- Անտանելի ես, Կատրին:

Ջուրը վազում է լոգարանում: Ահա և շնչակտուր Քլերը.

- Ո՞սպ եք եփում: Հիանալի բաղադրատոմս գիտեմ:

- Գիտեմ: Վերցնում ես քարմ բթվասեր... և այլն: Ճիշտ չե՞մ

ասում, սիրելի Քլեր:

Փաստ է, որ Քլերի բաղադրատոմսերը միշտ սկսվում են թարմ թթվասերով:

- Պատրիսը ճիշտ է անում,- ասում է Ռոզը, որ նոր է եկել:

- Այո, իհարկե,- ասում է տղան: - Սեղան նստեք:

Ճաշում են խոհանոցում, որը նույն հաջողությամբ կարող է ծառայել խանութի պահեստ: Ամեն ինչ կա, նույնիսկ ծոցատետր՝ Ռոզի թևավոր խոսքերը գրի առնելու համար: Քլերն ասում է. «Լինենք գեղեցիկ, բայց հասարակ» և ձեռքերով է ուտում երշիկը: Հետո մեծ ուշացումով հայտնվում է Կատրինը, ասես հարբած է, հնազանդ, աչքերը փայլատված՝ քնելու ցանկությունից: Նրա հոգին այնքան դառնացած չէ, որ կարողանա մտածել գրասենյակի, ութ ժամի մասին, որ նա խլում է աշխարհից ու իր կյանքից՝ տպագրական մեքենային նվիրելու համար: Ընկերուհիները հասկանում են նրան և մտածում, թե որքան անդամահատ կլիներ իրենց կյանքը, եթե իրենք ևս աշխատեին ութ ժամ: Պատրիսը լսում է:

- Այո,- ասում է Ռոզը, որը դեմ է զգացմունքայնությանը,- բայց դա զբաղեցնում է քեզ: Օր ու գիշեր խոսում ես գրասենյակից: Մենք քեզ զրկում ենք ձայնի իրավունքից:

- Բայց...- հառաչում է Կատրինը:

- Այդ դեպքում քվեարկում ենք: Մեկ, երկու, երեք՝ մեծամասնությունը դեմ է:

- Տեսնո՞ւմ ես,- ասում է Քլերը:

Ոսպը ժամանում է. շատ չոր է, բոլորը լուռ ուտում են: Քլերը, երբ ինքն է պատրաստում, սեղանի մոտ համտեսում է և ապա ավելացնում ինքնագոհ տեսքով. «Հիանալի է»: Իսկ Պատրիսը, որ արժանապատվության զգացում ունի, նախընտրում է լռել մինչև այն պահը, երբ բոլորը կպոռթկան ծիծաղից: Կատրինը, որ վատ տրամադրության մեջ է այսօր, այնուամենայնիվ, կուզենար շաբաթական քառասուն ժամ աշխատել, ուստի խնդրում է իրեն ուղեկցել «Աշխատանքի գլխավոր կոնֆեդերացիա»:

- Ոչ,- ասում է Ռոզը,- դու ես աշխատողը, դու էլ գնա:

Վհատված՝ «բնական ուժը» գնում է փովելու արևի տակ: Շու-

տով բոլորը միանում են նրան: Քները, որ անփութորեն շոյում է Կատրինի մազերը, համոզված է, որ այդ «երեխային» տղամարդ է պետք, քանզի անհետաձգելի գործ է «Աշխարհին առճակատ տան» համար վճռել Կատրինի բախտը, իմանալ հոգսերը, սահմանել դրանց չափն ու տեսակը: Անշուշտ, ժամանակ առ ժամանակ նա հայտարարում է, որ բավական մեծ է արդեն, բայց նրան ոչ ոք չի լսում:

- Խեղճը սիրեկանի կարիք ունի,- ասում է Ռոզը:

Այնուհետև բոլորը սուզվում են արևի մեջ: Կատրինը, որ քինախնդիր չէ, մի դեպք է պատմում գրասենյակից, թե ինչպես օրիորդ Պերեզը՝ բարձրահասակ շիկահերը, որը ուր որ է, պիտի ամուսնանա, հիմնարկից հիմնարկ է անցնում տեղեկություններ ստանալու, թե ինչպիսի սահմոկեցուցիչ նկարագրություններ են նրան հրամցնում պատահական ճանապարհորդները, և որքան թեթևացած է նա վերադառնում հարսանեկան ճանապարհորդությունից ու ժպտալով հայտարարում. «Այնքան էլ ահավոր չէ»:

- Երեսուն տարեկան է,- ավելացնում է Կատրինը:

Իսկ Ռոզը, որ միշտ քննադատում է նման վտանգավոր պատմությունները, ասում է.

- Կատրին, չէ՞ որ այստեղ միայն ջահել աղջիկներ են:

Այդ ժամանակ փոստատար ինքնաթիռն է անցնում քաղաքի վրայով և իր փառահեղ, փայլուն մետաղը փողփողացնում է գետնի վրա ու երկնքում: Նա մտնում է ծովախորշի եռուզեռի մեջ, խոնարհվում նրա կորագծով, ծուլվում աշխարհի ընթացքին և, հանկարծ թողնելով իր խաղը, կտրուկ շրջադարձով ասես սուզվում է ծովի մեջ, ջրի վրա վայրէջք կատարում՝ առաջացնելով կապտաճերմակավուն մի հսկայական շատրվան: Գյուլան ու Կալին կողին են տվել: Նրանց վիշապային բաց մռութներում երևում է վարդագույն քիմքը: Տարված են ճոխ ու անամոթ երազներով, որոնք սարսռեցնում են նրանց կողերը: Հսկայական բարձրությունից երկինքն ասես ընկնում է իր արևային ու գունային ողջ ծանրությամբ: Կոպերը փակ՝ Կատրինը զգում է այդ երկարաձիգ ու խորունկ անկումը, որն իրեն տանում է իր էության խորխորատները,

ուր մեղմորեն շարժվում է Աստծո պես շնչող մի գազան:

Հաջորդ կիրակի հյուրեր են սպասվում: Քլերը պետք է խոհանոցով զբաղվի: Ռոզն արդեն կլպել է բանջարեղենը, պատրաստել սեղանն ու սպասքը: Քլերն ամանների մեջ է դասավորում բանջարեղենը, հետևում է եփելուն՝ գիրք կարդալով իր սենյակում: Քանի որ մավրիտանուհի Միանան այդ առավոտ չի եկել, տարվա ընթացքում արդեն երրորդ անգամ կորցնելով հորը, Ռոզը նույնպես օգնում է խոհանոցում: Եվ ահա գալիս են հյուրերը: Էլիանին Մերսոն անվանում է իդեալիստ:

- Ինչո՞ւ,- հարցնում է Էլիանը:

- Որովհետև երբ ձեզ ճիշտ բան են ասում, որը ձեզ դուր չի գալիս, դուք ասում եք. «Ճիշտ է, բայց լավ չէ»:

Էլիանը մանկամիտ է և կարծում է, թե նման է «Ջեռնոցով մարդուն», մի բան, որ բոլորը ժխտում են: Բայց և այնպես նրա սենյակի պատերը ծածկված են «Ջեռնոցով մարդը» գրքի նկարազարդումներով: Էլիանը ուսանողուհի է: Առաջին անգամ, երբ եկավ «Աշխարհին առճակատ տուն», հայտարարեց, որ զմայլված է նրա բնակիչների «նախապաշարումների բացակայությամբ»: Ժամանակի ընթացքում նա համարեց, որ դա այնքան էլ գրավիչ չէ, քանի որ նրա մեծ ջանքերով հորինած պատմությունները համարվում էին ծանծրալի և փոքրագույն նախադասությունից հետո հայտարարում էին.

- Էլիան, դու իշուկ ես:

Երբ Էլիանը երկրորդ հյուրի՝ քանդակագործ Նոելի հետ մտնում է խոհանոց, բախվում է Կատրինին, որը երբեք ճաշ չի պատրաստում ընդունված կեցվածքով: Մեջքին պառկած՝ մի ձեռքով խաղող է ուտում, մյուսով հարում դեռ կիսապատրաստ մայոնեզը: Ռոզը՝ կապույտ, մեծ գոգնոցը հագին, հիանում է Գյուլայի խելքով, որը ցատկում է ապուրամանի վրա կեսօրվա թեթև կերակուրն ուտելու:

- Չե՞ք հավատում, չէ՞,- ասում է Ռոզը հիացած,- բայց, իրոք, չեք հավատում, թե որքան խելացի է:

- Այո,- ասում է Կատրինը,- այսօր ինքն իրեն գերազանցեց,- ավե-

լացնելով, որ այդ առավոտյան Գյուլան ավելի խելացի է եղել, քանի որ կոտրել է կանաչ լամպն ու ծաղկամանը:

Էլիանը և Նոելը՝ չափազանց ուժասպառ, որ կարողանան արտահայտել իրենց դժկամությունը, որոշում են տեղ զբաղեցնել, քանի որ ոչ մեկի մտքով չի անցնում հրավիրել: Քլերն է հայտնվում՝ սիրալիր, քնքուշ ու նվաղուն, ձեռքերն է սեղմում ու կրակի վրա համտեսում բույաբեսը*: Նրա կարծիքով՝ սեղան նստելու ժամանակն է: Սակայն Պատրիսն այսօր ուշանում է: Վերջապես նա էլ է գալիս և արագ-արագ բացատրում Էլիանին, որ տրամադրությունը բարձր է, որովհետև փողոցում հանդիպել է գեղեցիկ աղջիկների: Շոգ եղանակը նոր-նոր է սկսվում, բայց արդեն ցուցադրվում են բարակ զգեստների տակ թրթռացող պիրկ մարմինները: Դրանց պատճառով, ըստ Պատրիսի, բերանը չորանում է, քունքերը տրոփում են և ազդրերը վառվում: Երբ այս մտքերը ճշգրտվում են համապատասխան բառերով, Էլիանը ամոթխած լռում է: Բույաբեսից մի քանի գդալ ճաշակելուց հետո սեղանի շուրջը նստածները մի տեսակ ընկճվում են: Քլերը, սեթևեթելով, ասում է մաքուր ու ճիշտ առոգանությամբ.

- Վախենամ, թե այս բույաբեսից այրված սոխի համ է գալիս:

- Դե, ոչ,- ասում է Նոելը, որի բարի սիրտը բոլորն են գնահատում:

Եվ այդ ժամանակ, ասես նրա բարի սիրտը փորձելու համար, Ռոզը նրան խնդրում է տան համար գնել որոշ օգտակար իրեր, ինչպես, օրինակ՝ ջրատաքացուցիչ, պարսկական գորգ և սառնարան: Ի պատասխան՝ Նոելը հորդորում է Ռոզին աղոթել իր համար, որ հաղթի վիճակախաղում:

- Թե աղոթելու լինենք,- ասում է Ռոզը խելամտորեն,- մեզ համար կաղոթենք:

Շոգ է, մի տեսակ լավ, քանձր շոգ, որի պատճառով առավելս են արժևորվում սառը գինին ու մատուցվող մրգերը: Սուրճն ըմպե-

---

* *Բույաբես. պրովանսական ծկով կերակուր՝ լոլիկով, սուր համեմունքներով, որ մատուցվում է իր արգանակով և հատուկ հացով:*

լիս Էլիանը համարձակորեն խոսում է սիրո մասին: Եթե սիրի՝ կամուսնանա: Կատրինը պատասխանում է, որ եթե սիրում ես, ուրեմն, առաջին հերթին պիտի սեր անես: Այս նյութապաշտական փիլիսոփայությունից ցնցված է Էլիանը: Իրատես Ռոզը կհամաձայներ, եթե «փորձը դժբախտաբար չապացուցեր, որ ամուսնությունը սպանում է սերը»:

Բայց Էլիանն ու Կատրինը հակամարտության մեջ են մտնում, իրենց մտքերն են պնդում, հանիրավի մեղադրանքներ են թափում իրար գլխի, մի բան, որ հատուկ է նրանց խառնվածքին: Նոելը, որ պատկերավոր մտածողություն ունի, հավատում է կնոջը, երեխաներին, նահապետական ճշմարտությանը՝ կոնկրետ ու ծանրակշիռ ընտանեկան կյանքում: Այդ ժամանակ Ռոզի համբերությունը հատում է Էլիանի ու Կատրինի բղավոցներից և ձևացնում է, որ գլխի է ընկել, թե, վերջապես, որն է Նոելի հաճախակի այցելությունների բուն նպատակը:

- Շնորհակալ եմ,- ասում է նա,- ինձ համար դժվար է ասել, թե այդ գյուտը որքան ցնցեց ինձ: Հենց վաղը ևեթ ես կխոսեմ հորս հետ «մեր» ծրագրի մասին, և դուք մի քանի օրից կարող եք նրան առաջարկել ձեր խնդրանքը:

- Բայց...- ասում է Նոելը՝ այնքան էլ լավ չհասկանալով Ռոզին:

- Օ՞,- ասում է Ռոզը ոգևորված,- ես գիտեմ: Հասկանում եմ ձեզ, կարող եք և չխոսել: Դուք նրանցից եք, ովքեր լռում են և ուզում, որ մարդիկ կռահեն իրենց մտքերը: Այսուհանդերձ, ես գոհ եմ, որ արտահայտվեցիք, որովհետև ձեր այցելությունների հաճախականությունը սկսել էր խաղալ իմ անբասիր անվան հետ:

Նոելը՝ զվարճանալով և մի տեսակ տարտամ անհանգստությամբ, հայտարարում է, որ երջանիկ է՝ տեսնելով, որ իր խղճերը պսակվել են հաջողությամբ:

- Էլ չասենք այն մասին,- ասում է Պատրիսը՝ փորձելով վառել ծխախոտը,- որ պետք է քարը տեղից շարժել: Ռոզի վիճակը ձեզ պետք է ստիպի արագացնել գործը:

- Ի՞նչ,- հարցնում է Նոելը:

- Աստվա՞ծ իմ,- ասում է Քլերը,- մենք դեռ երկրորդ ամսում ենք:

- Եվ հետո,- քնքշորեն ավելացնում է Ռոզը համոզելով,- դուք այն տարիքում եք, երբ կարող եք երջանկանալ՝ ձեզ տեսնելով ուրիշի երեխայի մեջ:

Նոելը կնճռոտվում է մի քիչ, իսկ Քլերը՝ բարի հոգին, ասում է.

- Կատակ է, միայն թե այն պետք է ընդունել գիտակցաբար: Գնանք հյուրասենյակ:

Դրանով էլ ավարտվում է սկզբունքային վիճաբանությունը: Սակայն Ռոզը, որ թաքուն է անում բարի գործերը, քնքշորեն զրուցում է Էլիանի հետ: Մեծ սենյակում Պատրիսը նստում է պատուհանի առջև, Քլերը կանգնում է սեղանի մոտ, իսկ Կատրինը պառկում խսիրի վրա: Մյուսները տեղավորվում են բազմոցին: Թանձր մառախուղ է նստած քաղաքի ու նավահանգստի վրա: Բայց քարշիչ նավերը վերսկսում են աշխատանքը, և նրանց ազդու շչակներն ասես մինչև այդտեղ են հասցնում ծկան ու հանքածյութի հոտը: Սև ու կարմիր նավիրանների, ժանգոտ ճոպասյուների ու կպչուն, մամռապատ շղթաների աշխարհն ասես արթնանում է ներքնում: Ամեն օրվա պես սա առնացի ու եղբայրական ազդանշանն է ուժատենչ կյանքի, որի գայթակղությունը կամ ուղղակի կանչը այստեղ զգում են բոլորը: Էլիանը տխուր ասում է Ռոզին.

- Դուք էությամբ նման եք ինձ:

- Ոչ,- ասում է Ռոզը,- ես միայն ուզում եմ երջանիկ լինել, և որքան հնարավոր է՝ շատ երջանիկ:

- Բայց երջանիկ լինելու միակ միջոցը սերը չէ,- ասում է Պատրիսը առանց շրջվելու:

Նա շատ է համակրում Էլիանին և վախենում է վշտացնել նրան: Բայցև հասկանում է Ռոզին, որը երազում է երջանիկ լինել:

- Խղճուկ երազանք է,- ասում է Էլիանը:

- Ես չգիտեմ՝ խղճուկ երազանք է, թե ոչ, բայց առողջ նպատակ է: Հասկանո՞ւմ եք...

Պատրիսը չի շարունակում: Ռոզը կկոցում է աչքերը: Գյուլան նստում է նրա ծնկներին: Երկար մերսելով գանգի ոսկորները՝ Ռոզը կարծես նախադրում է այն խորհրդավոր զուգորդությունը, երբ կիսախուփ աչքերով կատուն և անշարժ կինը կարող են նույն հա-

յացքով նայել աշխարհին: Նրանք մտածում են քարշիչ նավերի երկարածիգ շչակների մասին: Ռոզը թույլ է տալիս, որ իր մեջ թափանցի Գյուլայի մոռոցը: Կատուն պարույրածև կծկվել է նրա մարմնի փոս ընկած մասում: Ջերմությունը ծանրանում է կոպերին և նրան սուզում իր արյան զարկերով լի լռության մեջ: Կատուները քնում են ամբողջ ցերեկը, իսկ առաջին աստղի հայտնվելուց մինչև այգաբաց՝ սեր անում: Ցանկասիրությունից մաշվում են նրանք և քնում են անզգա: Նրանք գիտեն, որ մարմինը հոգի ունի, բայց այդ հոգին կապ չունի մարմնի հետ:

- Այո,- ասում է Ռոզը՝ բացելով աչքերը,- պետք է երջանիկ լինել, և որքան հնարավոր է՝ շատ:

Մերսոն մտածում է Լյուսիեն Ռենալի մասին: Երբ քիչ առաջ խոսում էր գեղեցիկ կանանց մասին, հատկապես նկատի ուներ մեկին, որն իրեն շատ էր դուր գալիս: Նրան հանդիպել էր ընկերոջ մոտ: Մեկ շաբաթ առաջ, մի գեղեցիկ, տաք առավոտ միասին դուրս էին եկել և, չիմանալով ինչ անել, զբոսնել էին նավահանգստի ճեմուղիներում: Այդ ընթացքում նա ոչ մի բառ չէր արտասանել: Եվ երբ Մերսոն նրան ուղեկցել էր տուն, զարմացել էր, որ այդքան երկար սեղմել էր իր ձեռքն ու ժպտացել: Բավական բարձրահասակ էր, առանց գլխարկի, բոկոտիկներով ու ճերմակ, հասարակ շրջազգեստով: Ճեմուղիներում քայլել էին թեթև քամուն ընդառաջ: Նա ոտքն ամուր էր դնում գետնին, որպեսզի հետո հեշտությամբ կարողանար բարձրացնել ընդդեմ քամուն: Այդ շարժումն անելիս զգեստը կպչում էր մարմնին և ընդգծում նրա փոքրիկ ուռուցիկ փորը: Ետ սանրած շեկ մազերով, փոքր ու ուղիղ քթով, հիասքանչ, պիրկ ստինքներով նա մարմնավորում էր դաշնությունը երկրի հետ և իր շարժումներով կարգավորում աշխարհը:

Երբ աջ ձեռքով թափահարում էր պայուսակը, դաստակը զարդարող արծաթյա ապարանջանը դիպչում էր պայուսակի կողպեքին ու զրնգում: Երբ արևից պաշտպանվելու համար ձախ ձեռքով հովանի էր անում գլխավերևում, աջ ոտքի ծայրը դեռ գետնին, բայց արդեն պատրաստ պոկվելու, Պատրիսին թվում էր, թե նա իր շարժումները հանգուցում է աշխարհի հետ:

Այդ ժամանակ իր և Լյուսիենի քայլերի միջև նա հայտնաբերեց խորհրդավոր դաշնություն: Իրար շատ մոտ էին քայլում. ջանք չէր թափում նրան հարմարվելու: Այդ համաձայնությունը, անշուշտ, հեշտանում էր Լյուսիենի տափակ կոշիկների շնորհիվ: Բայց միաժամանակ նրանց զուգահեռ ու ճկուն ոտնաքայլերի մեջ ինչ-որ ընդհանուր բան կար: Միևնույն ժամանակ Մերսոն նկատեց Լյուսիենի լռակյացությունն ու դեմքի փակ արտահայտությունը: Մտածեց, որ հավանաբար այնքան էլ խելացի չէ, և այդ մտքից հրճվեց: Անխելք գեղեցկության մեջ ինչ-որ աստվածային բան կա, և Մերսոյից լավ ոչ ոք չէր կարող դա զգալ: Այդ պատճառով նրա մատները երկար էր պահում իր ափերի մեջ: Սկսեց հաճախակի հանդիպել նրան, երկար զբոսնել նույն, անխոս քայլվածքով՝ արևառ դեմքերը պարզած արևին կամ աստղերին, միասին լողալ, զուգորդելով իրենց շարժումները, քայլքը, ոչինչ չպահանջելով միմյանցից, բացի իրենց մարմինների ներկայությունից: Այդ ամենը՝ մինչև երեկ երեկոյան, երբ Մերսոն Լյուսիենի շուրթերին հայտնաբերեց մի մտերմիկ ու տակնուվրա անող հրաշք: Մինչ այդ իրեն հմայում էին նրա շարժուձևերը, թե ինչպես էր կախվում իր հագուստից, ինչպես էր թևանցուկ քայլում. նրա անբռնազբոսիկությունն ու վստահությունը շոյում էին իր տղամարդու ինքնասիրությունը: Նրա լռության մեջ, որի շնորհիվ հատկապես արտահայտիչ էր դառնում նրա ամեն մի շարժումը, լրջախոհ՝ նրա ցանկացած արարքը, զգացվում էր ինչ-որ կատվային բան: Երեկ՝ ճաշից հետո, նա Լյուսիենի հետ զբոսնում էր կառամատույցներով: Մի պահ, երբ կանգ էին առել ճեմուղու պարսպի մոտ, Լյուսիենը փարվեց իրեն: Մթության մեջ նա մատների տակ զգաց սառը, ցցուն այտոսկրերը և նուրբ, ջերմությամբ բուրող շրթունքները: Այդ ժամանակ իր միջից ասես դուրս թռավ մի աղաղակ՝ կրքոտ ու անշահախնդիր: Բյուր աստղերով լեցուն երկնքի ու քաղաքի առջև, որն ասես նույն երկինքն էր հակառակ կողմից, հորդացող մարդու ստեղծած լույսերից, նավահանգստից իր դեմքին փչող տաք ու խորը շնչառության տակ նրան համակում էր այդ տաք աղբյուր ծարավը, անսանձ տենչը՝ այդ կենսաթրթիռ շուրթերի վրա որսա-

լու անմարդկային ու ցիրիող աշխարհի ողջ իմաստը, որն ասես իբրև լռություն պարփակվում էր նրա բերանում: Կռացավ: Շրթունքներն ասես դիպան թոչնի: Լյուսիենը հառաչեց. ուժեղ էր կծել շրթունքները՝ անվերջանալի րոպեների ընթացքում ներշնչելով բերանի ամբողջ ջերմությունը, որն արբեցրեց իրեն: Ասես ողջ աշխարհն էր իր գրկում: Սակայն նա կախվել էր իրենից խեղդվողի նման՝ մերթ խոյանում էր մեծ, անհատակ փոսից, ուր նետել էին իրեն, ու ետ քաշում շրթունքները, մերթ նորից առաջ էր ձգվում և ընկնում պաղ ու սևաթույր ջրերի մեջ, որոնք այրում էին նրան, ինչպես աստվածների մի բազմություն:

...Բայց Էլիանն արդեն մեկնել էր: Մերսոյին իր սենյակում սպասում էր երկար լռության ու մտորումների ետմիջօրեն: Ընթրիքին բոլորը լուռ էին: Ապա ասես մի համընդհանուր համաձայնությամբ բոլորը դուրս եկան դարավանդ: Օրերը շղթայակցված են իրար փոխարինում: Միշտ նույն ծովախորշը՝ առավոտյան մշուշների մեջ թաղված, արևով ողողված, և ահա երեկոն է իջնում իր ողջ քնքշությամբ: Արևը ծագում է ծովի վրա ու մայր մտնում բլուրների ետևը, քանի որ երկինքը լոկ մի ճանապարհ է մատնանշում՝ ծովից մինչև բլուրները: Աշխարհը միշտ մի բան է ասում, որը սկզբում գրավում է, իսկ հետո հոգնեցնում: Բայց միշտ գալիս է մի պահ, երբ ուժով հասնում է կրկնության և ստանում է իր համառության գինը: Այսպես, «Աշխարհին առնակատ տանը» օրերը հյուսվում էին հասարակ քրքիջներից ու շարժումներից շքեղ կտավի վրա և ավարտվում դարավանդին, բյուր աստղերով լի գիշերվա մեջ: Պառկում էին երկայնաքոռների վրա, իսկ Կատրինը նստում էր քարե ցածրիկ պատին:

Հրկեզ ու խորհրդավոր երկնքում փայլում է մութ գիշերվա կերպարանքը: Հեռվում լույսեր են անցնում նավահանգստով, ավելի հեռվում գնացքների շչակներն են ոռնում: Աստղերը մերթ խոշորանում են, մերթ փոքրանում, անհետանում և կրկին ծնվում, իրար մեջ գծում անկայուն պատկերներ, որոնք քանդվում են իսկույն՝ իրենց տեղը զիջելով նոր նախշերի: Լռության մեջ գիշերը վերըստին ձեռք է բերում իր մարմնի թանձրությունը: Լի աստեղային

սահքով՝ նա աչքերի մեջ է դաջում լույսերի խաղը, դրանք լցնելով արցունքներով: Եվ ամեն մեկը երկնային անհունի մեջ սուզվելով՝ զուգաղիպությունների այդ բարձրագույն կետում վերագտնում է իր կյանքի ողջ լռությունը:

Կատրինը, որը քիչ է մնում խեղդվի սիրո հանկարծահաս հորդումից, կարողանում է միայն հառաչել: Զգալով նրա ձայնի փոփոխությունը՝ Պատրիսը հարցնում է.

- Չե՞ք մրսում:

- Ոչ,- ասում է Ռոզը: - Այնքան լա՞վ է:

Քլերը վեր է կենում, ձեռքերով հենվում պատին ու դեմքը պարզում երկնքին:

Աշխարհի այդ ամենատարրական ու ազնվագույն բաների առջև նա չի կարողանում տարբերել իր կյանքը ապրելու տենչից և իր հույսերը միաձուլում է աստղերի շարժումներին: Հանկարծ կտրուկ շրջվելով՝ դիմում է Պատրիսին.

- Վստահել կյանքին,- ասում է նա,- նշանակում է նրանից կորզել պատասխան:

- Այո,- ասում է Պատրիսը՝ առանց նրան նայելու:

Մի աստղ է սահում: Նրա հետևից բացվում է հեռավոր փարոսի աղոտ լույսը՝ այժմ ավելի քանձրացած գիշերվա մեջ: Մարդիկ են լուռումունջ մագլցում ճանապարհով: Լսվում են միայն ոտնաձայներ ու ծանր շնչառություն: Հետո ծաղիկների անուշաբույր է տարածվում:

Աշխարհը միշտ մի բան է միայն ասում: Եվ այդ հարատև ճշմարտությունը, որ աստղից աստղ է անցնում, հիմնում է մի ազատություն, որի օգնությամբ ինքներս ազատագրվում ենք մեզնից: Մյուս հարատև ճշմարտությունը գնում է մահից մահ:

Պատրիսը, Կատրինը, Ռոզը և Քլերը ներթափանցվում էին երջանկության գիտակցումով, որ ծնվում էր աշխարհի հետ նրանց զուգորդումից: Եթե այդ գիշերը նրանց ճակատագրի պատկերն էր, որով հիանում էին նրանք, ուրեմն կուզենային, որ այն լիներ և՛ ցանկասեր, և՛ միաժամանակ խորհրդավոր, և՛ որ նրա դեմքին միահյուսվեին արցունքներն ու արևը: Եվ նրանց վշտով ու ուրա-

խությամբ առլեցուն սրտերին լսելի լիներ այդ կրկնակի դասը, որ տանում է դեպի երջանիկ մահ:

Այժմ շատ ուշ է, արդեն կեսգիշեր: Այդ գիշերվա ճակատին, որը աշխարհի անդորրի ու մտքի պատկերն է, մի խուլ փքվածություն և աստեղային իրարանցում ազդարարում են գալիք զարթոնքը: Լուսատուներով լեփ-լեցուն երկնքից ծորում է մի դողդոջուն լույս: Պատրիսը նայում է ընկերներին: Կատրինը կքած է պատի վրա, գլուխը ետ գցած, Ռոզը՝ երկայնաքոռում թաղված, գրկել է Գյուլային, Քլերը՝ ուղիղ կանգնած, հենվել է պատին՝ ճերմակ բիծը ուռուցիկ ճակատին: Երջանկության ընդունակ այդ էակները փոխանակում են իրենց երիտասարդությունը, բայց թաքցնում գաղտնիքները: Մերսոն մոտենում է Կատրինին և նրա արևառ ուսի վրայով նայում է կորնթարդ երկնքին: Ռոզը նույնպես մոտենում է պատին, և չորսով այժմ կանգնած են Աշխարհի առջև: Ասես հանկարծակի ավելի թարմացած ցայգային ցողը նրանց դեմքերից լվանում է մենության նշանները և, ազատագրելով իրենցից, այդ թրթռուն ու վաղանցուկ մկրտությամբ նրանց վերադարձնում է աշխարհին: Այդ ժամին, երբ գիշերվա պռունկներից թափվում են աստղերը, նրանց շարժումները դաջվում են երկնքի հսկայական, համր դեմքին: Պատրիսը պարզում է բազուկները մթության մեջ, գեղումների մեջ գրկում աստղային խրծեր, ձեռքով հարում երկնային ջուրը, իսկ Ալժիրը՝ ոտքերի տակ, իրենց շուրջն ասես մի մուգ պատմուճան լինի՝ շողշողուն, գոհար քարերով ու խեցեղենով զարդարուն:

Վաղ առավոտյան Մերսոյի մեքենան՝ առջևի ցոլալապտերները միացրած, սլանում էր առափնյա ճանապարհով: Դուրս գալով Ալժիրից՝ նա հանդիպեց ու վազացնեց կաթնատար սայլերին: Չիների, ախոռի տաք ու քրտնախառն հոտը նրան ավելի զգալի դարձրին առավոտվա զովությունը: Դեռ մութ էր: Վերջին աստղը դանդաղ հալվում էր երկնքում: Խավարի մեջ, փայլուն ճանապարհի վրա նա միայն զգում էր շարժիչի բիրտ աղմուկը, և երբեմն ավելի հեռվից՝ ձիու վարգն ու թիթեղամաններով բեռնված սայլի ոռոստուն ճռինչը, իսկ հետո, ճանապարհի մթության խորքում տեսանելի էր դառնում ձիու սմբակների փայլփլուն երկաթների քառակի շողքը: Հետո ամեն ինչ նվաղում էր արագության աղմուկի մեջ: Նա այժմ ավելի արագ էր ընթանում, և գիշերն առանց հապաղելու փոխվում էր ցերեկի:

Ալժիրի բլուրների մեջ ծվարած գիշերվա խորքից մեքենան դուրս եկավ ազատ ճանապարհ, որը բարձր էր ծովից, և որտեղ բոլորվում էր առավոտը: Մերսոն սլացավ ողջ արագությամբ: Ցողաթաթախ ճանապարհի վրա անիվները բազմապատկում էին իրենց տզրուկային ծվծվոցները: Անհամար շրջադարձերից յուրաքանչյուրում արգելակն աղմուկով ճոռացնում էր անվադողերը, իսկ աջ գծի վրա աշխատող շարժիչի համաչափ հոնդյունը խլացնում էր լողափից բարձրացող ալիքների ծփյունները: Միայն ինքնաթիռն է մարդուն ընծայում լրիվ մենության զգացում, որը խեղդվում է մեքենայի մեջ: Ամբողջովին մենակ՝ ինքն իր մեջ, գոհ՝ գիտակցելով իր շարժումների ճշգրտությունը, Մերսոն կարող էր միաժամանակ անդրադառնալ ինքն իրեն և իր մտքերին: Լույսն արդեն բացվել էր ճանապարհի ծայրին: Արեգակն էր հառնում ծովի և նաև շուրջը փռված դաշտերի վրա, որոնք դեռ քիչ առաջ ամայի, այժմ՝ արթնացած, լցվում էին թռչունների ու կարմրաթիկ միջատների ձայներով: Երբեմն մի գյուղացի էր անցնում, և մեծ արագությամբ սլացող Մերսոյի մեջ տպվում էր միայն նրա ուրվապատկերը՝ բեռնված պարկով, ծանրաքայլ՝ պարարտ ու հյութալի հողի վրա: Մե-

քենան համաչափորեն նրան տանում էր բլրակների մոտով, որոնց ներքևում երևում էր ծովը: Բլրակները մեծանում էին աչքի առջև, և նրանց ուրվագծերը, որոնք քիչ առաջ հազիվ էին նշմարվում թանաքագույն լույսի մեջ, այժմ արագորեն մոտենում ու ներկայանում էին Մերսոյին ամեն մի մանրամասնով. նրանք լի էին ձիթենիներով, սոճիներով և ստեպ-ստեպ հայտնվող կավածեփ տնակներով: Հետո մեկ այլ կեռման մեքենային նետում էր դեպի ծովը, որն ուռչում էր մակընթացությունից և հառնում Մերսոյի առջև, ինչպես աղով, կարմիրով ու նինջով լցված մատաղացու: Այդ ժամանակ մեքենան սուլում էր և թռչում առաջ՝ դեպի ուրիշ բլրակներ և դեպի միշտ նույնակերպ ծովը:

Մեկ ամիս առաջ Մերսոն «Աշխարհիս առճակատ տանը» հայտնել էր, որ մեկնելու է նախ ճանապարհորդության, ապա հանգրվանելու Ալժիրի արվարձաններից մեկում: Բայց մի քանի շաբաթ անց նա արդեն վերադառնում էր՝ համոզված, որ ճանապարհորդելն իր համար այսուհետև օտարոտի կյանք է, տարաշխարհիկությունը՝ անհանգիստ երջանկություն: Ինչ-որ տարտամ հոգնություն էր զգում: Ծտապում էր իրագործել ծրագիրը՝ մի փոքրիկ տուն գնել ծովի ու լեռների միջև, Շենուայում, Տիպազայի ավերակներից մի քանի կիլոմետրի վրա: Ալժիր հասնելուն պես շտապեց մարդկանց ցուցադրել իր արտաքին ապրելակերպը: Գնեց գերմանական դեղագործական ապրանքների նշանակալից արժեթղթեր, սպասավոր վարձեց՝ նրան կարգելով իր գործերի կառավարիչ՝ այդպես արդարացնելով իր բացակայություններն Ալժիրից և իր վարած անկախ կյանքը: Գործերն, ասենք, այնքան էլ լավ չէին ընթանում, հաճախ բախվում էր խոչընդոտների, ինչն ընդունում էր առանց ափսոսանքի՝ իբրև փոխհատուցում իր լիակատար ազատության: Իսկապես, բավական էր, որ ինքն իր դեմքը ներկայացրել էր հասարակությանը, որն ի վիճակի էր եղել իրեն հասկանալ: Ծուլությունն ու թուլամտությունը անում էին մնացած գործը: Անկախությունը նվաճվում է մի քանի էժանագին, անկեղծ խոսքերով: Հետո Մերսոն զբաղվեց Լյուսիենի ճակատագրով:

Լյուսիենը ծնողներ չուներ: Ապրում էր մենակ, քարտուղարուհի

էր ածխի ձեռնարկությունում: Սկսում էր մրգերով և զբաղվում ֆիզկուլտուրայով: Մերսոն նրան գրքեր տվեց: Վերադարձնելիս Լյուսիենը ոչինչ չասաց: Իր հարցերին նա պատասխանում էր. «Այո՛, լավն էր», կամ էլ՝ «Մի քիչ տխուր էր»: Ալժիրից մեկնելու օրը Լյուսիենին առաջարկեց իր հետ ապրել, բայց մնալ Ալժիրում, չաշխատել և իրեն հանձնիպել միայն այն ժամանակ, երբ ինքը ցանկանար: Այդ ամենն ասվել էր այնպիսի համոզվածությամբ, որ Լյուսիենը նվաստացուցիչ բան չգտներ դրա մեջ, քանի որ իրոք էլ ոչ մի նվաստացուցիչ բան չկար: Լյուսիենը հաճախ մարմնով էր զգում այն, ինչ մտքով չէր ըմբռնում. համաձայնեց:

- Եթե ցանկանաք,- ավելացրեց Մերսոն,- կարող եմ ամուսնության խոստանալ: Սակայն, իմ կարծիքով, դա կարևոր չէ:

- Ինչպես ուզում եք,- ասաց Լյուսիենը:

Մեկ շաբաթ անց նրանք ամուսնացան, և Պատրիսը պատրաստվեց մեկնել: Այդ ընթացքում Լյուսիենը գնեց նարնջագույն առագաստանավ՝ ծովային զբոսանքների համար:

Մերսոն շրջեց ղեկը, որ չճզմի վաղ արթնացած հավին: Մտածում էր Կատրինի հետ ունեցած խոսակցության մասին: Մեկնելու նախօրյակին նա հեռացել էր «Աշխարհին առճակատ տնից», որպեսզի մի գիշեր մենակ անցկացնի հյուրանոցում:

Ետմիջօրեն սկսվում էր, և քանի որ առավոտյան անձրև էր եկել, ծովախորշն ամբողջովին ասես հսկայական լվացված ապակի լիներ, իսկ երկինքը՝ թարմ սպիտակեղեն: Հենց դիմացը՝ ծովախորշի կորագծի եզրին, հրվանդանն էր գծագրվում մի սքանչելի անաղարտությամբ և, ոսկեզօծված արևի շողերով, ձգվում էր ծովի մեջ ինչպես հսկա վիշապօձ: Պատրիսը դասավորել էր ճամպրուկները և այժմ, ձեռքերը հենած լուսամուտագոգին, ագահաբար նայում էր աշխարհի այդ նոր ծնունդին:

- Չեմ հասկանում, ինչո՞ւ ես մեկնում, եթե այստեղ երջանիկ ես,- ասել էր Կատրինը:

- Իմ փոքրիկ Կատրին, վախենում եմ՝ ինձ սիրեն այստեղ, իսկ դա կխանգարի իմ երջանկությանը:

Կատրինը՝ կծկված բազմոցին, գլուխը փոքր-ինչ խոնարհած,

իր գեղեցիկ, խորաթափանց հայացքով նայում էր Պատրիսիին: Վերջինս առանց շրջվելու ասաց.

- Շատերը բարդացնում են կյանքը, հորինում ճակատագրեր: Ինձ համար ամեն ինչ պարզ է: Նայիր...

Խոսում էր աշխարհին դեմառդեմ, իսկ Կատրինն իրեն անտեսված էր զգում: Նա նայում էր Պատրիսի երկար մատներին, որոնք կախվել էին լուսամուտագոգին ծալված նախաբազկի եզրից, հիանում նրա մի կոնքի վրա հենված մարմնով ու տարտամ հայացքով, որն, իհարկե, չէր տեսնում, սակայն գուշակում էր:

- Ես կուզենայի...- ասաց նա, բայց լռեց ու նայեց Պատրիսիին:

Օգտվելով անդորրից՝ ծովում հայտնվեցին փոքրիկ առագաստանավեր: Նրանք հասնում էին նավարկուղի, այն լցնում իրենց թևաբախումներով և հանկարծ սլանում դեպի բաց ծով՝ հետևից թողնելով փրփուրային երկար սարսուռներով բացվող օդաջրային նավահետքը: Այն տեղից, որտեղից նայում էր Կատրինը, թվում էր, թե Պատրիսի շուրջը սպիտակ թռչունների երամ է թևածում: Մերսոն վերջապես զգաց իր վրա սևեռված լուռ հայացքը, շրջվեց, բռնեց նրա ձեռքերն ու մոտեցրեց իրեն:

- Ոչ մի բանից երբեք չհրաժարվես, Կատրին: Դու շատ բան ունես քո մեջ, սակայն ամենավսեմը երջանկության զգացումն է: Չպետք է սպասել, թե երջանկությունը կգա տղամարդու հետ: Շատ կանայք են այդպես սխալվում: Երջանկության ակնկալիքը քեզնից է:

- Ես չեմ տրտնջում, Մերսո,- ասաց Կատրինը՝ քնքշորեն բռնելով Պատրիսի ուսից: - Այս պահին միայն մի բան է կարևոր՝ պահպանիր քեզ:

Այդ ժամանակ զգաց, թե որքան փխրուն է իր ինքնավստահությունը: Սիրտը տարօրինակ չոր էր:

- Դա չպետք է ասեիր հիմա:

Վերցրեց ճամպրուկը և նախ իջավ դիք սանդուղքը, հետո ճանապարհը, որ սկսվում և ավարտվում էր ձիբենիներով: Նրան այլևս միայն Շենուան էր սպասում. ավերակների և օշինդրների անտառը, անհույս, անթախիծ սերը՝ քացախաբույր ու ծաղկա-

բույր կյանքի հիշողություններով: Շրջվեց: Կատրինը նայում էր վերևից, բայց ոչ մի շարժում չարեց:

Մոտ երկու ժամ անց Մերսոն հասավ Շենուա: Այդ ժամին գիշերվա մանիշակագույն ցոլքերը դեռ խաղում էին նրա լանջերին, որոնք սուզված էին ծովի մեջ, մինչդեռ գագաթը լուսավորված էր կարմրաշեկ, աղոտ լույսերով: Այնտեղ ասես հողեղեն հզոր մի զանգվածային խոյանք, պոկվելով հորիզոնում ձգվող Սահելի բլուրներից, ձգտում էր հասնել մկանուտ անասունի հսկայական մեջքին, որն իր ողջ բարձրությամբ մխրճված էր ծովի մեջ: Մերսոյի գնած տունը ետին լանջերի վրա էր, մոտ մի հարյուր մետր հեռու ծովից, որն արդեն ոսկեզօծվում էր ջերմությունից: Տունը երկհարկանի էր: Երկրորդ հարկում միայն մի սենյակ կար իր հարմարություններով, բայց ընդարձակ էր և առջևի մասով նայում էր պարտեզին, որից հետո երկարավուն դարավանդով միանում էր հիասքանչ ծովախորշին: Մերսոն արագ վեր բարձրացավ: Ծովն արդեն սկսում էր ծփալ, միաժամանակ նրա կապույտը մգանում էր, իսկ դարավանդի սալիկների տաք կարմիրն արդեն ճառագայթում էր ու շողում: Կրածեփ վանդակապատի միջով արդեն հասցրել էին մագլցել հիասքանչ վարդենու առաջին ծաղիկները: Ճերմակ էին վարդերը և բացված կոկոնները, որոնք հատկապես առանձնանում էին ծովի պաստառի վրա. ինչ-որ հափրեցուցիչ և հուռթի բան ունեին իրենց մորթի ամրությամբ: Ներքևի սենյակներից մեկը նայում էր Շենուայի մրգատու ծառերով ծածկված լանջերին, իսկ մյուս երկու սենյակները՝ պարտեզին ու ծովին: Պարտեզում երկու սոճի երկնքին էին պարզել իրենց բարձր ու սլացիկ բները՝ ամենավերևում ծածկվելով ղեղին ու կանաչ կոներով: Տնից երևում էին միայն այդ երկու ծառերի միջև եղած տարածությունը և ծովի կորագիծը: Այդ պահին մի փոքրիկ շոգենավ հայտնվեց ծովի վրա, և Մերսոն երկար դիտում էր, թե ինչպես է նա անցնում մի սոճուց մյուսը:

Այստեղ էր ապրելու: Ինչ խոսք, այս վայրերի գեղեցկությունը հուզում էր սիրտը: Դրա համար էլ գնել էր այդ տունը: Սակայն հանգիստը, որ այնքան հույս ուներ գտնել այստեղ, այժմ սարսա-

փեցնում էր իրեն: Լավատեսորեն փնտրած միայնությունն այժմ թվում էր տագնապալի: Անձկությունն ավելի խորացավ, երբ ծանոթացավ տեղանքին: Գյուղը հեռու չէր, մի քանի հարյուր մետրի վրա: Դուրս եկավ: Մի փոքրիկ արահետ ճանապարհից իջնում էր դեպի ծովը: Այդ արահետով իջնելիս առաջին անգամ նկատեց, որ ծովի մյուս կողմում նշմարվում է Տիպազայի սուր գագաթը: Այդ սրածայր գագաթին գծագրվում էին տաճարի ոսկեզօծ սյուները, իսկ նրանց շուրջը՝ հինավուրց ավերակները օշինդրների մեջ, որոնք հեռվից ասես գորշ ու բրդոտ գեղմ լինեին: Հունիսյան երեկոները, մտածում էր Մերսոն, երևի քամին ծովի միջով Շենուա է հասցնում արևահամ օշինդրների անուշաբույրը:

Պետք է տեղավորվել, կարգի բերել տունը: Առաջին օրերն արագ անցան: Պատերը սպիտակեցրեց կրով, ալժիրից գնեց պաստառներ, էլեկտրականություն անցկացրեց: Եվ այդ գործերի մեջ, որոնք ընդհատվում էին միայն, որպեսզի ճաշեր գյուղի հյուրանոցում կամ լողալ ծովում, նա մոռանում էր, թե ինչու էր եկել այստեղ: Հոգնությունը ցրում էր իրեն, մեջքը կոտրվում էր, ոտքերը դողում էին, մտահոգվում էր, թե ներկը չի հերիքելու կամ թե ինչպես է վերանորոգելու միջանցքի անջատիչը: Քնում էր հյուրանոցում և քիչ-քիչ ծանոթանում գյուղին. տղաների հետ, որոնք կիրակի օրը, կեսօրից հետո, գնում էին ռուսական բիլիարդ ու պինգ-պոնգ խաղալու (ամբողջ օրը զբաղեցնելով խաղահրապարակը և կատաղեցնելով տիրոջը, քանի որ այդ ընթացքում միայն մեկ բան էին պատվիրում), աղջիկների հետ, որոնք երեկոյան զբոսնում էին ծովեզերքին (նրանք ձեռք ձեռքի տված երգում էին, ձայները երկարացնելով բառավերջի վանկերի վրա), Պերեզի՝ միքևանի ձկնորսի հետ, որը հյուրանոցը մատակարարում էր ձկով: Այստեղ էր նաև, որ հանդիպեց գյուղի բժշկին՝ Բեռնարին: Երբ տունը կարգի էր բերված, Մերսոն տեղափոխեց իրերը և կարծես մի քիչ ուշքի եկավ: Արդեն երեկո էր: Երկրորդ հարկի սենյակում էր, և պատուհանի հետևում երկու աշխարհ վիճարկում էին սոճիների միջև եղած տարածությունը: Դրանցից մեկում, որը գրեթե թափանցիկ էր, աստղերն էին բազմանում, իսկ մյուսում, որն ավելի հոծ էր և

ավելի մութ, ջրի գաղտնի խլրտոցը հիշեցնում էր ծովի առկայությունը:

Մինչ այդ նա պարապ ժամանակ չէր ունեցել, հանդիպել էր բանվորներին, որոնք օգնել էին իրեն, կամ շատախոսել էր սրճարանի տիրոջ հետ: Բայց այս երեկո մտածեց, որ ոչ ոք չկա, որին հանդիպի, վաղը նույնպես չի լինի, ոչ էլ երբևէ, և որ ինքը դեմառդեմ կանգնած է այնքան ցանկալի միայնության հետ: Այդ պահից սկսած, երբ այլևս ոչ ոքի չէր տեսնելու, վաղվա օրը նրան ահավոր մոտիկ թվաց: Այսուհանդերձ, ինքն իրեն համոզեց, որ հենց այդ էր ուզածը՝ ինքն իր դիմաց և երկար ժամանակ, մինչև ինքնասպառումը: Մտածեց՝ մնա մինչև ուշ գիշեր, ծխի, տրվի մտորումներին, բայց ժամը տասի մոտերքը քունը տարավ, պառկեց ու քնեց: Հաջորդ օրը ուշ արթնացավ և ժամը տասին նախաճաշ պատրաստեց ու կերավ մինչև հարդարանքով զբաղվելը: Մի տեսակ հոգնած էր զգում: Սափրված չէր, և մազերը խառնված էին: Սակայն ուտելուց հետո, փոխանակ լողասենյակ գնա, սկսեց թափառել մի սենյակից մյուսը, մի ամսագիր թերթեց և, վերջապես, երբ հայտնաբերեց պատից պոկված անջատիչն ու սկսեց աշխատել, լիովին երջանիկ զգաց: Դուռը թակեցին: Հյուրանոցի սպասավոր-մանչուկն էր, որ բերել էր նախաճաշը, ինչպես պատվիրել էր նախորդ օրը: Ինչ արած, ծուլորեն նորից սեղան նստեց, կերավ առանց ախորժակի, քանի դեռ կերակուրները չէին սառել, և մեկնվեց ներքևի սենյակի բազմոցին: Արթնանալով՝ խիստ զայրացավ, որ քնել էր: Ժամը չորսն էր: Հարդարվեց, խնամքով սափրվեց, վերջապես հագնվեց և գրեց երկու նամակ. մեկը՝ Լյուսիենին, մյուսը՝ երեք ուսանողուհիներին: Արդեն շատ ուշ էր, կեսգիշեր: Այնուամենայնիվ, գնաց մինչև գյուղ, որ նամակները գցի փոստարկղ, և վերադարձավ՝ չհանդիպելով ոչ ոքի: Բարձրացավ իր սենյակը և դուրս եկավ դարավանդ: Ծովն ու գիշերը երկխոսում էին ավազափերին ու ավերակների մեջ: Իսկ ինքը խորհում էր: Կորած օրվա հիշողությունը թունավորում էր իրեն: Գոնե երեկոյան կարողանար աշխատել, ինչ-որ բան անել՝ կարդալ, դուրս գալ կամ թափառել գիշերով: Պարտեզի վանդակաղուռը ճռռաց: Ընթրիք էին բերել: Քաղցած

էր, ախորժակով կերավ: Հետո զգաց, որ անկարող է դուրս գալ: Որոշեց պառկել և անկողնում երկար կարդալ: Քնեց, իսկ առավոտյան ուշ արթնացավ:

Հաջորդ օրերին Մերսոն փորձեց փոխել իր ապրելակերպը: Անցնող օրերը հագեցված էին միայն վանդակաղոռան ճոռոցներով ու անքանակ ծխախոտերով, որից տագնապ էր ապրում նա՝ տեսնելով կյանքում իր ստեղծած անհամամասնությունը իր արածի և հենց այդ կյանքի միջև: Մի երեկո գրեց Լյուսիենին, որ նա գա, այդպիսով խզելով այն մենությունը, որին այնքան սպասում էր: Նամակն ուղարկելուց հետո քիչ մնաց մեռներ ամոթից: Բայց երբ Լյուսիենը եկավ, ամոթը չքացավ մի տեսակ հիմար ու հապճեպ ուրախության մեջ, որով համակվեց՝ վերստին գտնելով հարազատ էակին և նրա պարգևած ներկայությունը: Անընդհատ նրանով էր զբաղվում, ուշադրության կենտրոնում պահում, իսկ Լյուսիենը նայում էր նրան մի քիչ զարմացած, բայց հիմնականում զբաղված էր իր լավ արդուկված, ճերմակ շրջազգեստներով:

Հիմա էլ էր գնում զբոսանքի, բայց՝ Լյուսիենի հետ: Նորից էր գտնում իր կապն աշխարհի հետ, երբ ձեռքը դնում էր Լյուսիենի ուսին: Եվ պատսպարվելով այդ մարդու մեջ՝ նա այդպես խույս էր տալիս իր ներքին վախից: Երկու օր անց, սակայն, Լյուսիենն արդեն ձանձրացրեց իրեն: Նա էլ հենց այդ ժամանակ խնդրեց ապրել միասին: Այդ պահին ճաշում էին, և Մերսոն կտրականապես մերժեց՝ առանց հայացքը բարձրացնելու ափսեից:

Որոշ ժամանակ լռելուց հետո Լյուսիենն ասաց մի տեսակ չեզոք ձայնով.

- Դու ինձ չես սիրում:

Մերսոն բարձրացրեց գլուխը: Լյուսիենի աչքերը լի էին արցունքներով: Մի քիչ մեղմացավ.

- Նման բան ես չասացի, փոքրիկս:

- Ճիշտ է,- ասաց Լյուսիենը,- և հենց այդ պատճառով:

Մերսոն վեր կացավ ու մոտեցավ պատուհանին: Երկու սոճիների արանքում վխտում էին աստղերը: Գուցե երբեք Պատրիսը չէր զգացել նման տագնապ և նաև զզվանք իր անցած օրերի հանդեպ:

- Դու գեղեցիկ ես, Լյուսիեն,- ասաց նա: - Ես ավելի հեռուն չեմ նայում: Քեզնից ավելին չեմ պահանջում: Դա բավական է մեզ երկուսիս:

- Գիտեմ,- ասաց Լյուսիենը:

Նա դանակի ծայրով քերում էր սփռոցը: Մերսոն մոտեցավ նրան ու գրկեց վիզը:

- Հավատա ինձ, չկա մեծ վիշտ կյանքում, չկան մեծ զոջումներ, մեծ հիշողություններ: Ամեն ինչ մոռացվում է, նույնիսկ մեծ սերը: Դա շատ տխուր է և միաժամանակ հրապուրիչ: Եվ այնուամենայնիվ լավ է, որ ունես մեծ կիրք, դժբախտ սեր: Գոնե դա կլինի արդարացում անհմաստ հուսահատությունների համար, որոնք ճզմում են մեզ:

Մի պահ Մերսոն լռեց, մտածեց ու ավելացրեց.

- Չգիտեմ, արդյոք հասկանո՞ւմ ես ինձ:

- Ինձ թվում է՝ հասկանում եմ,- ասաց Լյուսիենը: Հետո հանկարծ շրջեց գլուխն ու ասաց.

- Դու երջանիկ չես:

- Ես կլինեմ երջանիկ,- կտրուկ ասաց Մերսոն: - Պետք է որ լինեմ՝ այս գիշերով, ծովով և մատներիս տակ եղած այս պարանոցով:

Նա վերադարձավ պատուհանի մոտ ու ձեռքով ամուր բռնեց Լյուսիենի վիզը: Վերջինս լռում էր.

- Գոնե,- ասաց նա առանց Պատրիսիին նայելու,- բարեկամական որևէ բան կա՞ քո մեջ իմ հանդեպ:

Պատրիսը խոնարհվեց նրա վրա ու կծեց ուսը:

- Բարեկամությո՞ւն: Այո: Նույնպիսի բարեկամություն ունեմ գիշերվա նկատմամբ: Դու ուրախություն ես պարգևում իմ աչքերին և գիտես, թե այդ ուրախությունն ինչ տեղ ունի իմ սրտում:

Հաջորդ առավոտյան Լյուսիենը մեկնեց: Բայց հենց մյուս օրը Մերսոն, չկարողանալով համաձայնության գալ ինքն իր հետ, մեքենայով եկավ Ալժիր: Սկզբում գնաց «Աշխարհին առճակատ տուն»: Ընկերուհիներն իրեն խոստացան այցելել նույն ամսի վերջին: Այդ ժամանակ նա գնաց տեսնելու իր քաղը: Իր տունը վար-

ձով էր տրված: Այն սրճարան էին դարձրել: Հետաքրքրվեց տակառագործի ճակատագրով, բայց ոչ ոք տեղեկություն չուներ: Ենթադրում էին, որ գնացել է Փարիզ՝ աշխատանք փնտրելու: Մերսոն շրջեց քաղամասում: Ռեստորանում շատ բան չէր փոխվել, միայն Սելեստն էր ծերացել: Ռըճեն դարձյալ այնտեղ էր իր թոքախտով ու լրջմիտ տեսքով: Պատրիսին տեսնելով՝ բոլորն աննշափ ուրախացան, իսկ ինքը շատ հուզվեց նման ընդունելությունից:

- Օ՜, Մերսո,- ասաց Սելեստը,- չես փոխվել: Օ՜, միշտ նույնն ես:

- Այո,- ասաց Մերսոն:

Նա հիանում էր այդ մարդկանց զարմանալի կուրությամբ, որոնք, չնայած քաջատեղյակ էին իրենց հետ կատարված փոփոխություններին, սակայն ընկերներին կերպավորում էին այնպես, ինչպես նրանց պատկերացրել էին մի ժամանակ: Ինչպես շունը չի փոխում բնավորությունը, այդպես էլ մարդը: Մարդը մարդու համար շուն է: Նույնիսկ Սելեստի, Ռըճեի և մյուսների համար, ովքեր իրեն այդքան լավ էին ճանաչել, նա դառնում էր օտար ու պարփակված, ինչպես անմարդաբնակ մի մոլորակ: Այնուհանդերձ, նրանցից բարեկամաբար բաժանվեց: Ռեստորանից դուրս գալիս հանդիպեց Մարթային: Նրան տեսնելով, մտածեց, որ գրեթե մոռացել էր, բայց և հույս ուներ, թե կհանդիպեին: Նույն նախշված աստվածուհու դեմքն ուներ: Խուլ ցանկություն զգաց նրա հանդեպ, բայց այնքան էլ համոզված չէր: Քայլեցին միասին:

- Օ՜, Պատրիս,- ասաց նա,- ինչքան ուրախ եմ: Ի՞նչ պատահեց քեզ:

- Ոչինչ, ինչպես տեսնում ես: Ապրում եմ գյուղում:

- Հիանալի է: Միշտ դա եմ երազել:

Եվ փոքր-ինչ լռելուց հետո ավելացրեց.

- Գիտես, ես ոխ չունեմ քո հանդեպ:

- Այո,- ասաց Մերսոն ծիծաղելով: - Քեզ մխիթարում եմ հավանաբար:

Այստեղ Մարթան խոսեց մի ձայներանգով, որը լրիվ անծանոթ էր իրեն:

- Այդքան չար մի՛ եղիր, լա՞վ: Ես գիտեի, որ վերջն այս պիտի լիներ: Դու տարօրինակ մարդ էիր: Իսկ ես՝ սովորական աղջնակ, ինչպես ինքդ էիր ասում: Երբ դա պատահեց, ես կատաղել էի, հասկանում ես, չէ՞: Բայց հետո ինքս ինձ ասացի, որ դու դժբախտ ես: Եվ զարմանալին այն է, չգիտեմ ինչպես ասեմ, առաջին անգամ զգացի, որ մեր մեջ եղածը և՛ տխրեցնում, և՛ ուրախացնում է ինձ:

Մերսոն զարմացած նայեց նրան: Հանկարծ մտածեց, որ Մարթան միշտ լավ է իրեն վերաբերվել: Ընդունում էր, ինչպես կար և շատ հաճախ ցրում էր իր մենությունը: Իսկ ինքն անարդարացի էր եղել: Այն ժամանակ, երբ իր երևակայությունն ու սնափառությունը մեծ արժեք էին տալիս նրան, գոռոզությունը բավականաչափ չէր գնահատում: Նա զգում էր, թե ինչ ահավոր պարադոքսով սխալվում ենք սիրած էակի հանդեպ, միշտ երկու անգամ, սկզբում՝ հօգուտ, իսկ հետո՝ ի վնաս նրա: Այսօր հասկանում էր, որ Մարթան իր հետ բնական էր եղել, եղել էր այնպիսին, ինչպիսին կար, և դրա համար նրան շատ էր պարտական:

Հազիվ էր զգացվում բարակ անձրևը, այնքան, որ բազմապատկվում ու ցրվում էին փողոցի լույսերը: Լույսի ու անձրևի կաթիլների միջով նա դիտում էր Մարթայի հանկարծ լրջացած դեմքը և լցվում երախտագիտությամբ, որ չէր կարող արտահայտել, և մեկ ուրիշ անգամ կարող էր ընդունել որպես սիրո ձև: Սակայն կարողացավ գտնել միայն ողորմելի բառեր.

- Գիտես,- ասաց նրան,- քեզ շատ եմ սիրում: Եվ այժմ էլ, եթե կարողանայի ինչ-որ բան...

Մարթան ժպտաց.

- Ոչ,- ասաց նա: - Ես ջահել եմ: Ուրեմն, ես ինձ չեմ զրկում, ինչպես հասկանում ես:

Համաձայնեց: Իրենց մեջ ինչպիսի՞ հեռավորություն կար և միաժամանակ՝ ինչպիսի թաքուն համաձայնություն: Բաժանվեցին նրա տան մոտ: Բացել էր անձրևանոցը: Ասաց.

- Հուսով եմ, էլի կհանդիպենք:

- Այո,- ասաց Մերսոն:

Մարթան տխուր ժպտաց:

- Օ՜,- ասաց Մերսոն,- նորից նույն աղջնակն ես:

Անցավ դռան ետևն ու փակեց անձրևանոցը:

Պատրիսը մեկնեց ձեռքն ու ինքն էլ ժպտաց.

- Ցտեսություն, տեսիլք:

Մարթան արագ սեղմեց ձեռքը, հանկարծ համբուրեց երկու այտն էլ ու վազելով բարձրացավ աստիճանները: Մերսոն մնաց անձրևի տակ. այտերին դեռ զգում էր Մարթայի սառը քիթն ու տաք շուրթերը: Եվ այդ անսպասելի ու անշահախնդիր համբույրն ուներ նույն մաքրությունը, ինչ Վիեննայի պեպենոտ, փոքրիկ պոռնկուհու համբույրը:

Այսուհանդերձ, գնաց Լյուսիենի մոտ, գիշերը մնաց այնտեղ, իսկ հաջորդ օրը խնդրեց միասին զբոսնել պուրակներում: Կեսօրին մոտ դուրս եկան: Նարնջագույն մակույկները չորանում էին արևի տակ, ինչպես չորս մաս արած պտուղներ: Աղավնիներն ու նրանց ստվերները զուգահեռ թռիչքով իջան կառամատույցները, հետո իսկույն վեր խոյացան դանդաղ կորագծով: Պայծառ արևը ջերմացնում էր մեղմորեն: Մերսոն տեսավ, թե ինչպես կարմիր ու սև փոստատար ինքնաթիռը դուրս եկավ անցումից և, արագություն վերցնելով, լայն շրջադարձ արեց դեպի լույսերի գիծը, որ փրփրում էր երկնքի ու ծովի զուգորդման սահմանագծում: Ամեն մեկնումի մեջ նայողի համար կա մի քնքուշ դառնություն:

- Բախտավոր ես,- ասաց Լյուսիենը:

- Այո,- պատասխանեց Պատրիսը:

Մտածում էր՝ ոչ: Կամ թերևս չէր նախանձում նրանց: Իր համար նույնպես հետաքրքիր էր նոր գործը, մեկնումը կամ նոր կյանքը, բայց գիտեր, որ երջանկությունը ձևավորվում է միայն ծույլերի ու կամազուրկների հոգիներում: Երջանկությունը ենթադրում է ընտրություն, իսկ այդ ընտրության խորքում՝ խռհական ու լուսավոր ճգտում: Հիշեց Զագրևսկի՝ «Ոչ թե ինքնամերժման ճանապարհով, այլ երջանկության ճգտումով»: Գրկել էր Լյուսիենին, և նրա ափում հանգչում էր կնոջ տաք ու փափուկ կուրծքը:

Նույն երեկոյան իրեն Շենուա տանող մեքենայի մեջ, ահագ-

նացող ծովի և հանկարծակի հայտնվող բլուրների առջև Մերսոն մեծ ամայություն զգաց: Չնացրել էր, թե ինչ-որ բան է ձեռնարկում, և հիմա, գիտակցելով իր անցած կյանքը, վճռեց, թե ինչ էր ուզում և ինչ չէր ուզում լինել: Կորած, ամոթալի օրերը նա համարում էր վտանգավոր, բայց և անհրաժեշտ: Այնտեղ կարող էր ընկղմել և այդպիսով կորցնել իր միակ արդարացումը: Բայց, ինչ արած, ամեն ինչին պետք էր հարմարվել:

Մի արագությունից մյուսին անցնելու ընթացքում Մերսոն ավելի էր համակերպվում այն նվաստացուցիչ և միաժամանակ անգնահատելի ճշմարտությանը, որ իր փնտրած միակ երջանկությունը կարող է գտնել առավոտյան վաղ արթնանալու, կանոնավոր լոգանքների ու խելամիտ հիգիենայի մեջ: Շատ արագ էր ընթանում: Որոշեց օգտվել այդ խոյանքից կյանքին հարմարվելու համար, որն իրենից այլևս ճիգեր չէր պահանջում, որպեսզի իր շնչառությունը համաձայնեցներ ժամանակի ու կյանքի խոր ռիթմին:

Հաջորդ առավոտյան վաղ վեր կացավ ու իջավ ծով: Օրն արդեն բացվել էր, և առավոտը ծանրաբեռնված էր թռչունների թևաբախումներով ու ճովողյունով: Սակայն արևը դիպչում էր միայն հորիզոնի կորագծին, և երբ Մերսոն մտավ դեռ անփայլ ջրի մեջ, նրան թվաց, թե լողում է տարտամ խավարում, մինչև որ արևը բարձրացավ և նրան հնարավորություն տվեց բազուկները մխրճել բոսորագույն ու սառը ոսկու շիթերի մեջ: Վերադարձավ տուն: Մարմինը կայտառ էր ու պատրաստ ամեն բան ընդունելու: Հաջորդ օրերը նա իջնում էր արևը բարձրանալուց առաջ: Եվ այդ առաջին քայլը թելադրում էր օրվա մնացած մասը: Ասենք, այդ լոգանքները հոգնեցնում էին իրեն, բայց միաժամանակ այնպիսի թուլություն և եռանդ ներարկում, որ ամբողջ օրը լցված էր լինում երջանիկ լքվածության ու խոնջանքի զգացումով: Բայց այդ օրերն էլ էին երկար թվում: Նա դեռ իր ժամանակը չէր բանտել սովորույթների վանդակում, որոնք իրեն ծառայում էին իբրև ուղենիշ: Ոչինչ չուներ անելու: Եվ ժամանակը ծավալվում էր իր ողջ թափով: Ամեն րոպե գտնում էր իր հրաշագեղ արժեքը, բայց ուրիշ էր իր կարծիքը: Ինչպես ճանապարհորդելիս, երբ օրերն անվերջա-

նալի էին թվում, ինչպես գրասենյակում, երբ մի երկուշաբթիից մինչև մյուս երկուշաբթի օրերն անցնում էին կայծակնային արագությամբ, այնպես էլ հիմա, զրկվելով իր հենարաններից, նա ձգտում էր վերագտնել դրանք այս նոր կյանքում, որի հետ չգիտեր ինչպես վարվել: Երբեմն վերցնում էր ժամացույցը և նայում, թե սլաքն ինչպես է անցնում մի թվից մյուսը: Նրան հրաշք էին թվում այդ անվերջանալի հինգ րոպեները: Անկասկած, այդ ժամացույցը նրան ընծայեց այն ծանր ու տանջալից ուղին, որ տանում էր դեպի ոչինչ չանելու գերագույն արվեստը: Սովորեց զբոսնել: Կեսօրից հետո երբեմն քայլում էր լողափի երկայնքով մինչև ծովախորշի մյուս ծայրի ավերակները: Պառկում էր օշինդրների մեջ և, ձեռքը դրած տաք քարին, աչքերն ու սիրտն էր բացում ջերմությունից շնչահեղձ երկնքի անտանելի մեծության առջև: Նա իր արյան զարկերն էր համաձայնեցնում ետմիջօրեի արևի ուժգին տրոփյունների հետ և, ընկղմված վայրի բուրմունքների ու քնկոտ միջատների համերգների մեջ, դիտում էր, թե ինչպես է երկնքի ճերմակը փոխվում մաքրամաքուր կապույտի, հետո թարմանում մինչև կանաչավուն և իր քնքշանքն ու մեղմությունը թափում դեռևս տաք ավերակների վրա: Այդ ժամանակ ավելի շուտ էր վերադառնում ու պառկում քնելու: Արևածագից վերջալույս անցնող այս վազքի մեջ նրա օրերը կարգավորվում էին մի ռիթմով, որի դանդաղկոտությունն ու արտասովորությունն իրեն դարձան նույնքան անհրաժեշտ, որքան ժամանակին իր գրասենյակը, ռեստորանը և քունը: Բայց երկու ռիթմին էլ տրվել էր անգիտակցաբար: Այժմ գոնե պայծառամտության ժամերին զգում էր, որ ժամանակն իրեն է պատկանում, և որ այդ կարճ վայրկյանի ընթացքում, երբ ալ ծովը դառնում էր կանաչավուն, ինչ-որ հավիտենական բան էր իրեն պատկերանում անցնող ամեն մի ակնթարթում: Ոչ, նա գերմարդկային երջանկություն չէր ակնկալում, ոչ էլ որևէ բան հավերժության օրերի կորագծից դուրս: Երջանկությունը մարդկային է, իսկ հավիտենականությունը՝ հանապազօրյա: Գլխավորն այն է, որ կարողանաս հնազանդեցնել ինքդ քեզ, սիրտդ հարմարեցնել օրերի ռիթմին և ոչ թե այն կապես հույսերի

կորագծին:

Այնպես, ինչպես արվեստում պետք է գիտենալ ժամանակին կանգ առնել, քանզի միշտ գալիս է մի պահ, երբ քանդակագործն այլևս իրավունք չունի դիպչելու կավին, և այս տեսակետից անմիտ ձգտումը առավելս է ծառայում արվեստագետին, քան պայծառատեսության ամենաանբիծ դրսևորումները, այդպես էլ նվազագույն տգիտությունը կարող է նրանց կյանքը երջանկությամբ պսակել, ովքեր չեն կարող երջանկությունը նվաճել:

Կիրակի օրերը Մերսոն բիլիարդ էր խաղում միքևանի Պերեզի հետ: Նրա հաշմված թևը կտրված էր արմունկից վեր: Տարօրինակ ձևով էր խաղում, իրանը ուռեցրած, թևի մնացորդը հենած հետույքին: Երբ առավոտյան գնում էր ծուկ բռնելու, Մերսոն միշտ հիացնում էր ծեր ձկնորսի ճարպկությամբ, որ ձախ թիակը դնում էր թևատակը և, նավակում կանգնած, մարմինն առիշեղ, թիակներից մեկը կրծքով էր հրում, մյուսը՝ ձեռքով: Երկուսն էլ իրար լավ էին հասկանում: Պերեզը սիպե էր պատրաստում սեփական հյութի մեջ, կծու թացանով, որի մեջ Մերսոն թաթախում էր հացը և ուտում մրոտ թավայից, ձկնորսի խոհանոցում: Պերեզը քչախոս էր: Եվ Մերսոն նրան երախտապարտ էր լռակյացության համար: Երբեմն, առավոտյան լողանալուց հետո, տեսնում էր, որ Պերեզն իր նավակը ծովն է իջեցնում, մոտենում էր.

- Գա՞մ քեզ հետ, Պերեզ:

- Բարձրացեք,- ասում էր նա:

Իրենց թիակներն ամրացնում էին երկու տարբեր թիակալների և միաբան թիավարում, զգուշանալով (ավելի շատ Մերսոն), որ ոտքերը չխճճվեն կարթավոր ուղկանի մեջ: Հետո ծուկ էին որսում, և Մերսոն հետևում էր կարթերին, որոնք փայլուն էին ծովի վրա, իսկ ջրի տակ՝ ծփծփացող և սևաթույր: Արևը փշրվում էր ջրի վրա հազարավոր փոքրիկ բեկորներով, և Մերսոն շնչում էր ծանր ու հեղձուցիչ հոտը, որ բարձրանում էր ծովից, ինչպես մի ահռելի շնչառություն: Երբեմն Պերեզը փոքրիկ ծուկ էր բռնում: Անմիջապես ետ էր նետում ու ասում.

- Գնա մորդ մոտ:

Ժամը տասնմեկին նրանք վերադառնում էին, և Մերսոն՝ թեփուկներից փայլող ձեռքերով ու արևից ուռած դեմքով, տուն էր գնում, ուր մառանի պես զով էր, իսկ Պերեզը ձեռնամուխ էր լինում պատրաստելու ճկով որևէ կերակուր, որը երեկոյան ուտում էին միասին: Օրըստօրե Մերսոն տրվում էր կյանքին, ինչպես մարմինը՝ ծովի սառը ջրերին: Լողորդն առաջ է շարժվում բազուկների և ջրի համագործակցության շնորհիվ, որը տանում է, տեղափոխում, իսկ իրեն բավական էր, որ ձեռքը դներ ծառի բնին կամ վագեր լողափով, որպեսզի իրեն զգար անխաթար ու ամբողջական: Այսպիսով, նա զուգորդվում էր կյանքի նախնական մաքուր վիճակին, վերագտնում դրախտը, որը տրվում է ամենատխմարներին կամ ամենաօժտյալ արարածներին: Այն կետում, որտեղ բանականությունը ժխտում է ինքն իրեն, Մերսոն հասել էր ճշմարտությանը և նրա հետ էլ՝ գերագույն փառքին ու սիրուն:

Բեռնարի շնորհիվ նա շփվում էր գյուղական կյանքին: Բժշկին կանչել էր, երբ մի անգամ վատ էր զգացել: Դրանից հետո նրանք սկսել էին հաճախակի և հաճույքով հանդիպել: Բեռնարն էլ էր լռակյաց, բայց ուներ խոր և դառը միտք, որն առկայծում էր հաստ շրջանակներով ակնոցի տակից: Նա երկար ժամանակ աշխատել էր Հնդկաչինում, իսկ քառասուն տարեկանից քաշվել Ալժիրի այդ անկյունը: Մի քանի տարի էր, ինչ խաղաղ կյանք էր վարում իր կնոջ՝ գրեթե համր, մեծ մազափնջով ու նորաձև հագուստով հնդկաչինուհու հետ: Բեռնարն իր ներողամտության շնորհիվ հարմարվում էր բոլոր միջավայրերին: Սիրում էր գյուղացիներին և սիրված էր բոլորի կողմից: Իր հետ մաճ էր տալիս Մերսոյին: Վերջինս արդեն լավ ծանոթ էր հյուրանոցի տիրոջը՝ նախկին տեռորին, որն իր հաշվեսեղանի առջև երգում էր «Տոսկայի» արիաներից և մոնչյունների արանքում ծեծով սպառնում կնոջը: Պատրիսին ու Բեռնարին առաջարկեցին մտնել տոնակատարությունների կազմակերպության կոմիտեի մեջ: Եվ հանդիսություններին՝ լիներ հուլիսի տասնչորսը կամ մեկ այլ տոն, նրանք մաճ էին գալիս եռագույն թևկապներով կամ քաղցր, ախորժաբեր ըմպելիքներով բեռնված, կանաչ մոմլաթապատ սեղանների շուրջը վիճում էին

կոմիտեի այլ գործակալների հետ՝ երաժիշտների բեմահարթակն ինչով պիտի շրջապատված լիներ՝ իլենիներո՞վ, թե՞ արմավենիներով: Քիչ մնաց Պատրիսին քարշ տային նաև նախընտրական քաշքշուկի մեջ: Բայց նա հասցրեց ճանաչել քաղաքագլխին: Վերջինս տասը տարուց ի վեր «տնօրինում էր համայնքի ճակատագրերը» (իր խոսքերով) և այդ երկարակեցության պատճառով իրեն կարծում էր Նապոլեոն Բոնապարտ: Այդ հարստացած այգեգործն իր համար կառուցել էր տվել հունական ոճի տուն, ուր և հրավիրեց Մերսոյին: Տունն ընդամենը երկհարկանի էր, սակայն չնահանջելով ոչ մի զոհողության առջև, քաղաքագլուխն այնտեղ վերելակ էր տեղադրել, որից Մերսոյին ու Բեռնարին առաջարկեց օգտվել: Եվ Բեռնարն ասաց անվրդով. «Լավ է սահում»: Այդ օրվանից Մերսոն խոր հիացմունքով լցվեց քաղաքագլխի հանդեպ: Բեռնարն ու ինքը օգտագործեցին իրենց ողջ ազդեցությունը պահպանելու նրա պաշտոնը, որին իրոք արժանի էր:

Գարնանը լեռան ու ծովի արանքում թաքնված գյուղակը, որի կարմիր կտուրները շատ մոտ էին դասավորված, հեղվում էր ծաղիկներով՝ թեյավարդերով, հակինթներով, բուգենվիլիաներով և զեղուն միջատների բզզոցներով: Ետճաշյա հանգստի ժամին Մերսոն դուրս էր գալիս դարավանդ ու նայում հորդացող լույսի ներքո ննջող ու ծխացող գյուղին: Գյուղի փառավոր պատմությունն ընթացել էր երկու իսպանացի հարուստ գաղթականների՝ Մորալեսի և Բինգեսի մրցակցության մեջ, որոնք մի շարք գործարքների շնորհիվ դարձել էին միլիոնատեր: Այդ պահից նրանց սրտերը վառվել էին սնափառության մարմաջով: Եթե մեկը ցանկանում էր մեքենա գնել, ընտրում էր ամենաթանկը: Մյուսը, որ գնում էր նույն մեքենայից, նրա վրա ամրացնում էր արծաթյա բռնակներ: Այս տեսակետից Մորալեսը հանճարեղ էր: Նրան անվանում էին «իսպանական արքա»: Նա բոլոր հարցերում հաղթում էր Բինգեսին, որը զուրկ էր երևակայությունից: Պատերազմի ժամանակ, հենց այն օրը, երբ Բինգեսը բաժանորդագրվեց հարյուր հազարավոր ֆրանկի պետական փոխառություն, Մորալեսը հայտարարեց. «Ես ավելին կանեմ: Ես կտամ որդուս», և զորակոչիկ որդուն ու-

դարկեց ռազմաճակատ, չնայած չափազանց ջահել էր զինվորագրվելու համար: 1925 թվականին Բինգեսն Ալժիր ժամանեց մի հիասքանչ «Բուգատիով»: Տասնհինգ օր անց Մորալեսը նավաշենք կառուցել տվեց և գնեց «Կողրոն» ինքնաթիռ: Այդ ինքնաթիռը դեռ հանգչում է իր նավաշենքում: Միայն կիրակի օրերին այն ցուցադրում են այցելուներին: Բինգեսը, Մորալեսի մասին խոսելիս, ասում էր. «Այդ սովալլուկը», իսկ Մորալեսը Բինգեսին անվանում էր՝ «Ճերմակ դիակիզարան»:

Բեռնարը Մերսոյին տարավ Մորալեսի տուն: Վերջինս նրանց ընդունեց իշամեղուներով ու խաղողաբույրով լի ֆերմայում, ընդունեց պատշաճության բոլոր կանոնների համաձայն, սակայն հոդաբաշխերով և միայն վերնաշապիկով, որովհետև տանել չէր կարողանում ոչ բաճկոն, ոչ կոշիկներ: Նրանց ցույց տվեցին ինքնաթիռը, մեքենաները, որդու ստացած մեդալը, որ դրել էին շրջանակի մեջ և կախել հյուրասենյակում, և Մորալեսը Մերսոյին բացատրեց ֆրանսիական Ալժիրից օտարերկրացիներին դուրս քշելու անհրաժեշտությունը (ինքը ստացել էր քաղաքացիություն, բայց այդ Բինգեսը...) և հետո նրանց ցուցադրեց իր նոր գյուտը: Մտան ընդարձակ խաղողի այգու խորքը, որի մեջտեղում կար քարաշեն կլոր հրապարակ: Այնտեղ դասավորված էր ամենաթանկարժեք փայտից ու պաստառներից սարքված Լյուդովիկոս XV-ի ոճի հյուրասենյակի կահավորանք: Իր կալվածքում Մորալեսն այսպես էր ընդունում այցելուներին: Մերսոն, որը բարեկրթորեն ցանկացավ տեղեկանալ, թե ինչ են անում կահույքը անձրևից հետո, Մորալեսը ծխաքուլայի միջից անվրեպ պատասխանեց. «Լրիվ փոխում եմ»:

Վերադարձի ճանապարհին Բեռնարի հետ փորձեցին պարզել, թե ինչով է նորաթուխ հարուստը տարբերվում բանաստեղծից: Բեռնարի կարծիքով՝ Մորալեսը բանաստեղծ էր: Իսկ Մերսոն մտածեց, որ նա անկման շրջանի մի հիանալի հռոմեական կայսր կլիներ:

Որոշ ժամանակ անց Լյուսիենը եկավ Շենուա և մի քանի օր մնալուց հետո վերադարձավ Ալժիր: Իսկ հաջորդ կիրակի առա-

վոտյան Քլերը, Ռոզն ու Կատրինը եկան այցելության, ինչպես խոստացել էին: Սակայն Պատրիսն արդեն շատ հեռու էր այն տրամադրությունից, որը Ալժիր էր իրեն մղում մենակյացության առաջին օրերին: Այնուամենայնիվ, ուրախ էր հանդիպման համար և Բեռնարի հետ գնաց նրանց դիմավորելու դեղձանիկի գույն ունեցող ավտոբուսի կանգառում: Սքանչելի օր էր, գյուղը լի էր շրջիկ մսավաճառների գեղեցիկ, ալ մեքենաներով, փարթամ ծաղիկներով ու պայծառ, գույնզգույն զգեստներ հագած մարդկանցով: Կատրինի խնդրանքով նրանք մի պահ մտան սրճարան: Կատրինը հիանում էր այդ կյանքով, այդ ամբողջ փայլով, և պատի հետևից, որին հենվել էր, զգում էր ծովի առկայությունը: Արդեն պատրաստվում էին հեռանալ, երբ հարևան փողոցում մի զարմանահրաշ երաժշտություն թնդաց: Անկասկած, «Տորեադորների քայլերգն» էին նվագում «Կարմեն» օպերայից, սակայն այնպիսի շռնդյունով ու ուժգնությամբ, որ խանգարում էին գործիքներին չափը պահել:

- Մարմնամարզական ընկերության նվագախումբն է,- բացատրեց Բեռնարը:

Հետո տեսան՝ ինչպես փողոց թափվեցին մոտ քսան անծանոթ երաժիշտ և, անվերջ փչելով իրենց բազմազան փողային գործիքները, առաջ շարժվեցին դեպի սրճարան: Նրանց ետևից, գլխարկը ետ դրած, թաշկինակը ծոծրակին, գովազդային հովիարը ձեռքին հայտնվեց Մորալեսը: Նա վարձել էր քաղաքի այդ երաժիշտներին, որովհետև, ինչպես հետո բացատրեց. «այս ճգնաժամային պայմաններում կյանքը չափազանց տխուր է»: Նա տեղավորվեց և իր շուրջը շարեց երաժիշտներին, որոնք ավարտեցին իրենց քայլերգը: Սրճարանը լցվեց մարդկանցով: Այդ ժամանակ Մորալեսը վեր կացավ, հայացքով ընդգրկեց ողջ հասարակությունը և արժանապատվությամբ ասաց.

- Իմ խնդրանքով նվագախումբը նորից կկատարի «Տորեադորը»:

Դուրս գալով փոքրիկ «իշուկները» պոռթկացին ծիծաղից: Բայց հասնելով տուն, ուր մութ սենյակների զովությունն ավելի

զգալի էր դարձնում այգու արևով ողողված պատերի շլացուցիչ ճերմակությունը, նրանք լռեցին և վերստին գտան իրենց ներքին դաշնությունը, որը Կատրինն արտահայտեց դարավանդի վրա արևային լոգանք ընդունելու ցանկությամբ:

Այդ ժամանակ Մերսոն գնաց ճանապարհելու Բեռնարին: Արդեն երկրորդ անգամ էր, որ Բեռնարն ինչ-որ բան էր տեսնում Մերսոյի անծնական կյանքից: Նրանք երբեք իրար որևէ բան չէին վստահել. Մերսոն գիտակցում էր, որ Բեռնարը երջանիկ չէր, իսկ Բեռնարին անհասկանալի էր Մերսոյի կյանքը: Նրանք բաժանվեցին առանց բառ ասելու: Վերադառնալով՝ Մերսոն պայմանավորվեց ընկերուհիների հետ, որ հաջորդ օրը, վաղ առավոտյան, չորսով կմեկնեն լեռները զբոսանքի: Շենուան շատ բարձր էր, դժվար էր մագլցել: Նախատեսվում էր հոգնությամբ և արևով լի գեղեցիկ օր:

Վաղ առավոտյան նրանք արդեն մագլցում էին առաջին թեք սարալանջերը: Ռոզն ու Քլերը գնում էին առջևից, իսկ Պատրիսն ու Կատրինը՝ նրանց ետևից: Լուռ էին: Քիչ-քիչ նրանք ավելի էին բարձրանում ծովից, որը դեռ լրիվ ճերմակ էր վաղորդյայնի մշուշների մեջ: Պատրիսը նույնպես լուռ էր, ողջ միտքը կենտրոնացրած լեռան վրա՝ իր հատուկենտ ու գիսախոհիվ, ձյունածածկայինհարդարանքով, տարված էր սառնորակ աղբյուրներով, ստվերի ու արևի խաղով և նաև իր մարմնով, որն ամեն ինչ սկզբում ընդունում էր, իսկ հետո՝ մերժում: Նրանք մտնում էին երթի ներամփոփ ոիթմի մեջ, թոքերը լի առավոտյան օդով, որն ասես շիկացած երկաթ լիներ կամ սուր ածելի՝ ամբողջովին տրված հաղթահարման այդ գործին, գերազանցելով իրենք իրենց և ձգտելով հաղթել զառիվայրը: Ռոզն ու Քլերը հոգնեցին և դանդաղեցրին քայլերը: Կատրինն ու Պատրիսն առաջ անցան և շուտով նրանց կորցրին տեսադաշտից:

- Ո՞նց է,- հարցնում էր Պատրիսը:

- Հիանալի:

Արևը բարձրանում էր երկնքում, և նրա հետ էլ՝ ջերմությունից առույգացած միջատների ճռռոցները: Շուտով Պատրիսը հանեց

շապիկը և, մինչև գոտկատեղը մերկ, շարունակեց ճանապարհը: Քրտինքը ծորում էր ուսերից, մաշկը պլոկվել էր արևից: Գնացին մի արահետով, որն հավանաբար անցնում էր լեռան թեք լանջի երկայնքով: Շուտով աղբյուրների կարկաչը ողջունեց նրանց, և ժայռերի արանքից ժայթքեցին զովությունն ու ստվերը: Նրանք իրար ցողեցին ջրով, խմեցին մի քիչ, Կատրինը պառկեց խոտերին, իսկ Պատրիսը, որի մազերը ջրից սևաթույր էին թվում և կպել էին ճակատին, աչքերը կկոցած դիտում էր ավերակներով, փայլուն ճանապարհով գծագրված և արևից շողշողացող քնապատկերը: Հետո նստեց Կատրինի մոտ:

- Մինչ մենակ ենք, Մերսո, ասա ինձ՝ երջանի՞կ ես:

- Նայիր,- ասաց Մերսոն:

Արահետը բեկբեկվում էր արևի շողերում, դեպի իրենց էր բարձրանում գոյնզգույն ջրաշիթերի պարսը:

- Այո, բայց ես ուզում էի հարցնել: Իհարկե, եթե ձանձրացնում եմ, կարող ես չպատասխանել:

Այստեղ նա վարանեց:

- Սիրո՞ւմ ես կնոջդ:

Մերսոն ժպտաց.

- Պարտադիր չէ:

Նա բռնեց Կատրինի ուսը և, գլուխը թափահարելով, ջրցողեց նրա դեմքը:

- Սխալն այն է, փոքրիկ Կատրին, թե կարծում ենք՝ կարելի է ընտրել, անել մեր ուզածը, թե կան պայմաններ երջանկության համար: Գլխավորը, հասկանո՞ւմ ես, երջանկության ձգտումն է, նրա մշտական ու անհրելի գիտակցումը: Մնացյալը՝ կանայք, արվեստի գործերը, աշխարհիկ հաջողությունները, լոկ պատրվակներ են: Պատմությունը կանվա է, որ սպասում է մեր ասեղնագործությանը:

- Այո,- ասաց Կատրինը արևալից աչքերով:

- Ինձ մտահոգում է երջանկության որոշակի որակը: Ես կարող եմ ճաշակել երջանկությունը միայն իր հակոտնյայի հետ ուժեղ և համառ առճակատման մեջ: Արդյոք երջանի՞կ եմ, Կատրին: Ինքդ

էլ լավ գիտես հայտնի բանաձևը. «Թե կարողանայի վերսկսել կյանքը»: Դե ինչ, ես վերսկսում եմ: Բնականաբար դու չես հասկանում, թե դա ինչ է նշանակում:

- Ոչ,- ասաց Կատրինը:

- Ինչպես ասեմ, փոքրիկս: Եթե ես երջանիկ եմ, ապա իմ անմաքուր խղճի շնորհիվ: Ինձ պետք էր մեկնել և ձեռք բերել այս մենությունը, որտեղ կարող էի ինքս ինձ առճակատել՝ հասկանալու, թե ինչ է արևը, ինչ են արցունքները... Այո, իբրև մարդ ես երջանիկ եմ:

Ռոզն ու Քլերն էին գալիս: Վերջին ուսապարկերը: Ճանապարհն առաջվա պես անցնում էր լանջի երկայնքով և ընդգրկում առատ բուսականության գոտին, որը ևս եզերված էր բերբերական թզենիներով, ձիթենիներով և յունապիներով: Երբեմն գրաստներ հեծած արաբներ էին հանդիպում: Ավելի վեր բարձրացան: Արևն այժմ կրկնակի հարվածով էր խփում ճանապարհի ամեն մի քարին: Կեսօրին արդեն շոգից տապալված, բույրերից ու հոգնությունից արբեցած՝ նրանք շպրտեցին իրենց ուսապարկերը և հրաժարվեցին գագաթը հասնելու մտքից: Լանջերը ժայռոտ էին և լի կայծքարահողով: Մի փոքրիկ, ծուռումուռ կաղնի նրանց պատսպարեց իր հովանու տակ: Ուսապարկերից հանեցին ուտելիքն ու կերան: Ամբողջ լեռն ասես ցնցվում էր լույսի ուժգնությունից ու ճպուռների համերգից: Տապը բարձրանում և նրանց պաշարում էր նույնիսկ կաղնու տակ: Պատրիսը փովեց գետնին և, կուրծքը սեղմած քարերին, շնչեց հողեղեն բույրը: Որովայնով նա ընդունում էր ասես համաչափ աշխատող լեռան խուլ հարվածները: Այդ հարվածների միալարությունը, տաք քարերի մեջ խլրտացող միջատների խլացուցիչ երգը և վայրի բուրմունքները, ի վերջո, քնեցրին նրան:

Արթնացավ քրտինքի մեջ կորած: Մարմինը կոտրատվում էր: Ժամը երեքը կլիներ: Երեխաներն անհետացել էին: Սակայն շուտով քրքիջներն ու բղավոցներն ազդարարեցին նրանց վերադարձը: Շոգը նվազել էր: Հարկավոր էր իջնել: Եվ այդ պահին, վայրէջքի կեսճանապարհին, առաջին անգամ կյանքում Մերսոն ուշա-

գնաց եղավ: Երբ ուշքի եկավ, կապուտակ ծովը տեսավ երեք տագնապահար դեմքերի արանքում: Ավելի դանդաղ սկսեցին իջնել: Ստորին լանջերի վրա Մերսոն խնդրեց կանգ առնել: Ծովն այժմ կանգաչավուն էր դարձել երկնքի հետ միասին: Ջովություն էր բարձրանում հորիզոնից: Փոքրիկ ծովախորշի շուրջը, Շենուան շրջանակող բլրակների վրա դանդաղ սևանում էին նոճիները: Բոլորը լուռ էին: Սակայն Քլերն ասաց.

- Հոգնած տեսք ունեք:

- Պարզ է, փոքրիկս:

- Գիտեք, ինձ չի վերաբերում, սակայն այս երկիրը ձեզ համար չէ: Այն շատ մոտ է ծովին, խոնավ է: Ինչո՞ւ չեք գնում ապրելու Ֆրանսիայում, լեռներում:

- Այո, այս երկիրն ինձ համար չէ, սակայն ես երջանիկ եմ այստեղ: Ես հարմարվել եմ նրան:

- Մի՞թե ավելի երկար և լիուլի երջանիկ լինելու համար:

- Ավելի կամ պակաս երջանիկ չեն լինում: Երջանիկ ես, և վերջ: Այս է ամենը: Նույնիսկ մահը չի կարող խոչընդոտել: Այն լոկ պատահար է այս պարագայում:

Բոլորը լռեցին:

- Այնքան էլ համոզիչ չէ,- ասաց Ռոզը փոքր-ինչ մտածելուց հետո:

Երեկոն իջնում էր: Նրանք դանդաղ վերադարձան: Կատրինն իր վրա վերցրեց Բեռնարին կանչելու գործը: Մերսոն իր սենյակում էր: Փայլուն պատուհանների միջից նա տեսնում էր վանդակապատի ճերմակ բիծը, ծովը, որն ասես մուգ ու ալեծածան կտավ լիներ, իսկ վերևում՝ ավելի բաց գույնի, բայց անաստղ գիշերը: Իրեն թույլ էր զգում, բայց մի բարերար առեղծվածով թուլությունը թեթևացնում էր մարմինն ու պայծառացնում միտքը: Երբ Բեռնարը թակեց դուռը, Մերսոն զգաց, որ այժմ ամեն բան կպատմի նրան: Ոչ այն պատճառով, որ գաղտնիքը ճնշում էր իրեն: Գաղտնիք էլ չկար: Եթե մինչև այսօր լռել էր, ապա լոկ այն պատճառով, որ որոշ միջավայրերում թաքցնում ես մտքերդ, քանի որ դրանք բախվելու են նախապաշարումներին ու հիմարությանը:

Սակայն այսօր մարմնի իր ողջ հոգնությամբ և խոր անկեղծությամբ, ինչպես արվեստագետը, որը երկար ժամանակ փայփայել ու հղկել է իր ստեղծագործությունը և մի օր անհրաժեշտություն է զգում լույս աշխարհ բերել նրան և վերջապես հաղորդակցվել մարդկանց հետ, Մերսոն զգաց, որ պետք է արտահայտվի: Չնայած վստահ չէր, բայց Բեռնարին սպասում էր անհամբերությամբ:

Ներքևի սենյակներից լսվեցին լիաթոք քրքիջներ, որոնք ստիպեցին իրեն ժպտալ: Այդ պահին Բեռնարը մտավ:

- Եվ ի՞նչ,- հարցրեց նա:

- Ինչպես տեսնում ես,- պատասխանեց Մերսոն:

Լսեց գործիքով: Ոչինչ չէր կարող ասել: Բայց կուզենար ռենտգենով նկարել, երբ Մերսոն ի վիճակի լիներ:

- Հետո,- ասաց վերջինս:

Բեռնարը լռեց ու նստեց պատուհանի գոգին:

- Ես ինքս չեմ սիրում հիվանդանալ,- ասաց նա: - Գիտեմ՝ ինչ է: Ոչինչ ավելի տգեղ ու նվաստացուցիչ չէ, քան հիվանդությունը:

Մերսոն անտարբեր էր: Վեր կացավ բազկաթոռից, Բեռնարին ծխախոտ առաջարկեց, մեկն էլ ինքը վառեց և ասաց ծիծաղելով.

- Կարելի՞ է ձեզ մի հարց տալ, Բեռնար:

- Այո:

- Դուք երբեք չեք լողում ծովում, ուրեմն, առանձնանալու համար ինչո՞ւ եք ընտրել այս վայրը:

- Է՞, ինքս էլ չգիտեմ: Վաղուց է եղել:

Փոքր դադարից հետո ավելացրեց.

- Եվ հետո, ես միշտ գործել եմ ի հեճուկս ամեն ինչի: Հիմա ավելի հանգիստ եմ: Առաջ ես ուզում էի երջանիկ լինել, ուզում էի անել մտքովս անցածը, օրինակ, հիմնվել մի երկրում, որն ինձ դուր էր գալիս: Բայց զգայական կոահումը խաբուսիկ է: Ուրեմն, պետք է որքան հնարավոր է հեշտ ապրել, չպետք է ճգնել: Սա փոքր-ինչ անպատկառ է հնչում, բայց նույն կարծիքին է նաև աշխարհի ամենագեղեցիկ աղջիկը: Հնդկաչինում թուրս կտրում էր աջ ու ձախ: Այստեղ ընդամենը որոճում եմ:

- Այո,- ասաց Մերսոն՝ ընկղմված բազկաթոռում, անընդհատ

ծխելով ու առաստաղին նայելով,- բայց վստահ չեմ, թե բոլոր զգայական կոահումները խաբուսիկ են: Պարզապես ողջախոհ չեն: Ամեն դեպքում ինձ այն փորձն է հետաքրքրում, որի արդյունքում կգտնենք՝ ինչ հույս ունեինք գտնել:

Բեռնարը ժպտաց.

- Այո, կանխորոշված ճակատագիր:

- Մարդու ճակատագիրը,- ասաց Մերսոն առանց շփոթվելու,- միշտ հրապուրիչ է, եթե այն զուգակցվում է կրքի հետ: Իսկ ոմանց համար հրապուրիչ ճակատագիրը կանխորոշված ճակատագիրն է:

- Այո,- ասաց Բեռնարը, դժվարությամբ վեր կենալով ու մի պահ նայելով մթությանը, մեջքով դեպի Մերսոն: - Դուք և ես միակ մենակյացներն ենք այս երկրում: Ես չեմ խոսում ձեր կնոջ ու ընկերների մասին: Գիտեմ, որ դրանք լոկ դրվագներ են: Սակայն ինձ թվում է, թե դուք ինձնից ավելի եք սիրում կյանքը:

Շրջվեց.

- Որովհետև ինձ համար սիրել կյանքը՝ չի նշանակում լոգանք ընդունել: Սիրել կյանքը՝ նշանակում է ապրել հախուռն, անսանձ կյանքով, կանայք, արկածներ, ճանապարհորդություններ: Ապրել՝ նշանակում է գործել, կորզել ինչ-որ բան: Հրակեզ, չնաշխարհիկ կյանք: Մի խոսքով, ուզում եմ ասել... Հասկանո՞ւմ եք (մի պահ ասես ամաչեց, որ շատ է ոգևորվել), ես չափազանց շատ եմ սիրում կյանքը, որպեսզի գոհանամ միայն բնության հրաշալիքներով:

Բեռնարը հավաքեց իր լսափողակն ու փակեց պայուսակը:

- Ըստ էության, դուք իդեալիստ եք,- ասաց Մերսոն:

Նա այնպիսի զգացում ուներ, թե ամեն բան պարփակված է այդ վայրկյանի մեջ և որ ամեն բան՝ ծննդից մինչև մահը, կշռադատվում և լուսաբանվում է այդտեղ:

- Ենթադրենք,- ասաց Բեռնարը թախիծով,- բայց, հասկանո՞ւմ եք, իդեալիստի հակառակը շատ հաճախ այն մարդն է, որն ընդունակ չէ սիրելու:

- Չհավատաք,- ասաց Մերսոն և նրան մեկնեց ձեռքը:

Բեռնարն ամուր սեղմեց այն:

- Ձեզ նման կարող են մտածել միայն այն մարդիկ, որոնք ապ-

րում են մեծ հուսահատությամբ կամ մեծ հույսով:

- Երկուսով էլ, թերևս:

- Օ՞, չեմ հասկանում:

- Գիտեմ,- ասաց Մերսոն լրջորեն:

Բայց երբ Բեռնարն արդեն դռան մոտ էր, Մերսոն առանց մտածելու, ներքին մղումով ձայն տվեց նրան:

- Այո,- ասաց բժիշկը՝ շրջվելով:

- Դուք ընդունա՞կ եք արհամարհելու մարդու:

- Կարծում եմ՝ այո:

- Ի՞նչ հանգամանքներում:

Բժիշկը մտածեց:

- Ինձ թվում է՝ պարզ է: Այն բոլոր դեպքերում, երբ մարդը գործում է՝ ելնելով շահից կամ դրամի նկատմամբ ունեցած մոլուցքից:

- Իսկապես որ պարզ է,- ասաց Մերսոն: - Բարի գիշեր:

- Բարի գիշեր:

Մենակ մնալով՝ Մերսոն ընկավ մտածմունքի մեջ: Այս վիճակում իր համար լրիվ միևնույն էր՝ կարհամարհեն իրեն, թե ոչ: Բայց Բեռնարի մեջ նա տեսել էր իր մտքերի խոր արձագանքները, որոնցով իրենք մերձեցել էին: Սակայն անտանելի էր թվում, որ իր մի կեսը դատում էր մյուս կեսին: Արդյոք շահից ելնելո՞վ էր գործել: Նա բացահայտել էր այն էական և անբարոյական ճշմարտություններից մեկը, որի համաձայն դրամն է անկախություն ևվաճելու ամենավստահելի և ամենաարագ միջոցներից մեկը: Այն զազրելի և ընթոստացնող անեծքը, ըստ որի աղքատները պետք է մեռնեն թշվառության մեջ, քանի որ աղքատ են ծնվել, նա մի կողմ շպրտեց՝ դրամի դեմ մարտնչելով դրամով, ատելության դեմ՝ ատելությամբ: Եվ այդ կատաղի պայքարում նրան երբեմն հայտնվում էր երջանկության հրեշտակը՝ ծովի տաք շնչի ներքո, իր թևերով ու փառահեղությամբ: Միայն ափսոս, որ չկարողացավ ոչինչ ասել Բեռնարին, և որ իր գործն այսուհետև կմնա հավիտենական գաղտնիք:

Հաջորդ օրը, կեսօրից հետո, ժամը հինգի մոտ աղջիկները մեկնեցին: Ավտոբուս բարձրանալիս՝ Կատրինը շրջվեց դեպի ծովն ու ասաց.

- Մնաս բարով, ծովափ:

Մեկ րոպե անց երեք ժպտուն դեմք Մերսոյին էին նայում դեղին ավտոբուսի ապակու ետևից, որը ոսկեզօծ մեծ բզեզի նման անհետացավ լույսերի մեջ: Երկինքը չնայած մաքուր էր, բայց նաև ճնշող: Ճանապարհին միայնակ մնացած Մերսոն սրտի խորքում մի տարօրինակ զգացում ունեցավ՝ հուսցված թեթևացումից ու տխրությունից: Միայն այսօր իր մենությունը դարձավ իրական, քանզի միայն այսօր զգաց, թե որքան կապված է նրան: Եվ ընդունելով այն, գիտակցելով, որ ինքն է գալիք օրերի լիիրավ տերը, Մերսոն համակվեց մելամաղձով, որը հատուկ է վեհ հոգիներին:

Փոխանակ գնալու մեծ ճանապարհով, նա վերադարձավ եղջերենիներով ու ձիթենիներով եզերված մի փոքրիկ արահետով, որն անցնում էր լեռան ստորոտով և վերջանում իր տան ետևում: Ոտքով տրորեց մի քանի ձիթապտուղ ու նկատեց, որ ճանապարհը վագրի մորթի պես լրիվ պատված է սև բծերով: Ամռան վերջին եղջերենիները սիրո բույրն են սփռում Ալժիրի վրա, և երեկոյան կամ անձրևից հետո գետինն ասես իր խոնջանքն է առնում արևին տրվելուց հետո՝ մարմինն ամբողջովին թաց նշի դառնաբույր ցողով: Ամբողջ օրը հսկա ծառերից ծորում է նրանց ծանր ու հեղձուցիչ բույրը: Սակայն այս փոքրիկ ճանապարհին, իրիկնապահին և գետնից արձակվող հառաչանքի մեջ այդ անուշաբույրը ցնդել էր՝ հազիվ զգալի Պատրիսի ռունգերին, ինչպես բույրը սիրուհու, որի հետ փողոց ես իջնում՝ ողջ ցերեկը նրա հետ անցկացնելուց հետո, և որը ուսով սեղմվում է ուսիդ ու զմայլված քեզ նայում ամբոխի ու լույսերի մեջ:

Սիրո այդ անուշաբույրի, ճզմված ու բուրավետ մրգերի մեջ Մերսոն հասկացավ, որ ամառն ավարտվում է: Մեծ ձմեռ էր սպասվում: Բայց ինքը հասունացել էր նրան արժանավայել ընդունելու համար: Այդ ճանապարհից ծովը չէր երևում, բայց լեռան գագաթին կարելի էր նշմարել երեկոն ավետող թեթև ու կարմրավուն մշուշները: Գետնի վրա լույսի շիթերը գունատվում էին սաղարթների ստվերներում: Մերսոն ամբողջ ուժով ներս քաշեց դառնահամ բուրմունքը, որն այդ երեկո հռչակում էր իր զուգորդութ-

յունը հողի հետ: Այդ երեկոն, որն իջնում էր աշխարհի վրա, ճանապարհը եզերող ծիքենիների ու մազտաքիների միջև, որթատունկերի և կարմրավուն հողի վրա, մեղմորեն սուլող ծովի մոտակայքում, այդ երեկոն ներխուժում էր իր սիրտը, ինչպես մի ահռելի մակընթացություն: Որքա՞ն նման երեկոներ խոստացել էին երջանկություն, որով չափվելու էր հույսից մինչև հաղթանակն անցնող ճանապարհը: Իր հոգու անմեղությամբ նա ընդունում էր այդ կանաչ երկինքն ու սիրով թաթախված հողը, կրքի և ցանկության նույն սարսուռով, ինչ զգացել էր Զագրևսին սպանելու պահին:

Հունվարին ծաղկեցին ընձենիները: Մարտին ծաղիկներ հագան տանձենիները, դեղձենիներն ու խնձորենիները: Մեկ ամիս անց աննկատ փքվեցին աղբյուրները, իսկ հետո սկսվեց առուների քնքշանոն հոսքը: Մայիսի սկզբներին սկսվեց խոտհարքը, իսկ ամսվա վերջին հնձեցին վարսակն ու գարին: Արդեն ծիրանն էր հասունանում ամառվա շնչից: Հունիսին քաղեցին վաղահաս տանձը: Արդեն ցամաքեցին աղբյուրները, տապն էր սաստկանում: Սակայն հողի ավիշն այդ կողմերում ցամաքելով, մեկ այլ տեղ ծաղկեցնում էր բամբակը և քաղցրացնում խաղողի առաջին ողկույզները: Ուժեղ և այրող քամիներ բարձրացան՝ չորացնելով հողերն ու հրդեհներ բռնկեցնելով գրեթե ամենուրեք: Հետո միանգամից տարին սասանվեց: Հապշտապ ավարտվեց այգեկութը: Տեղատարափ անձրևները սեպտեմբերից մինչև հոկտեմբեր սրբեցին, լվացին գետինը: Ամառային աշխատանքները հազիվ ավարտած՝ եկավ աշնանացանի ժամանակը: Այդ ընթացքում գետակները միանգամից հորդացին և հոսեցին հորձանքներով: Տարվա վերջին որոշ արտերում ցորենն արդեն ծլարձակել էր, այնինչ ուրիշ տեղերում դեռ նոր էին հասցրել հերկել: Քիչ ավելի ուշ ընձենիները կրկին ճերմակեցին սառնաշունչ ու կապույտ երկնքի ներքո: Հետո նոր տարի սկսվեց երկրի ու երկնքի միջև: Ծխախոտը տնկեցին, վարեցին խաղողի այգին ու մշակեցին ծծումբով, պատվաստեցին ծառերը: Նույն ամսին հասունացավ զկեռը: Ու դարձյալ խոտհարք, հունձք և ամառային վարուցանք: Ամառվա կեսին սեղանները զարդարվեցին խոշոր, հյութալի ու շոշափելիս կպչուն մրգով՝ թզով, դեղձով ու տանձով, որ ուտում էին երկու կալսումների արանքում: Հաջորդ այգեկութի ժամանակ երկինքը ծածկվեց ամպերով: Հյուսիսից եկան և անցան սարյակների ու կեռնեխների սևաթույր, անխոս երամները: Նրանց համար արդեն հասունացել էր ճիթապտուղը, որ քաղեցին թռչունների չվելուց հետո: Խրուտներում ցորենը երկրորդ անգամ ծլարձակեց: Դարձյալ հյուսիսից

եկան մեծ-մեծ ամպեր, թոան գետնի ու ծովի վրայով, խոզանակեցին փրփուրը ջրի վրայից, դարձրին մաքուր ու պաղ՝ բյուրեղյա երկնքի ներքո: Օրեր շարունակ երեկոյան ճայթում էին հեռավոր կայծակները: Վրա հասան առաջին ցրտերը:

Հենց այդ ժամանակ առաջին անգամ Մերսոն անկողին ընկավ: Թոքաբորբի նոպաները մեկ ամիս նրան բանտեցին սենյակում: Երբ վեր կացավ, Շենուայի ետևում լանջերը ծածկված էին ծաղկած ծառերով, որոնք իջնում էին դեպի ծովը: Երբեք գարնանը նա այդքան զգայուն չէր եղել: Ապաքինման առաջին գիշերը երկար քայլեց դաշտերի միջով, մինչև ավերակներով լի բլուրները, ուր նիրհում էր Տիպազան: Երկնքի մետաքսավետ ծայներով լի լռության մեջ ասես գիշերային կաթնահոս էր իջնում աշխարհի վրա: Մերսոն քայլում էր քարափների միջով և լցվում այդ գիշերվա իմաստալից խոհերով: Փոքր-ինչ ներքևում ծփում էր ծովը՝ գագանի նման ճկուն ու ողորկ, լի լուսնափայլով ու թավիշով: Այդ ժամին, երբ իր անցած կյանքը շատ հեռու էր թվում, միայնակ, ամեն ինչի և ինքն իր նկատմամբ անտարբեր Մերսոյին թվաց, թե վերջապես հասել էր իր փնտրածին, և որ իր ներքին անդորրը ծնվել էր իր որոնած, համբերատար ինքնալքումից, որին հասել էր բարեհամբույր, առանց զայրույթի իրեն ժխտող այս աշխարհի օգնությամբ: Նա թեթև էր քայլում, և իր ոտնաձայները օտար էին հնչում իրեն, բայց, անշուշտ, նաև հարազատ և նույնքան մտերմիկ, որքան կենդանիների թպրտոցը մազտաքիի թփուտներում, ծովի ծփանքը կամ գիշերվա տրոփյունները երկնքի խորխորատներում: Խորապես, բայց ասես ենթագիտակցաբար զգում էր նաև իր մարմինը, ինչպես զգում են գարնան գիշերի տաք շունչը կամ ծովից փչող աղի ու նեխվածության հոտը: Իր թափառումներն աշխարհով մեկ, երջանկության պահանջը, Չագրևսի ոսկրառուղեային արնաշաղաղ ահավոր վերքը, «Աշխահին առճակատ տանն» անցկացրած քաղցր ու խոհեմ ժամերը, իր կինը, հույսերն ու աստվածները, այս ամենը հառնում էր այժմ իր առջև իբրև նախընտրելի պատմություններից լավագույնը առանց օրինական պատճառաբանության, օտարոտի և միաժամանակ մտերմիկ, իբրև սիրած

գիրք, որն ամոքում է քեզ ու թափանցում սրտիդ ամենածածուկ խորքերը, գիրք, որը, սակայն, ուրիշն է գրել: Առաջին անգամ նա բացահայտեց իրականությունը, որը ոչ այլ ինչ էր, քան արկածախնդրության կիրքը, հզորության տենչանքը՝ աշխարհի հետ ազգակցական կապի գիտակցված ու արտաբուխ բնազդը: Չուներ գայրույթ կամ ատելություն, ամենևին չէր զղջում: Նստած քարափին, որի կարկտահար երեսն էր զգում մատների տակ, նայում էր լուսնալույսի ներքո ահագնացող ծովին: Հիշում էր Լյուսիենի դեմքը, շրթունքների ջերմությունը: Ջրի հարթ մակերեսին լուսնի յուղանման ցոլքը դղրդմում էր երկար, թրթռուն ժպիտներ: Երևի ջուրը տաք էր, կնոջ շրթունքների նման փափուկ, թուլացած, պատրաստ ընկնելու տղամարդու ճնշման տակ: Մերսոն նստել էր քարափին, հուզավառության մեջ, ուր միահյուսվել էին տղամարդու կյանքին խառնված հույսն ու հուսահատությունը, և զգում էր, թե երջանկությունը որքան մոտ է արցունքներին: Գիտակից և սակայն օտար, կրքից հալումաշ, նաև անտարբեր Մերսոն հասկանում էր, որ հենց այստեղ են ավարտվում իր կյանքն ու ճակատագիրը, և որ այսուհետև իր բոլոր ճիգերը պիտի գործադրվեն հարմարվելու այդ երջանկությանը և դեմառդեմ կանգնելու նրա սոսկալի ճշմարտությանը:

Նա այժմ անհագ ցանկություն ուներ տուզվել տաք ծովի մեջ, իրեն կորցնել վերագտնելու համար, լողալ լուսնաշողերի միջով, որ իսպառ լռեն մնացուկներն անցյալի, և որ ծնվի խորախորհուրդ երգն իր երջանկության: Հանվեց, իջավ ժայռից ու մտավ ծովը: Ջուրը տաք էր մարդու մարմնի պես, կոհակվում էր թևերի երկայնքով, կպչում ոտքերին անորսալի և ամուր գրկախառնումով: Մերսոն լողում էր համաչափ և զգում, որ մեջքի մկանները ռիթմ են հաղորդում իր շարժումներին: Ամեն անգամ, երբ բարձրացնում էր թևը անծայրածիր ծովի վրա, համր ու շնչավոր երկնքին ի տես, ասես պարսերն էր արձակում արծաթացոլ կաթիլների, որպես երջանիկ հունձքի շքեղափայլ սերմնացուներ: Հետո թևը կրկին սուզվում էր և հզոր խոփի նման հերկում ջրերը, հատելով ծովը երկու մասի՝ ասես այնտեղ գտնելու մի նոր հենարան և ավելի երիտա-

սարդ մի հույս: Նրա ետևում ոտքերի բախումները ծնում էին փրփրային բլթբլթոցներ, միաժամանակ ջրերի ճողփյուն, որը զարմանալիորեն հստակ էր հնչում ամայության ու գիշերային լռության մեջ: Զգալով իր ոիթմն ու ուժը՝ Մերսոն ոգևորված ավելի արագ առաջացավ և շուտով արդեն ափից հեռացել էր, միայնակ՝ գիշերվա ու աշխարհի խորքում: Հանկարծ մտածեց ոտքերի տակ եղած անդունդի մասին ու դադարեցրեց ընթացքը: Խորությունը զրավում էր ինչպես անծանոթ մարդու դեմք, որպես այս գիշերային խավարի շարունակություն, որը վերադառնում էր ինքն իրեն՝ չհետազոտված կյանքի ջրային ու աղահամ սիրտը: Գայթակղությունը մեծ էր, սակայն մարմնական խոր բավարարվածության մեջ իսկույն կարողացավ հաղթահարել այն: Լողաց ավելի թափով և ավելի հեռու: Երանելի խոնջանքի մեջ լողաց դեպի ափ: Հանկարծ հայտնվեց մի սառը հոսանքում, ստիպված կանգ առավ՝ ատամները կափկափելով ու կորցնելով շարժումների համաձայնությունը: Դյութված էր ծովի մատուցած այդ անակնկալով. սառնությունը թափանցում էր մարմնի բոլոր անդամները և այրում աստվածային սիրո նման՝ լուսեղեն ու կրքոտ զմայլանքի մեջ, լիովին ուժասպառելով իրեն: Մեծ դժվարությամբ հասավ ափ և սկսեց հագնվել երկնքին ու ծովին ի տես, ատամներն իրար խփելով ու ծիծաղելով երջանկությունից:

Վերադառնալիս վատ զգաց: Կածանից, որ բարձրանում էր ծովից ամառատուն, նա կարող էր նշմարել դիմացը հառնող ժայռեղեն հրվանդանն իր ավերակներով ու հարթ սյունաբներով: Հանկարծ բնապատկերը գլխիվայր շրջվեց: Երբ աչքերը բացեց, տեսավ, որ հենված է ժայռին, կիսով չափ ընկած մազտաքիի թփերի մեջ, որի տրորված սաղարթներից սուր անուշաբույր էր արձակվում: Հազիվ հասավ ամառատուն: Մարմինը, որ քիչ առաջ անսահման հրճվանք էր պատճառել, այժմ իրեն սուգում էր անծկության խորխորատները ու փակում էր աչքերը: Թեյ պատրաստեց: Սակայն կաթսան կեղտոտ էր, և թեյը յուղոտ ստացվեց՝ առաջացնելով սրտխառնուք: Այնուամենայնիվ, խմեց քնելուց առաջ: Կոշիկները հանելիս անարյուն ձեռքերի վրա նկատեց, որ վարդա-

գույն եղունգները երկար էին և ծայրերում կեռ: Երբեք եղունգներն այդքան դողդոջային ու անառողջ տեսք չէին հաղորդել ձեռքերին: Կրծքավանդակն ասես դրել էին մամլիչի տակ: Հազաց ու թքեց մի քանի անգամ: Արտասովոր ոչինչ չկար, միայն բերանում ուժեղացել էր արյան համը: Անկողնում երկարատև դող բռնեց: Սարսուռները սկսվում էին վերջույթներից ու հանգուցվում ուսերի մեջ ինչպես սառած ջրաշիթեր: Ատամները կափկափում էին թաց թվացող անկողնու մեջ: Տունն անչափ ընդարձակ էր, իսկ մտերմիկ ձայները ծավալվում էին անվերջության մեջ, ասես չբախվելով ոչ մի պատի, որը կկարողանար վերջակետ դնել նրանց արձագանքներին: Լսում էր ծովի շառաչը. ասես գլաքարեր էին թավալվում ջրի մեջ, գիշերվա զարկերակն էր լսում մեծ պատուհանների հետևում ու շնահաչը հեռավոր ֆերմաներում: Շոգեց, վեթմակը մի կողմ նետեց, հետո մրսեց ու նորից ծածկվեց: Այս տառապանքների մեջ քունը սաստիկ տանում էր, սակայն ինչ-որ անհանգստություն թույլ չէր տալիս, որ նիջի: Հանկարծ գլխի ընկավ, որ հիվանդ է: Սարսափեց, երբ մտքով անցավ, թե կարող է մեռնել այդպես չգիտակցված մահով, առանց չորս կողմը նայելու: Գյուղում հնչեցին եկեղեցու ժամացույցի զանգերը, բայց չկարողացավ հաշվել հարվածները: Չէր ուզենա մեռնել հիվանդի նման: Գոնե իր համար չէր ուզում, որ հիվանդությունը լիներ թերացում (մի բան, որ հաճախ է պատահում), անցում դեպի մահը: Ենթագիտակցաբար ուզում էր լիարյուն ու առողջ կենսուժերով հանդիպել մահվանը և ոչ թե մեռած կամ կիսամեռ: Վեր կացավ, բազկաթոռը մոտեցրեց պատուհանին, նստեց ու ծածկվեց վերմակով: Բարակ վարագույրի արանքից, որտեղ կտորի ծալքերը խիտ չէին, երևում էին աստղերը: Խորը շունչ քաշեց ու ամուր բռնեց բազկաթոռի արմնկակալներից, որ հանգստացնի ձեռքերի դողը: Ուզում էր վերագտնել իր պայծառ միտքը: «Հնարավոր է»,- մտածեց նա: Միևնույն ժամանակ հիշում էր, որ գազօջախը վառած է թողել խոհանոցում: «Հնարավոր է»,- կրկնում էր ինքն իրեն: Պայծառամիտ լինելու համար ևս մեծ համբերություն է պետք: Ամեն բան կարելի է նվաճել, ամեն ինչի կարելի է հասնել: Բռունցքներով խփում էր բազկաթոռի

արմնկակալին: Ի ծնե ուժեղ չեն լինում, թույլ կամ կամազուրկ: Դառնում են ուժեղ, թույլ կամ կամազուրկ: Դառնում են ուժեղ, հասնում պայծառամտության: Ճակատագիրը ոչ թե մարդու մեջ է, այլ նրա շուրջը: Նկատեց, որ լալիս է: Մի տարօրինակ թուլություն, հիվանդությունից ծնվող մի տեսակ թուլամորթություն նրան վերադարձնում էին իր մանկությանն ու արտասուքներին: Ձեռքերը մրսում էին, սիրտն ահավոր խառնում էր: Մտաբերեց եղունգները, հետո անրակի տակ շոշափեց ոտած ավշահանգույցները, որոնք հսկայական թվացին:

Իսկ դրսում ինչպիսի՞ գեղեցկություն էր սփռված աշխարհի վրա: Ինչպե՞ս դադարեր կյանքը սիրելուց, նրան նախանձելուց: Նա հիշում էր ալժիրյան երեկոները, երբ կանաչ երկնակամարի տակ հնչում էին շչակները, և մարդիկ աղմուկ-աղաղակով դուրս էին գալիս ֆաբրիկաներից: Ավերակների մեջ, մազտաքիի բույրի, վայրի ծաղիկների և Սահելում նոճիներով շրջապատված տնակների միջև հյուսվում էր այն կյանքի պատկերը, որտեղ գեղեցկությունն ու երջանկությունը պարփակված էին հուսահատության մեջ, և Պատրիսն այնտեղ հայտնաբերում էր վաղանցուկ հավերժությունը: Այդ պատկերից չէր ուզում հրաժարվել, բայց առանց իրեն էլ այն կարող էր հարատևել: Այդ ժամանակ նա զայրույթով ու խղճահարությամբ հիշեց Զագրևսի դեպի պատուհանը շրջած դեմքը: Երկար հազաց: Վատ էր շնչում: Խեղդվում էր գիշերային հագուստների մեջ: Մրսում էր: Շոգում էր: Այրվելով անզուսպ կատաղությունից, դողդոջուն բռունցքները սեղմած՝ զգում էր, թե գանգի մեջ որքան ուժգին են տրոփում զարկերակները, և դատարկված հայացքով սպասում էր մի նոր սարսուռի, որն իրեն կրկին ընկղմելու էր տենդային խավարի մեջ: Դողը բռնեց, նրան տարավ խոնավ ու փակ մի աշխարհ, որտեղ աչքերը իրենք իրենց փակվեցին ու լռեցրին նախանձախնդիր կենդանու ընդվզումը: Բայց նիրհելուց առաջ նա հասցրեց տեսնել աննշան ճերմակած գիշերը վարագույրների ետևում, լսել արշալույսի և աշխարհի զարթոնքի ձայնը, քնքշանքի և հույսի ուժգին կոչը, որն, իրոք, թուլացնում էր մահվան ահը, բայց և վստահեցնում, որ կգտնի մահ-

վան իմաստն այն բանի մեջ, ինչի մեջ եղել էր իր կյանքի ամբողջ իմաստը:

Երբ արթնացավ, օրն արդեն շատ էր առաջացել, թռչուններն ու միջատները համերգ էին տալիս կեսօրվա տապի մեջ: Հիշեց, որ Լյուսիենը հենց այդ օրը պիտի գար: Մարմինը կոտրատվում էր, մի կերպ կարողացավ հասնել անկողնուն: Քերանում տենդահամ կար, իսկ աչքերում այնպիսի դյուրաբեկություն, որից հիվանդին իրերը թվում են ավելի կարծր, իսկ մարդիկ՝ ավելի անբարյացակամ: Նա կանչել տվեց Բեռնարին: Վերջինս եկավ՝ լռակյաց ու բազմազբաղ, ինչպես միշտ, գործիքով լսեց նրան, հանեց ակնոցը, սրբեց ապակիներն ու ասաց.

- Վատ է:

Երկու ներարկում արեց: Երկրորդի ժամանակ Մերսոն ուշաթափվեց, չնայած այնքան էլ նազուկ չէր: Երբ ուշքի եկավ, տեսավ, որ Բեռնարը մի ձեռքով իր դաստակն է բռնել, մյուսով՝ ժամացույցը և հետևում է վայրկյանաչափի ընդհատուն շարժմանը:

- Տեսնո՞ւմ եք,- ասաց Բեռնարը,- քառորդ ժամ ուշակորույս էիք: Ձեր սիրտը չի դիմանում: Եվս մի այդպիսի ուշաթափություն, և կարող եք չարթնանալ:

Մերսոն փակեց աչքերը: Ուժասպառ էր, շրթունքները՝ սպիտակ ու չոր, շնչառությունը՝ ծանր ու աղմկոտ:

- Բեռնար,- ասաց նա:

- Այո:

- Ես չեմ ուզում մահն ընդունել ուշակորույս վիճակում: Ես պետք է հստակ տեսնեմ, հասկանո՞ւմ եք:

- Այո,- ասաց Բեռնարը և նրան տվեց մի քանի սրվակ: - Երբ վատ զգաք, կոտրեք և կուլ տվեք: Աղրենալին է:

Դուրս ելնելիս Բեռնարը հանդիպեց Լյուսիենին, որը նոր էր գալիս:

- Ինչպես միշտ, համայիչ եք:

- Պատրիսը հիվա՞նդ է:

- Այո:

- Լո՞ւրջ:

- Ոչ, հիմա շատ լավ է,- ասաց Բեռնարը: Եվ արդեն շեմին ավելացրեց,- հիմնականում մեկ խորհուրդ՝ որքան հնարավոր է, մենակ թողեք նրան:

- Ա՞,- ասաց Լյուսիենը,- ուրեմն, բան չկա:

Ամբողջ օրը Մերսոն խեղդվում էր: Երկու անգամ զգաց սառն ու կպչուն դատարկությունը, որ սպառնում էր նոր ուշագնացությամբ, և երկու անգամ աղրենալինը նրան դուրս քաշեց այդ մածուցիկ անդունդից: Եվ ամբողջ օրը նրա տխուր աչքերը հիասքանչ տեսարաններ էին դիտում: Ժամը չորսի մոտ մի կարմիր կետ հայտնվեց ծովում և, քիչ-քիչ մեծանալով, դարձավ մեծ մակույկ, որ շողշողում էր արևից, ծովից ու թեփուկներից: Պերեզը՝ կանգնած, համաչափ թիավարում էր: Շատ արագ գիշերը եկավ: Մերսոն փակեց աչքերը և, երեկվանից սկսած, առաջին անգամ ժպտաց: Առամներն էլ չէր սեղմել: Լյուսիենը, որ նոր էր սենյակ մտել և անհանգիստ էր անորոշությունից, նետվեց նրա վրա և համբուրեց.

- Նստիր,- ասաց Մերսոն: - Կարող ես մնալ:

- Մի խոսիր,- ասաց Լյուսիենը,- մի հոգնեցրու քեզ:

Բեռնարը եկավ, ներարկումներ արեց ու գնաց: Կարմիր, մեծ ամպեր էին դանդաղ անցնում երկնքով:

- Երբ փոքր էի,- ասաց Մերսոն մեծ ճիգով, բարձի մեջ թաղված, հայացքը՝ երկնքին,- մայրս ասում էր, որ այդ ամպերը մեռյալների հոգիներն են, որ ելնում են դրախտից: Ես անչափ խանդավառված էի այն մտքից, որ հոգիս կարմիր է: Այժմ գիտեմ, որ շատ հաճախ կարմիր ամպը քամու նշան է: Բայց դա էլ է հրապուրիչ:

Գիշերն եկավ: Տեսիլքներ էին հայտնվում՝ հսկա, կախարդական կենդանիներ, որոնք թափահարում էին ահռելի գլուխները դատարկ բնապատկերների մեջ: Մերսոն դրանց կամացուկ քշեց իր տենդի խորքը: Թույլ տվեց, որ մնա միայն Զագրևսի արնաշաղախ դեմքը: Մահ պարգևողը ինքը պիտի մեռներ: Եվ ինչպես այն ժամանակ Զագրևսին, այժմ էլ կյանքին նա նայում էր նույն պայծառ, տղամարդու հայացքով: Մինչև հիմա նա իր կյանքն էր ապրում: Այժմ կարող էր խոսել այդ կյանքի մասին: Իրեն խթանող,

միշտ առաջմղող, մեծ ու խելահեղ խոյանքից, կյանքի արարիչ և վաղանցուկ պոեզիայից այլևս ոչինչ չէր մնում, բացի մերկ ճշմարտությունից, որը պոեզիայի հակառակն է: Բոլոր մարդկանցից, որոնց կրել էր իր մեջ հենց կյանքի սկզբից, բոլոր այդ տարբեր էակներից, որոնք խառնում էին իրենց արմատները, սակայն չէին միաձուլվում, այժմ գիտեր, թե որն է ինքը: Եվ այդ ընտրությունը, որ ճակատագրի մենաշնորհն է, Մերսոն ինքն էր արել, այն էլ՝ գիտակցաբար ու խիզախորեն: Այստեղ էր կյանքի և մահվան իր ողջ երջանկությունը: Մահվանը նա նայել էր կենդանական սարսափով, այժմ հասկանում էր, որ վախենալ մահից՝ նշանակում է վախենալ կյանքից: Մահվան սարսափն արդարացնում է մարդու անսահման կապվածությունն այն ամենին, ինչը կենդանի է իր մեջ: Եվ բոլոր նրանք, ովքեր վճռական քայլեր չեն արել իրենց կյանքն ավելի վեր բարձրացնելու համար, բոլոր նրանք, ովքեր թուլամորթաբար զմայլվել են իրենց անզորությամբ, նրանք բոլորը սարսափում են մահից, որովհետև այն դատավճիռն է կյանքի, որին իրենք չեն մասնակցել: Նրանք բավականաչափ չեն ապրել, կարելի է ասել՝ երբեք չեն ապրել: Եվ մահն ասես մի քայլ է, որ ջրից ընդմիշտ զրկում է ճանապարհորդին, որը ճգնում է ծարավը հագեցնել: Սակայն շատերի համար այն բարեգութ և ճակատագրական քայլ է, որը ջնջում է ու ժխտում՝ բարյացակամ ժպտալով թե հնազանդներին, թե ըմբոստներին: Եվ ցերեկը, և՛ ողջ գիշերը Մերսոն անցկացրեց անկողնում նստած, գլուխը ձեռքերով բռնած, արմունկներով հենված գիշերասեղանին. պառկած չէր կարողանում շնչել: Լյուսիենը՝ կողքը նստած, անխոս նայում էր նրան: Մերսոն էլ էր երբեմն նայում նրան: Մտածում էր, որ իրենից հետո հենց առաջինի գրկում նա կհալվի: Մարմնով և կրծքով նրան կտրվի ամբողջությամբ, ինչպես իրեն էր տրվել, և աշխարհը կշարունակվի նրա կիսաբաց շուրթերի ջերմության մեջ: Երբեմն նա բարձրացնում էր գլուխը և նայում պատուհանից: Լրիվ կերպարանափոխված էր, սափրված չէր, կարմրած և խորը փոս ընկած աչքերը կորցրել էին իրենց երբեմնի մուգ փայլը, իսկ գունատ այտերը թոշնել էին կապտավուն մազածածկույթի տակ:

Հիվանդ կատվի նրա հայացքը սառել էր ապակիներին: Խոր շունչ քաշեց ու շրջվեց Լյուսիենի կողմը: Ժպտաց: Եվ այդ դժնի, սակայն պայծառ ժպիտը նրա բոլոր կողմերից թուլացած ու դալուկ դեմքին հաղորդեց մի նոր ուժ և ահագին կայտառություն:

- Լա՞վ ես,- հարցրեց Լյուսիենը մարած ձայնով:

- Այո:

Եվ գլուխը կրկին բռնելով՝ վերադարձավ իր գիշերին: Իր ուժերի և համառության սահմաններում նա առաջին անգամ ներքուստ միացավ Զագրևսին, որի ժպիտը սկզբում իրեն հանում էր համբերությունից: Նրա արագ և ընդհատուն շնչառությունը գիշերասեղանի մարմարի վրա թողնում էր խոնավ գոլորշի, որի ջերմությունը հետո փոխանցվում էր դեմքին: Եվ այդ անառողջ ջերմությունն ավելի զգալի էր դառնում՝ սառած մատների և ոտնաթաթերի պատճառով: Ցրտի և ջերմության այս անցումները կյանք էին արթնացնում, և նա վերստին գտնում էր այն խանդավառությունը, որով հիացած էր Զագրևսը՝ երախտապարտ «կյանքին, որ իրեն դեռ թույլ է տալիս այրվել»: Մերսոն բուռն ու եղբայրական սիրով լցվեց այդ մարդու հանդեպ, որից այնքան հեռու էր իրեն զգում մի ժամանակ, և հասկացավ, որ նրան սպանելով ոչնչացրել է այն զուգորդությունները, որոնցով իրենք կապված էին առհավետ: Եվ ընդհանուր էին նաև իր մեջ կուտակված ծանր արցունքները՝ կյանքի և մահի միաշաղախ համով: Եվ նույնիսկ մահվան առջև Զագրևսի անվրդովության մեջ նա տեսնում էր իր սեփական կյանքի ծածուկ ու դժնի պատկերը: Տենդն օգնում էր իրեն, և նրա հետ էլ այն հիացական հավաստիությունը, որ գիտակցությունը պահպանելու է մինչև վերջ, և որ մեռնելու է աչքերը բաց: Այն օրը Զագրևսի աչքերը նույնպես բաց էին ու լի արցունքներով: Բայց դա վերջին թուլությունն էր մի մարդու, որն իր մասը չէր ունեցել կյանքում: Պատրիսը չէր վախենում այդ թուլությունից: Իր տենդալից արյան զարկերի միջով, որոնք տրոփում էին մարմնի սահմանագծերից մի քանի սանտիմետրի վրա, նա հասկանում էր նաև, որ այդ թուլությունը երբեք իրեն չի պատկանելու, քանզի ինքը լիովին կատարել է իր դերը, իրագործել մարդու միակ պարտա-

կանությունը՝ լինել երջանիկ: Ոչ այնքան երկար ժամանակ, իհարկե: Սակայն ժամանակը ոչինչ չի անում այս գործում: Այն կարող է լոկ խոչընդոտ լինել, հետևապես ոչինչ է այլևս: Մերսոն հաղթահարել էր այդ խոչընդոտը, իսկ թե որքան էր ապրել իր ներքին եղբայրը, որին ինքն էր ծնել իր մեջ՝ երկու թե քսան տարի, նշանակություն չուներ: Երջանկությունն այն էր, որ ինքը գոյություն էր պարգևել նրան:

Լյուսիենը վեր կացավ, որպեսզի ուղղի նրա ուսերից սահած վերմակը: Այդ շարժումից Մերսոն սրթսրթաց: Այն օրից ի վեր, երբ փոշտացել էր Ջագրևսի ամառատան մոտ, փոքրիկ հրապարակում, մինչև այս ժամը, մարմինը հավատարմորեն ծառայել էր իրեն և բացել իրեն աշխարհի առջև: Բայց միաժամանակ շարունակել էր մաքուր և իր մարմնավորած մարդուց անկախ կյանքը: Այդ տարիների ընթացքում վերջինս ապրում էր դանդաղ քայքայում: Այժմ արդեն փակել, ավարտել էր իր կորագիծը, պատրաստ էր լքելու Մերսոյին և նրան վերադարձնելու աշխարհին: Այն հանկարծակի սարսուռը, որ լիովին գիտակցում էր Մերսոն, մեկ անգամ ևս հավաստում էր իրենց ներդաշնակությունը, որը երկուսին էլ այնքան ուրախություն էր պարգևել: Հակառակ դեպքում Մերսոն հրճվանքով չէր ընդունի այդ սարսուռը: Գիտակցում էր, որ հասել էր իր ուզածին, առանց խորամանկելու, առանց թուլամորթության, մեն-մենակ, գլուխ գլխի իր մարմնի հետ, աչքերը բաց՝ աշխարհի վրա: Տղամարդը տղամարդու հետ գործ ուներ: Չկար ոչ սեր, ոչ պաճուճանք, այլ մենությունից և երջանկությունից բաղկացած մի անհուն ամայություն, որտեղ Մերսոն խաղացնում էր իր վերջին խաղաթղթերը: Զգաց, որ շնչառությունը թուլանում է: Մի կում օդ կուլ տվեց, որից կրծքավանդակի բոլոր երգեհոններն ասես խոխոջին: Կոճերից վեր՝ սրնքամսերը լրիվ սառել էին, ձեռքերն անզգայացել: Բացվում էր լույսը:

Ծագող առավոտը լի էր թռչուններով ու թարմությամբ: Արևը արագ բարձրացավ ու հայտնվեց հորիզոնի վերևում: Գետինը ծածկվեց ոսկով ու տապով: Վաղորդայնի մեջ երկինքն ու ծովը ցողում էին իրար կապույտ ու դեղին լուսաշիթերով, ասես մեծ ու

թրթռում պիսակներ էին միմյանց փոխանցում: Թեթև քամի բարձրացավ, և աղաբույր հովիկը, ներխուժելով պատուհանից, զովացրեց Մերսոյի ճեռքերը: Կեսօրին քամին դադարեց, օրը մեջտեղից տրաքվեց ինչպես հասած պտուղ, և աշխարհի ողջ տարածքով մեկ հոսեց նրա տաք ու բուրալի հյութը՝ ճպուռների համերգի նվագակցությամբ: Ծովը ծածկվեց այդ ոսկեփայլ հյութով, ինչպես ձիթայուղով, և իր պաղ շունչն ուղարկեց արևից ուժասպառ հողին՝ բացելով այն և վեր հանելով օշինդրների, հազրեվարդերի ու տաք քարերի անուշաբույրերը: Իր անկողնուց Մերսոն որսաց ընծաների այս փոխանակումը և աչքերը հառեց անծայրածիր, աստվածների ժպիտով առլեցուն, հրավառ ծովին: Հանկարծ նկատեց, որ նստած է անկողնում և որ Լյուսիենի դեմքը շատ մոտ է իր դեմքին: Քարի պես մի բան էր դանդաղ բարձրանում որովայնից մինչև կոկորդը: Մերսոն ավելի ու ավելի արագ էր շնչում՝ օգտվելով ընդմիջումներից: Իսկ քարն անընդհատ բարձրանում էր: Նայեց Լյուսիենին: Ժպտաց առանց ջղաձգվելու: Այդ ժպիտն էլ էր իր խորքից գալիս: Հետո նետվեց անկողնում. իր մեջ զգում էր քարի դանդաղ մագլցումը: Նայեց Լյուսիենի փքված շրթունքներին, նրա հետևում տեսավ հողի ժպիտը: Երկուսին էլ նայեց նույն հայացքով և նույն տենչանքով:

«Մեկ րոպեից, մեկ վայրկյանից»,- մտածեց նա: Մագլցումն ավարտվեց: Եվ ինչպես քարը քարերի մեջ, սրտի մեծագույն ուրախությամբ նա վերադարձավ անշարժ աշխարհների ճշմարտությանը:

LES JUSTES

ԱՐԴԱՐԱԴԱՏՆԵՐԸ

(պիես հինգ գործողությամբ)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԴՈՐԱ ԴՈՒԼԵՔՈՎԱ

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ

ԻՎԱՆ ԿԱԼԻԱԵՎ

ՍՏԵՊԱՆ ՖՅՈԴՈՐՈՎ

ԲՈՐԻՍ ԱՆԵՆԿՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՎՈՅՆՈՎ

ՍԿՈՒՐԱՏՈՎ

ՖՈԿԱ

ԲԱՐԱՊԱՆ

Օ՜, սեր իմ, կյանք իմ,
Դու կյանք չես սակայն,
Այլ սեր՝ մահվան մեջ:

«Ռոմեո և Ջուլիետա»
Արարված չորրորդ, տեսարան հինգերորդ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ահաբեկիչների բնակարանը: Առավոտ է:

Վարագույրը բացվում է լռության մեջ: Դորան և Անենկովը բեմում են, անշարժ: Լսվում է դռան զանգը, մի անգամ: Անենկովը ձեռքի շարժումով կասեցնում է Դորային, որն, ինչպես երևում է, ուզում է խոսել: Զանգը հնչում է անընդմեջ երկու անգամ:

ԱՆԵՆԿՈՎ.- Նա է:

Դուրս է գալիս: Դորան սպասում է, դարձյալ անշարժ: Անենկովը վերադառնում է Ստեպանի հետ: Բռնել է նրա ուսերից:

ԱՆԵՆԿՈՎ.- Ահա և նա՝ Ստեպանը:
ԴՈՐԱ *(մոտենում է Ստեպանին ու բռնում ձեռքը).*- Ի՞նչ երջանկություն, Ստեպան:
ՍՏԵՊԱՆ.- Բարև, Դորա:
ԴՈՐԱ *(նայելով նրան).*- Երեք տարի է արդեն:
ՍՏԵՊԱՆ.- Այո, երեք տարի: Այն օրը, երբ ձերբակալեցին ինձ, ես միանալու էի ձեզ:
ԴՈՐԱ.- Մենք սպասում էինք քեզ: Ժամանակն անցնում էր, իսկ սիրտս ավելի ու ավելի էր կծկվում: Իրար նայել այլևս չէինք համարձակվում:
ԱՆԵՆԿՈՎ.- Հարկ եղավ մեկ անգամ ևս փոխել բնակարանը:
ՍՏԵՊԱՆ.- Գիտեմ:

ԴՈՐԱ.- Իսկ այնտե՞ղ, Ստեպան:
ՍՏԵՊԱՆ.- Այնտե՞ղ:
ԴՈՐԱ.- Տաժանավայրում:
ՍՏԵՊԱՆ.- Այնտեղից փախչում են:
ԱՆԵՆԿՈՎ.- Այո, շատ ուրախացանք, երբ իմացանք, որ դու կարողացել ես հասնել Շվեյցարիա:
ՍՏԵՊԱՆ.- Շվեյցարիան էլ մի ուրիշ տաժանավայր է, Քորյա:
ԱՆԵՆԿՈՎ.- Ի՞նչ ես ասում: Նրանք գոնե ազատ են:
ՍՏԵՊԱՆ.- Ազատությունը նույնպես տաժանակրություն է, քանի դեռ մարդը ճնշվում է այս երկրի վրա: Ես ազատ էի, բայց անընդհատ մտածում էի Ռուսաստանի ու նրա ճորտերի մասին:

Լռություն:

ԱՆԵՆԿՈՎ.- Ստեպան, ես ուրախ եմ, որ կուսակցությունը քեզ այստեղ գործուղեց:
ՍՏԵՊԱՆ.- Այդպես էր պետք: Ծնչահեղձ էի լինում: Գործել, վերջապես գործել...

Նայում է Անենկովին:

ՍՏԵՊԱՆ.- Մենք նրան կսպանենք, չէ՞:
ԱՆԵՆԿՈՎ.- Վստահ եմ:
ՍՏԵՊԱՆ.- Մենք կսպանենք այդ դահճին: Քորյա, դու ես ղեկավարը, և ես կհնազանդվեմ քեզ:
ԱՆԵՆԿՈՎ.- Իմ առջև երդվելու կարիք չկա, Ստեպան: Մենք բոլորս եղբայր ենք:
ՍՏԵՊԱՆ.- Կարգապահություն է պետք: Դա ես հասկացա տաժանավայրում: Սոցիալիստական հեղափոխական կուսակցությանը կարգապահություն է պետք: Կարգապահ լինելով՝ մենք կկարողանանք սպանել մեծ իշխանին և տապալել բռնակալությունը:

ԴՈՐԱ *(մոտենալով նրան).*- Նստիր, Ստեպան: Հոգնած կլինես երկար ճամփորդությունից հետո:

ՍՏԵՊԱՆ.- Ես երբեք հոգնած չեմ լինում:

Լռություն: Դորան նստում է:

ՍՏԵՊԱՆ.- Բորյա, ամեն ինչ պատրա՞ստ է:

ԱՆԵՆԿՈՎ *(փոխելով ձայներանգը).*- Մեկ ամիս է, ինչ մերոնցից երկուսը ուսումնասիրում են մեծ իշխանի անցուդարձը: Դորան հավաքել է բոլոր անհրաժեշտ նյութերը:

ՍՏԵՊԱՆ.- Կոչը գրվա՞ծ է:

ԱՆԵՆԿՈՎ.- Այո: Ողջ Ռուսաստանը կիմանա, որ մեծ իշխան Սերգեյը մահապատժի է ենթարկվել ռումբի միջոցով՝ հեղափոխական սոցիալիստական կուսակցության մարտական խմբի կողմից, հանուն ռուս ժողովրդի շուտափույթ ազատագրման: Արքունիքը կիմանա նաև, որ մենք վճռել ենք ահաբեկչություն տարածել այնքան ժամանակ, քանի դեռ հողը չի վերադարձվել ժողովրդին: Այո, Ստեպան, այո, ամեն ինչ պատրաստ է: Մոտենում է ժամը:

ՍՏԵՊԱՆ.- Ո՞րն է իմ անելիքը:

ԱՆԵՆԿՈՎ.- Սկզբում դու կօգնես Դորային: Ծվեյցերը, ում փոխարինում ես դու, աշխատում էր նրա հետ:

ՍՏԵՊԱՆ.- Զոհվե՞լ է:

ԱՆԵՆԿՈՎ.- Այո:

ՍՏԵՊԱՆ.- Ինչպե՞ս:

ԴՈՐԱ.- Վթարի ժամանակ:

Ստեպանը նայում է Դորային: Դորան շրջում է հայացքը:

ՍՏԵՊԱՆ.- Հետո՞:

ԱՆԵՆԿՈՎ.- Հետո կտեսնենք: Անհաջողության դեպքում դու պետք է պատրաստ լինես փոխարինել մեզ և կապ հաս-

տատել Կենտրոնական կոմիտեի հետ:

ՍՏԵՊԱՆ.- Ովքե՞ր են մեր ընկերները:

ԱՆԵՆԿՈՎ.- Վոյնովին դու հանդիպել ես Շվեյցարիայում: Չնայած շատ երիտասարդ է, բայց ես վստահում եմ նրան: Յանեկին չես ճանաչում:

ՍՏԵՊԱՆ.- Յանե՞կ:

ԱՆԵՆԿՈՎ.- Կալիաևին: Մենք նրան նաև Բանաստեղծ ենք կոչում:

ՍՏԵՊԱՆ.- Ահաբեկչի համար այնքան էլ հարմար անուն չէ:

ԱՆԵՆԿՈՎ *(ծիծաղելով).*- Յանեկը հակառակ կարծիքի է: Նա ասում է, որ պոեզիան հեղափոխական է:

ՍՏԵՊԱՆ.- Միայն ռումբն է հեղափոխական: *(Լռություն):* Դորա, ինչ ես կարծում, կկարողանա՞մ օգնել քեզ:

ԴՈՐԱ.- Այո: Միայն թե հարկավոր է զգույշ լինել և չկոտրել սրվակը:

ՍՏԵՊԱՆ.- Իսկ եթե կոտրվի՞:

ԴՈՐԱ.- Այդպես զոհվեց Շվեյցերը: *(Մի պահ դադար):* Ինչո՞ւ ես ժպտում, Ստեպան:

ՍՏԵՊԱՆ.- Ժպտո՞ւմ:

ԴՈՐԱ.- Այո:

ՍՏԵՊԱՆ.- Ինձ հետ երբեմն պատահում է: *(Մի պահ լռություն: Ստեպանն ասես մտածում է):* Դորա, մի ռումբը բավակա՞ն է այս տունը հօդս ցնդեցնելու համար:

ԴՈՐԱ.- Մի ռո՞ւմբը՝ ոչ: Բայց մեկն էլ մեծ վնաս կհասցնի:

ՍՏԵՊԱՆ.- Քանի՞ հատ է պետք Մոսկվան թոցնելու համար:

ԱՆԵՆԿՈՎ.- Խե՞նթ ես, ի՞նչ ես ուզում ասել:

ՍՏԵՊԱՆ.- Ոչինչ:

Քանգում են մի անգամ: Բոլորն ականջ են դնում և սպասում: Քանգում են երկու անգամ: Ամենկովը գնում է նախասենյակ և վերադառնում Վոյնովի հետ:

ՎՈՅՆՈՎ.- Ստեպա՞ն:

ՍՏԵՊԱՆ.- Բարև:

Իրար ձեռք են սեղմում: Վոյնովը մոտենում ու համբուրում է Դորային:

ԱՆԵՆԿՈՎ.- Ալեքսեյ, ամեն ինչ բարեհաջո՞ղ է:

ՎՈՅՆՈՎ.- Այո:

ԱՆԵՆԿՈՎ.- Լավ ուսումնասիրե՞լ ես պալատից թատրոն տանող ճանապարհը:

ՎՈՅՆՈՎ.- Հիմա կարող եմ գծել, նայիր: *(Գծում է):* Շրջադարձեր, նեղ ճանապարհներ, արգելքներ... մեքենան կանցնի մեր պատուհանների տակով:

ԱՆԵՆԿՈՎ.- Ի՞նչ են նշանակում այս երկու խաչերը:

ՎՈՅՆՈՎ.- Սա փոքր հրապարակ է, որտեղ ձիերը կդանդաղեցնեն ընթացքը, այս մյուսը թատրոնն է, որտեղ ձիերը կանգ կառնեն: Իմ կարծիքով, սրանք են լավագույն տեղերը:

ԱՆԵՆԿՈՎ.- Տո՛ւր:

ՍՏԵՊԱՆ.- Իսկ լրտեսներ կա՞ն:

ՎՈՅՆՈՎ *(կարանելով).*- Ինչքան ուզես:

ՍՏԵՊԱՆ.- Ազդո՞ւմ են քեզ վրա:

ՎՈՅՆՈՎ.- Նեղվում եմ:

ԱՆԵՆԿՈՎ.- Ոչ մեկն էլ լավ չի զգում դրանց տեսնելիս: Մի՛ նեղվիր:

ՎՈՅՆՈՎ.- Ես ոչնչից չեմ վախենում: Պարզապես չեմ կարողանում վարժվել ստին, և վերջ:

ՍՏԵՊԱՆ.- Բոլորն էլ ստում են: Միայն թե հարկավոր է լավ ստել:

ՎՈՅՆՈՎ.- Հեշտ չէ: Երբ ուսանող էի, ընկերներս ծաղրում էին ինձ, որ չէի կարողանում մտքերս թաքցնել. ասում էի այն, ինչ մտածում էի: Ի վերջո, ինձ վտարեցին համալսարանից:

ՍՏԵՊԱՆ.- Ինչո՞ւ:

ՎՈՅՆՈՎ.- Պատմության ժամին դասախոսն ինձ հարցրեց, թե ինչպես է Պետրոս Մեծը կառուցել Սանկտ Պետերբուրգը:

ՍՏԵՊԱՆ.- Լավ հարց է:
ՎՈՅՆՈՎ.- Արյունով ու մտրակով՝ պատասխանեցի ես: Ինձ վոնդեցին:
ՍՏԵՊԱՆ.- Հետո՞...
ՎՈՅՆՈՎ.- Հետո հասկացա, որ անարդարությունը բացահայտելը քիչ է, կյանքդ պիտի տաս նրա դեմ պայքարելու համար: Այժմ ես երջանիկ եմ:
ՍՏԵՊԱՆ.- Բայցևայնպես, դու ստո՞ւմ ես:
ՎՈՅՆՈՎ.- Ստում եմ, բայց չեմ ստի այն օրը, երբ կնետեմ ռումբը:

Չանգում են: Երկու անգամ, հետո մորից մեկ անգամ: Դռրան դուրս է նետվում:

ԱՆՆԿՈՎ.- Յանեկն է:
ՍՏԵՊԱՆ.- Բայց նույն ազդանշանը չէ:
ԱՆՆԿՈՎ.- Յանեկը կատակի համար փոխել է: Հիմա նա ունի իր անձնական ազդանշանը:

Ստեպանը թոթվում է ուսերը: Նախասրահից լսվում է Դորայի ծայնը: Չեռք ձեռքի տված մտնում են Դորան ու Կալիաևը: Կալիաևը ծիծաղում է:

ԴՈՐԱ.- Յանեկ: Ստեպանը, որ փոխարինում է Շվեյցերին:
ԿԱԼԻԱԵՎ.- Բարի գալուստ, եղբայրս:
ՍՏԵՊԱՆ.- Շնորհակալություն:

Դորան ու Կալիաևը նստում են մյուսների դիմաց:

ԱՆՆԿՈՎ.- Յանեկ, վստա՞հ ես, որ կճանաչես կառքը:
ԿԱԼԻԱԵՎ.- Այո, երկու անգամ մանրակրկիտ զննել եմ: Հենց հայտնվի հորիզոնում, հազարավորների մեջ կտարբերեմ այդ կառքը: Բոլոր մանրուքները նշել եմ. օրինակ՝ ձախ կողմի լապտերի ապակին քառթված է:
ՎՈՅՆՈՎ.- Իսկ լրտեսնե՞րը:
ԿԱԼԻԱԵՎ.- Ոհմակներով: Բայց մենք հին բարեկամ ենք: Նրանք

ինձ համար ծխախոտ են գնում: *(Ծիծաղում է):*

ԱՆԵՆԿՈՎ.- Պավելը հաստատե՞լ է հետախուզական տվյալները:

ԿԱԼԻԱԵՎ.- Մեծ իշխանն այս շաբաթ կգնա թատրոն: Շատ շուտով Պավելը կիմանա ճշգրիտ օրը և երկտող կթողնի բարապանի մոտ: *(Շրջվում է Դորայի կողմն ու ծիծաղում):* Մեր բախտը բերել է, Դորա:

ԴՈՐԱ *(նայելով նրան).*- Դու այլևս ցրիչ չես: Հիմա արդեն հարգարժան պարոն ես: Ի՞նչ գեղեցիկն ես: Իսկ քուրքդ չե՞ս ափսոսում:

ԿԱԼԻԱԵՎ *(ծիծաղում է).*- Իսկապես շատ էի հպարտանում դրանով: *(Ստեպանիհն ու Անենկովին):* Երկու ամիս շարունակ զննում էի ցրիչներին, հետո մեկ ամսից ավելի վարժվում էի փոքրիկ սենյակումս: Գործընկերներս երբեք չեն կասկածել ինձ: «Իսկական կտրիճ է»,- ասում էին նրանք: «Եթե պետք լինի, ցարի ծիերն էլ կծախի»: Շատերը ջանում էին ընդօրինակել ինձ:

ԴՈՐԱ.- Դու էլ, բնականաբար, ծիծաղում էիր:

ԿԱԼԻԱԵՎ.- Գիտես, որ չեմ կարող ինձ զսպել: Այս դիմակավորվելը, այս նոր կյանքը... ամեն ինչ զվարճալի է ինձ համար:

ԴՈՐԱ.- Ես չեմ սիրում դիմակավորվել: *(Ցույց է տալիս շրջազգեստը):* Սա ինչ է, այս շքեղ քուրջը: Բորյան ուրիշ բան չի գտել ինձ համար: Դերասանուհի՞: Իմ հոգին պարզ է:

ԿԱԼԻԱԵՎ *(ծիծաղում է).*- Այնքան գեղեցի՞կ ես այդ հագուստով:

ԴՈՐԱ.- Գեղեցի՞կ: Երջանիկ կլինեի, եթե այդպես լիներ, բայց այդ մասին չպետք է մտածել:

ԿԱԼԻԱԵՎ.- Ինչո՞ւ: Աչքերդ անընդհատ տխուր են, Դորա: Ուրախ պետք է լինել, հպարտ: Գեղեցկությունն ապրում է, ուրախությունն ապրում է... «Անդորրավետ վայրերում, ուր հոգիս տենչում էր քեզ...

ԴՈՐԱ.- Ես շենչում էի հավերժական մի ամառ...»

ԿԱԼԻԱԵՎ.- Օ՜, Դորա, ուրեմն հիշո՞ւմ ես այդ բանաստեղծութ-

յունը: Ժպտո՞ւմ ես: Ի՞նչ երջանիկ եմ ես...

ՍՏԵՊԱՆ *(ընդհատելով նրան).*- Ժամանակ ենք կորցնում: Բորյա, կարծում եմ, պետք է զգուշացնել բարապանին:

Կալիակը զարմանքով նայում է նրան:

ԱՆԵՆԿՈՎ.- Այո: Դորա, ուզո՞ւմ ես իջնել: Թեյադրամը չմոռանաս: Հետո Վոյնովը կօգնի քեզ՝ այստեղ ի մի բերելու նյութերը:

Դուրս են գալիս՝ ամեն մեկը մի կողմից: Ստեպանը վճռական քայլերով գնում է դեպի Անենկովը:

ՍՏԵՊԱՆ.- Ես եմ ուզում նետել ռումբը:

ԱՆԵՆԿՈՎ.- Ոչ, Ստեպան, նետողներն արդեն նշանակված են:

ՍՏԵՊԱՆ.- Շատ եմ խնդրում: Դու գիտես, թե դա ինչ է ինձ համար:

ԱՆԵՆԿՈՎ.- Ոչ: Օրենքը օրենք է: *(Լռություն)*: Ես էլ ռումբ չեմ գցելու, սպասելու եմ այստեղ: Խիստ է օրենքը:

ՍՏԵՊԱՆ.- Ո՞վ է նետելու առաջին ռումբը:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես: Երկրորդը կնետի Վոյնովը:

ՍՏԵՊԱՆ.- Դո՞ւ:

ԿԱԼԻԱԵՎ.- Դա զարմացնո՞ւմ է քեզ: Ուրեմն չե՞ս վստահում:

ՍՏԵՊԱՆ.- Փորձ պիտի ունենալ:

ԿԱԼԻԱԵՎ.- Փո՞րձ: Լավ էլ գիտես, որ նետում ես միայն մի անգամ, իսկ հետո... Մինչև հիմա դեռ ոչ ոք չի նետել երկու անգամ:

ՍՏԵՊԱՆ.- Ամուր ձեռք է պետք:

ԿԱԼԻԱԵՎ *(ցույց տալով իր ձեռքը).*- Նայիր, քո կարծիքով սա կդողա՞:

Ստեպանը շրջվում է:

ԿԱԼԻԱԵՎ.- Չի դողա: Եվ ի՞նչ: Ուրեմն ես բռնակալ տեսնեմ ու

տատանվե՞մ: Ինչպե՞ս կարող ես նման բան մտածել: Եվ եթե անգամ ձեռքս դողա, ես իշխանին սպանելու ամվրեպ միջոց գիտեմ:

ԱՆԵՆԿՈՎ.- Ո՞րն է:

ԿԱԼԻԱԵՎ.- Նետվել ձիերի ոտքերի տակ:

Ստեպանը ուսերն է թոթվում ու գնում բեմի խորքում նստելու:

ԱՆԵՆԿՈՎ.- Ոչ, դա պարտադիր չէ: Պետք է փորձել փախչել: Կազմակերպությունը քո կարիքն ունի, դու պետք է պահպանես քեզ:

ԿԱԼԻԱԵՎ.- Լսում եմ և հնազանդվում, Բորյա՛: Օ՜, ի՜նչ մեծ պատիվ, ի՜նչ մեծ պատիվ ինձ համար: Եվ ես արժանի կլինեմ դրան:

ԱՆԵՆԿՈՎ.- Ստեպան, դու կլինես փողոցում, մինչ Յանեկն ու Ալեքսեյը կհետևեն կառքին: Դու համաչափ կքայլես մեր պատուհանների դիմաց, մինչև մենք քեզ ազդանշան կտանք: Դորան ու ես այստեղ կսպասենք հարմար պահի, որ նետենք թռուցիկները: Եթե մի քիչ բախտներս բերի, իշխանը կսպանվի:

ԿԱԼԻԱԵՎ *(հուզված).*- Այո, ես նրան կսպանեմ: Ի՜նչ երջանկություն, եթե հաջողվի: Իշխանը հեչ բան է, այ, ավելի բարձր պիտի հարվածել:

ԱՆԵՆԿՈՎ.- Նախևառաջ՝ իշխանը:

ԿԱԼԻԱԵՎ.- Բորյա, իսկ եթե ձախողվի՞: Գուցե ճապոնացիներից օրինա՞կ վերցնենք:

ԱՆԵՆԿՈՎ.- Ի՞նչ ես ուզում ասել:

ԿԱԼԻԱԵՎ.- Պատերազմի ժամանակ ճապոնացիները չէին հանձնվում, ինքնասպան էին լինում:

ԱՆԵՆԿՈՎ.- Ոչ, չմտածես ինքնասպանության մասին:

ԿԱԼԻԱԵՎ.- Բա էլ ինչի՞ մասին մտածեմ:

ԱՆԵՆԿՈՎ.- Նորից ահաբեկչության մասին:

ՍՏԵՊԱՆ *(խոսելով բեմի խորքից).*- Ինքնասպան լինելու համար

իրեն սիրել է պետք, իսկ իսկական հեղափոխականը չի կարող իրեն սիրել:

ԿԱԼԻԱԵՎ *(կտրուկ շրջվելով).*- Իսկական հեղափոխակա՞նը: Ինչո՞ւ ես ինձ այդպես անվանում, քեզ ի՞նչ եմ արել:

ՍՏԵՊԱՆ.- Չեմ սիրում նրանց, ովքեր մտնում են հեղափոխության մեջ, որովհետև ձանձրանում են:

ԱՆԵՆԿՈՎ.- Ստեպա՛ն:

ՍՏԵՊԱՆ *(վեր կենալով ու մոտենալով նրանց).*- Այո, ես բռի եմ, սակայն ինձ համար ատելությունը խաղ չէ: Մենք այստեղ չենք հավաքվել մեզնով հիանալու, մենք եկել ենք հաջողության հասնելու:

ԿԱԼԻԱԵՎ *(մեղմությամբ).*- Ինչո՞ւ ես վիրավորում, քեզ ո՞վ ասաց, թե ես ձանձրանում էի:

ՍՏԵՊԱՆ.- Չգիտեմ: Ազդանշանները փոխում ես, սիրում ես ցրիչի դեր խաղալ, բանաստեղծություններ ես արտասանում, ուզում ես նետվել ձիու ոտքերի տակ, հիմա էլ՝ ինքնասպանություն... *(Նայում է նրան):* Ես վստահություն չունեմ քո նկատմամբ:

ԿԱԼԻԱԵՎ *(չկորցնելով ինքնատիրապետումը).*- Դու ինձ չես ճանաչում, եղբայրս: Ես սիրում եմ կյանքը: Ես չեմ ձանձրանում: Ես մտել եմ հեղափոխության մեջ, որովհետև սիրում եմ կյանքը:

ՍՏԵՊԱՆ.- Ես կյանքը չէ, որ սիրում եմ, այլ ճշմարտությունը, որը կյանքից ավելի բարձր է:

ԿԱԼԻԱԵՎ *(ձկատելի ծիգերով).*- Ամեն մեկն իր կարողացածի չափ է ծառայում ճշմարտությանը: Պետք է ընդունել, որ մենք տարբեր ենք, և պիտի ջանանք սիրել միմյանց, եթե կարողանանք:

ՍՏԵՊԱՆ.- Չենք կարողանա:

ԿԱԼԻԱԵՎ *(պոռթկալով).*- Ուրեմն ի՞նչ գործ ունես մեր մեջ:

ՍՏԵՊԱՆ.- Ես եկել եմ մարդ սպանելու, ոչ թե նրան սիրելու կամ նրա թերությունները հռչակելու:

ԿԱԼԻԱԵՎ *(կոպտորեն).*- Դու միայնակ չես սպանելու մարդ, ոչ էլ

սպանելու ես հանում ոչնչի: Դու սպանելու ես մեզ հետ և հանում ոուս ժողովրդի: Ահա քո արդարացումը:

ՍՏԵՊԱՆ *(նույն խաղը).*- Ես դրա կարիքը չունեմ: Ես արդարացվել եմ մի գիշերում, երեք տարի առաջ, տաժանավայրում: Եվ չեմ հանդուրժի, որ...

ԱՆԵՆԿՈՎ.- Բավակա՛ն է: Խե՞ղճ եք, ինչ է: Մոռացե՞լ եք, թե ովքեր ենք մենք. եղբայրներ՝ միաճուլված մեկս մյուսիս, նպատակաուղղված դեպի բոնակալների մահապատիժը՝ հանուն երկրի ազատության: Մենք միասին ենք սպանելու, և ոչինչ չի կարող մեզ բաժանել միմյանցից: *(Լռություն: Հերթով նայում է բոլորին):* Եկ, Ստեպան, պիտի համաձայնեցնենք ազդանշանները...

Ստեպանը դուրս է գալիս:

ԱՆԵՆԿՈՎ *(Կալիաևին).*- Դատարկ բան է, Ստեպանը շատ է տառապել, ես կխոսեմ նրա հետ:

ԿԱԼԻԱԵՎ *(անչափ գունատված).*- Բորյա, նա վիրավորեց ինձ:

Մտնում է Դորան:

ԴՈՐԱ *(նկատելով Կալիաևին).*- Ի՞նչ է պատահել:

ԱՆԵՆԿՈՎ.- Ոչինչ:

Դուրս է գալիս:

ԴՈՐԱ *(Կալիաևին).*- Ի՞նչ է պատահել:

ԿԱԼԻԱԵՎ.- Մենք արդեն ընդհարվեցինք: Նա ինձ չի սիրում:

Դորան լռելյայն գնում է նստելու: Որոշ ժամանակ լռություն է տիրում:

ԴՈՐԱ.- Իմ կարծիքով, նա ոչ ոքի չի սիրում: Երբ ամեն բան ավարտվի, նա երջանիկ կլինի: Մի՛ տխրիր:

ԿԱԼԻԱԵՎ.- Տխուր եմ, ուզում եմ, որ բոլորդ սիրեք ինձ: Ես ամեն

բան թողել եմ հանուն Կազմակերպության: Հիմա ինչպե՞ս դիմանամ, երբ եղբայրներս երես են թեքում ինձնից: Երբեմն այն տպավորությունն եմ ունենում, թե ինձ չեն հասկանում: Գուցե իմ մեղքո՞վ: Ես անճարակ եմ, գիտեմ...

ԴՈՐԱ.- Նրանք քեզ և՛ սիրում են, և՛ հասկանում: Ստեպանն ուրիշ է:

ԿԱԼԻԱԵՎ.- Ոչ: Ես գիտեմ, թե նա ինչ է մտածում: Շվեյցերը դեռ այն ժամանակ իմ մասին ասում էր. «Չափազանց տարօրինակ է հեղափոխական լինելու համար»: Ես կուզենայի նրանց բացատրել, որ ես տարօրինակ չեմ: Նրանց կարծիքով, ես մի քիչ խենթ եմ, չափազանց ուղղամիտ: Սակայն նրանց նման ես հավատում եմ գաղափարին: Նրանց նման ուզում եմ ինձ զոհաբերել: Ես էլ կարող եմ ճարպիկ լինել, լինել լռակյաց, ինքնամփոփ, ազդեցիկ: Միայն թե կյանքն ինձ շարունակ հիասքանչ է թվում. պաշտում եմ գեղեցկությունը, երջանկությունը: Այդ պատճառով էլ ատում եմ բռնությունը: Նրանց ինչպե՞ս բացատրեմ: Հեղափոխություն, իհարկե: Սակայն հեղափոխություն՝ հանուն կյանքի, հանուն գոյության իրավունքի, հասկանո՞ւմ ես:

ԴՈՐԱ *(ոգևորված).*- Այո...*(ավելի ցածրաձայն, փոքր-ինչ լռելուց հետո):* Եվ սակայն մենք կյանք ենք խլելու:

ԿԱԼԻԱԵՎ.- Ո՞վ՝ մե՞նք: Ա՜, ուզում ես ասել... Նույն բանը չէ: Օ՜, ոչ, դա բոլորովին այլ բան է: Եվ հետո, մենք սպանում ենք, որպեսզի կառուցենք մի աշխարհ, որտեղ այլևս երբեք ոչ ոք չի սպանի: Մենք համաձայնել ենք դառնալ հանցագործ, որպեսզի հողագունդը վերջապես ծածկվի անմեղներով:

ԴՈՐԱ.- Իսկ եթե չլինի՞:

ԿԱԼԻԱԵՎ.- Լռիր, լավ գիտես, որ անհնար է: Այնժամ Ստեպանն իրավացի կլիներ, և հարկ կլիներ քքել գեղեցկության երեսին:

ԴՈՐԱ.- Ես ավելի վաղուց եմ Կազմակերպության մեջ, քան դու:

Գիտեմ, որ հեշտ բան չկա: Բայց դու հավատ ունես... Մենք բոլորս հավատի կարիք ունենք:

ԿԱԼԻԱԵՎ.- Հավա՞տ, ոչ: Միայն մեկը ուներ:

ԴՈՐԱ.- Դու կամքի ուժ ունես: Եվ դու կհաղթահարես ամեն բան՝ նպատակիդ հասնելու համար: Ինչո՞ւ խնդրեցիր, որ առաջին ռումբը դու նետես:

ԿԱԼԻԱԵՎ.- Կարելի՞ է խոսել ահաբեկչական գործողությունների մասին՝ առանց մասնակցելու դրանց:

ԴՈՐԱ.- Ոչ:

ԿԱԼԻԱԵՎ.- Պետք է լինել առաջին շարքում:

ԴՈՐԱ *(ասես մտորումների մեջ).*- Այո: Կա առաջին շարք և կա վերջին պահ: Այդ մասին պարտավոր ենք մտածել: Հենց այստեղ է սխրանքը, խանդավառությունը, որոնք անհրաժեշտ են մեզ..., որոնք անհրաժեշտ են քեզ:

ԿԱԼԻԱԵՎ.- Մեկ տարուց ի վեր միայն դրա մասին եմ մտածում: Մինչև հիմա այս պահի համար եմ ապրել: Եվ այժմ գիտեմ, որ կուզեի մեռնել տեղում, մեծ իշխանի կողքին: Կորցնել արյանս վերջին կաթիլը կամ էլ միանգամից այրվել պայթյունի բոցերի մեջ՝ ոչինչ չթողնելով իմ ետևից: Հիմա հասկանո՞ւմ ես՝ ինչու եմ ուզում առաջինը նետել ռումբը: Մեռնել հանուն գաղափարի. սա է միակ ձևը՝ գաղափարի բարձունքին մնալու համար: Ահա արդարացումը:

ԴՈՐԱ.- Ես նույնպես կցանկանայի նման մահ:

ԿԱԼԻԱԵՎ.- Այո, նման երջանկության կարելի է ձգտել: Գիշերները երբեմն շուռումուռ եմ գալիս ցրիչի իմ ծղոտե ներքնակի վրա: Մի միտք է ինձ տանջում. նրանք մեզ մարդասպան դարձրին: Բայց միաժամանակ մտածում եմ, որ մեռնելու եմ, և այդ ժամանակ սիրտս խաղաղվում է: Ժպտում եմ, հասկանո՞ւմ ես, իսկ հետո նորից քնում մանկան նման:

ԴՈՐԱ.- Ճիշտ այդպես՝ սպանել և մեռնել: Բայց, իմ կարծիքով, կա ավելի մեծ երջանկություն: *(Մի պահ լռություն: Կալիաևը*

Նայում է Նրան: Դորան խոնարհում է հայացքը): Կառափնարանը:

ԿԱԼԻԱԵՎ *(տեղդագին).*- Այդ մասին էլ եմ մտածել: Մահափորձի ժամանակ մեռնելը ինչ-որ բան անավարտ է թողնում: Այնինչ մահափորձից մինչև կառափնարան, ընդհակառակը, մի ամբողջ հավերժություն է ընկած՝ թերևս միակը մարդու համար:

ԴՈՐԱ *(ազդու ձայնով, բռնելով Նրա ձեռքերը).*- Այդ միտքն է քեզ փրկելու: Մենք ավելին ենք վճարում, քան պարտական ենք:

ԿԱԼԻԱԵՎ.- Ի՞նչ ես ուզում ասել:

ԴՈՐԱ.- Մենք ստիպված ենք սպանել, այնպես չէ՞: Գիտակցաբար մենք զոհաբերում ենք մեր կյանքը, այն էլ միակը:

ԿԱԼԻԱԵՎ.- Այո:

ԴՈՐԱ.- Բայց գնալ մահափորձի, իսկ հետո՝ կառափնարան, նշանակում է երկու անգամ զոհաբերել կյանքը: Մենք ավելին ենք վճարում, քան պարտավոր ենք:

ԿԱԼԻԱԵՎ.- Այո, դա նշանակում է մեռնել երկու անգամ: Շնորհակալ եմ, Դորա: Ոչ ոք ոչ մի հարցում չի կարող մեզ մեղադրել: Այժմ ես վստահ եմ ինձ:

Լռություն:

ԿԱԼԻԱԵՎ.- Ի՞նչ պատահեց, Դորա, ինչո՞ւ չես խոսում:

ԴՈՐԱ.- Ես էլի կուզեի օգնել քեզ, միայն թե...

ԿԱԼԻԱԵՎ.- Միայն թե՝ ի՞նչ:

ԴՈՐԱ.- Ոչ, ես գիժ եմ:

ԿԱԼԻԱԵՎ.- Դու կասկածո՞ւմ ես ինձ:

ԴՈՐԱ.- Օ՜, ոչ, սիրելիս, ինքս ինձ եմ կասկածում: Շվեյցերի մահից ի վեր երբեմն տարօրինակ մտքեր եմ ունենում: Եվ հետո, ես չէ, որ քեզ պիտի բացատրեմ դժվարությունը:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես սիրում եմ այն, ինչ դժվար է: Եթե հարգում ես ինձ, խոսիր:

ԴՈՐԱ *(նայելով Նրան).*- Գիտեմ՝ քաջ ես: Հենց դա է ինձ անհանգըս-

տացնում: Ծիծաղելով ու խանդավառված քայլում ես դեպի զոհաբերություն՝ լի ջերմեռանդությամբ: Բայց մի քանի ժամից պետք է դուրս գալ անուրջներից ու գործել: Թերևս ավելի լավ է այդ մասին խոսել նախօրոք... անակնկալից, թերացումից խուսափելու համար..

ԿԱԼԻԱԵՎ.- Ես թերություն չեմ ունենա: Ասա, ինչ մտածում ես:

ԴՈՐԱ.- Դե, լավ: Մահափորձ, կառափնարան, կրկնակի մահ՝ շատ հեշտ է այս ամենը: Սիրտդ կդիմանա: Բայց առաջին շարքը...*(Լռում է, ասես վարանում է)*: Առաջին շարքում դու կտեսնես նրան...

ԿԱԼԻԱԵՎ.- Ո՞ւմ:

ԴՈՐԱ.- Մեծ իշխանին:

ԿԱԼԻԱԵՎ.- Ընդամենը մեկ վայրկյան:

ԴՈՐԱ.- Մեկ վայրկյան, երբ կնայես նրան: Օ՜, Յանեկ, պետք է նախօրոք իմանալ, պետք է նախապատրաստված լինել: Մարդը մնում է մարդ: Գուցե մեծ իշխանը գթառատ աչքեր ունի: Դու նրան կտեսնես ականջը քորելիս կամ ուրախ ժպտալիս: Ի՞նչ իմանաս, գուցե դեմքը մի փոքր կտրել է սափրվելիս: Եվ եթե այդ պահին քեզ նայի...

ԿԱԼԻԱԵՎ.- Բայց ես նրան չեմ սպանում: Ես սպանում եմ բռնակալությունը:

ԴՈՐԱ.- Այդպես է, իհարկե: Պետք է սպանել բռնակալությունը: Ես եմ նախապատրաստելու ռումբը և, պարկուճը փակելիս, հասկանո՞ւմ ես, ամենաղժվար պահին, երբ նյարդերս գերլարված կլինեն, այնուամենայնիվ, սրտումս երջանկության մի տարօրինակ զգացում կունենամ: Բայց ես չեմ ճանաչում մեծ իշխանին, և ավելի դժվար կլիներ, եթե այս ընթացքում նա դիմացս նստած լիներ: Դու նրան մոտիկից ես տեսնելու: Շատ մոտիկից...

ԿԱԼԻԱԵՎ *(զայրագին)*.- Ես նրան չեմ տեսնի:

ԴՈՐԱ.- Ինչո՞ւ, աչքերդ կփակե՞ս:

ԿԱԼԻԱԵՎ.- Ոչ: Բայց Աստված ինձ կօգնի, և ատելությունս ինձ կհամակի ճիշտ ժամանակին ու կկուրացնի ինձ:

Զանգը տալիս են: Միայն մեկ զանգ: Նրանք անշարժանում են: Մտնում են Ստեպանն ու Վոյնովը:

Նախասենյակից ձայներ են լսվում: Մտնում է Անենկովը:

ԱՆԵՆԿՈՎ.- Բարապանն է: Մեծ իշխանը թատրոն կգնա վաղը: *(Նայում է նրանց)*: Դորա, ամեն ինչ պետք է պատրաստ լինի:

ԴՈՐԱ *(խուլ ձայնով)*.- Այո: *(Դանդաղ դուրս է գալիս)*:

ԿԱԼԻԱԵՎ *(հայացքով ուղեկցում է նրան, հետո ցածրաձայն՝ շրջվելով դեպի Ստեպանը)*.- Ես սպանելու եմ նրան: Հրճվանքով:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

Հաջորդ երեկոյան: Նույն տեղը:
Անենկովը պատուհանի մոտ է, իսկ Դորան՝ սեղանի:

ԱՆԵՆԿՈՎ.- Նրանք իրենց տեղում են: Ստեպանը վառեց ծխախոտը:

ԴՈՐԱ.- Ժամը քանիսի՞ն է անցնելու մեծ իշխանը:

ԱՆԵՆԿՈՎ.- Ուր որ է, հիմա: Լսիր: Կառք չէ՞: Ոչ:

ԴՈՐԱ.- Նստիր: Համբերությունն ունեցիր:

ԱՆԵՆԿՈՎ.- Իսկ ռումբե՞րը:

ԴՈՐԱ.- Նստիր: Մենք այլևս ոչինչ չենք կարող անել:

ԱՆԵՆԿՈՎ.- Կարող ենք. նախանձել նրանց:

ԴՈՐԱ.- Քո տեղն այստեղ է: Դու ես ղեկավարը:

ԱՆԵՆԿՈՎ.- Ես ղեկավարն եմ: Բայց Յանեկն ավելին արժի, քան ես, և նա է, որ գուցե...

ԴՈՐԱ.- Վտանգը նույնն է բոլորի համար՝ և՛ նրա համար, ով նետում է, և՛ նրա համար, ով չի նետում:

ԱՆԵՆԿՈՎ.- Վտանգը, ի վերջո, նույնն է: Բայց այս պահին Յանեկն ու Ալեքսեյը կրակագծում են: Գիտեմ, որ ես չպետք է լինեմ նրանց հետ: Երբեմն, սակայն, վախենում եմ, թե շատ հեշտությամբ եմ համաձայնել այս դերին: Ի վերջո, շատ հարմար է, որ քեզ ստիպում են ռումբ չնետել:

ԴՈՐԱ.- Իսկ երբ դա տեղի ունենա՞: Էականն այն է, որ ամեն ամիրաժեշտը և ամեն մինչև վերջ:

ԱՆԵՆԿՈՎ.- Որքա՞ն հանգիստ ես:

ԴՈՐԱ.- Ես հանգիստ չեմ, ես վախենում եմ: Ահա երեք տարի է ձեզ հետ եմ, երկու տարի է ռումբ եմ պատրաստում: Ես ամեն ինչ արել եմ և, իմ կարծիքով, ոչինչ չեմ մոռացել:

ԱՆԵՆԿՈՎ.- Իհարկե, Դորա:

ԴՈՐԱ.- Եվ այսպես, երեք տարի է՝ ես վախենում եմ: Դա ոչնչացնի վախ է, որ քեզ միայն քանի ժամանակ է հանկչում բաղնում, իսկ առավոտյան ես չեմ վախենում ու ուրախ եմ այս

պես, ահագին ժամանակ պահանջվեց, մինչև ընտելացա. ես սովորեցի հանգիստ լինել այն պահին, երբ ամենաշատն էի վախենում: Հպարտանալու բան չկա:

ԱՆԵՆԿՈՎ.- Ընդհակառակը, հպարտացիր: Ես ոչինչ չեմ ունեցել: Գիտես՝ ափսոսում եմ անցած օրերը, շլացուցիչ կյանքը, կանայք... Այո, ես սիրում էի կանանց, գինին, անվերջանալի գիշերները:

ԴՈՐԱ.- Բորյա, ես այդպես էլ ենթադրում էի: Դրա համար էլ այդքան շատ եմ սիրում քեզ: Հոգիդ մեռած չէ: Եթե անգամ նա դեռ հաճույք է փափագում, դա ավելին արժի, քան համրությունը, որ տեղավորվում է հենց աղաղակի փոխարեն:

ԱՆԵՆԿՈՎ.- Ինչե՞ր ես ասում, հնարավոր չէ:

ԴՈՐԱ.- Լսի՛ր:

Դորան միանգամից ուղղվում է: Կառքի աղմուկ, հետո լռություն:

ԱՆԵՆԿՈՎ *(մոտենում է պատուհանին).*- Ստեպանն է, նշան է անում:

Եվ, իրոք, հեռվից լսվում է կառքի աղմուկը, որն ավելի ու ավելի է մոտենում, անցնում պատուհանների տակով և աստիճանաբար հեռանում: Երկարատև լռություն:

ԱՆԵՆԿՈՎ.- Մի քանի րոպեից...

Ականջ են դնում:

ԱՆԵՆԿՈՎ.- Ի՞նչ երկար է տևում:

Դորան ծեռքով է անում: Երկարատև լռություն: Հեռվից լսվում է զանգերի ղողանջը:

ԱՆԵՆԿՈՎ.- Անհնար է. Յանեկը վաղուց արդեն նետած պիտի լիներ իր ռումբը... Կառքը երևի արդեն թատրոն է հասել: Իսկ Ալեքսե՞յը: Նայի՛ր, Ստեպանն է երևում, վազում է

թատրոնի կողմը:

ԴՈՐԱ *(փարվում է նրան).*- Յանեկին բռնել են, նրան հաստատ բռնել են: Պետք է որևէ բան անել:

ԱՆԵՆԿՈՎ.- Սպասիր: *(Ականջ է դնում)*: Ոչ, վերջացավ:

ԴՈՐԱ.- Բայց ինչպե՞ս կարող էր պատահել. Յանեկը բռնվել է առանց որևէ բան անելո՞ւ: Նա ամեն բանի պատրաստ էր, գիտեմ: Բայց միայն մեծ իշխանին սպանելուց հետո: Ոչ այսպես, օ՞, ո՛չ, ոչ այսպես:

ԱՆԵՆԿՈՎ *(դուրս նայելով).*- Վոյնովը: Արա՛գ:

Դորան բացում է դուռը:
Մտնում է Վոյնովը՝ այլայլված:

ԱՆԵՆԿՈՎ.- Ալեքսեյ, խոսի՛ր, արագ:

ՎՈՅՆՈՎ.- Ոչինչ չգիտեմ: Սպասում էի առաջին ռումբին: Տեսա, թե ինչպես մեքենան շրջադարձ կատարեց, և ոչինչ տեղի չունեցավ: Գլուխս կորցրի: Կարծեցի, թե վերջին պահին դու փոխել ես պլանները, տատանվում էի: Հետո վազեցի այստեղ...

ԱՆԵՆԿՈՎ.- Իսկ Յանեկը՞:

ՎՈՅՆՈՎ.- Ես նրան չտեսա:

ԴՈՐԱ.- Նրան բռնել են:

ԱՆԵՆԿՈՎ *(անընդհատ դուրս նայելով).*- Ահա նա:

Բեմի նույն միջավայրը: Մտնում է Կալիաևը՝ դեմքը արցունքներով ողողված:

ԿԱԼԻԱԵՎ *(շփոթահար).*- Եղբայրներ, ներեցեք ինձ, ես չկարողացա:

Դորան մոտենում է նրան ու բռնում ձեռքը:

ԴՈՐԱ.- Ոչինչ:

ԱՆԵՆԿՈՎ.- Ի՞նչ է պատահել:

ԴՈՐԱ *(Կալիանկին).*- Ոչինչ: Երբեմն վերջին պահին ամեն ինչ փլվում է:

ԱՆԵՆԿՈՎ.- Բայց հնարավոր չէ:

ԴՈՐԱ.- Հանգիստ թող նրան: Դու միակը չես, Յանեկ: Ծվեյցերն էլ առաջին անգամ չկարողացավ:

ԱՆԵՆԿՈՎ.- Յանեկ, դու վախեցա՞ր:

ԿԱԼԻԱԵՎ *(վեր թռչելով).*- Վախեցա՞, ոչ: Դու իրավունք չունես:

Դուռը թակում են պայմանական ազդանշանով: Վոյնովը դուրս է գալիս Անենկովի նշանով: Կալիանը ուժասպառ է: Լռություն: Ներս է գալիս Ստեպանը:

ԱՆԵՆԿՈՎ.- Հա...

ՍՏԵՊԱՆ.- Մեծ իշխանի կառքում երեխաներ կային:

ԱՆԵՆԿՈՎ.- Երեխանե՞ր:

ՍՏԵՊԱՆ.- Այո, մեծ իշխանի եղբորորդին ու դուստրը:

ԱՆԵՆԿՈՎ.- Ըստ Օռլովի՝ մեծ իշխանը պետք է մենակ լիներ:

ՍՏԵՊԱՆ.- Մեծ իշխանուհին նույնպես կառքում էր: Այդքան մարդ՝ երևի շատ էր մեր Բանաստեղծի համար: Բարեբախտաբար լրտեսները ոչինչ չնկատեցին:

Անենկովը ցածրաձայն խոսում է Ստեպանի հետ: Բոլորը նայում են Կալիանկին, որը հայացքը հառում է Ստեպանին:

ԿԱԼԻԱԵՎ *(շվարած).*- Ես չէի կարող կանխատեսել... Երեխաներ, հատկապես երեխաներ: Դու տեսա՞ր երեխաներին, այն լրջախոհ հայացքը, որ երբեմն ունենում են նրանք... Երբեք չեմ կարողացել դիմանալ այդ հայացքին... Սակայն դրանից մեկ րոպե առաջ, ստվերում, փոքրիկ հրապարակի անկյունում ես երջանիկ էի: Երբ կառքի լապտերները սկսեցին փայլել հեռվում, ազնիվ խոսք, սիրտս ուրախությունից սկսեց բաբախել: Այդ բաբախյունն ավելի էր ուժգնանում, որքան կառքի ճռնչյունը մեծանում էր: Ներսումս ամեն ինչ տակնուվրա էր լինում,

ուզում էի ցատկոտել, երևի նաև ծիծաղում էի: Կրկնում էի անվերջ. «Այո, այո»... Հասկանո՞ւմ ես:

Նա հեռացնում է հայացքը Մտեպանից և նորից ընկճված տեսք ընդունում:

ԿԱԼԻԱԵՎ.- Վազեցի դեպի կառքը: Այդ պահին նկատեցի նրանց: Բայց նրանք, նրանք չէին ծիծաղում: Նստած էին ուղիղ ու ձգված, նայում էին անորոշության մեջ: Որքա՞ն թախծոտ տեսք ունեին՝ կորած իրենց շքահանդեսային հանդերձանքներում, ձեռքերը՝ ծնկներին, պրկված կրծքավանդակները՝ դռնակների ամեն մի կողմից... Իշխանուհուն չնկատեցի, միայն նրանց տեսա: Եթե նրանք նայեին, ինձ թվում է՝ կնետեի ռումբը: Թեկուզ այդ տխուր հայացքը մարելու համար: Բայց նրանք անընդհատ իրենց դիմացն էին նայում:

Հայացքը հառում է մյուսների վրա: Լռություն: Ավելի ցածրածայն:

ԿԱԼԻԱԵՎ.- Այդ ժամանակ չգիտեմ՝ ինչ կատարվեց ինձ հետ: Թևերս թուլացան, ծնկներս դողացին: Մեկ վայրկյան անց արդեն ուշ էր: *(Լռություն: Նայում է գետնին):* Դորա, մի՞թե երազում եմ եղել, այդ պահին ինձ թվաց, թե դողանջում են զանգերը:

ԴՈՐԱ.- Ոչ, Յանեկ, դու երազում չես եղել:

Ձեռքը դնում է Կալիաևի ուսին: Վերջինս բարձրացնում է գլուխն ու տեսնում բոլորի հայացքները՝ սևեռված իր վրա: Տեղից վեր է կենում:

ԿԱԼԻԱԵՎ.- Ինձ նայեք, եղբայրնե՛ր, նայեք ինձ, Բորյա, ես վախկոտ չեմ, ես չեմ ընկրկել: Ես չէի սպասում, որ կտեսնեմ նրանց: Ամեն ինչ շատ արագ կատարվեց: Այդ երկու փոքրիկ ու լուրջ դեմքերը, իսկ իմ ձեռքում՝ այդ ահավոր ծանրությունը, որ նետելու էի նրանց վրա... հենց այդ-

պես, ուղիղ նրանց վրա...

Օ՜, չկարողացա: *(Հերթով նայում է բոլորին):* Մի ժամանակ, երբ մեզ մոտ՝ Ուկրաինայում, մեքենա էի վարում, քամու պես էի սուրում, վախ չունեի: Աշխարհում ոչ մի բանից չէի վախենում, բացի երեխա տապալելուց: Պատկերացնում էի բախումը, և այդ դյուրաբեկ գլուխը՝ ճանապարհից մի կողմ թռած... *(Լռում է):* Օգնեք ինձ: *(Լռության):* Ուզում էի ինքնասպան լինել: Վերադարձա, որովհետև մտածում էի, որ պարտավոր եմ հաշիվ տալ ձեզ, որ դուք եք իմ միակ դատավորը և կասեք՝ սխա՞լ եմ, թե՞ իրավացի, քանի որ դուք չեք կարող սխալվել: Բայց դուք ոչինչ չեք ասում:

Դորան մոտենում է, գրկեն դիպչում նրան: Կալիակը նայում է նրանց:

ԿԱԼԻԱԵՎ *(տխուր ձայնով).*- Ահա թե ինչ եմ առաջարկում: Եթե դուք վճռեք, որ պետք է սպանել երեխաներին, ես կսպասեմ ներկայացման ավարտին ու կնետեմ ռումբը կառքի վրա: Գիտեմ, որ չեմ վրիպի: Դուք միայն վճռեք, և ես կհնազանդվեմ Կազմակերպությանը:

ՍՏԵՊԱՆ.- Կազմակերպությունը քեզ հանձնարարել է սպանել մեծ իշխանին:

ԿԱԼԻԱԵՎ.- Ճիշտ է, բայց ես ինձ չի խնդրել սպանել երեխաներին:

ԱՆԵՆԿՈՎ.- Յանեկն իրավացի է: Դա նախատեսված չէր:

ՍՏԵՊԱՆ.- Նա պետք է հնազանդվեր:

ԱՆԵՆԿՈՎ.- Ես եմ պատասխանատու: Պետք էր ամեն բան նախատեսել, որպեսզի ոչ ոք չվարաներ իր անելիքի համար: Այժմ պետք է միայն որոշել՝ վերջնականապես բաց թողնե՞լ առիքը, թե՞ կարգադրել Յանեկին սպասել ներկայացման ավարտին: Ալեքսե՞յ:

ՎՈՅՆՈՎ.- Չգիտեմ: Կարծում եմ՝ ես էլ Յանեկի պես կվարվեի: Բայց վստահ չեմ: *(Ավելի ցածրաձայն):* Ձեռքերս դողում են:

ԱՆԵՆԿՈՎ.- Դորա՞:

ԴՈՐԱ *(կտրուկ)*.- Ես էլ կնահանջեի Յանեկի նման: Ինչպե՞ս կարող եմ մի բան խորհուրդ տալ ուրիշներին, երբ ինքս անկարող եմ անել:

ՍՏԵՊԱՆ.- Դուք ձեզ հաշիվ տալի՞ս եք, թե ինչ է նշանակում այդ որոշումը: Երկու ամիս շարունակ հետապնդումներ, ահավոր վտանգներ՝ հաղթահարված կամ խույս տրված, երկու ամիս՝ ընդմիշտ կորսված: Եգորը՝ ձերբակալված, չգիտես հանուն ինչի: Եվ դեռ պետք է նորի՞ց սկսել: Շաբաթներ շարունակ դարձյալ անքուն գիշերներ, խորամանկ հնարքներ, անընդհատ լարվածություն, մինչև նորից հաջողվի հարմար առիթ որսալ: Գժվե՞լ եք, ինչ է:

ԱՆԵՆԿՈՎ.- Լավ գիտես, որ երկու օրից մեծ իշխանը նորից թատրոն կգնա:

ՍՏԵՊԱՆ.- Երկու օրում, ինքդ էիր ասում, մեզ կարող են ձերբակալել:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես գնամ:

ԴՈՐԱ.- Սպասի՛ր: *(Ստեպանին)*: Ստեպան, ինքդ կկարողանա՞յիր բաց աչքերով կրակել երեխայի ճակատին:

ՍՏԵՊԱՆ.- Կկարողանայի, եթե Կազմակերպությունը հրամայեր ինձ:

ԴՈՐԱ.- Ինչո՞ւ ես փակում աչքերդ:

ՍՏԵՊԱՆ.- Ե՞ս: Ես փակե՞լ եմ աչքերս:

ԴՈՐԱ.- Այո:

ՍՏԵՊԱՆ.- Երևի տեսարանն ավելի լավ պատկերացնելու և հարցին ըստ էության պատասխանելու համար:

ԴՈՐԱ.- Բաց արա աչքերդ և հասկացիր, որ Կազմակերպությունը կկորցներ իր իշխանությունն ու ազդեցությունը, եթե անգամ մեկ րոպե հանդուրժեր, որ երեխաներ ծվատվեին մեր ռումբերից:

ՍՏԵՊԱՆ.- Ես սիրտ չունեմ նման տխմարությունների համար: Այն օրը, երբ մենք որոշենք մոռանալ երեխաներին, այդ օրը կդառնանք աշխարհի տերերը, և հեղափոխությունը կհաղթանակի:

ԴՈՐԱ.- Այդ օրը համայն մարդկությունը ատելությամբ կլցվի հեղափոխության հանդեպ:

ՍՏԵՊԱՆ.- Ինչ կարևոր է, եթե մենք հեղափոխությունն այնքան ենք սիրում, որ կարող ենք հակադրել ողջ մարդկությանը՝ փրկելով նրան հենց իրենից և իր գերությունից:

ԴՈՐԱ.- Իսկ եթե համայն մարդկությունը երես է թեքում հեղափոխությունից, եթե ողջ ժողովուրդը, ում համար պայքարում ես, դեմ է, որ իր զավակները սպանվեն: Ուրեմն նրա՞ն էլ պիտի հարվածել:

ՍՏԵՊԱՆ.-Այո, եթե պետք է, և այնքան ժամանակ, մինչև հասկանա: Ես էլ եմ սիրում ժողովրդին:

ԴՈՐԱ.- Այդպիսի սեր չի լինում:

ՍՏԵՊԱՆ.- Ո՞վ է ասում:

ԴՈՐԱ.- Ես՝ Դորան:

ՍՏԵՊԱՆ.- Դու կին ես և սիրո մասին քոյուր պատկերացում ունես:

ԴՈՐԱ *(կոպտորեն).*- Բայց լավ գիտեմ, թե ինչ է ամոթը:

ՍՏԵՊԱՆ.- Միայն մեկ անգամ եմ ամաչել ինքս ինձնից, և այն էլ ուրիշների մեղքով: Երբ ինձ ծեծում էին մտրակով: Որովհետև ծեծում էին ինձ մտրակով: Իսկ գիտեք՝ ինչ է մտրակը: Վերան ինձ մոտ էր և ինքնասպան եղավ՝ ի նշան բողոքի: Իսկ ես ողջ մնացի: Ուրեմն հիմա ինչի՞ց պիտի ամաչեմ:

ԱՆԵՆԿՈՎ.- Ստեպան, այստեղ բոլորը սիրում ու հարգում են քեզ: Բայց ինչպիսին էլ լինեն քո փաստարկները, ես արգելում եմ քեզ հայտարարել, թե ամեն բան թույլատրելի է: Հարյուրավոր եղբայրներ զոհվեցին, որպեսզի հասկանանք, որ ամեն ինչ թույլատրելի չէ:

ՍՏԵՊԱՆ.- Ոչ մի բան չի արգելվում, եթե կարող է ծառայել մեր գործին:

ԱՆԵՆԿՈՎ *(զայրույթով).*- Թույլատրելի՞ է մտնել ոստիկանություն և երկու կողմից էլ գործել, ինչպես առաջարկում էր Եվնոն: Դու կանեի՞ր նման բան:

ՍՏԵՊԱՆ.- Եթե հարկ լիներ՝ այո:

ԱՆԵՆԿՈՎ.- Ստեպան, մենք կմոռանանք այն ամենը, ինչ ասացիր այստեղ՝ հաշվի առնելով քո արածը մեզ համար և մեզ հետ: Միայն հիշիր, որ այս պահին խոսքն այն մասին է, թե քիչ հետո ոումբ նետե՞նք այդ երկու երեխայի վրա, թե՞ ոչ:

ՍՏԵՊԱՆ.- Երեխա՞: Չեր լեզվին էլ միայն այդ բառն է: Մի՞թե, իրոք, ոչինչ չեք հասկանում: Այն պատճառով, որ Յանեկը չսպանեց այդ երկուսին, հազարավոր ռուս երեխաներ դեռ երկար տարիներ կմեռնեն սովից: Տեսե՞լ եք՝ ինչպես են մեռնում սովից: Ես տեսել եմ: Այդ մահի հետ համեմատ ոումբից մեռնելը սքանչելի բան է: Բայց Յանեկն այդպիսի մահ չի տեսել: Նա տեսել է միայն մեծ իշխանի երկու վարժեցրած շներին: Թե՞ դուք մարդ չեք: Կամ գուցե ապրում եք միայն այս պահի՞ համար: Այդ դեպքում ընտրեք գթասրտությունը և բուժեք միայն այսօրվա ցավը, և ոչ թե հեղափոխությունը, որն ուզում է բուժել բոլոր ցավերը՝ և՛ ներկա, և՛ ապագա:

ԴՈՐԱ.- Յանեկը պատրաստ է սպանել մեծ իշխանին, քանի որ այդ մահը կարող է մոտեցնել այն ժամանակը, երբ ռուս երեխաներն այլևս չեն մեռնի սովից: Դա ինքնին արդեն հեշտ չէ: Սակայն մեծ իշխանի եղբորորդիների մահը ոչ մի երեխայի չի փրկի սովից մեռնելուց: Անգամ քանդելու մեջ էլ կարգ կա, կան սահմաններ:

ՍՏԵՊԱՆ *(ուժգնորեն)*.- Չկան սահմաններ: Ճշմարտությունն այն է, որ դուք չեք հավատում հեղափոխությանը: *(Բոլորը վեր են կենում, բացի Յանեկից)*: Դուք չեք հավատում: Եթե անմնացորդ հավատայիք, եթե վստահ լինեիք, որ մեր զոհողություններով ու հաղթանակներով մենք կկառուցենք բռնակալությունից ազատագրված Ռուսաստան՝ ազատության մի երկիր, որն այնուհետև կտարածվի ամբողջ աշխարհում, եթե դուք չկասկածեիք, որ այդ ժամանակ մարդը՝ ազատագրված տերերից ու նախապաշարումներից, դեպի երկինք կպարզի ճշմարիտ աստվածների դեմ-

քը, ապա ձեզ համար ի՞նչ արժեք կունենար երկու երեխայի մահը: Դուք ձեռք կբերեիք բոլոր իրավունքները, լսո՞ւմ եք, բոլոր իրավունքները: Դուք չեք հավատում հեղափոխությանը:

Լռություն: Կալիանը վեր է կենում:

ԿԱԼԻԱԵՎ.- Ստեպա՛ն, ես ամաչում եմ ինձ համար: Այսուհանդերձ, արգելում եմ քեզ շարունակել: Ես համաձայնել եմ սպանել, որպեսզի տապալվի բռնակալությունը: Բայց քո ասածի ետևում ես տեսնում եմ ազդարարվող մի նոր բռնակալություն, որը, եթե հաստատվի, ինձ կդարձնի մարդասպան, այնինչ ես ձգտում եմ լինել արդարադատ:

ՍՏԵՊԱՆ.- Ի՞նչ կարևոր է, թե դու արդարադատ չես, եթե արդարությունը կայացել է, թեկուզ մարդասպանների ձեռքով: Մենք՝ դու և ես, ոչինչ չենք նշանակում:

ԿԱԼԻԱԵՎ.- Մենք ինչ-որ բան նշանակում ենք, և դա քեզ քաջ հայտնի է, քանի որ հպարտությունն է քեզ թելադրում, որ հիմա այդպես խոսես:

ՍՏԵՊԱՆ.- Իմ հպարտությունը միայն ինձ է վերաբերում: Բայց բոլոր մարդկանց հպարտությունը, նրանց ընդվզումը, անարդարությունը, որի մեջ ապրում են նրանք, մեր բոլորի գործն է:

ԿԱԼԻԱԵՎ.- Մարդիկ միայն արդարությամբ չեն ապրում:

ՍՏԵՊԱՆ.- Եթե խլում են նրանց հացը, ինչո՞վ պիտի ապրեն, եթե ոչ արդարությամբ:

ԿԱԼԻԱԵՎ.- Արդարությամբ և անմեղությամբ:

ՍՏԵՊԱՆ.- Անմեղությո՞ւն: Թերևս մի ժամանակ գիտեի, թե ինչ է դա: Բայց հետո նախընտրեցի մոռանալ և ստիպել, որ հազարավոր մարդիկ ևս մոռանան, որպեսզի մի օր այն ավելի մեծ իմաստ ձեռք բերի:

ԿԱԼԻԱԵՎ.- Պետք է խորապես վստահ լինել, որ կգա այդ օրը: Միայն այդ ժամանակ կարելի է ժխտել ամեն բան, հա-

ունի ինչի մարդն ապրում է:

ՍՏԵՊԱՆ.- Ես վստահ եմ:

ԿԱԼԻԱԵՎ.- Չես կարող լինել: Որպեսզի իմանանք՝ մեզնից ով է իրավացի՝ դո՞ւ, թե՞ ես, հարկ կլինի գուցե երեք սերունդների զոհողություն, բազմաթիվ պատերազմներ, սարսափելի հեղափոխություններ: Երբ արյան այդ հեղեղը չորացած կլինի երկրի վրա, մենք վաղուց փոշի դարձած կլինենք:

ՍՏԵՊԱՆ.- Այն ժամանակ ուրիշները կգան, և ես ողջունում եմ նրանց ինչպես եղբայրների:

ԿԱԼԻԱԵՎ *(բղավելով).*- Ուրիշնե՞րը... Այո՛: Բայց ես սիրում եմ նրանց, ովքեր այսօ՛ր են ապրում, այս հողի վրա, ինչպես ես, և նրանց եմ ողջունում: Այդ հանուն նրանց եմ ես պայքարում և համաձայն եմ մեռնել նրանց համար: Իսկ հեռավոր մի երկրի համար, որի ստեղծմանը վստահ չեմ, չեմ կարող հարվածել իմ եղբայրների դեմքին: Ես չեմ կարող մեծացնել կենդանի անարդարությունը՝ հանուն մեռած արդարության: *(Ավելի ցածր, բայց հաստատուն ձայնով):* Եղբայրնե՛ր, ես ուզում եմ անկեղծ լինել և ձեզ ասել այն, ինչ կարող է ասել ամենահասարակ մուժիկը. երեխա սպանելն անպատվաբեր է: Եվ եթե մի օր, իմ կենդանության օրոք, հեղափոխությունը պետք է զրկվի պատվից, ես երես կթեքեմ նրանից: Եթե դուք վճռեք, ես հենց հիմա կգնամ թատրոնի մուտքի մոտ, բայց կնետվեմ ձիերի սմբակների տակ:

ՍՏԵՊԱՆ.- Պատիվը ճոխություն է, որ տրված է կառք ունեցողներին:

ԿԱԼԻԱԵՎ.- Ոչ: Դա աղքատի վերջին հարստությունն է: Դա քեզ հայտնի է: Եվ գիտես նաև, որ հեղափոխության մեջ ևս կա պատիվ: Հանուն դրա ենք մենք ընդունում մահը: Դա էր, որ քեզ մի օր բարձրացրեց մտրակի տակից, Ստեպան, և որը դեռ այսօր խոսեցնում է քեզ:

ՍՏԵՊԱՆ *(ճչալով).*- Լռի՛ր: Ես արգելում եմ քեզ խոսել այդ մասին:

ԿԱԼԻԱԵՎ *(բռունց).*- Ինչո՞ւ պիտի լռեմ: Ես քեզ թույլ տվեցի ասել, որ չեմ հավատում հեղափոխությանը: Նույնն է, թե

ասեիր, որ ես ընդունակ եմ սպանելու մեծ իշխանին դատարկ բանի համար, որ ես մարդասպան եմ: Ես քեզ թույլ տվեցի ասել այդ և քեզ չապտակեցի:

ԱՆԵՆԿՈՎ.- Յաձնեկ:

ՍՏԵՊԱՆ.- Սպանել դատարկ բանի համար՝ երբեմն նշանակում է սպանել ոչ այնքան, որքան անհրաժեշտ է:

ԱՆԵՆԿՈՎ.- Ստեպան, այստեղ ոչ ոք համամիտ չէ քեզ: Վճիռը կայացված է:

ՍՏԵՊԱՆ.- Դե, ինչ, ես ենթարկվում եմ: Բայց շարունակ կրկնելու եմ, որ ահաբեկչությունը չի վայելում ուրբ հոգիներին: Մենք մարդասպաններ ենք և մենք ենք ընտրել մեր ուղին:

ԿԱԼԻԱԵՎ *(իրենից դուրս գալով).*- Ոչ: Ես նախընտրել եմ մեռնել, որպեսզի մարդասպանությունը չհաղթանակի: Ես ընտրել եմ անմեղությունը:

ԱՆԵՆԿՈՎ.- Յաձնեկ, Ստեպա՛ն, բավական է: Կազմակերպությունը վճռում է, որ այդ երեխաների սպանությունը նպատակահարմար չէ: Նորից պետք է սկսել հետապնդումները: Մենք պետք է պատրաստ լինենք վերսկսելու երկու օր հետո:

ՍՏԵՊԱՆ.- Իսկ եթե դարձյա՞լ երեխաները:

ԱՆԵՆԿՈՎ.- Մենք կսպասենք նոր առիթի:

ՍՏԵՊԱՆ.- Իսկ եթե մեծ իշխանուհին ուղեկցի՞ մեծ իշխանին:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես նրան չեմ խնայի:

ԱՆԵՆԿՈՎ.- Լսո՞ւմ եք:

Կառքի անիվների աղմուկ: Կալիանև ակամա ուղղվում է դեպի պատուհանը: Մյուսները սպասում են: Կառքը մոտենում է, անցնում պատուհանների տակով և անհետանում:

ՎՈՅՆՈՎ *(նայելով Դորային, որը մոտենում է իրեն).*- Նորից սկսենք, Դորա...

ՍՏԵՊԱՆ *(արհամարհանքով).*- Այո, Ալեքսեյ, վերսկսենք... Բայց պետք է որևէ բան անել պատվի համար...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Նույն սենյակը, օրվա նույն ժամը, երկու օր անց:

ՍՏԵՊԱՆ.- Ի՞նչ է անում Վոյնովը: Նա այստեղ պիտի լիներ:
ԱՆԵՆԿՈՎ.- Նրան քնել է պետք: Մենք դեռ կես ժամ ունենք:
ՍՏԵՊԱՆ.- Գնամ տեսնեմ՝ ինչ նորություն կա:
ԱՆԵՆԿՈՎ.- Ոչ: Պետք է սահմանափակել վտանգը:

Լռություն:

ԱՆԵՆԿՈՎ.- Յաննեկ, ինչո՞ւ ոչինչ չես ասում:
ԿԱԼԻԱԵՎ.- Ոչինչ չունեմ ասելու: Մի անհանգստացիր:

Հնչում է դռան զանգը:

ԿԱԼԻԱԵՎ.- Ահա և նա:

Մտնում է Վոյնովը:

ԱՆԵՆԿՈՎ.- Քնեցի՞ր:
ՎՈՅՆՈՎ.- Այո, մի քիչ:
ԱՆԵՆԿՈՎ.- Ամբողջ գիշե՞ր:
ՎՈՅՆՈՎ.- Ոչ:
ԱՆԵՆԿՈՎ.- Պետք էր քնել: Դրա համար միջոցներ կան:
ՎՈՅՆՈՎ.- Փորձեցի: Բայց շատ հոգնած էի:
ԱՆԵՆԿՈՎ.- Չեռքերդ դողում են:
ՎՈՅՆՈՎ.- Ոչ: *(Բոլորը նայում են նրան):* Ի՞նչ եք այդպես նայում ինձ: Մարդ չի՞ կարող հոգնած լինել:
ԱՆԵՆԿՈՎ.- Կարող է: Մենք քո մասին ենք մտածում:
ՎՈՅՆՈՎ *(հանկարծակի մոլեգնությամբ).*- Այդ մասին պետք էր մտածել երեկ չէ առաջին օրը: Եթե ռումբը գցած լիներիս երկու օր առաջ, այսօր հոգնած չէինք լինի:
ԿԱԼԻԱԵՎ.- Ներիր ինձ, Ալեքսեյ: Ես բարդացրի իրավիճակը:

ՎՈՅՆՈՎ *(ավելի ցածրաձայն)*.- Ո՞վ ասաց: Ի՞նչ բարդացնել: Պարզապես հոգնած եմ ու վերջ:

ԴՈՐԱ.- Հիմա գործերն ավելի արագ կընթանան: Մեկ ժամից ամեն ինչ վերջացած կլինի:

ՎՈՅՆՈՎ.- Այո, ամեն ինչ կվերջանա մեկ ժամից...

Նայում է շուրջը: Դորան մոտենում է նրան ու բռնում ձեռքը: Վոյնովը թույլ է տալիս, բայց հետո կտրուկ ետ է քաշում ձեռքը:

ՎՈՅՆՈՎ.- Բորյա, ուզում եմ խոսել քեզ հետ:

ԱՆԵՆԿՈՎ.- Առանձի՞ն:

ՎՈՅՆՈՎ.- Առանձին:

Իրար են նայում: Կալիաևը, Դորան ու Ստեպանը դուրս են գալիս:

ԱՆԵՆԿՈՎ.- Ի՞նչ է պատահել:

Վոյնովը լուռ է:

ԱՆԵՆԿՈՎ.- Ասա, խնդրեմ:

ՎՈՅՆՈՎ.- Ամաչում եմ, Բորյա:

Լռություն:

ՎՈՅՆՈՎ.- Ամաչում եմ: Ես պիտի քեզ ասեմ ճշմարտությունը:

ԱՆԵՆԿՈՎ.- Չե՞ս ուզում նետել ռումբը:

ՎՈՅՆՈՎ.- Չեմ կարող նետել ռումբը:

ԱՆԵՆԿՈՎ.- Վախենո՞ւմ ես: Դա՞ է պատճառը: Ամաչելու բան չկա:

ՎՈՅՆՈՎ.- Վախենում եմ և ամաչում, որ վախենում եմ:

ԱՆԵՆԿՈՎ.- Բայց երեկ չէ առաջին օրը դու երջանիկ էիր և ուժեղ: Գնալիս աչքերդ փայլում էին:

ՎՈՅՆՈՎ.- Ես միշտ վախեցել եմ: Երեկ չէ առաջին օրը ես պարզապես հավաքել էի իմ ողջ քաջությունը: Երբ հեռվից

լսեցի կառքի ձայնը, ինքս ինձ ասացի. «Դե, ևս մեկ րոպե»: Սեղմել էի ատամներս: Բոլոր մկաններս պրկված էին: Ռումբը պատրաստվում էի նետել այնպիսի թափով, որ ասես մեծ իշխանը սպանվելու էր հարվածի ուժգնությունից: Սպասում էի առաջին պայթյունին, որպեսզի պայթեցնեի իմ մեջ կուտակված ողջ ուժս: Իսկ հետո, ոչինչ: Կառքը հասավ ինձ: Ի՞նչ արագ էր սլանում: Անցավ ինձնից: Այդ ժամանակ գլխի ընկա, որ Յաննեկը չէր նետել ռումբը: Այդ պահին մի ահավոր սարսուռ անցավ մարմնովս: Եվ միանգամից ինձ թույլ զգացի, թույլ, ինչպես երեխա:

ԱՆԵՆԿՈՎ.- Դատարկ բան է, Ալեքսեյ: Կանցնի, կյանքը նորից կխայտա քո մեջ:

ՎՈՅՆՈՎ.- Արդեն երկու օր է, կյանքը չի վերադառնում: Քիչ առաջ ես խաբեցի քեզ. գիշերը աչք չեմ փակել, սիրտս շատ արագ էր խփում: Ախ, Բորյա, անչափ հուսահատ եմ:

ԱՆԵՆԿՈՎ.- Չպետք է հուսահատվել: Մենք բոլորս էլ եղել ենք այդ վիճակում: Դու չես նետի ռումբը: Մեկ ամիս Ֆինլանդիայում հանգստանալուց հետո դու կվերադառնաս մեր շարքերը:

ՎՈՅՆՈՎ.- Ոչ: Սա ուրիշ բան է: Եթե հիմա ես չնետեմ ռումբը, այլևս երբեք չեմ նետի:

ԱՆԵՆԿՈՎ.- Ուրեմն՝ ի՞նչ:

ՎՈՅՆՈՎ.- Ես ստեղծված չեմ ահաբեկչության համար: Այժմ հաստատ գիտեմ: Ավելի լավ կլինի հեռանամ ձեզնից: Ես կպայքարեմ կոմիտեներում, քարոզչությամբ:

ԱՆԵՆԿՈՎ.- Վտանգը նույնն է:

ՎՈՅՆՈՎ.- Այո, բայց այնտեղ կարելի է գործել աչքերը փակ: Առանց իմանալու:

ԱՆԵՆԿՈՎ.- Ի՞նչ ես ուզում ասել:

ՎՈՅՆՈՎ *(տենդագին).*- Առանց իմանալու: Հեշտ է ժողովներ անել, քննարկել իրավիճակը, իսկ հետո մահապատժի վճիռ

կայացնել: Ճիշտ է, կյանքդ վտանգի ես ենթարկում, բայց խարխափելով, առանց որևէ բան տեսնելու: Մինչդեռ կանգնել ու սպասել, երբ երեկոն է իջնում քաղաքի վրա, ամբոխի, մարդկանց մեջ, որ քայլերն են աճապարում գտնելու տաք ապուր, երեխաներ, կնոջ ջերմություն, կանգնել լուռ, թևատակիդ զգալով ռումբի ծանրությունը, և իմանալ, որ երեք րոպեից, երկու րոպեից, մի քանի վայրկյանից նետվելու ես առկայծող կառքին ընդառաջ, ահա սա է ահաբեկչությունը: Իսկ այժմ ես գիտեմ, որ վերսկսել ինձ համար՝ կնշանակի զգալ, թե ինչպես է արյունաքամվում մարմինս: Այո, ամաչում եմ: Չափազանց մեծ նպատակներ եմ ունեցել, պետք է իմ տեղն իմանամ: Պետք է աշխատեմ մի՝ շատ փոքրիկ տեղում, այն միակ տեղում, որին արժանի եմ ես:

ԱՆԵՆԿՈՎ.- Չկա փոքր տեղ: Վերջում միշտ բանտն է և կախաղանը:

ՎՈՅՆՈՎ.- Բայց դրանք չեն տեսնում, ինչպես տեսնում են սպանողին: Դրանք պետք է պատկերացնել: Բարեբախտաբար, ես երևակայություն չունեմ: *(Ծիծաղում է նյարդայնորեն):* Ես երբեք չեմ կարողացել իրապես հավատալ գաղտնի ոստիկանությանը: Տարօրինակ է ահաբեկչի համար, չէ՞: Փորիս հենց քացով մի հարված ստանամ, կհավատամ: Բայց ոչ դրանից շուտ:

ԱՆԵՆԿՈՎ.- Իսկ երբ հայտնվես բանտում: Բանտում մարդիկ գիտեն և տեսնում են: Այլևս մոռացում չկա:

ՎՈՅՆՈՎ.- Բանտում վճիռ կայացնելու խնդիր չկա: Այո, հենց այդպես, այլևս ոչ մի վճիռ: Այլևս չպետք է ասել. «Դե, քո գործն է, դու պիտի վճռես պահը, երբ պետք է նետել»: Այժմ վստահ եմ, որ եթե ծերբակալվեմ, չեմ աշխատի փախչել: Փախչելու համար դարձյալ պետք է հնարամտություն, նախաձեռնություն հանդես բերել: Իսկ եթե չես փախչում, ուրիշներն են իրենց վրա վերցնում նախաձեռնությունը: Ողջ գործը նրանց ուսերին է:

ԱՆԵՆԿՈՎ.- Երբեմն նրանք աշխատում են կախել քեզ:

ՎՈՅՆՈՎ *(հուսահատությամբ).*- Երբեմն: Բայց ինձ համար ավելի հեշտ է մեռնել, քան ձեռքումս պահել իմ սեփական, ինչպես նաև մեկ ուրիշի կյանքը, և որոշել այն պահը, երբ կնետեմ այդ երկու կյանքերը կրակի մեջ: Ոչ, Բորյա, մեղքերս քավելու միակ ճանապարհը ընդունելն է, որ ես այնպիսին եմ, ինչպիսին կամ: *(Անենկովը լռում է):* Անգամ թուլամորթները կարող են ծառայել հեղափոխությանը: Բավական է միայն նրանց տեղը գտնել:

ԱՆԵՆԿՈՎ.- Դե, ուրեմն, մենք բոլորս թուլամորթ ենք: Միայն թե ոչ միշտ է առիթ ներկայանում դա ստուգել: Արա այն, ինչ կամենաս:

ՎՈՅՆՈՎ.- Կուզենամ հենց հիմա մեկնել: Ինձ թվում է՝ չեմ կարող նրանց դեմքին նայել: Բայց դու նրանց կպատմես:

ԱՆԵՆԿՈՎ.- Կպատմեմ:

Գնում է նրան ընդառաջ:

ՎՈՅՆՈՎ.- Ասա Յանեկին, որ նա մեղք չունի: Եվ որ ես սիրում եմ նրան: Ինչպես և բոլորիդ:

Լռություն: Անենկովը գրկում է նրան:

ԱՆԵՆԿՈՎ.- Մնա՛ս բարով, եղբայր: Ամեն ինչ կվերջանա: Ռուսաստանը երջանիկ կլինի:

ՎՈՅՆՈՎ *(փախչելով).*- Օ՜, այո: Թող երջանիկ լինի, երջանիկ լինի:

Անենկովը մոտենում է դռանը:

ԱՆԵՆԿՈՎ.- Մտեք:

Բոլորը մտնում են, այդ թվում և Դորան:

ՍՏԵՊԱՆ.- Ի՞նչ է պատահել:

ԱՆԵՆԿՈՎ.- Վոյնովը չի գցելու ռումբը: Շատ է հոգնած: Նրան չի կարելի վստահել:

ԿԱԼԻԱԵՎ.- Իմ մեղքով է, չէ՞, Բորյա:

ԱՆԵՆԿՈՎ.- Նա խնդրեց քեզ ասել, որ սիրում է քեզ:

ԿԱԼԻԱԵՎ.- Նրան էլի կտեսնե՞նք:

ԱՆԵՆԿՈՎ.- Գուցե: Առայժմ նա մեզ լքում է:

ՍՏԵՊԱՆ.- Ինչո՞ւ:

ԱՆԵՆԿՈՎ.- Նա ավելի օգտակար կլինի կոմիտեներում:

ՍՏԵՊԱՆ.- Նա ի՞նքն է խնդրել: Ուրեմն վախենո՞ւմ է:

ԱՆԵՆԿՈՎ.- Ոչ, ինքս եմ ամեն ինչ որոշել:

ՍՏԵՊԱՆ.- Մահափորձից մեկ ժամ առաջ դու մեզ զրկո՞ւմ ես մի հոգուց:

ԱՆԵՆԿՈՎ.- Մահափորձից մեկ ժամ առաջ ես միայնակ պիտի վճիռ կայացնեի: Քննարկման համար շատ ուշ է: Ես կգրավեմ Վոյնովի տեղը:

ՍՏԵՊԱՆ.- Այն զբաղեցնելու իրավունքը իմն է:

ԿԱԼԻԱԵՎ *(Ստեպանովին).*- Դու ղեկավարն ես: Քո պարտականությունն է մնալ այստեղ:

ԱՆԵՆԿՈՎ.- Երբեմն ղեկավարի պարտականությունն է թուլամորթ լինել: Բայց այն պայմանով, որ հարկ եղած դեպքում զգա իր ուժը: Ես վճիռը կայացրել եմ: Ստեպան, դու ինձ կփոխարինես, որքան հարկ կլինի: Գնանք, դու պիտի ծանոթանաս ցուցումներին:

Նրանք դուրս են գալիս: Կալիանը նստում է: Դորան մոտենում է նրան ու մեկնում ձեռքը: Բայց հետո փոխում է միտքը:

ԴՈՐԱ.- Քո մեղքով չէ:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես նրան նեղացրի, շատ նեղացրի: Գիտե՞ս՝ ինձ ինչ էր ասում անցած օրը:

ԴՈՐԱ.- Անընդհատ կրկնում էր, որ երջանիկ է:

ԿԱԼԻԱԵՎ.- Այո, բայց ինձ ասաց, որ իր համար չկա երջանկություն մեր միությունից դուրս: «Մենք կանք,- ասում էր նա,-

Կազմակերպությունը: Մնացյալը ոչինչ է: Այն ասպետություն է»: Ի՞նչ ափսոս է, Դորա:

ԴՈՐԱ.- Նա կվերադառնա:

ԿԱԼԻԱԵՎ.- Ոչ: Պատկերացնում եմ՝ ես ինչ կզգայի նրա փոխարեն. կհուսահատվեի:

ԴՈՐԱ.- Իսկ հիմա հուսահատ չե՞ս:

ԿԱԼԻԱԵՎ *(տխուր).*- Հիմա՞. հիմա ես ձեզ հետ եմ և երջանիկ եմ նրա նման:

ԴՈՐԱ *(դանդաղ).*- Դա մեծ երջանկություն է:

ԿԱԼԻԱԵՎ.- Շատ մեծ երջանկություն: Դո՞ւ էլ ես ինձ նման մտածում:

ԴՈՐԱ.- Այո, քեզ նման եմ մտածում, ուրեմն ինչո՞ւ ես տխուր: Երկու օր առաջ դեմքդ ճառագում էր, ասես գնում էիր մեծ տոնախմբության: Իսկ այսօ՞ր...

ԿԱԼԻԱԵՎ *(վեր կենալով, չափազանց հուզված).*- Այսօր ես գիտեմ այն, ինչ չգիտեի: Դու իրավացի ես, հեշտ չէ: Կարծում էի՝ բավական է ունենալ գաղափար և քաջություն: Բայց ես այդքան մեծ չեմ և հիմա հասկանում եմ, որ չկա երջանկություն ատելության մեջ: Այդ չարիքը, այդ ամբողջ չարիքը՝ իմ մեջ, ուրիշների մեջ. մարդասպանությունը, թուլամորթությունը, անարդարությունը... Օ՜, պետք է, անհրաժեշտ է, որ ես սպանեմ նրան... Բայց ես կգնամ մինչև վերջ՝ ավելի հեռու, քան ատելությունը:

ԴՈՐԱ.- Ավելի հեռո՞ւ: Ոչինչ չկա:

ԿԱԼԻԱԵՎ.- Սերը կա:

ԴՈՐԱ.- Սե՞րը: Ոչ, դա պետք չէ:

ԿԱԼԻԱԵՎ.- Օ՜, Դորա, ինչպե՞ս կարող ես նման բան ասել դու, որի հոգին լավ գիտեմ ես...

ԴՈՐԱ.- Չափազանց շատ է արյուն թափվում, շատ է բռնությունը, դաժանությունը: Նրանք, ովքեր իսկապես սիրում են արդարությունը, սիրելու իրավունք չունեն: Նրանք ծգված են ինձ պես՝ գլուխը բարձր, աչքերը սևեռուն: Ի՞նչ անելիք ունի սերը նման հպարտ սրտում: Սերը կամացուկ

խոնարհում է գլուխները, Յանեկ, իսկ մենք պնդաճակատ ենք:

ԿԱԼԻԱԵՎ.- Բայց մենք սիրում ենք մեր ժողովրդին:

ԴՈՐԱ.- Ճիշտ է, մենք սիրում ենք մեր ժողովրդին: Սիրում ենք առանց հենարանի, դժբախտ սիրով: Մենք հեռու ենք ապրում նրանից, փակված մեր սենյակներում, թաղված մեր մտքերի մեջ: Իսկ ժողովուրդը սիրո՞ւմ է մեզ, գիտի՞, որ մենք սիրում ենք իրեն: Ժողովուրդը լռում է: Ինչպիսի՞ լռություն, ինչպիսի՞ լռություն...

ԿԱԼԻԱԵՎ.- Հենց դա է սերը՝ ամեն ինչ տալ, ամեն բան զոհաբերել՝ առանց փոխհատուցման ակնկալիքի:

ԴՈՐԱ.- Թերևս: Դա բացարձակ սերն է՝ անաղարտ ու միայնակ ուրախությունը, որն, իրոք, այրում է ինձ: Այսուհանդերձ, երբեմն ինձ հարց եմ տալիս. գուցե սերն ա՞յլ բան է, միայն մենախոսություն չէ, գուցե երբևէ ունի պատասխան: Հասկանո՞ւմ ես, լրիվ պատկերացնում եմ. արևը փայլում է, մեղմորեն հակվում են գլուխները, սիրտը հրաժարվում է գոռոզությունից, ու բացվում են թևերը՝ պատրաստ գրկախառնության... Ախ, Յանեկ, եթե գոնե մեկ ժամով կարողանայինք մոռանալ այս աշխարհի սարսափելի թշվառությունը և ազատ զգայինք: Եսասիրության մի շատ փոքրիկ պահ. կարո՞ղ ես պատկերացնել:

ԿԱԼԻԱԵՎ.- Այո, Դորա: Դա քնքշանք է կոչվում:

ԴՈՐԱ.- Դու ամեն ինչ գուշակում ես, սիրելիս, դա, իրոք, քնքշանք է կոչվում: Բայց դու գիտե՞ս, թե դա ինչ է: Կարո՞ղ ես սիրել արդարությունը քնքշանքի հետ միասին: *(Կալիանը լուռ է):* Եվ մեր ժողովրդի՞ն էլ ես սիրում քնքշագին ու ինքնամոռաց, թե՞, ընդհակառակը, կրակոտ քինախնդրությամբ ու ընդվզումով: *(Կալիանը շարունակում է լուռ մնալ):* Տեսնո՞ւմ ես: *(Վեր է կենում, մոտենում է Կալիանին և ավելի թույլ հնչեցնում):* Իսկ ի՞նձ, սիրո՞ւմ ես ինձ քնքշանքով:

Կալիակը նայում է Դրան:

ԿԱԼԻԱԵՎ *(մի պահ լռությունից հետո).*- Քեզ ոչ ոք երբեք այնպես չի սիրի, ինչպես ես:

ԴՈՐԱ.- Գիտեմ: Բայց ավելի լավ չէ՞ր լինի, եթե սիրեիր բոլորի պես:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես ցանկացած մեկը չեմ: Ես քեզ սիրում եմ ինձ պես:

ԴՈՐԱ.- Դու ինձ ավելի՞ ես սիրում, քան արդարությո՞ւնը, քան Կազմակերպությո՞ւնը:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես ձեզ չեմ տարանջատում՝ քեզ, Կազմակերպությունը և արդարությունը:

ԴՈՐԱ.- Այո: Բայց պատասխանի՛ր, աղաչում եմ, պատասխանի՛ր ինձ: Ինձ սիրում ես միայնությա՞ն մեջ, քնքշանքո՞վ, եսասիրաբա՞ր: Կսիրեի՞ր ինձ, եթե դեմ լինեի արդարությանը:

ԿԱԼԻԱԵՎ.- Եթե դու դեմ լինեիր արդարությանը, և ես կարողանայի սիրել քեզ, ուրեմն ես քե՛զ չէի սիրի:

ԴՈՐԱ.- Չես պատասխանում: Ինձ միայն ասա՝ կսիրեի՞ր ինձ, եթե ես Կազմակերպության մեջ չլինեի:

ԿԱԼԻԱԵՎ.- Այդ դեպքում որտե՞ղ կլինեիր:

ԴՈՐԱ.- Հիշում եմ այն ժամանակները, երբ ուսանող էի: Ծիծաղում էի: Գեղեցիկ էի այն ժամանակ: Ժամեր շարունակ կարող էի զբոսնել ու երազել: Ինձ կսիրեի՞ր այդպիսին՝ թեթև ու անհոգ:

ԿԱԼԻԱԵՎ *(կարանելով և ավելի ցածրաձայն).*- Ես մեռնում եմ ցանկությունից, որ քեզ ասեմ՝ այո:

ԴՈՐԱ *(գոռալով).*- Դե, ուրեմն, սիրելիս, ասա՝ այո, եթե այդպես ես մտածում, և եթե դա ճշմարիտ է: Այո՝ արդարության, քշվառության ու շղթայակապ ժողովրդի առջև: Այո, այո, աղաչում եմ, ասա՝ այո, չնայած մեռնում են երեխաները, չնայած կախում են մարդկանց կամ մտրակահարում մինչև սպանելը...

ԿԱԼԻԱԵՎ.- Լռի՛ր, Դորա՛:

ԴՈՐԱ.- Ոչ, գոնե մեկ անգամ պետք է թույլ տալ, որ խոսի սիրտը: Սպասում եմ, որ ինձ կանչես, ինձ՝ Դորային, կանչես անարդարությամբ թունավորված այս աշխարհի բարձունքից...

ԿԱԼԻԱԵՎ *(կոպիտ)*.- Լռի՛ր: Սիրտս միայն քո մասին է խոսում: Բայց քիչ հետո ես պետք է անսասան լինեմ:

ԴՈՐԱ *(շփոթված)*.- Հենց հիմա՞: Հա, մոռացել էի.. *(Ծիծաղում է, կարծես լաց է լինում)*: Ոչ, սիրելիս, ամեն ինչ հիանալի է: Մի՛ զայրացիր, ես իրավացի չէի: Հոգնությունն է պատճառը: Ես էլ չէի կարող քեզ ասել դա: Ես էլ եմ քեզ սիրում նույն սիրով՝ հաստատուն, արդարության ու բանտերի մեջ թևածող սիրով: Ամառը, Յանեկ, հիշո՞ւմ ես: Բայց ոչ, հավերժական ձմեռ է: Մենք այս աշխարհից չենք, մենք արդարադատ ենք: Ջերմությունը մեզ համար չէ: *(Շրջվելով)*: Ա՛խ, գթացեք արդարադատներին:

ԿԱԼԻԱԵՎ *(հուսահատությամբ նայելով Դորան)*.- Այո, դա է մեր բաժինը, սերն անհնար է: Բայց ես կսպանեմ մեծ իշխանին, այնժամ խաղաղություն կլինի և՛ քեզ համար, և՛ ինձ համար:

ԴՈՐԱ.- Խաղաղությո՞ւն: Ե՞րբ ենք տեսնելու:

ԿԱԼԻԱԵՎ *(ոգևորված)*.- Վաղը:

Մտնում են Անենկովն ու Ստեպանը: Դորան և Կալիաևը ետ են քաշվում միմյանցից:

ԱՆԵՆԿՈՎ.- Յանեկ:

ԿԱԼԻԱԵՎ.- Հիմա: *(Խորը շունչ քաշելով)*: Վերջապես, վերջապես...

ՍՏԵՊԱՆ *(մոտենալով Դորան)*.- Մնաս բարով, եղբայր, ես քեզ հետ եմ:

ԿԱԼԻԱԵՎ.- Մնաս բարով, Ստեպան: *(Շրջվում է Դորայի կողմը)*: Մնա՛ս բարով, Դորա՛:

Դորան մոտենում է նրան: Նրանք շատ են մոտենում, բայց չեն դիպչում միմյանց:

ԴՈՐԱ.- Ոչ: Ոչ թե մնաս բարով, այլ ցտեսություն: Ցտեսություն,

սիրելիս: Մենք կրկին կհանդիպենք:

Կալիանը նայում է նրան: Լռություն է տիրում:

ԿԱԼԻԱԵՎ.- Ցտեսություն: Ես... Ռուսաստանը գեղեցիկ կլինի:
ԴՈՐԱ *(արցունքների միջից)*.- Ռուսաստանը գեղեցիկ կլինի:

Կալիանը խաչակնքում է սրբապատկերի առջև: Նրանք դուրս են գալիս Անենկովի հետ:

Ստեպանը գնում է դեպի պատուհանը: Դորան չի շարժվում, շարունակ նայում է դռանը:

ՍՏԵՊԱՆ.- Որքան ուղիղ է քայլում: Ես սխալվում էի, երբ չէի վստահում Յանեկին: Ինձ դուր չէր գալիս նրա խանդավառությունը: Նա խաչակնքեց, տեսա՞ր: Հավատացյա՞լ է:
ԴՈՐԱ.- Եկեղեցի չի գնում:
ՍՏԵՊԱՆ.- Սակայն հոգով կրոնավոր է: Դա էր մեզ բաժանում: Գիտեմ, որ ես նրանից ավելի անողոք եմ: Մեզ, որ չենք հավատում Աստծուն, ողջ արդարությունն է պետք, կամ էլ լրիվ հուսահատություն կլինի:
ԴՈՐԱ.- Նրա համար արդարությունը հուսահատություն է:
ՍՏԵՊԱՆ.- Այո, թույլ հոգի, բայց ուժեղ ձեռք: Իսկ դա ավելին արժի, քան հոգին: Նա կսպանի մեծ իշխանին, վստահ եմ: Դա լավ է, նույնիսկ շատ լավ: Քանդել՝ ահա թե ինչ է պետք: Բայց ինչո՞ւ ոչինչ չես ասում, սիրո՞ւմ ես նրան:
ԴՈՐԱ.- Սիրելու համար ժամանակ է պետք: Իսկ մեր ժամանակը հագիվ բավական է արդարության համար:
ՍՏԵՊԱՆ.- Իրավացի ես: Դեռ շատ բան կա անելու: Պետք է կործանել այս աշխարհը հիմնովին... Հետո... *(Նայելով պատուհանից)*: Ես նրանց այլևս չեմ տեսնում, ուրեմն տեղ են հասել:
ԴՈՐԱ.- Հետո...
ՍՏԵՊԱՆ.- Կսիրենք...

ԴՈՐԱ.- Եթե լինենք:
ՍՏԵՊԱՆ.- Ուրիշները կսիրեն: Դա, ի վերջո, նույնն է:
ԴՈՐԱ.- Ստեպան, ասա՝ ատելություն:
ՍՏԵՊԱՆ.- Ի՞նչ:
ԴՈՐԱ.- Արտասանիր այդ բառը՝ ատելություն:
ՍՏԵՊԱՆ.- Ատելություն:
ԴՈՐԱ.- Լավ է: Յանեկն այն շատ վատ էր արտասանում:
ՍՏԵՊԱՆ *(լռելով ու քայլելով նրա կողմը).*- Հասկանում եմ՝ արհամարհում ես ինձ: Բայց վստա՞հ ես, որ իրավացի ես: *(Լռում է, հետո սաստկացող մոլեգնությամբ):* Դուք բոլորդ այստեղ սակարկում եք ձեր արարքները հանուն ձեր այդ զազրելի սիրո: Իսկ ես ոչինչ չեմ սիրում, ես ատում եմ, այո, ես ատում եմ ինձ նմաններին: Ինչի՞ս է պետք նրանց սերը: Ես այդ զգացի տաժանակրության մեջ, երեք տարի առաջ: Երեք տարի է՝ այն կրում եմ իմ մեջ: Դու ուզում ես, որ ես քնքշանամ և ռումբը քարշ տամ խաչի՞ պես: Ոչ, ոչ: Ես շատ եմ հեռու գնացել, շատ բան գիտեմ... Նայի՛ր... *(Պատռում է շապիկը: Դորան ուզում է մոտենալ, բայց ընկրկում է՝ տեսնելով մտրակի խարանները):* Սրանք խարաններ են: Նրանց սիրո խարանները: Այժմ արհամարհո՞ւմ ես ինձ:

Դորան մոտենում է նրան և անսպասելիորեն համբուրում:

ԴՈՐԱ.- Ո՞վ կարող է արհամարհել ցավը: Ես քեզ էլ եմ սիրում:
ՍՏԵՊԱՆ *(նայում է նրան, խուլ ձայնով).*- Ների՛ր ինձ,Դորա: *(Դադար: Շրջվում է):* Երևի հոգնածությունն է պատճառը: Պայքարի երկար տարիներ, տագնապներ, լրտեսներ, տաժանակրություն... իսկ վերջում էլ՝ սա: *(Նույց է տալիս խարանները):* Էլ որտեղի՞ց ուժ գտնեմ սիրելու համար, գոնե դեռ ունեմ՝ ատելու համար: Դա ավելի լավ է, քան ոչինչ չզգալը:
ԴՈՐԱ.- Այո, դա ավելի լավ է:

Նայում է Նրան: Ժամը յոթի զանգերն են հնչում:

ՍՏԵՊԱՆ *(միանգամից շուտ գալով).*- Հիմա կանցնի մեծ իշխանը:

Դռրան մոտենում է պատուհանին ու կպչում ապակիներին: Երկարատև լռություն է տիրում: Իսկ հետո հեռվից լսվում է կառքի աղմուկը: Այն մոտենում է և անցնում:

ՍՏԵՊԱՆ.- Եթե նա մենակ է...

Կառքը հեռանում է: Միավոր պայթյուն: Դռրան ուժգին ցնցվում է, գլուխը թաքցնում ձեռքերի մեջ: Երկարատև լռություն:

ՍՏԵՊԱՆ.- Բորյան չնետեց իր ռումբը: Յանեկին հաջողվեց: Հաջողվե՛ց: Օ՞, ժողովուրդ, օ՞, ուրախություն...

ԴՈՐԱ *(արցունքն աչքերին նետվում է Նրա վրա).*- Այդ մենք սպանեցինք Նրան: Մենք սպանեցինք Նրան: Ե՛ս:

ՍՏԵՊԱՆ *(գոռալով).*- Ո՞ւմ սպանեցինք. Յանեկի՞ն:

ԴՈՐԱ.- Մեծ իշխանին:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

Թուխիրյան բանտախուց՝ Պուգաչովի աշտարակում: Առավոտ է:

Բարձրանում է վարագույրը, Կալիանն իր խցում է: Նայում է դռանը: Մոտենում են բանտապահն ու մի բանտարկյալ՝ դույլը ձեռքին:

ԲԱՆՏԱՊԱՀ.- Մաքրի՛ր: Եվ արա՛գ:

Գնում է պատուհանի մոտ, կանգնում այնտեղ:
Ֆոկան սկսում է մաքրել՝ առանց Կալիանին նայելու: Լռություն:

ԿԱԼԻԱԵՎ.- Աննուղ ի՞նչ է, եղբայր:
ՖՈԿԱ.- Ֆոկա:
ԿԱԼԻԱԵՎ.- Կալանավո՞ր ես:
ՖՈԿԱ.- Այդպես է դուրս գալիս:
ԿԱԼԻԱԵՎ.- Ի՞նչ ես արել:
ՖՈԿԱ.- Մարդ եմ սպանել:
ԿԱԼԻԱԵՎ.- Սովա՞ծ էիր:
ՖՈԿԱ.- Ավելի ցածր:
ԿԱԼԻԱԵՎ.- Ի՞նչ:
ՖՈԿԱ.- Կամաց: Ես ձեզ թույլ եմ տալիս խոսել, չնայած արգելվում է: Այնպես որ, խոսիր կամաց, այնպես, ինչպես ծերուկը:
ԿԱԼԻԱԵՎ.- Սովա՞ծ էիր:
ՖՈԿԱ.- Ոչ, ծարավ էի:
ԿԱԼԻԱԵՎ.- Եվ ի՞նչ:
ՖՈԿԱ.- Դե, կացին էլ կար: Ամեն ինչ ավերեցի: Ասում են՝ երեք հոգու եմ սպանել:

Կալիանը նայում է նրան:

ՖՈԿԱ.- Դե, ինչ, բա՛րին, ինձ էլի եղբայր կասե՞ս: Քարացա՞ր:
ԿԱԼԻԱԵՎ.- Ոչ, ես ինքս էլ եմ մարդ սպանել:

ՖՈԿԱ.- Քանի՞ հոգու:

ԿԱԼԻԱԵՎ.- Կասեմ, եթե ուզում ես, եղբայր իմ: Բայց պատասխանիր հարցիս՝ զղջո՞ւմ ես կատարվածի համար, չէ՞:

ՖՈԿԱ.- Իհարկե, քսան տարի. շատ թանկ է: Կստիպի, որ զղջաս:

ԿԱԼԻԱԵՎ.- Քսան տարի: Այստեղ մտնում եմ քսաներեք տարեկան և դուրս եմ գալու ճերմակած մազերով:

ՖՈԿԱ.- Դե, ինչ իմանաս, գուցե քեզ համար ավելի լավ լինի: Դատավորները տարբեր են լինում: Կախված այն բանից՝ դատավորն ամուսնացա՞ծ է, թե՞ ոչ, և ում հետ: Եվ հետո, դու բարին ես: Նույն գնացուցակը չէ, ինչ աղքատ սատանաների համար: Տակից դուրս կգաս:

ԿԱԼԻԱԵՎ.- Չեմ կարծում: Եվ չեմ էլ ուզում: Ես ի վիճակի չեմ քսան տարի շարունակ ամոթ զգալ:

ՖՈԿԱ.- Ամո՞թ: Ի՞նչ ամոթ: Հա, դրանք բարիճական մտքեր են: Քանիսի՞ն ես սպանել:

ԿԱԼԻԱԵՎ.- Մեկին:

ՖՈԿԱ.- Բա ի՞նչ էիր ասում: Հե՛չ բան է:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես սպանել եմ մեծ իշխան Սերգեյին:

ՖՈԿԱ.- Մեծ իշխանի՞ն: Օ՜, հլա մի տես, է՜, ուր է հասել այս բարինը: Ուրեմն վատ են գործերը, հա՞:

ԿԱԼԻԱԵՎ.- Վատ են: Բայց այդպես էր պետք:

ՖՈԿԱ.- Ինչո՞ւ: Պալատո՞ւմ էիր ապրում: Թե՞ կնկա հետ կապված պատմություն է: Լավ ես արել, եթե..

ԿԱԼԻԱԵՎ.- Ես սոցիալիստ եմ:

ԲԱՆՏԱՊԱՀ.- Ավելի ցածր:

ԿԱԼԻԱԵՎ *(ավելի բարձրաձայն).*- Ես հեղափոխական սոցիալիստ եմ:

ՖՈԿԱ.- Ա՜յ քեզ պատմություն: Բայց ինչի՞դ էր պետք լինել... էդ ոնց ասացի՞ր: Հանգիստ նստեիր, և ամեն ինչ լավ կլիներ: Երկիրը ստեղծված է բարիճների համար:

ԿԱԼԻԱԵՎ.- Ոչ, այն ստեղծված է քեզ համար: Չափազանց շատ է աղքատությունը, չափազանց շատ են ոճիրները: Երբ նվազի թշվառությունը, կնվազեն նաև ոճիրները: Եթե

աշխարհիս ազատ լիներ, դու այստեղ չէիր լինի:

ՖՈԿԱ.- Եվ այո, և ոչ: Ի՞նչ իմանաս՝ ազատ լինես, թե ոչ, երբեք էլ լավ չէ մի բաժակից ավել խմելը:

ԿԱԼԻԱԵՎ.- Երբեք էլ լավ չէ: Միայն թե խմում ես, որովհետև նվաստանում ես: Կգա ժամանակ, երբ խմելու կարիք այլևս չի լինի, երբ ոչ ոք չի ամաչի՝ ո՛չ բարիքը, ո՛չ աղքատ սատանան: Մենք բոլորս եղբայր կլինենք, և արդարությունը կբյուրեղացնի մեր սրտերը: Հասկանո՞ւմ ես՝ ինչի մասին եմ խոսում:

ՖՈԿԱ.- Հա, Աստծո արքայության մասին:

ԲԱՆՏԱՊԱՀ.- Ավելի ցածր:

ԿԱԼԻԱԵՎ.- Պետք չէ այդ մասին խոսել, եղբայրս: Աստված ոչինչ անել չի կարող: Արդարությունը մե՛ր գործն է: *(Լռություն):* Չե՞ս հասկանում: Գիտե՞ս սուրբ Դմիտրիի լեգենդը:

ՖՈԿԱ.- Ոչ:

ԿԱԼԻԱԵՎ.- Նա տափաստանում ժամադրվում է հենց Աստծո հետ: Եվ շտապում է, երբ հանդիպում է մի գյուղացու, որի սայլը խրվել էր ցեխի մեջ: Այդ ժամանակ սուրբ Դմիտրին օգնում է նրան: Ցեխը քանձր էր, փոսը՝ խորը: Հարկ է լինում մի ժամ չարչարվել: Եվ երբ վերջացնում է, սուրբ Դմիտրին վազում է ժամադրության: Բայց Աստված այլևս այնտեղ չի լինում:

ՖՈԿԱ.- Հետո ի՞նչ:

ԿԱԼԻԱԵՎ.- Հետո այն, որ կան այնպիսիները, ովքեր միշտ ուշանում են ժամադրությունից, որովհետև շատ-շատ են խրված սայլերը և օգնության սպասող եղբայրները:

Ֆոկան ետ-ետ է գնում:

ԿԱԼԻԱԵՎ.- Ի՞նչ եղավ:

ԲԱՆՏԱՊԱՀ.- Ցածր խոսեք: Իսկ դու, ծերուկ, շտապիր:

ՖՈԿԱ.- Կասկածելի է: Ինչ-որ սխալ կա: Ո՞ւմ մտքով կանցնի բանտ ընկնել սրբի կամ սայլի հետ կապված պատմութ-

յունների համար: Չէ, այստեղ ուրիշ բան էլ կա...

Բանտապահը ծիծաղում է:

ԿԱԼԻԱԵՎ *(նայելով նրան).*- Ի՞նչ, օրինակ...
ՖՈԿԱ.- Ի՞նչ են անում նրանց՝ մեծ իշխան սպանողներին:
ԿԱԼԻԱԵՎ.- Կախում են:
ՖՈԿԱ.- Ա՞:

Մինչ նա պատրաստվում է դուրս գալ, բանտապահն ավելի բարձր է հռհռում:

ԿԱԼԻԱԵՎ.- Սպասիր: Քեզ ի՞նչ արեցի:
ՖՈԿԱ.- Դու ինձ ոչինչ չես արել: Որքան էլ դու բարին ես, մեկ է՝ չեմ ուզում քեզ խաբել: Հենց էնպես խոսում ենք, ժամանակ անցկացնում, բայց եթե քեզ պիտի կախեն, լավ չի:
ԿԱԼԻԱԵՎ.- Ինչո՞ւ:
ԲԱՆՏԱՊԱՀ *(ծիծաղելով).*- Դե, խոսիր, ծերուկ, ասա...
ՖՈԿԱ.- Որովհետև դու ինձ հետ չես կարող խոսել ախպոր պես. ես եմ կախում մահվան դատապարտվածներին:
ԿԱԼԻԱԵՎ.- Բայց դու ինքդ տաժանապա՞րտ չես:
ՖՈԿԱ.- Ճիշտ այդպես: Ինձ են առաջարկել այդ գործը, և ամեն կախվածի դիմաց բանտարկությունիցս հանում են մի տարի: Լավ գործ է:
ԿԱԼԻԱԵՎ.- Ոճիրներդ ներելու համար քեզ ստիպում են գործել նո՞ր ոճիրներ:
ՖՈԿԱ.- Դե, դա ոճիր չէ, քանի որ հրամայում են կատարել: Եվ հետո, նրանց համար ի՞նչ տարբերություն: Եվ եթե ուզում ես իմանալ, նրանք քրիստոնյա չեն:
ԿԱԼԻԱԵՎ.- Եվ քանի անգամ ես արդեն կախել:
ՖՈԿԱ.- Երկու անգամ:

Կալիաևը ետ-ետ է գնում: Բանտապահը հրելով տանում է Ֆոկային:

ԿԱԼԻԱԵՎ.- Ուրեմն՝ դու դաhի՞ճ ես:
ՖՈԿԱ *(դռան միջից)*.- Դե լավ, բարին, իսկ դո՞ւ:

Դուրս է գալիս: Լսվում են ոտնաձայներ, կարգադրություններ: Մտնում է Սկուրատովը՝ շատ վայելչատես: Նրան ուղեկցում է բանտապահը:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Մեզ մենակ թող: Բարև ձեզ: Ինձ չե՞ք ճանաչում: Ես ճանաչում եմ ձեզ: *(Ծիծաղում է)*: Արդեն հռչակավոր եք, hը՞: *(Նայում է նրան)*: Կարելի՞ է ներկայանալ: *(Կալիաևը ոչինչ չի ասում)*: Ոչինչ չեք ասում: Հասկանում եմ: Մենախուց է, hա՞: Դժվար է՝ ութ օր մենախցում: Այսօր մենք կվերացնենք մենախուցը, և դուք կունենաք այցելուներ: Իմիջիայլոց, հենց դրա համար էլ ես այստեղ եմ: Ես արդեն ձեզ մոտ ուղարկեցի Ֆոկային: Բացառիկ երևույթ է, չէ՞: Մտածեցի, որ կարող է հետաքրքրել ձեզ: Գո՞հ եք: Հաճելի է, չէ՞, ութ օրից հետո մարդկային դեմք տեսնել:
ԿԱԼԻԱԵՎ.- Նայած ինչ դեմք:
ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Լավ ձայն, լավ հնչողություն: Դուք գիտեք, թե ինչ եք ուզում: *(Դադար)*: Եթե լավ հասկացա, դեմքս ձեզ դուր չի գալիս:
ԿԱԼԻԱԵՎ.- Այո:
ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ինձ hիասթափեցրիք: Բայց ոչինչ, թյուրիմացություն է: Նախ, որովհետև լուսավորությունը վատ է: Ներքնահարկում ոչ ոք համակրելի տեսք չունի: Եվ հետո, դուք ինձ չեք ճանաչում: Երբեմն դեմքը վանում է, բայց երբ ճանաչում ես հոգին…
ԿԱԼԻԱԵՎ.- Բավական է: Ո՞վ եք դուք:
ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Սկուրատով՝ ոստիկանական բաժանմունքի պետ:
ԿԱԼԻԱԵՎ.- Աղախին:
ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Պատրաստ՝ ձեզ ծառայելու: Բայց ձեր փոխարեն ես ավելի քիչ գոռոզություն կցուցաբերեի: Գուցե դուք

դեռ կհանգիստ դրան: Սկսում են արդարության մարմաջով, ավարտում ոստիկանություն ղեկավարելով: Եվ սակայն ճշմարտությունն ինձ չի ահաբեկում: Անկեղծ լինեմ ձեզ հետ: Դուք հետաքրքրում եք ինձ, և ես ձեզ հնարավորություն եմ տալու ներում ստանալ:

ԿԱԼԻԱԵՎ.- Ի՞նչ ներում:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ինչպես թե՝ ի՞նչ ներում: Ես ձեզ հնարավորություն եմ ընծեռում փրկել ձեր կյանքը:

ԿԱԼԻԱԵՎ.- Ո՞վ է ձեզ խնդրել:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Կյանքը չեն խնդրում, սիրելիս, այն ստանում են: Որևէ մեկին երբևէ ներում չե՞ք շնորհել: *(Դադար):* Ջանացեք հիշել:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես հրաժարվում եմ ձեր ներումից: Մեկընդմիշտ:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Գոնե լսեք: Ես ձեր թշնամին չեմ, չնայած առերևույթ հանգամանքներին: Ես ընդունում եմ, որ ձեր հայացքներում դուք իրավացի եք: Բացի մարդասպանությա՛ն...

ԿԱԼԻԱԵՎ.- Ես ձեզ արգելում եմ օգտագործել այդ բառը:

ՍԿՈՒՐԱՏՈՎ *(նայելով նրան).*- Օ՜, նյարդերը դյուրաբեկ են, հա՞: *(Դադար):* Անկեղծորեն, ես կուզենայի օգնել ձեզ:

ԿԱԼԻԱԵՎ.- Ինձ օգնե՞լ: Ես պատրաստ եմ վճարել ինչ պետք է: Բայց չեմ տանի ձեր մտերմավարությունը: Հանգիստ թողեք ինձ:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Մեղադրանքը, որ բարդվել է ձեզ վրա...

ԿԱԼԻԱԵՎ.- Սրբագրում եմ:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ի՞նչ ասացիք:

ԿԱԼԻԱԵՎ.- Սրբագրում եմ: Ես ռազմագերի եմ և ոչ թե սովորական կալանավոր:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ինչպես կամենաք: Բայց չէ՞ որ կան մեծ վնասներ: Մի կողմ թողնենք մեծ իշխանին և քաղաքականությունը: Սակայն տեղի է ունեցել մարդու մահ: Եվ ի՞նչ մահ:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես ռումբը նետել եմ ոչ թե մի մարդու, այլ բռնակա-

լության վրա:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Անկասկած: Բայց մարդն է ընդունել, որը նրան պետք չի եղել: Հասկանո՞ւմ եք, սիրելիս, երբ մարմինը գտել են, գլուխը չի եղել: Գլուխն անհետացել է: Ինչ վերաբերում է մնացյալին, տարբերել են միայն մի թևը և ոտքի մի մասը:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես ի կատար եմ ածել դատավճիռը:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Թերևս, թերևս: Դատավճռի համար ձեզ չեն մեղադրում: Ի՞նչ է դատավճիռը. բառ, որի շուրջ կարելի է օրեր շարունակ վիճաբանել: Ձեզ մեղադրում են... ոչ, այդ բառը ձեզ դուր չի գալիս... ասենք, սիրողական գործ՝ փոքր-ինչ խառնաշփոթ, որի արդյունքները, իրոք, անվճռելի են: Դրանք տեսանելի են բոլորին: Հարցրեք մեծ իշխանուհուն: Արյուն է հոսել, հասկանո՞ւմ եք, շատ արյուն:

ԿԱԼԻԱԵՎ.- Լռեք:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Լավ: Պարզապես կուզեի ասել, որ եթե դուք համառորեն խոսելու եք դատավճռի մասին, կուսակցության մասին ասելու եք, թե միայն նա է դատել և մահապատժի ենթարկել, թե մեծ իշխանը սպանվել է ոչ թե ռումբից, այլ գաղափարից, ապա դուք ներման կարիք չունեք: Սակայն ենթադրենք, թե մենք վերադառնալու ենք ակնհայտին, ենթադրենք, թե այդ դուք եք քոցրել մեծ իշխանի գլուխը. ամեն ինչ փոխվում է, այնպես չէ՞: Այդ դեպքում դուք ներման կարիք ունեք: Այս հարցում ես ուզում եմ ձեզ օգնել: Ջուտ համակրանքից ղրդված, հավատացեք: *(Ժպտում է)*: Ի՞նչ եք ուզում, ինձ գաղափարները չեն հետաքրքրում, ինձ մարդիկ են հետաքրքրում:

ԿԱԼԻԱԵՎ *(պոռթկալով)*.- Իմ անձը վեր է ձեզնից ու ձեր տերերից: Դուք կարող եք սպանել ինձ, բայց չեք կարող դատել: Հասկանում եմ, թե ուր եք ուղղում ձեր նետերը: Թույլ կետ եք փնտրում և ինձնից սպասում ամոթալի կեցվածք, արցունքներ ու զղջում: Ոչնչի չեք հասնի: Թե ինչ եմ ես ինձնից ներկայացնում, ձեզ չի վերաբերում: Ձեզ վերա-

բերում է մեր ատելությունը՝ իմ և իմ եղբայրների: Այն ձեր տրամադրության տակ է:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ատելությո՞ւն: Եվս մեկ գաղափար: Միայն մարդասպանությունն է, որ գաղափար չէ: Եվ նրա հետևանքները, բնականաբար: Նկատի ունեմ զղջումն ու պատիժը: Այստեղ մենք հենց կենտրոնում ենք: Իմիջիայլոց, հենց դրա համար ես դարձա ոստիկան, որպեսզի իրադարձությունների կենտրոնում լինեմ: Բայց դուք չեք սիրում խոստովանություններ: *(Դադար: Դանդաղ մոտենում է նրան):* Իմ ամբողջ ասելիքն այն է, որ դուք չպետք է ձևացնեք, թե մոռացել եք մեծ իշխանի գլուխը: Եթե դա հաշվի առնեիք, գաղափարի կարիք այլևս չէիք ունենա: Օրինակ, դուք կամաչեիք և ոչ թե կհպարտանայիք ձեր արարքի համար: Իսկ այն պահից, երբ սկսեք ամոթի զգացում ունենալ, դուք կուզենաք ապրել՝ ձեր արածը շտկելու համար: Ամենակարևորն այն է, որ դուք վճռեք ապրել:

ԿԱԼԻԱԵՎ.- Իսկ եթե վճռեմ:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ներում՝ ձեզ և ձեր ընկերներին:

ԿԱԼԻԱԵՎ.- Չերբակալե՞լ եք նրանց:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ոչ: Բանն էլ հենց այդ է: **Եթե դուք վճռեք ապրել,** մենք նրանց կձերբակալենք:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես ձեզ ճի՞շտ հասկացա:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Անտարակույս: Էլի չզայրանաք: Մտածեք: Գաղափարի տեսակետից դուք չեք կարող նրանց մատնել: Բացահայտման տեսակետից, ընդհակառակը, դուք նրանց ծառայություն կմատուցեք: Նրանց կազատեք նոր փորձություններից, միաժամանակ կփրկեք կախաղանից: Իսկ ամենագլխավորը՝ խաղաղություն կիջնի հոգուդ: Իսկապես, բոլոր տեսակետներից սա փայլուն գործ է:

Կալիանը լռում է:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Դե՞:

ԿԱԼԻԱԵՎ.- Եղբայրներս շատ շուտով ձեզ կպատասխանեն:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Նորի՞ց ոճրագործություն: Հաստատ դա ձեր կոչումն է: Այդ դեպքում իմ առաքելությունն ավարտված է: Տխուր է ինձ համար: Բայց ես հասկացա, որ դուք հավատարիմ եք ձեր գաղափարներին: Ես չեմ կարող ձեզ բաժանել դրանցից:

ԿԱԼԻԱԵՎ.- Դուք չեք կարող ինձ բաժանել իմ եղբայրներից:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ցտեսություն: *(Չնացնում է, թե գնում է, հետո, շրջվելով):* Այդ դեպքում ինչո՞ւ խնայեցիք մեծ իշխանուհուն և նրա եղբորորդիներին:

ԿԱԼԻԱԵՎ.- Ձեզ ո՞վ ասաց:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ձեր տեղեկատուն մեզ էլ էր տեղեկացնում: Գոնե մասնակիորեն... Բայց ինչո՞ւ խնայեցիք նրանց:

ԿԱԼԻԱԵՎ.- Դա ձեզ չի վերաբերում:

ՍԿՈՒՐԱՏՈՎ *(ծիծաղելով).*- Կարծո՞ւմ եք: Ես կասեմ՝ ինչու: Գաղափարը կարող է սպանել մեծ իշխանին, բայց սպանել երեխաներին՝ կդժվարանա: Ահա թե ինչ եք հայտնագործել դուք: Ուրեմն հարց է առաջանում. եթե գաղափարը չի կարող սպանել երեխաներին, արժի՞ հանուն նրա սպանել մեծ իշխանին:

Կալիակը շարժում է անում:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Օ՜, չպատասխանեք, հատկապես ինձ չպատասխանեք: Դուք պատասխան կտաք մեծ իշխանուհուն:

ԿԱԼԻԱԵՎ.- Մեծ իշխանուհո՞ւն:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Այո, նա ուզում է ձեզ տեսնել: Եվ ես եկել էի հատկապես, որպեսզի համոզվեմ, թե հնարավո՞ր է նման խոսակցություն: Հնարավոր է: Անգամ կարող է փոխել ձեր կարծիքը: Մեծ իշխանուհին քրիստոնյա է: Հոգին, ինչպես հասկանում եք, նրա մասնագիտությունն է:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես չեմ ուզում նրան տեսնել:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ցավում եմ, բայց նա համառում է: Եվ հետո, դուք պարտավոր եք նրան պատշաճ վերաբերվել: Ասում են նաև, որ ամուսնու մահից հետո խելքը մի քիչ թոցրել է: Մենք չցանկացանք նրան ընդդիմանալ: *(Դռան մոտից):* Եթե փոխեք ձեր կարծիքը, չմոռանաք իմ առաջարկի մասին: Ես նորից կգամ: *(Դադար: Ականջ է դնում):* Ահա և նա: Ոստիկանությունից հետո՝ կրոն: Ձեզ հաստատ շատ են երես տալիս: Բայց ամեն բան շաղկապված է: Պատկերացրեք Աստծուն առանց բանտարկյալների: Ինչպիսի՞ միայնություն:

Դուրս է գալիս: Լսվում են ձայներ և խոսակցություններ: Մտնում է մեծ իշխանուհին, որ մնում է անշարժ և լուռ: Դուռը բաց է:

ԿԱԼԻԱԵՎ.- Ի՞նչ եք կամենում:
ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ *(բացելով դեմքը).*- Նայի՛ր:

Կալիաևը լռում է:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Շատ բաներ են մեռնում մարդու հետ միասին:
ԿԱԼԻԱԵՎ.- Գիտեմ:
ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ *(բնական, բայց փոքր-ինչ ցածր, հոգնած ձայնով).*- Մարդասպանները չգիտեն՝ դա ինչ է: Եթե իմանային, ինչպե՞ս մահ կտարածեին:
ԿԱԼԻԱԵՎ.- Ես ձեզ տեսա: Այժմ ցանկանում եմ մենակ մնալ:
ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Ոչ: Ես էլ պետք է ձեզ նայեմ:

Կալիաևն ընկրկում է:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ *(նստում է, ասես ուժասպառ).*- Ես այլևս անկարող եմ միայնակ մնալ: Նախկինում, երբ տանջվում էի, նա կարող էր ականատես լինել: Այն ժամանակ լավ էր

տանջվելը... Այժմ... Ոչ, ես այլևս չեմ կարող միայնակ մնալ ու լռել... Բայց ո՞ւմ հետ խոսել: Շատերը չգիտեն: Նրանք ողբալի տեսք են ընդունում: Տխուր են մնում մեկերկու ժամ: Հետո գնում են ուտելու և քնելու: Հատկապես քնելու... Ես կարծում եմ, որ դու նման ես ինձ: Վստահ եմ՝ դու չես քնում: Եվ ո՞ւմ հետ խոսել ոճրի մասին, եթե ոչ՝ մարդասպանի:

ԿԱԼԻԱԵՎ.- Ի՞նչ ոճիր, ես հիշում եմ միայն արդարադատության մասին:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Նույն ձայնը: Դու խոսեցիր նույն ձայնով, ինչ նա: Բոլոր տղամարդիկ նույն հնչերանգով են խոսում արդարության մասին: Ասում էր. «Դա արդարացի է», և բոլորը պիտի լռեին: Նա, թերևս, սխալվում էր, դու էլ ես սխալվում...

ԿԱԼԻԱԵՎ.- Նա մարմնավորում էր գերագույն անարդարությունը, որը ստիպում էր ռուս ժողովրդին հեծեծալ դարեր շարունակ: Եվ դրա համար նա միայն առանձնաշնորհներ էր ստանում: Իսկ ես, եթե անգամ սխալվել եմ, պիտի վարձատրվեմ բանտարկությամբ ու մահով:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Այո, դու տանջվում ես: Բայց նա, նրան դու սպանեցիր:

ԿԱԼԻԱԵՎ.- Նա մահն ընդունեց հանկարծակի, իսկ դա շատ թեթև մահ է:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Թեթև՞: *(Ավելի ցածրաձայն):* Ճիշտ է: Քեզ անմիջապես տարան: Կարծեմ, ճառեր ես արտասանել ոստիկանների առջև: Հասկանում եմ: Դա երևի օգնում էր քեզ: Ես տեղ հասա մի քանի րոպե անց: Ես տեսա: Պատգարակին դրեցի, ինչ կարող էի տանել: Որքա՞ն արյուն կար: *(Լռություն):* Հագիս սպիտակ շրջազգեստ էր...

ԿԱԼԻԱԵՎ.- Լռեք:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Ինչո՞ւ: Ես ճշմարտությունն եմ ասում: Գիտե՞ս՝ նա ինչ էր անում մահից երկու ժամ առաջ: Քնած

էր: Քազկաթոռին՝ ոտքերը աթոռին դրած... ինչպես միշտ: Նա քնած էր, իսկ դու, դու նրան էիր սպասում այդ ահավոր երեկոյան... *(Լաց է լինում)*: Այժմ օգնիր ինձ:

Կալիանը՝ պրկված, մի կողմ է քաշվում:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Դու երիտասարդ ես: Դու չես կարող վատը լինել:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես երիտասարդ լինելու համար ժամանակ չեմ ունեցել:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Ինչո՞ւ այդքան լարվել: Մի՞թե բոլորովին չես խղճում քեզ:

ԿԱԼԻԱԵՎ.- Ոչ:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Իրավացի չես: Դա կթեթևացնի: Այ, ես խղճում եմ միայն ինձ: *(Լռություն)*: Վատ եմ զգում: Խնայելու փոխարեն ինձ պետք է սպանեիր նրա հետ միասին:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես ձե՛զ չխնայեցի, այլ երեխաներին, որ ձեզ հետ էին:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Գիտեմ: Ես նրանց այնքան էլ չեմ սիրում: *(Լռություն)*: Մեծ իշխանի եղբորորդիներն են: Արդյոք նրանք նույնպե՞ս մեղավոր են, ինչպես իրենց հորեղբայրը:

ԿԱԼԻԱԵՎ.- Ոչ:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Ճանաչո՞ւմ ես նրանց: Եղբորս աղջիկը չար սիրտ ունի: Նա հրաժարվում է անգամ իր հանգանակությունները բաժանել աղքատներին: Վախենում է դիպչել նրանց: Նա արդա՞ր է: Մեղավոր է: Մեծ իշխանը գոնե սիրում էր գյուղացիներին: Խմում էր նրանց հետ: Իսկ դու սպանեցիր նրան: Անկասկած, դու ևս մեղավոր ես: Աշխարհն ամայի է:

ԿԱԼԻԱԵՎ.- Ջուր է: Դուք ճգնում եք ջլատել իմ ուժերը և հուսահատության մատնել ինձ: Դա ձեզ չի հաջողվի: Հեռացե՛ք:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Մի՞թե չես կամենա ինձ հետ աղոթել, գոջալ... Մենք այլևս միայնակ չենք լինի:

ԿԱԼԻԱԵՎ.- Թողեք նախապատրաստվեմ մահվան: Եթե ես չմեռնեի, այն ժամանակ մարդասպան կլինեի:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ *(կեր է կենում).*- Մեռնե՞լ: Դու ուզում ես մեռնե՞լ: Ոչ: *(Շատ ոգևորված մոտենում է Կալիակին):* Դու պետք է ապրես և ընդունես, որ մարդասպան ես: Մի՞թե դու չես սպանել նրան: Աստված կարդարացնի քեզ:

ԿԱԼԻԱԵՎ.- Ո՞ր Աստված՝ իմը՞, թե՞ ձերը:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Սուրբ Եկեղեցու Աստված:

ԿԱԼԻԱԵՎ.- Եկեղեցին այստեղ գործ չունի:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Նա ծառայում է Տիրոջը, որը նույնպես գտնվեց բանտում:

ԿԱԼԻԱԵՎ.- Ժամանակները փոխվել են: Եվ Սուրբ Եկեղեցին իր ընտրությունն արել է Տիրոջ ժառանգությամբ:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Ընտրե՞լ: Ի՞նչ ես ուզում ասել:

ԿԱԼԻԱԵՎ.- Նա ներումը պահել է իր համար, իսկ մեզ թողել է ողորմածության հոգսը:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Ո՞ւմ՝ մեզ:

ԿԱԼԻԱԵՎ *(թղավելով).*- Բոլոր նրանց, ում կախում եք դուք:

Լռություն:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ *(մեղմորեն).*- Ես ձեր թշնամին չեմ:

ԿԱԼԻԱԵՎ *(հուսահատությամբ).*- Հենց թշնամիս եք, ինչպես նաև բոլոր նրանք, ովքեր ձեր ցեղից են և ձեր տոհմից: Բայց ոճրագործ լինելուց էլ ավելի նողկալի բան կա՝ ոճրագործության մղել նրան, ով ստեղծված չէ դրա համար: Նայեք ինձ: Երդվում եմ ձեզ, ես ստեղծված չէի սպանելու համար:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Մի՛ խոսեք ինչպես թշնամու հետ: Տեսեք: *(Փակում է դուռը):* Ինձ հանձնում եմ ձեր ձեռքը: *(Լաց է լինում):* Մեր միջև արյուն կա, որ բաժանում է մեզ: Բայց դուք ինձ կարող եք միանալ Աստծո միջոցով, հենց դժբախտության վայրում: Գոնե աղոթեք ինձ հետ:

ԿԱԼԻԱԵՎ.- Անհնար է: *(Մոտենում է նրան)*: Ես ձեր հանդեպ լոկ կարեկցանք եմ զգում, կարողացաք հուզել իմ հոգին: Հիմա դուք կհասկանաք ինձ, որովհետև ձեզնից ոչինչ չուզեմ թաքցնելու: Աստծո հետ հանդիպումը հույս չէ ինձ համար: Սակայն մեռնելով՝ ես ճիշտ ժամանակին կհասնեմ հանդիպմանը նրանց հետ, ում սիրում եմ՝ իմ եղբայրներին, ովքեր այս պահին մտածում են իմ մասին: Աղոթել՝ կնշանակի դավաճանել նրանց:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Ի՞նչ եք ուզում ասել:

ԿԱԼԻԱԵՎ *(հուզավառ)*.- Ոչինչ, ընդամենը այն, որ ես երջանիկ կլինեմ: Ես երկար պայքար ունեմ մղելու ու կդիմանամ: Սակայն երբ դատավճիռն ընթեցվի, և մահապատիժը պատրաստ լինի ի կատար ածվելու, այնժամ, կառափնարանի ստորոտում ես կհեռանամ ձեզնից և այս զազրելի աշխարհից ու կգնամ դեպի ինձ ողողող սերը: Հասկանո՞ւմ եք ինձ:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Աստծուց հեռու չկա սեր:

ԿԱԼԻԱԵՎ.- Կա: Սեր՝ մարդ արարածի նկատմամբ:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Մարդ արարածն անարգ է: Ի՞նչ պիտի անել նրան. միայն կործանել կամ ներել:

ԿԱԼԻԱԵՎ.- Մեռնե՞լ նրա հետ:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Մեռնում են միայնակ: Նա մենակ մեռավ:

ԿԱԼԻԱԵՎ *(հուսահատությամբ)*.- Մեռնե՞լ նրա հետ: Նրանք, ովքեր այսօր սիրում են միմյանց, պետք է միասին մեռնեն, եթե ուզում են միանալ իրար: Անարդարությունը բաժանում է, ամոթը, ցավը, չարիքը, որ պատճառում ես մյուսներին, ոճիրը, սրանք բոլորը բաժանում են: Ապրելը տառապանք է, քանի որ կյանքը բաժանում է:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Աստված է միացնում:

ԿԱԼԻԱԵՎ.- Ոչ այս աշխարհում: Իսկ իմ ժամադրություններն այն աշխարհում են:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Այդպես շներն են հանդիպում՝ քթները գետնին, անվերջ հոտոտելով և անվերջ հիասթափված:

ԿԱԼԻԱԵՎ *(շրջված դեպի պատուհանը).*- Շուտով կիմանամ: *(Դադար):* Բայց մի՞թե արդեն իսկ չենք կարող պատկերացնել, թե ամեն ուրախություն ժխտող երկու էակ ինչպես են իրար սիրում ցավի մեջ և կարող են ժամադրություն նշանակել միայն ցավի մեջ: *(Նայում է կնոջը):* Ուրեմն չե՞նք կարող պատկերացնել, որ նույն պարանը միացնում է այս երկու էակներին:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Ո՞րն է այդ ահավոր սերը:

ԿԱԼԻԱԵՎ.- Մեզ ուրիշ սեր չթույլատրեցիք՝ դուք և ձերոնք:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ.- Ես նույնպես սիրում էի նրան, ում դուք սպանեցիք:

ԿԱԼԻԱԵՎ.- Դա հասկանալով ես ձեզ ներում եմ այն չարիքը, որ դուք և ձերոնք պատճառել եք ինձ: *(Դադար):* Այժմ հեռացե՛ք:

Երկար լռություն:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ *(կրկին վեր կենալով).*- Հիմա կգնամ: Բայց եկել եմ, որ ձեզ տանեմ Աստծո մոտ: Այժմ հասկացա: Դուք ցանկանում եք ձեզ դատել ու փրկել ինքնուրույն: Չեք կարող: Աստված կկարողանա, եթե դուք ապրեք: Ես կհայցեմ ձեր ներումը:

ԿԱԼԻԱԵՎ.- Մի արեք այդ, աղաչում եմ: Թողեք ինձ մեռնեմ, այլապես մահու չափ պիտի ատեմ ձեզ:

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ *(դռան շեմին).*- Ես ձեզ համար ներում կխնդրեմ և՛ մարդկանցից, և՛ Աստծուց:

ԿԱԼԻԱԵՎ,- Ո՛չ, ո՛չ, ես արգելում եմ ձեզ:

Նա վազում է դեպի դուռը և այնտեղ հանկարծակի հանդիպում Սկուրատովին: Կալիաևը ընկրկում է, փակում աչքերը: Լռություն: Բացելով աչքերը՝ Կալիաևը նայում է Սկուրատովին:

ԿԱԼԻԱԵՎ.- Ես ձեր կարիքն ունեի:

ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Հիանալի է: Ինչո՞ւ:

ԿԱԼԻԱԵՎ.- Ձեզ կրկին արհամարհելու համար:
ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ափսոս: Ես եկել էի պատասխան ստանալու:
ԿԱԼԻԱԵՎ.- Այժմ արդեն գիտեք:
ՍԿՈՒՐԱՏՈՎ *(փոխելով հնչերանգը).*- Ոչ, դեռ չեմ ստացել: Ուշադիր լսեք ինձ: Ես հաջողացրի այս հանդիպումը մեծ իշխանուհու հետ, որպեսզի վաղը կարողանամ այս նորությունը հրապարակել թերթերում: Ամբողջ շարադրանքը ճշգրիտ կլինի, բացի մի կետից. այն կարծանագրի ձեր զղջման խոստովանությունը: Ձեր ընկերները կմտածեն, որ դուք իրենց դավաճանել եք:
ԿԱԼԻԱԵՎ *(հանգիստ).*- Նրանք չեն հավատա:
ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ես կդադարեցնեմ հրապարակումը միայն այն ժամանակ, երբ դուք ցուցմունքներ տաք: Գիշերը ձեր տրամադրության տակ է վճիռ կայացնելու համար:

Գնում է դեպի դուռը:

ԿԱԼԻԱԵՎ *(ավելի ուժգին).*- Նրանք չեն հավատա:
ՍԿՈՒՐԱՏՈՎ *(շրջվելով).*- Ինչո՞ւ, նրանք երբևէ մեղք չե՞ն գործել:
ԿԱԼԻԱԵՎ.- Դուք չգիտեք նրանց սերը:
ՍԿՈՒՐԱՏՈՎ.- Ոչ, չգիտեմ: Բայց ես գիտեմ, որ անկարելի է ամբողջ գիշեր հավատալ եղբայրությանը՝ առանց մի պահ անգամ վարանելու: *(Դուռը փակելով իր ետևից):* Մի շտապեք: Ես համբերատար եմ:

Նրանք մնում են դեմառդեմ:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ծ Ր

Ուրիշ, սակայն նույն ոճի բնակարան: Մեկ շաբաթ անց: Գիշեր: Լռություն: Դորան գնում-գալիս է սենյակի մի ծայրից մյուսը:

ԱՆԵՆԿՈՎ.- Հանգստացի՛ր, Դորա՛:

ԴՈՐԱ.- Մրսում եմ:

ԱՆԵՆԿՈՎ.- Եկ, մեկնվիր այստեղ: Ծածկվիր:

ԴՈՐԱ *(շարունակ քայլելով).*- Ի՞նչ երկար է գիշերը: Շատ եմ մրսում, Բորյա:

Բախում են դուռը. մի հարված, հետո՝ երկրորդը:

Անենկովը գնում է բացելու: Մտնում են Ստեպանն ու Վոյնովը: Վերջինս մոտենում ու համբուրում է Դորային: Դորան նրան երկար սեղմած է պահում:

ԴՈՐԱ.- Ալեքսե՞յ:

ՍՏԵՊԱՆ.- Օոլովն ասում է, որ գուցե այս գիշեր լինի: Բոլոր եպաասպաներին, ովքեր ծառայության մեջ չեն, կանչել են: Այդպես նա էլ ներկա կլինի:

ԱՆԵՆԿՈՎ.- Որտե՞ղ ես նրան հանդիպելու:

ՍՏԵՊԱՆ.- Նա մեզ՝ Վոյնովին և ինձ, սպասելու է Սոֆիսկայա փողոցի ճաշարանում:

ԴՈՐԱ *(ննստում է՝ լրիվ ուժասպառ).*- Այս գիշեր է, Բորյա:

ԱՆԵՆԿՈՎ.- Դեռ ամեն ինչ կորած չէ, վճիռը կախված է ցարից:

ՍՏԵՊԱՆ.- Վճիռը կախված կլիներ ցարից, եթե Յաննկը ներում խնդրեր:

ԴՈՐԱ..- Նա չի խնդրել:

ՍՏԵՊԱՆ.- Այդ դեպքում ինչո՞ւ է հանդիպել մեծ իշխանուհու հետ, եթե ոչ ներում հայցելու համար: Այդ կինն ամենուրեք հայտարարել է, որ նա զղջացել է: Ինչպե՞ս իմանանք ճշմարտությունը:

ԴՈՐԱ.- Մեզ հայտնի է, թե նա ինչ է ասել դատարանում և ինչ է մեզ գրել: Մի՞թե Յաննկը չի ասել, թե ափսոսում է, որ լոկ մի կյանք ունի, որպեսզի այն որպես մարտահրավեր նե-

տի ազնվականությանը: Նման հայտարարություն արած մարդը կարո՞ղ է իր համար շնորհ մուրալ, կարո՞ղ է արդյոք զղջալ: Ոչ, նա ուզում էր, նա ուզում է մեռնել: Նրա արածը հրաժարականի նմանակա չէ:

ՍՏԵՊԱՆ.- Իզուր հանդիպեց մեծ իշխանուհու հետ:

ԴՈՐԱ.- Ինքն է իր միակ դատավորը:

ՍՏԵՊԱՆ.- Ըստ մեր կանոնների՝ նա չպետք է տեսնվեր այդ կնոջ հետ:

ԴՈՐԱ.- Մենք մի կանոն ունենք՝ սպանել և ոչինչ ավելի: Հիմա նա ազատ է, ազատ է վերջապես:

ՍՏԵՊԱՆ.- Դեռ ոչ:

ԴՈՐԱ.- Նա ազատ է: Մահվան շեմին կանգնած՝ նա իրավունք ունի անել այն, ինչ ուզում է: Եվ քանի որ մեռնելու է, կարող եք գոհ լինել:

ԱՆԵՆԿՈՎ.- Դորա՛:

ԴՈՐԱ.- Այո, այո: Եթե նրան ներում շնորհեին, ինչպիսի՞ հաղթանակ կտոնեիք: Չէ՞ որ դա կապացուցեր, որ մեծ իշխանուհին ճշմարիտ է ասում, այնպես չէ՞, որ նա զղջացել է ու դավաճանել: Եթե մեռնում է, ընդհակառակը, դուք կհավատաք և կրկին կսիրեք նրան: *(Նայում է նրանց)*: Ձեր սերը քանկ է նստում:

ՎՈՅՆՈՎ *(մոտենալով Դորային)*.- Ոչ, Դորա, մենք նրան երբեք չենք կասկածել:

ԴՈՐԱ *(ետ ու առաջ քայլելով)*.- Այո...թերևս...Ներեցեք ինձ: Բայց այս ամենից հետո ի՞նչ նշանակություն ունի... Շուտով կիմանանք, այս գիշեր... Ա՛խ, խեղճ Ալեքսեյ, դո՞ւ ինչու ես եկել:

ՎՈՅՆՈՎ.- Նրան փոխարինելու: Ես լաց էի լինում, հպարտանում էի նրանով, երբ դատարանում կարդում էի նրա ճառը: Երբ կարդացի՝ «Մահս թող իմ գերագույն բողոքը լինի այս արցունքով և արյունով լի աշխարհի դեմ», սկսեցի ամբողջ մարմնով դողալ:

ԴՈՐԱ.- Արցունքով և արյունով լի աշխարհ... Այո, այդպես ասաց, ճիշտ է:

ՎՈՅՆՈՎ.- Այդպես ասաց... Օ՜, Դորա, ինչպիսի՜ արիություն: Իսկ վերջում նրա ճիչը. «Եթե ես մարդկային բողոքի բարձունքում եմ եղել ընդդեմ բռնության, ապա մահս թող պսակի իմ գործը՝ գաղափարի մաքրությամբ»: Այդ ժամանակ ես որոշեցի վերադառնալ:

ԴՈՐԱ *(գլուխը թաքցնելով ափերի մեջ).*- Իսկապես, նա ճգտում էր մաքրության: Բայց ինչպիսի՜ ահավոր պսակադրություն:

ՎՈՅՆՈՎ.- Լաց մի՛ լինիր, Դորա: Նա խնդրեց, որ ոչ ոք չսգա իր մահը: Ա՜հ, ես նրան հիմա այնքան լավ եմ հասկանում: Անկարող եմ կասկածել նրան: Տանջվում էի, որովհետև թուլամորթ էի եղել: Իսկ հետո ես ոռւմբ նետեցի Թիֆլիսում: Այժմ ես չեմ տարբերվում Յանեկից: Երբ իմացա իր մահապատժի մասին, միայն մի միտք ունեցա՝ զբաղեցնել նրա տեղը, քանի որ նրա կողքին չէի եղել:

ԴՈՐԱ.- Ո՞վ կարող է նրա տեղը գրավել այս գիշեր: Նա մենակ կլինի, Ալեքսեյ:

ՎՈՅՆՈՎ.- Մենք պետք է նրան սատարենք մեր հպարտությամբ, ինչպես ինքն է մեզ սատարում իր օրինակով: Լաց մի՛ լինիր:

ԴՈՐԱ.- Նայիր՝ աչքերս չոր են: Բայց հպարտ, օ՜, ոչ, այլևս երբեք չեմ կարողանա հպարտանալ:

ՍՏԵՊԱՆ.- Դորա, մի՛ դատապարտիր ինձ: Ես շատ եմ ուզում, որ Յանեկը ապրի: Նրա նման մարդկանց կարիքը մենք շատ ունենք:

ԴՈՐԱ.- Բայց ինքը չի ցանկանում: Եվ մենք պարտավոր ենք նրա մահը ցանկանալ:

ԱՆԵՆԿՈՎ.- Դու խենթ ես:

ԴՈՐԱ.- Մենք պարտավոր ենք դա ցանկանալ: Ես գիտեմ նրա հոգին: Միայն այդպես նա խաղաղություն կգտնի: Օ՜, այո, թող նա մեռնի: *(Ավելի ցածրաձայն):* Բայց թող արագ մեռնի:

ՍՏԵՊԱՆ.- Ես գնում եմ, Բորյա: Եկ, Ալեքսեյ: Ողովը սպասում է մեզ:

ԱՆԵՆԿՈՎ.- Այո, և չուշանաք, արագ վերադարձեք:

Ստեպանն ու Վոյնովը գնում են դեպի դուռը: Ստեպանը նայում է Դորային:

ՍՏԵՊԱՆ.- Շուտով կիմանանք: Հսկիր նրան:

Դորան պատուհանի մոտ է: Անենկովը նայում է նրան:

ԴՈՐԱ.- Մա՞ն: Կախաղա՞ն: Նորից մա՞ն: Ախ, Բորյա:

ԱՆԵՆԿՈՎ.- Այո, քույրիկս: Բայց ուրիշ ելք չկա:

ԴՈՐԱ.- Մի՛ ասա: Եթե միակ ելքը մահն է, ուրեմն մենք ճիշտ ուղու վրա չենք: Ճշմարիտ ուղին տանում է դեպի կյանք, դեպի արև: Չի կարելի անվերջ մրսել...

ԱՆԵՆԿՈՎ.- Այդ ուղին էլ է տանում դեպի կյանք: Դեպի ուրիշների կյանք: Ռուսաստանը կապրի, մեր թոռները կապրեն: Հիշիր՝ ինչ ասաց Յաննեկը. «Ռուսաստանը գեղեցիկ կլինի»:

ԴՈՐԱ.- Ուրիշները, մեր թոռները... Այո: Բայց Յաննեկը բանտում է, իսկ պարանը սառն է: Նա մեռնելու է: Գուցե արդեն մեռել է, որպեսզի ուրիշներն ապրեն: Ախ, Բորյա, իսկ եթե ուրիշները չապրե՞ն, իսկ եթե նա զուր է մեռնում:

ԱՆԵՆԿՈՎ.- Լռի՛ր:

Լռություն:

ԴՈՐԱ.- Որքա՞ն ցուրտ է: Եվ սակայն գարուն է: Բանտի բակում ծառեր կան, գիտեմ: Նա երևի տեսնում է դրանք:

ԱՆԵՆԿՈՎ.- Սպասիր, կիմանանք: Այդպես մի դողա:

ԴՈՐԱ.- Այնպես եմ մրսում, կարծես արդեն մեռած եմ: *(Կարճ դադար)*: Այս ամենը մեզ շատ արագ է ծերացնում: Մենք այլևս երբեք երեխա չենք լինի, Բորյա: Առաջին սպանությունից հետո մանկությունը խույս է տալիս: Նետում ես ռումբը, և մեկ վայրկյանում մի ամբողջ կյանք է փլուզվում: Այո, այժմ մենք կարող ենք մեռնել, քանի որ անցանք մարդկային փորձության բոլոր աստիճաններով:

ԱՆԵՆԿՈՎ.- Ուրեմն կմեռնենք պայքարելով, ինչպես վայել է մարդուն:

ԴՈՐԱ.- Դուք շատ արագ եք քայլել, դուք այլևս մարդ չեք:

ԱՆԵՆԿՈՎ.- Դժբախտությունն ու թշվառությունն էլ են արագ քայլում: Այս աշխարհում այլևս տեղ չի մնում համբերության ու հասունացման համար:

ԴՈՐԱ.- Գիտեմ: Մենք մեզ վրա ենք վերցրել աշխարհի ողջ դժբախտությունը: Նա նույնպես, նա էլ էր կրում այդ բեռը: Ինչպիսի՞ քաջություն: Բայց երբեմն մտածում եմ, որ դա գոռոզություն է, և որի համար պատժվելու ենք:

ԱՆԵՆԿՈՎ.- Այդ գոռոզության համար մենք մեր կյանքով ենք հատուցում: Ավելի հեռու ոչ ոք չի կարող գնալ: Դա գոռոզություն է, որի իրավունքը մենք ունենք:

ԴՈՐԱ.- Վստա՞հ եք, որ ոչ ոք ավելի հեռու չի գնա: Երբեմն, երբ լսում եմ Ստեպանին, երկյուղ եմ ապրում: Գուցե ուրիշները կգան, ովքեր կսպանեն, օգտագործելով մեր անունը, և ովքեր չեն հատուցի իրենց կյանքով:

ԱՆԵՆԿՈՎ.- Դա ստորություն կլինի:

ԴՈՐԱ.- Ի՞նչ իմանաս: Գուցե հենց դա է արդարությունը: Եվ այն ժամանակ ոչ ոք այլևս չի համարձակվի նրա դեմքին նայել:

ԱՆԵՆԿՈՎ.- Դորա՛:

Դորան լռում է:

ԱՆԵՆԿՈՎ.- Մի՞թե կասկածում ես: Անճանաչելի ես դարձել:

ԴՈՐԱ.- Մրսում եմ: Մտածում եմ նրա մասին, որ պիտի ջանա չդրոզալ, որպեսզի չմտածեն, թե վախենում է:

ԱՆԵՆԿՈՎ.- Ուրեմն դու այլևս մեզ հետ չե՞ս:

ԴՈՐԱ *(նետվելով նրա վրա).*- Օ՜, Բորյա, ես ձեզ հետ եմ: Մինչև վերջ ձեզ հետ կլինեմ: Ես ատում եմ բռնակալությունը և գիտեմ, որ չենք կարող այլ կերպ վարվել: Բայց ես դա ընտրել էի ուրախ սրտով, իսկ հիմա տխուր սրտով եմ հավաստում: Ահա տարբերությունը: Մենք բանտարկյալ ենք:

ԱՆԵՆԿՈՎ.- Ողջ Ռուսաստանն է բանտված: Մենք կպայթեցնենք այդ բանտի պատերը:

ԴՈՐԱ.- Միայն ոտք տուր ինձ նետելու և կտեսնես. ես կհասնեմ հնոցի մեջտեղը, սակայն իմ քայլքը հաստատուն կլինի: Հեշտ է: Շատ ավելի հեշտ է մեռնել սեփական հակասություններից, քան ապրել դրանցով: Սիրե՞լ ես դու, սիրե՞լ ես երբևէ, Բորյա:

ԱՆԵՆԿՈՎ.- Սիրել եմ, բայց դա այնքան վաղուց էր, որ այլևս չեմ հիշում:

ԴՈՐԱ.- Որքա՞ն ժամանակ է անցել:

ԱՆԵՆԿՈՎ.- Չորս տարի:

ԴՈՐԱ.- Իսկ որքա՞ն ժամանակ է, որ ղեկավարում ես Կազմակերպությունը:

ԱՆԵՆԿՈՎ.- Չորս տարի: *(Կարճ դադար):* Այժմ ես Կազմակերպությունն եմ սիրում:

ԴՈՐԱ *(քայլելով դեպի պատուհանը).*- Սիրել, այո, բայց նաև սիրված լինել... Ոչ, պետք է քայլել: Կուզենայիր կանգ առնել: Քայլի՛ր, քայլի՛ր: Կուզենայիր թևերդ պարզել ու տրվել անգործության: Սակայն գարշելի անարդարությունը կպչում է կուպրի նման: Քայլի՛ր: Մենք դատապարտված ենք ինքներս մեզնից ավելի հասուն լինելու: Մարդկային էակներ, մարդկային դեմքեր՝ ահա թե ինչ կուզենայինք սիրել: Առաջին հերթին սեր, հետո արդարություն: Ոչ, պետք է քայլել: Քայլի՛ր, Դորա: Քայլի՛ր, Յանեկ: *(Լաց է լինում):* Սակայն նրա համար ընդատակը մոտ է:

ԱՆԵՆԿՈՎ *(գրկելով նրան).*- Նրան ներում կշնորհեն:

ԴՈՐԱ *(նայելով նրան).*- Լավ էլ գիտես, որ՝ ոչ: Դու գիտես, որ դա նրան պետք չէ:

Շրջում է հայացքը:

ԴՈՐԱ.- Գուցե նա արդեն դուրս է գալիս բակ: Բոլորը հանկարծ լռում են, հենց հայտնվում է նա: Միայն թե չմրսի: Բորյա,

գիտե՞ս՝ ինչպես են կախում:

ԱՆԵՆԿՈՎ.- Պարանի ծայրով: Բավակա՛ն է, Դորա:

ԴՈՐԱ *(ինքն իրեն).*- Դահիճը ոստնում է նրա ուսերին: Վիզը ճոռում է: Սոսկալի է, չէ՞:

ԱՆԵՆԿՈՎ.- Այո: Ինչ-որ իմաստով: Մյուս կողմից դա է երջանկությունը:

ԴՈՐԱ.- Երջանկությո՞ւն:

ԱՆԵՆԿՈՎ.- Ձգալ մարդկային ճեռքի հպումը մահվանից առաջ:

Դորան նետվում է բազկաթոռի մեջ:
Լռություն:

ԱՆԵՆԿՈՎ.- Դորա, հետո հարկ կլինի մեկնել: Մի քիչ հանգստացիր:

ԴՈՐԱ *(շվարած).*- Մեկնե՞լ: Ո՞ւմ հետ:

ԱՆԵՆԿՈՎ.- Ինձ հետ, Դորա:

ԴՈՐԱ *(նայում է նրան).*- Մեկնել: *(Շրջվում է դեպի պատուհանը):* Արևածագ է: Յաճեկն արդեն մեռած է, վստահ եմ:

ԱՆԵՆԿՈՎ.- Ես քո եղբայրն եմ:

ԴՈՐԱ.- Այո, դու իմ եղբայրն ես, և դուք բոլորդ էլ իմ եղբայրներն եք, որոնց սիրում եմ: *(Լսվում է ամճրկի ձայնը: Լույսը բացվում է: Դորան խոսում է ցածրաձայն):* Բայց երբեմն ի՞նչ ահավոր համ ունի եղբայրությունը:

Թակում են դուռը: Մտնում են Վոյնովն ու Ստեպանը: Բոլորն անշարժ են: Դորան երերում է, բայց բացահայտ ճիգ է գործադրում ու տիրապետում իրեն:

ՍՏԵՊԱՆ *(ցածրաձայն).*- Յաճեկը չի դավաճանել:

ԱՆԵՆԿՈՎ.- Օդովը կարողացե՞լ է տեսնել:

ՍՏԵՊԱՆ.- Այո:

ԴՈՐԱ *(անվարան առաջանալով).*- Նստի՛ր: Պատմի՛ր:

ՍՏԵՊԱՆ.- Ի՞նչ:

ԴՈՐԱ.- Պատմի՛ր ամեն ինչ: Ես իրավունք ունեմ իմանալու: Ես

պահանջում եմ, որ պատմես: Մանրամասն:
ՍՏԵՊԱՆ.- Չեմ կարող: Եվ հետո, պետք է գնալ:
ԴՈՐԱ.- Ոչ, դու կխոսես: Ե՞րբ նրան նախազգուշացրին:
ՍՏԵՊԱՆ.- Երեկոյան ժամը տասին:
ԴՈՐԱ.- Ե՞րբ հանեցին կախաղան:
ՍՏԵՊԱՆ.- Գիշերվա ժամը երկուսին:
ԴՈՐԱ.- Եվ չորս ժամ սպասե՞լ է նա:
ՍՏԵՊԱՆ.- Այո, առանց մի բառ արտասանելու: Իսկ հետո ամեն ինչ արագ ընթացավ: Այժմ վերջացած է:
ԴՈՐԱ.- Չորս ժամ առանց խոսելո՞ւ: Սպասիր, սպասիր: Ինչպե՞ս էր հագնված: Իր մուշտակո՞վ էր:
ՍՏԵՊԱՆ.- Ոչ: Լրիվ սևազգեստ, առանց վերարկուի: Գլխին էլ՝ քաղիքե գլխարկ:
ԴՈՐԱ.- Ի՞նչ եղանակ էր:
ՍՏԵՊԱՆ.- Խավարչտին գիշեր: Աղտոտ ձյուն, որ անձրևից հետո վերածվեց կպչուն ցեխի:
ԴՈՐԱ.- Դողո՞ւմ էր:
ՍՏԵՊԱՆ.- Ոչ:
ԴՈՐԱ.- Օռլովը կարողացա՞վ որսալ նրա հայացքը:
ՍՏԵՊԱՆ.- Ոչ:
ԴՈՐԱ.- Ո՞ւմ էր նա նայում:
ՍՏԵՊԱՆ.- Օռլովի ասելով՝ բոլորին, և ոչ մեկին չէր տեսնում:
ԴՈՐԱ.- Հետո՞, հետո՞:
ՍՏԵՊԱՆ.- Վերջացրո՛ւ, Դորա:
ԴՈՐԱ.- Ոչ: Ես ուզում եմ իմանալ: Գոնե նրա մահը ինձ է պատկանում:
ՍՏԵՊԱՆ.- Նրան կարդացին դատավճիռը:
ԴՈՐԱ.- Այդ ընթացքում ի՞նչ էր անում նա:
ՍՏԵՊԱՆ.- Ոչինչ: Միայն մի անգամ ոտքը թափ տվեց, որպեսզի կոշիկն ազատի կպած ցեխից:
ԴՈՐԱ *(գլուխն առած ձեռքերի մեջ).*- Կպած ցեխի՞ց:

Տեսարանը լռում է:

ԱՆԵՆԿՈՎ.- Դու ամեն բան մանրամասն հարցրե՞լ ես Օռլովին: Ինչո՞ւ:

ՍՏԵՊԱՆ *(հայացքը շրջելով)*.- Յանեկի և իմ միջև մի բան կար...

ԱՆԵՆԿՈՎ.- Ի՞նչ:

ՍՏԵՊԱՆ.- Ես նախանձում էի նրան:

ԴՈՐԱ.- Հետո՞, Ստեպան, հետո՞:

ՍՏԵՊԱՆ.- Հայր Ֆլորենցկին մոտեցավ նրան, պարզեց խաչը: Նա հրաժարվեց համբուրելուց և հայտարարեց. «Ես ձեզ արդեն ասել եմ, որ հաշիվներս փակել եմ կյանքի հետ և ենթարկվում եմ մահվան»:

ԴՈՐԱ.- Ինչպիսի՞ն էր նրա ձայնը:

ՍՏԵՊԱՆ.- Ճիշտ նույնը: Չեր իմացածից ավելի քիչ տեղեկացին ու անհամբեր:

ԴՈՐԱ.- Երջանի՞կ տեսք ուներ:

ԱՆԵՆԿՈՎ.- Խե՞նթ ես:

ԴՈՐԱ.- Այո, այո, համոզված եմ, որ երջանիկ տեսք ուներ: Քանզի շատ անարդար կլիներ, որ կյանքում հրաժարվեր երջանկությունից՝ իրեն ամբողջովին զոհաբերելու համար և մահվան պահին չհասներ երջանկության: Նա երջանիկ էր և և հանգիստ գնաց դեպի կախաղան: Այնպես չէ՞:

ՍՏԵՊԱՆ.- Գնաց: Ներքևում՝ գետաբերանի մոտ, երգում էին հարմոնի նվագակցությամբ: Այդ պահին շները հաչեցին:

ԴՈՐԱ.- Եվ այդ ժամանակ նա բարձրացավ...

ՍՏԵՊԱՆ.- Բարձրացավ: Սուզվեց խավարի մեջ: Հազիվ էր երեվում պատանքը, որով դահիճը փաթաթեց նրա մարմինը:

ԴՈՐԱ.- Իսկ հետո՞, հետո՞...

ՍՏԵՊԱՆ.- Խուլ ձայներ:

ԴՈՐԱ.- Խուլ ձայներ: Յանե՞կ: Իսկ հետո...

Ստեպանը լուռ է:

ԴՈՐԱ *(գայրագին)*.- Հետո՞, քեզ ասում եմ՝ հետո՞: *(Ստեպանը լռում է)*: Խոսի՛ր, Ալեքսեյ: Հետո՞:

ՎՈՅՆՈՎ.- Ահավոր ձայն:
ԴՈՐԱ.- Ա՞յ...

Նետվում է դեպի պատը: Ստեպանը շրջում է գլուխը: Անենկովն արտասվում է՝ դեմքն առանց որևէ արտահայտության: Դորան շրջվում է, նայում է նրանց՝ մեջքը հենած պատին:

ԴՈՐԱ *(մոլորում, փոխված ձայնով).*- Մի՛ լացեք: Ո՛չ, ո՛չ, մի՛ լացեք: Դուք լավ տեսնում եք, որ օրն է արդարացման: Այս ժամին ինչ-որ բան է հառնում, որը մեր բոլոր ընդվզողների վկայությունն է. Յաննեկն այլևս մարդասպան չէ: Ահավո՞ր աղմուկ: Բավական եղավ, որ ահավոր աղմուկ լսվեր, և ահա այն վերածվել է մանկական հրճվանքի: Հիշո՞ւմ եք նրա ծիծաղը: Նա երբեմն ծիծաղում էր առանց պատճառի: Որքա՞ն երիտասարդ էր: Նա հիմա էլ է հաստատ ծիծաղում: Նա հաստատ ծիծաղում է՝ դեմքը գետնին:

Մոտենում է Անենկովին:

ԴՈՐԱ.- Բորյա, դու իմ եղբա՞յրն ես: Դու ասացիր, որ կօգնես ինձ:
ԱՆԵՆԿՈՎ.- Այո:
ԴՈՐԱ.- Ուրեմն արա այդ ինձ համար, տուր ինձ ռումբը:

Անենկովը նայում է նրան:

ԴՈՐԱ.- Այո, մյուս անգամ ես եմ ուզում նետել: Ես ուզում եմ լինել առաջինը:
ԱՆԵՆԿՈՎ.- Դու լավ գիտես, որ մեզ համար կանայք ցանկալի չեն առաջին շարքերում:
ԴՈՐԱ *(ճչալով).*- Մի՞թե ես կին եմ հիմա:

Նրանք նայում են Դորային: Լռություն:

ՎՈՅՆՈՎ *(մեղմորեն).*- Համաձայնի՛ր, Քորյա:
ՍՏԵՊԱՆ.- Այո, համաձայնիր:
ԱՆԵՆԿՈՎ.- Քո հերթն էր, Ստեպան:
ՍՏԵՊԱՆ *(նայելով Դորային).*- Ընդունիր: Հիմա նա ինձ է նմանվում:
ԴՈՐԱ.- Դու ինձ կտա՞ս ռումբը, չէ՞: Ես կնետեմ: Իսկ հետո, ցուրտ գիշեր…
ԱՆԵՆԿՈՎ.- Այո, Դորա:
ԴՈՐԱ *(լալիս է).*- Յաննե՛կ, ցուրտ գիշեր և նույն պարանը: Հիմա ամեն ինչ ավելի հեշտ կլինի:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱԼԲԵՐ ԿԱՄՑՈՒ.
«ԵՍ ԸՆԴՎԶՈՒՄ ԵՄ, ՈՒՐԵՄՆ ՄԵՆՔ ԿԱՆՔ» (առաջաբան).....7

ՇՎԵԴԱԿԱՆ ՃԱՌԵՐ (էսսեներ).....21

ՕՏԱՐԸ (վիպակ).....55

ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (էսսեներ).....153

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՀ (վեպ).....173

ԱՐԴԱՐԱԴԱՏՆԵՐԸ (պիես).....299

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ 370

ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ

(1913, նոյեմբերի 7, Մոնդովիա - 1960, հունվարի 4, Վիլբլևին, Ֆրանսիա)

1913 - նոյեմբերի 7. Մոնդովիայում (Ալժիր) ծնվում է Ալբեր Կամյուն:

Հայրը՝ Լյուսիեն Կամյուն, բանվոր էր, 1871 թ. Ալժիրում հաստատված էլզասյան ընտանիքից:

Մայրը՝ Կատրին Սընթեսը (Կատրինը հետագայում կդառնա Կամյուի դստեր անունը, իսկ Սընթեսը՝ Մյորսոյի ընկերոջ ազգանունը), ծագումով մալորկացի էր:

1914 - օգոստոսի 2. սկսվում է առաջին աշխարհամարտը:

Հայրը վիրավորվում է Մարնի ճակատամարտում և մահանում Սեն-Բրիյոքի հիվանդանոցում:

Մայրը վերադառնում է Ալժիր և հաստատվում մայրաքաղաքի Բելկուր թաղամասում:

Ալբեր Կամյուն մեծանում է աղքատության մեջ: «... Ազատությունը ես չեմ ուսանել Մարքսի գործերում: Իրականում ազատությունը ես սովորեցի թշվառության մեջ»:

1918 - 1923 - Հաճախում է համայնքային դպրոցը:

1923 - 1930 - Ուսումնառություն Ալժիրի լիցեյում:

1928 - 1930 - Ալժիրի «Ռասինգ-Ունիվերսիտեր» ֆուտբոլային թիմի դարպասապահն է:

1930 - Ընդունվում է գրականության բարձրագույն դպրոց: Մեծ բարեկամությամբ կապվում է իր դասախոս, փիլիսոփա և էսսեիստ Ժան Գրենիեի հետ, որին հետագայում նա կձոնի «Երես և աստառ» և «Ընբոստ մարդը» էսսեները:

1932 - Հրատարակում է չորս հոդված «Հարավ» ամսագրում:

Ի հայտ են գալիս թոքախտի առաջին նշանները: Առողջության վատթարացման պատճառով հեռանում է հայրական տնից, որտեղ բացակայում էին հիգիենայի տարրական պայմանները:

1933 - Ուսանում է Այժիրի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում:
Առաջին ամուսնությունը՝ Սիմոն Հիի հետ, որից բաժանվելու է երկու տարի անց:
1934 - Հարում է կոմունիստական կուսակցությանը:
1935 - Դուրս է գալիս կոմունիստական կուսակցությունից:
1936 - Ստանում է փիլիսոփայության բարձրագույն դպրոցի դիպլոմ: Պաշտպանում է թեզ՝ հելլենիզմի և քրիստոնեության առնչությունների վերաբերյալ:
1936-1937 - Որպես դերասան թատերական շրջագայությունների է մեկնում «Ռադիո-Ալժիր» խմբով:
Հիմնում է «Աշխատանքի թատրոնը»:
1937 - Լրագրող է «Ալժե ռեպյուբլիկեն» թերթում, որը ղեկավարում է Պասկալ Պիան. նրան Կամյուն կնվիրի «Սիզիփոսի առասպելը»:
Առողջության պատճառով Կամյուին արգելվում է մասնակցել դասախոսների մրցույթին:
Հիմնվում է «Էկիպ» թատրոնը:
Հրատարակվում է «Երես և աստառ» ժողովածուն:
Սկսում է «Երջանիկ մահ» վեպը, որը մնում է անավարտ: Այն լույս կտեսնի հետմահու, 1971 թվականին:
1939 - Գրում է «Ամուսնություններ» էսսեները:
1939 - սեպտեմբերի 3. երկրորդ աշխարհամարտի սկիզբը:
1940 - Ամուսնանում է երկրորդ անգամ՝ օրանցի Ֆրանսին Ֆորի հետ:
Փակվում է «Ալժե ռեպյուբլիկենը»՝ վերածվելով «Սուար ռեպյուբլիկենի»:
Ավարտում է «Օտարը» վիպակը, որը սկսել էր 1937 թվականին:
1940 - մայիսի 10. գերմանացիները ներխուժում են Ֆրանսիա:
Կամյուն հաստատվում է Փարիզում: Աշխատում է «Փարի-Սուարի» խմբագրությունում:
1941 - Վերադառնում է Օրան, դասավանդում մասնավոր դպրո-

ցում, ուր հաճախում են հիմնականում հրեա երեխաներ:
Ավարտում է «Սիզիփոսի առասպելը»:
Նախապատրաստում է «Ժանտախտը»՝ «Մոբի Դիկի» ազդեցության տակ:

1942 - Վերադառնում է Փարիզ:
«Գալիմար» հրատարակչությունը տպագրում է «Օտարը»:
Մասնակցում է Դիմադրության շարժմանը:
Հիմնում է «Կոմբա» լրագիրը:

1943 - Հրատարակվում է «Սիզիփոսի առասպելը»:

1944 - Ստանձնում է «Կոմբայի» տնօրինությունը:
Հանդիպում Սարտրի հետ: «Ոչ, ես էկզիստենցիալիստ չեմ: Սարտրն ու ես միշտ զարմանում ենք՝ տեսնելով, թե ինչպես են միացնում մեր անունները: Անգամ մտածում ենք այս առիթով մի փոքրիկ հայտարարություն տալ [...], որովհետև, ի վերջո, սա զավեշտ է: Սարտրն ու ես մեր բոլոր գրքերը, առանց բացառության, հրատարակել ենք՝ չճանաչելով միմյանց: Իսկ ճանաչելուց հետո ձգտել ենք հավաստել մեր տարբերությունները»:
Բեմադրվում է «Թյուրիմացություն» պիեսը, գլխավոր դերում՝ Մարիա Կազարես:

1945 - Բեմադրվում է «Կալիգուլան», գլխավոր դերում՝ Ժերար Ֆիլիպ:

1946 - Ճանապարհորդություն ԱՄՆ-ով: Նյու Յորքում ելույթ է ունենում ամերիկյան ուսանողների առջև:

1947 - Լույս է տեսնում «Ժանտախտը»: Աննախադեպ հաջողություն. արժանանում է «Քննադատների մրցանակին»:

1948 - Բեմադրվում է «Պաշարված վիճակը»:

1949 - Ճանապարհորդություն Հարավային Ամերիկայով:
Բեմադրվում է «Արդարադատները»:

1951 - Լույս է տեսնում «Ընդվզող մարդը»:

1954 - Հրատարակվում է «Ամառը» ժողովածուն՝ գրված 1939 – 1953 թվականներին:

1956 - Լույս է տեսնում «Անկումը»:

Թարգմանում և բեմադրում է Ուիլյամ Ֆոլքների «Ռեքվիեմ միանձնուհու համար» պիեսը:

1957 - Հրատարակվում է «Աքսոր և արքայությունը»:
Գրականության Նոբելյան մրցանակի շնորհում:

1958 - Լույս են տեսնում «Ծվեդական ճառերը»:

1959 - Բեմադրում է Դոստոևսկու «Դևերը»:
Ուրվագծում է «Առաջին մարդը» վեպը:

1960 - հունվարի 4. զոհվում է ավտովթարից, Փարիզի ճանապարհին՝ Վիլբլըվինի մոտ:

PRSÉNTE LITTÉRATURE FRANÇAISE

✓ANDRÉ GIDE	La porte Étroite
✓MARGUERITE DURAS	La Vie Tranquille Hiroshima Mon Amour
✓MARGUERITE DURAS	L'Amant
✓PAUL ÉLUARD	Poèmes
✓JEAN ANOUILH	Pièces
✓SAINT JOHN-PERSE	Éloges Anabase
✓PAUL VALÉRY	Monsieur Teste
✓MAURICE MAETERLINCK	L'Oiseau Bleu; Pièces
✓ANDRÉ GIDE	La Symphonie Pastorale Oscar Wilde Retour de l'URSS
✓RENÉ CHAR	Poèmes
✓MAURICE MAETERLINCK	La Vie des Abeilles Le Trésor des Humbles
✓ALBERT CAMUS	Œuvres, I tome Discours de Suède L'Étranger Noces La Mort Heureuse Les Justes
MICHEL FOUCAULT	Surveiller et Punir Naissance de la Prison
ALBERT CAMUS	Œuvres, II tome
ALBERT CAMUS	Œuvres, III tome
RAYMOND QUENEAU	Zazie dans le Métro

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

✓ԱՆԴՐԵ ԺԻԴ	Նեղ դուռը
✓ՄԱՐԳԵՐԻՏ ԴՅՈՒՐԱՍ	Հանգիստ կյանք Հիրոսիմա, իմ սեր
✓ՄԱՐԳԵՐԻՏ ԴՅՈՒՐԱՍ	Սիրեկանը
✓ՊՈՒԼ ԷԼՅՈՒԱՐ	Բանաստեղծություններ
✓ԺԱՆ ԱՆՈՒՅ	Թատերգություններ
✓ՍԵՆ-ԺՈՆ ՊԵՐՍ	Գովեստներ Անաբասիս
✓ՊՈՒԼ ՎԱԼԵՐԻ	Պարոն Տեստ
✓ՄՈՐԻՍ ՄԵՏԵՐԼԻՆԿ	Կապույտ թռչունը Թատերգություններ
✓ԱՆԴՐԵ ԺԻԴ	Հովվերգական սիմֆոնիա Օսկար Ուայլդ Վերադարձ ԽՍՀՄ-ից
✓ՌԸՆԵ ՇԱՐ	Բանաստեղծություններ
✓ՄՈՐԻՍ ՄԵՏԵՐԼԻՆԿ	Մեղուների կյանքը Խոնարհների գանձը
✓ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ	Շվեդական ճառեր Օտարը Ամուսնություններ Երջանիկ մահ Արդարադատները
ՄԻՇԵԼ ՖՈՒԿՈ	Հսկել և պատժել Բանտի ծնունդը
ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ	Երկեր, II հատոր
ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ	Երկեր, III հատոր
ՌԵՅՄՈՆ ՔԸՆՈ	Զազին մետրոյում

ՀՏԴ 840-3 Կամյու
ԳՄԴ 84.4Ֆր
Կ - 184

Կամյու, Ալբեր.
Կ - 184 Ստեղծագործությունների ժողովածու/
Ալբեր Կամյու. Եր.: «ԱԼՄ» հրատ., 2002. - 378 էջ

Թարգմանիչ՝ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Ժողովածուն կազմել և առաջաբանը գրել է Աննա Հակոբյանը:
Նկարիչ՝ Գրիգոր Խաչատրյան
Տեխնիկական խմբագիր՝ Դավիթ Դաբաղյան
Սրբագրիչ՝ Թագուհի Սուսլիյան

XX դարի ֆրանսիացի մեծագույն գրողի ստեղծագործությունների թարգմանությունն առաջին անգամ ներկայացվում է հայ ընթերցողին: Ժողովածուն ընդգրկում է «Շվեդական ճառեր», «Ամուսնություններ» էսսեները, «Օտարը» վիպակը, «Երջանիկ մահ» վեպը և «Արդարադատները» պիեսը:

Կ 4703010100 2002թ ԳՄԴ 84.4Ֆր
0169(01)2002

ISBN 99930-883-3-1

ԳԱՍՊՐԻՆՏ
տ պ ա գ ր ա տ ո ւ ն
2002, հուլիս, ԵՐԵՎԱՆ